

Lewy V
353

N912

2000

ՄՈՒՌԻԱ

ԿԱՍ

ԱՅՆԱՏՈՒԹԵՐՆԵՐ

Ի ՊԵՏԱ

ԵՐԵՎԱԿԱՆ ԴՐԱՅԱՑ

ՄԱՏԱՍ Զ. ԳԱԼՈՅ

ՔԱՐԵՎՈՒՄՆԵՐ Ի ԳԱՂԴԻՆԵՐՆԵՐ

ՍԱՐԺԻՆԻ Գ. ՀԱՐԵՆՑ

N 212 425



Ի. ՊՈՒՏՈ

ՅԵՎՀՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏԵՇԵՐԵԱՆ

1879

10.

ՄՈՐԵՍ

ԿԱՄ

Ա. ՇԻԱ. ՏՈՒԹԻՒՆ



Հայ
353

ՄՕՔՑԱ

ԿԱՄ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏԱ


ՆԱԽՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ

ՄԱՏԱՄ Զ. ԳԱՂՈՅՈ

ԹԱՐԳՄԱՆԵՑ Ի ԳԱՂԴԻԵՐԵՆԵ

ՍԱԹԻՆԻԿ Գ. ՀԱՐԵՆՑ

745



N 21245

N 2255

Կ. ՊՈԼԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

ՍԻՒՄՊԻՆԻԼԻ ԽԱՆ ԹԻՒ 47.

1879

ԱԽԱԿԻՔ

ԱՌ ՄԵՇ ՄԱՅՐՆ ԻՄ

ՏԻԿԻՆ Թ. ՈՒՆՃԵԱՆ

Ըգնախախայրիս խուն իմ վաստակոց
Առաջին պըտուղ քեւ խնամեալ տընկոյս ,
ՄՕՐԻՍ , ԱՇԽԱՏԱՆՔ . Առաքինուրիւն
Քեզ տամ 'ի նուկը , եւ 'ի քեզ' Հայուն :

Լիցի երջանիկ մանուկն , որբն անոր ,
թէ արկցէ 'ի կիր գուր , հանձար , քըրտունք .
Հաց քաղցր , սիրո խաղաղ , խիդճ եւ տուն
անդորր ,
սին , գաւակ բարի , կեանք իւր փառանոր :

Եւ դու , մայրդ իմ մեծ , որ ծընար զորդիս
Երկնից եւ ազգին . լե՛ր մայր մատենկիս :
Անմանդ 'ի հաւատս , նոր անմահասցիս
Ի զիրս քարտիզիս , քեւ' եւ իմս Մօրիս :

Ա. Գ. ՀԱՐԵՆՑ

353-2003 (5098
38)

28-352



ԿՕԲ

ԱՌ

ՇՆՈՐՀԱՇՈՒԹ ՕՐԻՈՐԴ

ՍԱՓ. Գ. ՀԱՐԵՆՑ

Գատը—գիւղ.

ՄՕՐԻՍ կամ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ անունով գըրքոյկ մը յանձնեցի քեզ Գաղղիարէնէ 'ի Հայ յեղափոխել . քազցրագոյն ճաշակ զգացի երբ ընթերցայ զայն : Մատեան՝ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ , հեղինակ՝ ՏԻԿԻՆ ՄԸ , թարգմանող՝ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ . այս երեք բառերն մեծ կարեւորութիւն կ'ընծայեն զրքիս :

Կը սիրեմ որ մեր Հայ տիկնայք և օրիորդք , մարք և հարք , 'ի մի բան՝ Հայ ընտանիք պահ մը իրենց ուշը դարձընեն այս զրքիս :

Մեր ուսանողք՝ յաճախ հետամուտ են վերծանել և 'ի բերան առնել մեծամեծ դաղափարներ և բարձր ու վսկէ դրուագներ Հոմերոսէն , Վիրագիլիոսէն , Ֆէնէլօնէն , Լամարթինէն , Հիւկօյէն . և կը շրջին Միլտօնի դրախտին մէջ , Հայկ դիւցազնին ասպարէզը , Վրոյրի Որմիղանայ բուրաստանքը և այլն . արդարեւ դրականութեան դաշտեր են ասոնք , ուր ծաղկունք երանգ երանգ , ուր մարդկութեան փառքն ու դիակը , ուր գութն ու եղեռնը , ուր սէրն ու մահը սիւռած են ,

ուր և կեանքը կը ծաղկի ու կը թարշամի բուսոց նմանակ :

Այլ ես՝ Մուսայից պարէն, Պատնասայ բարձունքէն կը հրաւիրեմ մեր ուսանողք և ընթերացողք՝ ի խոնարհ իջնել վայրիկ մի . դիւցազրունքն ու անոնց վէպերը, քնարն ու բամբիւը, դաշնակն ու երգերը, քերժողականն ու երեւակայականը մէկ կողմ թողուլ պահ մը, և կենսական ու իրական սոյն նկարագիրն ընթեռնուլ, որ կ'ուսուցանէ մարդոց ապրիլ, և քաղցր ու երջանիկ ապրիլ :

Իսա ծէրօմն, Կրան Պիչն, Մօրիսն պիտի ներկայանան և ցոյց տան թէ ի՞նչպէս մարդոց թշուառագոյն կարծուած վիճակն՝ փոխադարձ դթութեամբ և անձին աշխատասիրութեամբ կ'երանաւէաի : Ռոմիէն թող սորվին մեր դաստիարակները, և Ճողովրդապետէն՝ մեր երկցները, որոց ձեռքը յանձնուած են մեր ընտանեկան ու բարոյական կենաց մշակութիւնը :

Ազգային երջանկութիւնը՝ ընտանեկան երջանկութենէն կը ծագի :

Թող կարդան այս գիրքը և պիտի համոզուին այս ճշմարտութեան : Մէկ բարի գործ աւոր՝ քանի՞ տուներու, անձերու և ամբողջ գաւառի մը երջանկութիւն կ'ընծայէ :

Շնորհակալ եմ քենէ, օրիորդ, որ պահ մը մէկ կողմ դրիբ քո սիրելի զրօսանքդ ու զրադմունքդ, բանաստեղծական խանդագին քերթուածները, (վասն զի զքեզ ևս անոնցմով վարժեցուցած են քո ուսուցիչներդ,) պահ մը մէկ կողմ դրիբ նուրբ և փափուկ տաղերդ, և մոտար սիրով ծէրօմի խղիկը, Կրան Պիչի հետ ելար գաշտիկը,

Մօրիսի դարբնոցը յաճախեցիր առանց ձանձրանալու անոր մուլիէն և կունին հարուածներէն, հետեւեցար անոր՝ Պանչառի տունը, տեսար անոր հայրենասիրական վերադարձն իւր ծնած երկիրը, անոր ֆրանսուազ ամուսինն և զաւակունքը, անոր առաքինին Շարլը . և վերջապէս լքեալ որք մը տեսար՝ ամեն զինքն ձանչողաց և իւր գաւառացւոց համարումն ու սէրը զրաւած, երկին ամենէն աննշան մանկիկն՝ ամենէն նշանաւոր մարդն եղած, իւր մուրճով, իւր հանճարով և իւր բարեբարոյութեամբ :

Դու աշխատեցար ՄՈՒԾԻՆ Կամ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ համար . քո այս աշխատութիւնդ մեծ պատիւ է քո անձին և զգացման . քո համբաւդ նախանձելի պիտի լինի բազմաց : — Ծաղկեալ մնաս :

25 Ապրիլ 1879

Մոքենէրը սէրու և բիւշ օրինաց

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁԵՏԵԱՆՑ



ՄՕՐԻՍ

Կ Ա Մ

Ա Շ Խ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մօրիսի հայրն.

ԺԵՐՈՄ Ֆէռակիւ անուանեալ սայլագործն
այրի մնացած էր իւր չորս տարեկան տղով : Նո-
րէն ամուսնանալ չէր ուզէր թէկ , բայց և այն-
պէս տնական գործերու հսկող սպասուհի մ'ալ
բռնելու չափ կարողութիւն չունէր , հետեւարար
և իւր տան ընթացքն անկանոն էր և ինքն խեղճ
հայրը կը տառապէր երբ կը տեսնէր իւր որդին՝
մանուկն Մօրիս դեռ խնամոց կարօտ , մինչդեռ
ինքն ցերեկն աշխատիլ կ'երթար : Դրացի կանայք
թէկ կը սիրէին զՄօրիս , բայց իրենց տնական
զբաղումներն չին ներէր որ անոր ալ հոգ տանին :
Այսպէս տառապեալ հայրն ցաւօք կը թողուր իւր
տնակը , և ագարակներու մէջ աշխատած միջոցին՝
անդադար Մօրիսի վրայ կը խորհէր և կը վսինար

որ մի' գուցէ իւր բացակայութեան ատեն դիպուած մը պատահի նմա : Երբ սայլագործն տեղւոյն հեռաւորութեան համար ստիսլուէր գիշերը տնէն դուրս անցընել, ա'լ իրեն համար անկարելի կ'ըլլար վայրկեան մը աչքերն դոցել :

Բաց 'ի այս դժուարութենէն, ձէրօմ երջանիկ էր . իրեն սեփհական տան մէջ կը բնակէր, որ շրջապատեալ էր ընդարձակ պարտէզով մը և կանեփի արտօվլ մը, ինքինքն սնուցանելու համար բաւական ցորեան կը քաղէր իւր արտէն, և իւր այդին իրեն բաւականացածէն աւելի գինի կը մտակարարէր : Այսպէս ուրեմն ձէրօմ օրական աշխատութեանց արդիւնքով իւր ընչից տուրքն ու բանողչքը վճարելէ յետոյ, կրնար իւր որդւոյն ապագայն համար բաւական գումար մը պահել :

Ձէրօմ կրան զիշի կը հանդիպի.

Սէն—Միշէլ տօնին նախորդ օրը ձէրօմ տուն կը դառնար իւր գործիքներով բեռնաւորեալ, բայց ինքն մինչդեռ ըստ սովորականին մոտպաղ և գործուխն խոնարհած իւր թշուառութեան վրայ կը խորհէր, յանկարծ լալու ձայն մ'առաւ իւր մօտէն և գլուխն վերցնելով տեսաւ զկրան Պիլ որ խրամին եզերքն նատած բոլոր զօրութեամբն դառնացին կը հեծէր :

«Ի՞նչ բան զքեզ այդքան կը տառապեցնէ, հարցուց անոր :

— Ա՛ն, ձէրօմ, լսէ՛ թէ ի՞նչ կ'ըսեմ. չար Մանտոօն ինձ վարձու տուած սենեկէն զիս արտաք-

սել կ'ուզէ, որովհետեւ չեմ կրնար ժամանակին իւր բոլոր վարձն վճարել, և իմ պահարանս գրաւելով, զայն ինձ չվերադարձնել կ'սպառնայ . դու ինքնին վկայէ թէ աղէ՛կ բան է այսպէս չարաշար նեղել խեղճ պառաւ աղջիկ մը, որ միայն իւր բազկաց աշխատութեամբ կրնայ օրական ապրուստն հայթայթել, նա լւա գիտէ թէ չվճարելուս պատճառն ամբողջ ամառը սոսկալի տենդի մ'ենթարկուելով աշխատութենէ արգիլուիլս է :

— Արդ, կրան Պիլ, լսէ՛ իմ դառնաստանս . Մանտոօն քենէ իւր տան վարձը պահանջելով չար չկրնար համարուիլ, աշխատութեամբ նա կարող եղած է իւր ընչից տէր ըլլալ և այժմ որ ծերացած է, պէտք է որ իւր ստացուածոց շահով ապրի :

— Բայց եթէ նա յանձն առնէր քիչ մ'ալ սպասել, անոր ունեցած պարտքս պիտի վճարէի վերջապէս, աշխատութեան և խնայողութեան միջոցաւ :

— Ո՞րքան է պարտքդ :

— Տասն Ֆրանք . և եթէ չվճարեմ, վաղը գիշեր մացատի մ' անկիւնը պատսպարուելու պիտի ստիպուիմ, վասն զի գիւղին մէջ գտնուած բոլոր վարձու սենեակներն շատ սուզ են ինձ համար . իմ հասակս ունեցող կնոջ մը անտանելի չէ ասիկայ : Այնքան վիշտ կ'զգամ այս բանիս վրայ, որ կ'ուզէի մեռնել :

— Ի՞նչ կ'ըսես սակայն, կրան Պիլ, գոնէ պէտք չէ այդպիսի գաղափարներ ունենալ. զիտես որ ատի պարզապէս զԱստուած նախատել է :

— Ի՞նչ կ'ուզէս որ ընեմ, ձէրօմ, պատշաճ է

ինձ որ 52 տարեկան հասակիս մարագներու մէջ հանդշելու տեղ վիճակն է. հա՞պա ձմեռը, հա՞ց մուրալու երթամ, ես որ առնացի կերպով աշխատած եմ:

— Հանդարտէ՛, Մայր Պիշ, անհոգ եղիր այդ մասին. նախ գործիքներս տուն տանիմ և իմ փոքրիկ Մօրիսս ողջագուրեմ, յետոյ կարելի եղածին չափ չուտ հոս կը վերադասնամ և կը ջանանք գործը կարգադրել:

— Կարգադրելն կարծածիդ չափ դիւրին չէ, ժէրօմ, կ'երեւայ թէ դու ինձ չափ չես ճանշնար Մանտուօի բնութիւնը :

— Ոէտք չէ բնաւ յուսահատիլ, կրան Պիշ, կը տեսնես ։ Զայս ըսելով ժէրօմ իւր ճամբան շարունակեց :

Կրան Պիշն.

Մանօն Տիւմէն՝ մարդու պէս մեծահասակ աղջիկ մ' էր, խիստ տղեղ և որ երբէք չէր տնուսնացած, բայց և այնպէս իւր հեղահամբոյր բնաւորութեամբ աշխարհիս ընտիր արարածն կրնար համարուիլ. իւր բարուց քաղցրութեան և իւր բարձր հասակին. համար կրան Պիշ (մեծ եղն) մականունն առած էր, և երկրին մէջ այս անուամբ միայն կը ճանչցուէր: Երբ օրական աշխատութիւն չի գտնէր, կամաւ իւր դրացեաց կ'երթար նոցազաւակներն խնամելու, տնական գործերն հոգալու և լուացք ընելու համար: Խեղճ աղջիկն այն ատեն միայն աւելի երջանիկ կ'ըլլար երբ այլոց

համար կ'զբաղէր: Գիւղին բոլոր փոքր տղայք զանի լաւ կը ճանչէին և երբ հեռուէն զանի տեսնէին, Մայր Պիշ կոչելով դէպ ՚ի նա կը վազէին. և յիրաւի նա ամենուն մոյրն էր: Շատ քիչ անգամ կը պատահէր որ այս աղջիկը հակառակ իւր չքաւորութեան՝ գրավանին մէջ չունենար մէկ քանի ընկոյզ, խնձոր կամ չոր սալոր տղոց բաժնելու համար. նա յաճախ ցամաք հաց կ'ուտէր՝ իւր օրական բաժինն տալու համար իւր սկզբնելուն ինչպէս որ զանոնք կ'անուանէր: Միշտ կը տեսնէին զինքն որ իւր բազկաց վրայ մէկ մէկ մանկիկներ կը կրէր և ուրիշ մէկ քանիներ ալ իւր քղանցքէն կը քաշէին: Իւր տգեղութիւնն անոնց բնաւ խորչելի չէր թուէր, վասն զի իւր դիմաց գիծերը գերազանց բարութեան նշաններ երեւան կը հանէին:

Եթէ հիւանդ մը հսկելու պէտք ունենար, եթէ հարկ ըլլար մեռեալ մը թաղել, կամ ստիպողական յանձնարարութիւն մ'ընելու համար քաղաք վազել, կրան Պիշն կը փնտոէին՝ առանց այս մասին իւր հաւանութիւնը խնդրելու, վասն զի վստահ էին թէ ամեն ինչ թողլով յանձն պիտի տունէր բարեգործութիւն մ' ընելու համար, չը մտածելով բնաւ թէ արդեօք իւր ծառացութեան փոխարէն պիտի վարձատրուի՞ թէ ոչ:

Ժէրօմ կ'առաջարկէ կրան Պիշի
որ իւր տան խնամակալուհի ըլլայ .

Ժէրօմ իւր տունը դառնալով՝ կ'ըսէր ինքնին .
« Բարերար Աստուած կրան Պիշն իմ ճամբուս
վրայ դրաւ : Ի՞նչպէս եղաւ որ իմ շփոթութեանս
և տագնապիս միջոցին աւելի կանուխ չմտածեցի
այս բանիս վրայ : Ոչ ոք առաւել քան զայն կրնայ
լու խնամել իմ տղաս և իմ տունս առանց ինձ
հոգ տալու . և խեղճ աղջիկն աւելի երջանիկ պիտի
ըլլայ իմ տանս մէջ » :

Ժէրօմ իւր գործիքները վար դնելէ յետոյ
դարանին մէջէն 10 Փրանք առնելով գնաց իւր
դրացեաց միոյն տունը իւր Մօրիսն առնելու հա-
մար . յետոյ կրան Պիշի քով վերադարձաւ : Երբ-
որ տղան զայն տեսաւ , իւր հօրը ձեռքը թողլով
վազեց և բարի աղջկան վիզը նետուեցաւ , որ իւր
արտասուալից աչքերն սրբելով՝ զայն իւր գրկաց
մէջ առաւ ու գգուանոք փայփայեց :

« Ուրեմն շատ կը սիրե՞ս այս պզտիկը , հար-
ցուց անոր ժէրօմ :

— Այո՛ , ի՞նչպէս չէ . միթէ ես զանոնք ա-
մենքն ալ չե՞մ սիրեր . բայց Մօրիս անոնց վրայ
առաւելութիւն ունի իւր զգաստութեամբ ու
քաղցր բնաւորութեամբ . այո՛ նա իմ սիրելին է :

— Ե՛հ ուրեմն , կրան Պիշ , կ'ուզե՞ս այլ ես
զինքը չթողոււ . այս վայրկենէս քու բնակութիւնդ
մեր տունը պիտի փոխադրես և դու պիտի կար-
գադրես տան ամեն գործերն , ի՞նչպէս ժամանա-
կաւ կ'ընէր իմ խեղճ սիրելի ամուսինս որ այնքան

քաջասիրոտ և միանդամայն մաքրասէր էր : Դու
պիտի խնամես տղան , և պարապ ժամանակներուդ
այլրց համար աշխատեցն շահածդ քեզ պիտի
ըլլայ :

— Եթէ ես ալ հաւանիմ , ժէրօմ . ես այնքան
երջանիկ պիտի ըլլամ որքան ձուկն ջրին մէջ :

— Կը տեսնե՞ս , խեղճ Պիշ , չեմ ուզեր բնաւ
աշխատիլ երբ կը տեսնեմ որ տղաս ամեն տեսակ
վտանդաւոր պատահարներու ենթարկեալ է և
աղէկ չխնամուիր : ինձ մեծ միսիթարութիւն մը
պիտի մատուցանես եթէ զնա իրեւ մայր խնամես :

— Հանդիստ եղի՛ր , ժէրօմ , կրցածիս չափ
պիտի աշխատիմ զքեզ գոհ ընելու , և դու միշտ
հանդիստ որտով պիտի զբաղիս քու գործոցդ .
լու , բայց Մանտոօն :

— Այդ մասին մի՛ խոռվիր . այժմ միասին
կերթանք զինքը տեսնելու :

Ժէրօմ կը հատուցանէ Մանտոօյի պարտըն :

« Լու ուրեմն , Մայր Պիշ , ըստ Մանտոօ
երբ անոր ներս մոնելն տեսաւ՝ Մօրիսն բազկացը
մէջ առած , ինձ ունեցած պարագդ հատուցանել
կու դա՞ս . վճռական կերպով որոշած եմ , քու
պահարանդ պահել , այժմէն կ'զգուշացնեմ զքեզ :

— Հայր Մանտոօ , ըստ ժէրօմ , խեղճ ան-
ձանց կետ այդքան խստութեամբ վարուելն աղէկ
չէ . դու լու զիտես որ այս աղջիկն ամբողջ ա-
մառը չկրցաւ աշխատիլ , և թէ նա միշտ բարի
կամք ունի :



— Արթէ այդ ի՞նձ կը վերաբերի . ես իմ 10
ֆրանքը կ'ուզեմ , ապա թէ ոչ՝ դարանը պիտի
չտամ :

— Ահա՝ քու 10 ֆրանքը . այժմ Կրան Պիշ
իւր կարասիքն պիտի վերցնէ :

— Ո՛չ , կրնայ նա վերստին իւր սենեկին մէջ
բնակիլ՝ այժմ որ պարտքն վճարեց . դեռ մէկու
մը վարձու չտուի :

— Ճնորհակալ եմ , դրացիս , ըստ պառաւ
աղջիկն խորամանկ դէմքով , ես բնակելու յարմար
տեղ գտայ և այժմ իմ ցնցոտի կարասիքս պիտի
վերցնեմ ասկից :

— Հօ՛ , հօ՛ , ուրեմն ինձ դէմ զայրացեր ես ,
սակայն ինձ կը թուի թէ ինչ գանդատելու տեղ
չունիս բնաւ , դու որ տասն տարիէ ՚ի վեր իմ
սենեկիս մէջ կը բնակիս :

— Արդարեւ այդպէս է , Հայր Մանտոօ , և ՚ի
մասնաւրի այդ մասին վշտացած եմ զիս վարն-
տելուդ , երբ ամենափոքր դումար մը ժամանակին
քեզ չկրցայ վճարել :

— Մի՞թէ քու դարանդ պահել կ'ուզէր , ըստ
Ժէրօմ , թող ուրեմն , քեզ վախցնել ուզեր է ,
ահա՝ ամեն ինչ ։

Յետոյ Մանտոօյի դառնալով , ըստ անոր .

« Ո՞ն , քու բարի և պատուաւոր անձ մ' ըլլա-
լուդ ապացոյցն տալու համար , ե՛կ օդնել ինձ այս
կարասիքն փոխադրելու , վասն զի Կրան Պիշ աս-
կէց վերջը իմ տունս պիտի բնակի » :

Եւ անոր խօսեցաւ այս աղջկան հետ ըրած
դաշնց վրայ :

« Շիտակն խօսելով , Ժէրօմ , թէ որ չես բաղ-

ձար նորէն ամուսնամալ , ամենէն լսւ միջոցն
Կրան Պիշ քովդ առնելն է , որպէս զի տղադ-
խնամէ : Երթամ պատգարակս բերեմ , այն ատեն
մէկ վայրկենի մէջ ամեն բան կրնանք փոխադրել » :

Ժէրօմ հանգիստ կը գտնէ .

Ամեն ինչ յաջողակ կ'երթար Ժէրօմի տան
մէջ , յորմէ հետէ Կրան Պիշի կառավարութեան
ներքեւ էր : Երբ սայլագործն իրիկունը տուն կը
դառնար՝ սեղանը պատրաստ կը դանէր ուր ախոր-
ժանօք կ'ընթրէր և իւր որդւոյն անհամեմատ մաք-
րութեան վրայ կ'զմայլէր . այժմ խեղճ հայրն հան-
գիստ կը ննջէր և զուարթութեամբ կ'աշխատէր ,
այնպէս որ չճանչցուելու չափ փոխուածէր քիչ
ժամանակի մէջ : Կրան Պիշ այնքան խնայող էր որ
միշտ Ժէրօմի իւրաքանչիւր կիրակի շարաթական
ծախուց համար տուած ստակէն քիչ մը բան կ'ա-
ւելցնէր : Ինքն կը բրէր և կ'ոռողէր պարտէզը և
ճաշի ատեն իւր հացն ուտելով Մօրիսը իւր բազ-
կաց վրայ առած զիւզին մէջ կը պալցացնէր .
տղան ալ անոր զլուխը իւր փոքրիկ ձեռաց մէջ
սեղմելով կ'ըսէր .

« Մայր Պիշ , երբ ես մեծնամ և զու ալ չկըր-
նաս քալել ծերութեան պատճառաւ , ես զքեզ
պիտի առաջնորդեմ » :

Այս բարի աղջկան առաջին ամսէն ՚ի վեր կով
մը և այժ մը խնդրած էր Ժէրօմէն . « Դու վանոնք
սնուցանելու համար պէտք եղածն ունիս , ըստ

ամոր, և ասի մեծ դիւրութիւն պիտի ըլլայ մեր
տան համար :

— Բայց կրան Պիշ, Եթէ այս կենդանիներն
դաշտը տանիս արածելու համար և կարագ ու պա-
նիր չինելու զբաղիս, օրական աշխատութենէդ
պիտի արգիլուիս :

— Սակայն ի՞նչ կ'ըսես դու, միթէ ես ձերի-
նէն զատ շահ մ'ունի՞մ»:

Մօրիս այծը տեսնելով ըստ :

«Մայր Պիշ, ինձ կտաւէ պարկ մը պէտք է,
որպէս զի ճաշս մէջը դնելով այծը դաշտ տանիմ
արածել տալու համար, ինչպէս որ կ'ընեն բոլոր
հասակակիցներս » :

Պարկը շինուեցաւ, տղան զայն իւր կոնակին
վրայ կապեց երկու առասանով որք խաչաձեւ զի-
րար կը կարէին կուրծքին վրայ և որք բոնուած էին
փայտէ պղտիկ ծայրերով:

Կրան Պիշ ամեն կիւրակէ առաւօտ եկեղեցի
կը տանէր զՄօրիս. խնայողութեան համար աթոռ
չէր առնէր և յոտին կամ 'ի ծունը կը կենար :
Տղան անոր վրայ կրթնելով, իրբեւ թէ պաշտպա-
նութիւն մը փնտոելու անկէց՝ այն բազմութենէն
որ յիրաւի իրեն սարսափ կ'ազդէր և կէս մը բարի
աղջկան հագուստներուն տակ ծածկեալ կը դիտէր
բոլոր մոնողներն : Երբ աւելի հեռուն դիտելու
համար իւր փոքր գլուխն երկնցնէր, ապահովու-
թեան համար կրան Պիշի պարեգատէն կը բռնէր,
աղջկին ալ մերթ ընդ մերթ գորովալից փափկու-
թեամբ կը դիտէր զՄօրիս, որ սիրուն ժափտով մը
կը պատասխանէր նմա. այն ատեն նորա բազկաց
մէջ ելելով եկեղեցւոյն ամեն կողմն դիւրաւ կը

դիտէր, կը տեսնէր քահանայն 'ի սեղանի և ամեն
շարժմանց խիստ մտադիր կ'ըլլար :

Մօրիս վարժարան կ'երքայ.

Երեկոյ մը, Ճէրօմ իւր ծնդաց վրայ առնե-
նելով զՄօրիս ըստ :

«Մօրիս, ահա՛ վեց տարեկան ես, ժամանակ է,
տղաս, որ պէտք եղածն ուսանիլ սկսիս, կ'ուզե՞ս
դպրոց երթալ:

— Հայր, ատէկց աւելի աղէկ բան չկայ ինձ
համար. բայց իմ այծս, ո՞վ պիտի պահպանէ զայն
իմ բացակայութեանս միջոցին :

— Զայդ մի՛ հոգար, բայց դու պիտի ջանաս
լսւ ուսանելու :

— Օ՛հ, ապահով եղիք, արդէն զընը կը ճանչ-
նամ և մինչեւ հարիւր կրնամ հաշուել:

— Ո՞վ ուսոյց քեզ այդ ամենն :

— Համեստագործին տղան, որոց հետ երրեմն
կ'զրօնում:

— Պատշաճ է այդ հասակը տղան կրթել փա-
փաքին, ըստ կրան Պիշ, միթէ այս անմեղն կը բռ-
նա՞յ հանդարտ կենալ ամբողջ օրն դասարանին
մէջ, նա որ միշտ թռչնոյց պէս կայտառ է » :

Եւ զայս ըսելով, փութաց իւր գրկաց մէջ առ-
նել զՄօրիս իրբեւ թէ զայն իրմէ յափշտակելու
սպառնալիք եղած ըլլար :

«Հարկ է որ դպրոցական կենաց ալ սովորի,
այնպէս չը տղաս, ըստ Ճէրօմ:

— Այս' հայր : Պիտի տեսնես , Կրան Պիշ , թէ
ո՞քան գիտուն պիտի ըլլամ :

— Անդամ մ'ալ ինձ հարցուցէք , չարունակեց
Կրան Պիշ , թէ ինչի պիտի ծառայէ իրեն այդքան
բան գիտնալն . այդ միջոցաւ աւելի լա՞ւ պիտի աշ-
խատի :

— Այս' , անտարակոյս , վասն զի տղիտութիւնն
իրաւացի և ամենամեծ խոչընդուռ մ'է աշխատու-
թեան :

— Իմ կարծիքս այդպէս չէ . միթէ դուք ձեր
գործոց մէջ թերի կը գտնուի՞ք բնաւ , դուք որ ոչ
գրել և ոչ կարդալ գիտէք բոլոր գիւղացիքդ :

— Կարծիքդ սխալ է , Կրան Պիշ , իմ մասիս
մէկդի թողունք որ չկրնալով օրականներս արձա-
նագրել , յաճախ առնելիքներս կը կորսնցնեմ , բայց
և այնպէս ուրիշ կողմէ ալ նկատելով՝ ըստածդ իրա-
ւացի չէ . պէտք է որ տղաս կրթուելով ինչ աւել-
լի նախամեծար ըլլայ : Տգէտ անձինք ամենուն վը-
րայ կը կատածին և կը կարծեն թէ ուրիշները զի-
րենք խարել կ'ուզեն . ահա՛ այս մտածութիւն-
ներն ու գաղափարներն են որ զսիրտն կ'ապակա-
նեն : Զեմ ուզեր որ Մօրիս իմ քաշած նեղու-
թեանցս մասնակից ըլլայ . իմ ատենս տղիտութիւնն
այնքան տաղտկալի չէր , բայց այժմ որ ամեն
տղաչք կը դաստիարակուին , մեծ պակասութիւն
և միանդամայն կորուստ է տղէտ ըլլալն . և դար-
ձեալ ոչ կրնայ արդարանալ տղէտ մնալուն ,
երբ ուսանելու ամեն գիւրութիւնն ունի :

— Սակայն ասիկայ քեզ սուզի պիտի նստի ,
Ժէրօմ :

— Խիստ կարելի է , բայց բոլոր ծախքն մեծ

շահով դրուած ստակէն պիտի ընեմ :

Մօրիս դպրոց դրուեցաւ ուր յառաջդիմու-
թեան նշաններ ցոյց տալու շյապաղեցաւ : Իրիկ-
ուան երբ տուն կը դառնար , իւր հայրն գիմաւո-
րելու կ'երթար և անոր գործիքներէն մէկ մասն
առնելով տուն կը բերէր : Արձակուրդի օրեր Մայր
Պիշի հետ պարտիզին մէջ կ'աշխատէր . գարնան
տաեն , Պ. Ուզմի՞ ուսուցիչն անոր տուաւ երկվե-
ցեակ մը կազմամիք և այնքան ալ աղցանի տունի
զորս անկելով ոսոգեց և իննամեց : Առաջին ան-
գամ որ այս կազմամիքներէն ճաշ մը պատրաստուե-
ցաւ և ընթրեաց համար քաղլեց աղցանի մէկ տուն-
կըն , տղուն ուրախութիւնն անբացարելի եղաւ :
Այս աղան կը սիրէր արդէն կարդ և աշխատու-
թիւն . սուաւուուն մեկնելէ առաջ իրեն կարողու-
թեան յարմարած պէտքերն կը հոգար տան մէջ :

Ճէրօմի աղդրի կը խորտակուի.

Գ. Ճբաղդ պատահար մը ճէրօմի ընտանեաց
երջանկութիւնն վրդովեց . սայլագործն փայտի
խործով բեռնաւորեալ տուն դարձած միջոցին
իյնալով՝ ազգը չախչախեցաւ : Կրան Պիշ որ ու-
ժեղ էր , զանի իւր բազկաց մէջ առնելով անկող-
նոյն մէջ դրաւ և յետոյ բժիշկին մարդ զրկեց :
Խեղճ ճէրօմն չատ կը տառապէր և Պիշն ինչպէս
նաև Մօրիսն անոր քավ նստած կու լային :

Բժիշկն եկաւ . չախչախեալ մասն , որ ազդրին
վերի ծայրն էր , լաւ մը զննելէ յետոյ՝ յայտ յան-
դիման ըստ թէ ընելիք բան մը չկայ , թէ այս

Խորտակեալ մասերն կատարեալ կերպով չեն բը-
ժկուիր և թէ ձէրօմ բոլոր կենաց մէջ տկար պի-
տի մնայ :

«Միթէ կարելի՞ է , աղաղակեց ձէրօմ , որ ես
դատապարտուիմ բոլոր կեանքս անկողնոյ մէջ ան-
ցընել երեսուն երկու տարեկան հասակիս :

— Բարեկամ , ըսաւ բժիշկն , երբ այդ ջախ-
ջախեալ մասն պնդանս , պիտի կարենաս ցերեկ-
ներն անկողնէն երբեմն ելլել , բայց բնաւ պիտի
չքալես :

— Եթէ այդ է ձեր որոշումն , լսաւ կը համա-
րիմ ժառաջ մեսնիլ :

— Հայր , ուրեմն զիս չե՞ս սիրեր , ըսաւ Մօ-
րիս արտասուալից . Կ'ուզե՞ս զիս մէն միայնակ թո-
ղուլ աշխարհիս մէջ :

— Գրէ՛ ուրեմն այս տղադ , ըսաւ կրան Պիշ ,
Մօրիսն անոր երկնցնելով , և տեսնենք , վայրիկեան
մ'առաջ ըսածդ կրկնելու քաջութիւնն պիտի ու-
նենա՞ս :

Ժողովրդապետն որ սոյն միջոցին կը մտնէր ,
հասկցուց ձէրօմի թէ որքան չարագոյն է Նախա-
խնամութեան վճիռներուն դէմ սրտմտին : «Ի՞նչ
պիտի ըլլայ այս խեղճ պղոտիկն , երբ դու ըրպաս ,
չե՞ս գիտեր որ հայր մը միշտ իւր ընտանեաց մեծ
օգուտ ունի որքան ալ սակայն տկար ըլլայ :

Ձէրօմ շատ ամիսներ թէն նեղուեցաւ , բայց
կրան Պիշն զնա զարմանալի կերպով խնամեց : Ինքն
աւելի վիշտէն ընկճեալ էր քան թէ տկարութենէն .
բնաւ չէր խօսէր և ոչոք կը համարձակէր իւր խու-
ցին մէջ ամենափոքր շշուկ մը հանել : Օր մը Մօրիս
դպրոցէն վերադարձաւ պատուոյ չքանշանով :

«Ճէրօմ , ըսաւ կրան Պիշ , անդամ մը մեզ
եթէ դառնաս , պիտի տեսնես թէ դեռ քեզի հա-
մար ուրախութիւն չպակսիր բնաւ այս աշխարհիս
մէջ » :

Ձէրօմ աչքերն բանալով տեսաւ զՄօրիս , որ
իւր անկողնոյն քով աթոռի մը վրայ յոտին կեցած
էր : Ի տես չքանշանին՝ ձէրօմ ուրախութեան և
գոհունակութեան առաստ արտասուքներ թափեց
և զիւր սիրուն տղան ողջագուրեց :

Կրան Պիշ , չափազանց հալարտացած Մօրիսի
չքանշանին վրայ , արդէն ելած էր տնէն բոլոր
դրացեաց իմացնելու :

Կրան Պիշ իւր ոսկեայ խաջն կը վաճառէ .

Երբ բորբոքումն անցաւ և ջախջախեալ մասն
բնական պնդութիւնն ստացաւ , ձէրօմն անկողնէն
հանելու մասին խորհրդակցեցան և բժիշկն յայտ-
նեց թէ անհնար է որ ձէրօմ սովորական աթոռի
վրայ նստի , հետեւաբար թիկնաթոռի մը պէտք
ունի . իսկոյն մէկը զրկեցին դղեակն որ թիկնա-
թոռ մը փոխ առնէ :

«Բարեկամ , ըսաւ բժիշկն , կարասի մ'է այս ,
որ այժմ անհրաժեշտ հարկաւոր է ձեզ . պէտք է
ուրեմն որ հաստ մը հայթայթէք , եթէ չէք ուզեր
ամբողջ կեանքերնիդ անկողնոյ մէջ անցընել :

— Ոչ , յիրաւի կ'ըսեմ , Պարոն , թիկնաթոռ
պիտի չգնեմ . արդէն ինձ համար մեծ վիշտ է ա-
ռանց աշխատելու ապրիլ և ուտել այն դրամն ,
զոր ես խնայողութեամբ հաւաքեցի որդւոյս ապա-

գային համար : Եթէ հարկ է անկողին մնալ, յանձըն պիտի առնեմ զայդ . այս աշխարհիս վրայ գեռինձ մնացած երջանկութիւնն, փոյթ չէ թէ ասկից վերջն անկողնոյ մէջ կամ դուրսը վայելեմ :

— Բայց զիտե՞ս որ շարունակ անկողնոյ մէջ մնալով թերեւս նորանոր տկարութեանց տեղի տաս :

— Ինձի համար նոյն բանն է . հաստատ որոշած եմ թիկնաթոռ չգնել :

Կրան Պիշ լաւ ճանչնալով ձէրօմի հաստատամութիւնն, բժիշկին հետեւեցաւ իւր պահոցէն փոքր տուփ մ'առնելով : Երբոր սենեկէն դուրս եւլաւ, հարցուց բժիշկին . «Պարոն, քանի՞ կ'արժէ դիպուածով ձեռք ինկած թիկնաթոռ մը, որ ձէրօմի վիճակին յարմար դայ :

— Գիտեմ որ հատ մը կայ ծախու և շատ կը յարմարի մեր հիւանդին . ունի պղոփկ անիւներ, ոտքերն կրթնցնելու համար տախտակ մը, քնանալ հարկ եղած ատեն գլուխն դնելու համար բարձիկներ յենարանին վրայ, և ստորին մասին վրայ դրսանակներ, բայց 55 ֆրանք է դինն :

— Ահա', Պարոն բժիշկ, առէք հանդուցեալ մօրս ոսկեայ խաչն, որոյ համար կ'ըսէին միշտ թէ 48 ֆրանք կ'արժէ : Սակայն ես երգունցած էի զայն չվաճառել . շատ անգամներ թէև մեծ նեղութեան մէջ մնացի, բայց լաւ համարեցի անօթութիւն և թշուառութիւն կըել, քան թէ անկէ բաժնուիլ, այլ այսօր տարբեր է . նեղուողն ես չեմ . լաւ կը ճանշնամ ձէրօմի բնութիւնն, նա նախադաս պիտի համարի իւր մնացեալ օրերն չարչարանոք անցընել, քան թէ թիկնաթոռ մը դնել . և

որովհետեւ այդ կարասին անկրածելոր է նմա, վաճառեցէք ապա իմ ոսկեայ խաչն, Պարոն, եթէ կը հաճիք, որպէս զի այս ծախքին առաջքն կարենանք առնուել : Մլաղացն վաճառանոցէն դարձած ատեն հոս կը բերէ զայն» :

Բժիշկն խանդաղատեալ, խաչն առնելով մեկնեցաւ :

Ճերօմ կը դժգոհի 'ի տես բիկնարոռին.

Հետեւեալ հինգչարթի օրը, ձէրօմի դրան առջեւ կեցաւ մլաղացին կառքն, ուսկից թիկնաթոռն իջեցուցին : Զայն տեսնելով հիւանդն բարկութեամբ դոչեց . «Ինչ է այս, ինչու ինձ թիկնաթոռ են դներ, երբ ես զայն արդիլեցի . ովկ պիտի վճարէ անոր զինը . արդէն տան մէջ մեր ապրուատին բաւականանալու համար չափաւոր ստակ չկայ :

— Հանդարտեցէք, բարեկամ, ըստ բժիշկն որ նոյն միջոցին կը մտնէր, գինը վճարուած է» :

Եւ դէպ 'ի կրան Պիշն յառաջանալով, յանձնեց նմա իւր խաչն դինէն աւելցած 15 ֆրանքն : «Ինչ կը նշանակէ այս, դոչեց ճերօմ :

— Սա կը նշանակէ որ այս բարեսիրս աղջիկն իւր մօրմէն մնացած ոսկեայ խաչն վաճառել տուառ որպէս զի այն ստակով մեզ թիկնաթոռ մը դնենք :

— Ո՛հ, կրան Պիշ, ըստ ձէրօմ, արտասուալից աչօք, վաճառեցի՞ր ուրեմն այն ոսկեայ խաչն, զոր յաւէրժ չթողուլ ուխտած էիր :

— Արդարեւ գովելի է ըրածդ, կրան Պիշ,

ըսաւ ձողովրդապետն որ հոն կը գտնուէր , և վլա-
տահ եղիր որ այդ զոհողութեանդ փոխարէն պի-
տի ընդունիս Աստուծմէ :

— Ոչինչ բան մ'է ըրածս , Պ. ձողովրդապետ ,
երբ ձէրօմ վրաս գթալով , սենեկիս վարձքն վճա-
րեց , ես իսկ կրնայի զայն վճարել խաչս ծախե-
լով , բայց ես զայն ինձ համար օրհնութիւն մը հա-
մարելով՝ խնամով կը պահէի իբրեւ գերադոյն քան
դոր ինչ ունիմ :

— Եւ սակայն այժմ զայն ինձ համար վաճա-
ռեցիր , գոչեց ձէրօմ :

— Հանդիստ եղիր , կրան Պիշ , ըսաւ ձողովր-
դապետն , այս թիկնաթուն քեզ խաչէն աւելի
մեծ օրհնութիւն մը պիտի ըլլայ : Ամեն բարի գոր-
ծերն արձանագրեալ են յերկինս , և Աստուծ
բնաւ շմունար զանոնք :

— Մայր Պիշ , կրկնեց ձէրօմ , աչաց արտա-
սուքներն որբելով , Աստուծած զիս լսւ վարձատ-
րեց ՚ի փոխարէն քեզ մատուցած փոքր ծառայու-
թեանս : Դու միշտ իբրև ճշմարիստ մայր խնամեցիր
զմեզ , և առանց քեզի ի՞նչ պիտի ըլլայի այսօր :

— Լաւ ուրեմն , թող զիս որ իմ գործս տես-
նեմ և շարունակ մի՛ յանդիմաներ զիս երբ քեզմով
կ'զբաղիմ :

Բայց խեղճ մարդն դժգոհ էր տեսնելով որ ի-
րեն համար ստակ կը վատնուի :

Սակայն ձէրօմ անյապաշ հասկցաւ թէ ո՛ր-
քան կարեւոր էր իրեն թիկնաթուն . իւր գոր-
ծիքները գրապանակներուն մէջ կը դնէր , վասն զի
ձանձրոյթն փարատելու համար մանր գործերով
կ'զբաղէր : Հարկ ելաւ կովը վաճառել , երբ պա-

հեստի դրուած ստակն սպառեցաւ : Կրան Պիշ այլ
եւս կովուն զբաղումը չունենալուն , երբ պատեհ
առիթ գտնէր , օրականով աշխատիլ կ'երթար .
տնէն մեկնելէ յառաջ՝ ձէրօմն անկողնէն կը հա-
նէր , և թիկնաթուն մէջ կը զետեղէր , յետոյ ա-
նոր մօտ կը դնէր ինչ որ կրնար պէտք ունենալ
նա մինչեւ ձաշի ատեն , երբ ինքն կը վերադառ-
նար : Բայց այս ընտիր և բարեսիրա աղջիկը փո-
խանակ իւր շահածն իրեն պահելու , ինչպէս որ ո-
րոցուած էր , տնական ծախուց կը գործածէր :
Շատ անդամ իւր ստակովն միս կը դնէր , և ձէրօմ
կը բարկանար ատարկելով թէ ինքն պէտք չունի
այնքան լսւ կերպով մնանելու , քանի որ բանի մը
օգտակար չէր . մանաւանդ երբ կ'իմանարոր միսն
կրան Պիշի ստակովն առնուածէ , եւս առաւել կը
բարկանար . խեղճ հիւանդն անտանելի եղած էր
իւր դիւրագրդուութեամբն , նա որ երբեմն այն-
քան համբերող , հեղահամբոյր և բարի էր , իսկ
այժմ անոր հետ խօսիլ իսկ անհնար էր : Անդա-
դար կը կրկնէր թէ ով որ չաշխատիր , ապրելու
արժանի չէ , և ինքզինքն կերակրէ կը զրկէր : Կրան
Պիշն ալ սաստիկ կը վիրաւորուէր այս բաներուս
վրայ . Մօրիս որ արդէն ինը տարեկան էր , բարե-
սիրա աղջիան վզին փարելով կ'ըսէր .

«Մայր Պիշ , ո՛րքան կ'ուզէի չափահաս ըլլալ ,
որպէս զի կարենայի մեր ասլրուստն ճարել և այն
ատեն դու ալ բնաւ հայրս մինակ պիտի չթողուիր
աշխատիլ երթալու համար » :

Մօրիս խր ընկերներէն մին կը պաշտպանէ.

Ու մը , երեկոյեան արձակուրդէն յետոյ , քանի մը մեծ դպրոցական տղայք գնդակ խաղալով կ'զբունուին : Տարակուսելի հարուած մը դատելու դրադած էին և արդէն բարկութենէ տաքցած կը պուային , Երբ երկու պղտիկ տղաքներ իրարու ետեւէ վազկեռվ գետինը դանուած գնդակները ցրուեցին : Խաղացողներն , արդէն վիճաբանութենէն գրդուեալ բարկացան և անոնց ամենէն զօրաւորը բանեց պղտիկներէն մին որ կը փախչէր , և գանակոծեց զայն : Մօրիս ըստ անոր .

«Պօտուէն , պէտք է որ չուտ այդ տղան հանգիստ թողուս ապա թէ ոչ քեզի դէմ դատ ունիմ :

— Ինծի դէմ դա՛տ . քենէ չեմ վախնար , և քեզի պէս զօրաւորներ երկու հատը մէկէն դիւրութեամբ կրնամ ծէծել :

— Այդ խօսքերն մէկզի թո՛ղ , դու միայն պղտիկները կրնաս ծէծել , մեծի մը վրայ բնաւ չես կրնար յարձակիլ , նոյն իսկ և ոչ իմ վրաս . այդ համարձակութիւնն չես կրնար ունենալ :

— Հա՛ , հա՛ , այդ պէ՞ս կը կարծես , ըստ ուրեմն , կը տեսնես այժմ » .

Այս ըսելով Պօտուէն , տղան թողլով Մօրիսի վրայ յարձակեցաւ կատաղաբար՝ զայն զգետնելու համար :

«Փախի՛ր , պղտիկ , գոչեց Մօրիս այն տղուն զոր Պօտուէն թողած էր , չուտ փախիր » :

Եւ տղան աս խօսքը կրկնել չտալով փախաւ :

«Կեցցե՛ս , Մօրիս , կեցցե՛ս» , գոչեցին տղաքն միաբերան :

Պօտուէն , Մօրիսի խորամանկութենէն խարուած ըլլալուն վրայ ամօթահար , որով ուզեր էր տղան աղատել և Պօտուէնի բարկութիւնը իջեցընել , չկրցաւ ինքվինքն վապել , մանաւանդ երբ տեսաւ որ բոլոր ընկերներն կը խնդան , քար մը տեսաւ և Մօրիսի ճակատին նետելով սկատուեց : Խոկոյն տղայոց խումբն անհետացաւ :

Մօրիս տուն դարձաւ ճակատին վրայ լայն վէրքով մը . կրան Պիշ սարսափեցաւ , Երբ նորա արիւնաթաթախ գէմքն տեսաւ :

«Աստուած իմ , ի՞նչ պատահեցաւ քեզ տղաս , կանչեց ձերօմ , զքեզ ծէծեցի՞ն :

— Ոչ , Հայր իմ , ծէծ չեմ կերած , անհոգ եղիք , ոչինչ բան մ'է , կ'անցնի :

— Բայց ո՞ւսկից ընդունեցար այս սոսկազի հարուածը :

— Ահա՛ ձեզ պիտի պատմեմ .

Եւ իրեն պատահածն՝ Մօրիս քանի մը բառով հասկցուց :

«Կ'ապահովցնեմ զքեզ թէ բան մը չէ , կը կրնեց տղան , այս փոքր ցաւին դէմ դնելու չափ զօրութիւն չպակսիր ինձ :

— Բարի տղեկ մ' ես , ըստ ձերօմ որդւոյն զանի բազկաց մէջ առնելով , շատ գովելի է պղտիկներն և տկարներն պաշտպանել զօրաւորին և մեծին դէմ , որովհետեւ կը տեսնես , որդեակ իմ , որ ինքվինքն չկրցող պաշտպանողին դէմ յարձակում ընելէն աւելի վատութիւն չկայ » :

Կրան Պիշ թողուց որ վէրքին արիւնն աղէկ մը

վագէ , յետոյ լաթն առնիքայի ջրոյ մէջ թաթաւեւրվ , վրան դրաւ և սիրելի մանկան ճակատն խնամքով փաթաթեց :

Մօրիս առաջին անգամ դրամ կը շահի .

Մօրիս առաջին Հաղորդութիւնն առնելէ յետոյ կ'զգար թէ այլ եւս աշխատիլ հարկ էր : Յաճախ երկու դասերու միջոցի պարապ ատենները դիւզին դարբինին կ'երթար . հոն կ'ուզէր օդասկար ըլլալ , կամ ծիերն պայտելու համար եկող յաճախորդաց կամ նոյն իսկ դարբինին : Երբեմն ճանձերը կը հալածէր , կամ դամերն կը պնդէր , երբեմն ալ հնոցին մէջ ածուխ կը գնէր , խանութը կը մաքրէր ու կրակն արծարծելու համար կը փշէր , եթէ աշխատաւորք ուրիշ տեղ զբաղած ըլլային . երբեմն ալ պայտելու համար բերուած ծիերն ջուր խմցնելու կը տանէր : Եթէ ծխախոտ կամ ուրիշ բան մը առնելու դրկուէր , 'ի դարձին գրեթէ միշտ քիչ մը դրամ կ'ընդունէր աշխատութեանը փոխարէն : Այն ատեն տղան իւր հօր անձնական առողջութեան նպաստող ուտելիք մը կը գնէր . Ժէրօմ թէւ առ երեսս կ'արհամարէր զՄօրիս որ այսպէս անխորհրդաբար իրեն տրուած առերը կը վատնէ , բայց և այնպէս ինքնին իւր որդւոյն բարութեանը վրայ այնքան մեծ հաճոյք կ'զգար որ չէր կարող արտասուքներն զսպել :

Օր մը հիւանդ ճիռւ մը համար անսանաբոյժ վնտուելու դրկեցին զՄօրիս 'ի քաղաքն , և իրեն այս աշխատութեան փոխարէն 50 սանդիմ ձեռք

ձգեց : Պղտիկ տղան վաղեց խսկոյն գիւղին պանդոկապետին , որ համեմներ ալ կը վաճառէր և կէս լիտր շաքար գնեց . իւր հայրը գինւոյ մէջ եփած հացը շատ կը սիրէր , վասն զի անով միայն իւր առողջութիւնն աւելի կը բարւոքէր , բայց խնայողութեան համար առանց շաքարի կ'ուտէր . և Մօրիս շատ ուրախ էր տեսնելով որ հայրն բաւական ատեն շաքարով պիտի կարենաց ուտել , ուստի այս շաքարն հօրը տարաւ , յուսալով թէ ասի մեծ հաճոյք պիտի պատճառէ նմա :

Ժէրօմ այնքան խանդաղատեցաւ իւր որդւոյն ուրախութենէն և նորա գորովանաց այս ապացոյցէն որ չհամարձակելով ըստ սովորականին բարկանալ , չնորհակալ ըլլալով ըսաւ .

«Ցղաս , կը տեսնեմ որ բաւական խնայող չես , քու աշխատութեամբդ շահած ստակդ պէտք է հաւաքես , որպէս զի քեզ հագուստ մը գնես , զի ահա՛ ձմեռն մօտ է :

— Հայրիկ , ըսաւ Մօրիս աներկիւղ հաստատութեամբ , ինձ համար ամենէն լաւ խնայողութիւնը ձեր առողջութիւնը խնամելն է . այնպէս չէ , Մայր Պիշ . ես բանի մը պէտք չունիմ և եթէ ձմեռն ալ ցրտէ նեղուիմ , կը վաղեմ , կ'ոստնում տաքնալու համար . միայն կ'ուզեմ զձեզ գոհ որդուով տեսնել , և երբ դուք գոհ էք , Մայր Պիշն ու ես ալ երջանիկ կ'ըլլանք . միթէ զայս չգիտէք :

— Կը լսե՞ս , ի՞նչպէս կը պատճառաբանէ այս պղտիկը , ըսաւ կրան Պիշ , պէտք է ուշադիր ըլլաս , Ժէրօմ , և ինքզինքդ ուրիշ անդամներու պէս ապերջանիկ չհամարիս :

Մօրիս յանձն կ'առնու եզներ վարել .

Հինդշաբթի առաւտօտ մը , Մօրիս երբ կրակը կը փշէր Պէռթրանի դարբնոցին մէջ , մինչդեռ եղանականառի մը ձին կը պայտէին , լուց որ ձիւն տէրը կ'ըսէր .

«Այս իրիկուն կ'սպասեմ եղանց մեծ խումբի մը որ գիւղին իջեւանը պիտի անցընէ գիշերն , բայց վաղը զանոնք Վիշերզօն տանելու համար վարող չունիմ . կրնա՞մ ձեր գիւղին մէջ այս պաշտօնին յարմար տղաքներ գտնել . այս անգամ սովորական ճամբով պիտի չտանիմ , այլ ուրիշ ճամբով մը որ միւսէն աւելի կանոնաւոր է և միանդամայն աւելի կարձ , այս պատճառաւ կ'ուզեմ իմ հօտս այդ ճամբէն տանիլ : Ձեր երկրին մատաղ տղայք վարժուած չըլլալով եզներ վարել կրնայ ըլլալ որ անոնցմէ վախնան :

— Վախնա՛լ , ըստ Մօրիս , եթէ կ'ուզէք զիս առնել այդ պաշտօնին համար , ձեր ուզածին պէս պիտի առաջնորդեմ ձեր եզներն ՚ի Վիշերզօն :

— Դո՞ւ , պղտիկ , դեռ խիստ մատաղ ես այդ-պիտի տաֆանելի արուեստի մը ձեռնարկելու . գիտե՞ս որ ասկից մինչեւ Վիշերզօն չորս մղոն է . ի՞րաւ է որ եզներն չուտ չեն քալեր , բայց միշտ ուղիղ ճամբէն կը չեղին , այնպէս որ հարկ կ'ըլլայ անդադար անոնց ետեւէն պօսալ , երբեմն ասդին երբեմն անդին վազել , նաեւ եզներն ճամբուն կէսին հանդիստ կ'առնեն , հետեւարար դու ալ առաւտօւեան ժամը երեքէն առաջ չես կրնար վրադառնալ :

— Ատոնք ամենքն ի՞նչ փոյթ ինձ , ըստ Մօրիս , հանդիստ եղիք , ձեր հօտն պիտի առաջնորդեմ ինչպէս որ ուզէք :

— Այս տղան թէ եւ պղտիկ է , բայց խելք չը պակսիր իրեն , ըստ դարբինն , և շատ արիստիրտ է :

— Լաւ ուրեմն , պղտիկ , յարեց եղնավաճառն , քու ընկերներէդ մէկը գտիր որ քեզ ընկերանայ , բայց քէնէ աւելի մեծ ըլլայ . ձեզնէ իւրաքանչիւրը 5 ֆրանդ վարձք պիտի ստանայ :

— Կ'երթամ ֆրիդէն դանել . նա որ տասնը չորս տարեկան է և աշխատել կ'ուզէ , յուսամ թէ ուրախ պիտի ըլլայ եթէ ստակ շահելու որ և իցէ աշխատութիւն մը գտնէ » :

Երբ կրան Պիշ իսացաւ որ Մօրիս եզներ պիտի վարէ մինչ ՚ի Վիշերզօն և գիշերն հազիւ պիտի կարենայ տուն դառնալ , բարձր աղաղակներ հանց , ըսելով թէ ալ այս անգամ պիտի դիմադրէ և չթողու զՄօրիս :

«Ինչո՞ւ պիտի չթողուս , ըստ ձէրօմ , պէտք է որ կանուխէն վարժուի աշխատութեան իւր հացը շահելու համար . վասն զի եթէ դեռ շատ ալ ապրելու ըլլամ , խեղճ որդւոյս մեծ ժառանգութիւն մը պիտի չձգեմ :

— Ի՞նչպէս , ձէրօմ , կրնաս հանդուրժել , որ այս տղան դիշերը մինակ ճամբայ քալէ :

— Այս՝ Մայր Պիշ , և կարծեմ ասով մեծ ժառայութիւն մ'ըրած պիտի ըլլամ իրեն . գնա՛ , տղաս և մի՛ երկնչիր բնաւ , պատուաւոր տղայ մ'եղիր առանց նենդութեան ստակ շահելով և այն տաեն բնաւ պարապ պիտի չմնաս , քեզ գործ յանձնողներ շատ պիտի ըլլան :

— Հանդարտեցէք հայր իմ, ամենքն ինձ համար պիտի ըսեն, ինչպէս կ'ըսեն ձեզ համար, «Ֆէռակիւ մ'է», ամեն ինչ կարելի է նմա վստահիւ» :

Մօրիս կ'երբայ ՚ի վիերգօն.

Հարկ եղաւ որ կրան Պիշ զիջանի : Ուստի արդուն պարկին մէջ դրաւ պանրի և հացի լսւ կտոր մը, իէս զինիի պլատիկ շիշով մը . այն ատեն Մօրիս զանի ողջագուրելով ըսաւ .

«Մի՛ վախնար, Մայր Պիշ, ինձ բան մը պիտի չպատահի, վստահ եմ, մանաւանդ որ մինակ ալ չեմ, քանի որ Ֆրիզէն ինձ պիտի ընկերանայ : Կը տեսնէ՞ս, ըսաւ անոր ցած ձայնով, պէտք է որ հիմայ ստակ շահիմ, որպէս զի այլ եւս հայրս վիշտ չկրէ . իմ կարգս է այժմ, պէտք է որ զինքը միխթարեմ, աշխատութենէ և յոդնութենէ չեմ փախիր» :

Երկու տղայք իրենց յանձնուած պաշտօնն այնքան լսւ կատարեցին, մանաւանդ Մօրիս, որ աւելի գործունեայ և աւելի հանճարեղ էր, որ վաճառականն իրենց ետեւէն ծիով հասաւ ու շատ գոհ ըլլալով անոնցմէ, խոստացաւ ուրիշ առիթներու նորէն զիրենք գործածել :

Գիշերն, մէրօմ չէր քնանար, վասն զի ներս քուստ այնքան անհանգիստ էր, որքան չէր ուզեր ցուցնել արտաքուստ . մէկ մ'ալ լսեց որ տանը շուրջը ոտնաձայն կայ :

«Կրան Պիշ, ըսաւ, կը քնանա՞ս :

— Ո՛հ, ոչ, կը լսեմ որ պզտիկն կուգայ, և արդէն ելած եմ ճրագն վառելու» :

Մօրիս դուռը զարկաւ և երբ ներս մոռաւ՝ շիտակ հօրը անկողնոյն քով վազեց և անոր տուաւ Երեք Փրանքն՝ զանոնք շահելուն վրայ հապարտ և ուրախ :

«Ահաւասիկ, հայր, ամրող շաբաթուան մը ծախքն» :

Ժէրօմ ողջագուրեց զիւր որդեակն, երջանիկ տեսնելով նորա եռանդուն քաջասրտութիւնն և մտաց հաստատութիւնը :

«Շուտ անկողին մտիր, ըսաւ հայրն աղուն :

— Եւ ես ալ, ըսաւ կրան Պիշ, քեզ պուտ մը թերմոն տամ՝ զիշերուան վաստառողջ հովն փարատելու համար :

Բայց բան մը չե՞ս կերեր բնաւ, պարկիդ մէջ դրուած հացն ու պանիրն անվասս կեցած են :

— Կերայ, Մայր Պիշ, և խիստ լսւ տեսակէն . Երբոր եղներն ասկից երկու մզոն հեռու ճամբուն վրայ գտնուած զիւղն հանդիստ առին, մեզ վարձող վաճառականն հրաւիրեց մեզ իրեն հետ ճաշելու, և յետոյ իրիկունը, վիշերգոնի մէջ մեզ ազէկ ընթրիք մ' ընել տուաւ : Ուստ միս կերայ և ասով միայն զօրութիւն առնելով կրցայ հոս վերադառնալ :

— Օ՞ն, ըսաւ, բարի աղջիկն՝ անոր տալով տաք գինին, խմէ՛ և շուտ պառկէ՛, վաղն առաւօտ այսօրուան յոդնութիւնը այլ եւս պիտի չզգաս :

Մօրիս զործ կը խնդրէ դարբինեն .

Հետեւեալ օրն , Մօրիս , անկողնէն ելլելով ,
զնաց դարբինը տեսնելու :

«Լաւ ուրեմն , փոքրիկ ճանապարհորդ , ըստ
անոր Պէոթրան , ի՞նչովէս գտար Վիէրզօնը :

— Այս քաղաքն ինձ շատ մեծ և շատ սիրուն
երեւցաւ , մանաւանդ Շեւ գետն իւր ջրանցքով
և իրեն ձիւղին ելով ուրիշ գետով մը : Վաճառա-
կան զիս կարի զարմացեալ տեսնելով ըստ թէ՝
զիս տեսնողն խկոյն կը նշմարէ թէ բնաւ իմ գիւ-
ղէս դուրս չեմ ելած , և ինձ առաջարկեց մէկտեղ
Բարիդ տանել զիս երր նորէն ասկից անցնի :

— Կարո՞ղ ես այնքան հեռուներն երթալու :

— Ինչո՞ւ չէ , Պարոն Պէոթրան . առ այժմ
դուք ինձ դործ կու տաք աշխատելու , ուրեմն զիս
ձեր դարնոցին մէջ առէք . ինչ որ ուզէք կ'ընեմ-
ըսէք , Հայր Պէոթրան , կարել՞է :

— Բայց դու դեռ բաւական զօրաւոր չես ,
աղսու :

— Ե՞լո՞ր տաս երկու տարեկան ելով ալրց մէջ
ինձ չափ զօրաւոր չկայ , Պ. Պէոթրան , նաեւ օր
ըստ օրէ զօրութիւնս պիտի աւելնայ . մեծ ուրա-
խութիւն զգացի երէկ խեղճ հօրս քիչ մը ստակ
տանելով , և կ'ուզեմ որ ամեն ատեն շահիմ , որ-
պէս զի հայրս այնքան թշուառ չըլլայ :

— Եթէ յանձն կ'առնես ամբողջ օրն փուքով
կրակն փշել՝ քեզի շաբաթն Զ Փրանք կու տամ , բայց
քեզ կանխաւ կ'իմացնեմ թէ շատ տաղտկալ աշ-
խատութիւն մ'է :

— Փոյթ չէ ինձ համար , չնորհակալ եմ Պ.
Պէոթրան , վաղն առաւօտ դեռ դարբնոցը չբա-
ցուած հո՛ս պիտի ըլլամ » :

Իրիկունը , Մօրիս անկողին մտնելով , չէր կըր-
նար քնանալ վասն զի կը կարծէր թէ պակասու-
թիւն մ' ըրած է առանց իւր հօրը հաւանութեան
դարբինէն դործ խնդրելուն . զանի միսիթարելու
ուրախութեան մէջ մոռցած էր նմա կարծիք հար-
ցնել այս մասին :

Ճէրօմ կարծէլով թէ տղան քնացած է՝ ըստ
Կրան Պիշի :

«Գեռ օ՛րքան կը մնայ մեզ երկու ամիս յա-
ռուաջ ծախած գինիէս :

— Վեց Փրանդ , խեղճ ճէրօմ , և ոչ աւելի :

— Օ՛չ . Կրան Պիշ , մեր վերջի կտոր մը զի-
նին ծախսելով , պիտի չկրնանք մինչեւ քաղի ատեն
երթալ . յետոյ պիտի գան հունձքի և այգեկութքի
ծախսեր , ուրեմն հարկ պիտի ըլլայ ինձ զրկուիլ
այն գեղեցիկ մարզէն . զոր ինձ պատահած վրան-
գին տարին գնեցի . հինգ տարիէ աւելի անոր վր-
րայ աչք ունենալով : Ինչովէս ամեն ատեն կ'ըսեմ ,
նորէն կը կրկնեմ թէ ես իմ տանս կործանման
պատճառ մ' եմ :

— Նորէն այդպէս մի՛ վհատիր , ճէրօմ , չատ
անիրաւ կը խօսիս , դու օր ըստ օրէ կը նիհարնաս ,
վասն զի միայն վշաերդ կը մտած ես , միթէ ես կըտ-
րուած խոտերն չորցնելու և հասկաքալ ընելու
համար օրական վարձքով չե՞մ երթար . յետոյ պի-
տի գան կանեփի հունձքն և այգեկութքն . նեղու-
թիւն պիտի չկրինք , վատահ եղիր իմ վրաս :

— Բայց չեմ ուզեր որ քու չահածդդ անական

ծախուց վատնես, արդարացի բան մը չէ այդ, խեղճ աղջիկ :

— Թո՛ղ այդ խօսքերն, Ժէրօմ, միթէ ես ալ տնէն չե՞մ. և պատիկ Մօրիսն իմս չէ՝, ինչպէս քուկդէ :

— Անհանդիստ մի՛ ըլլաք, հայրիկ, մի՛ գուցէ հիւանդանաք, ըսաւ Մօրիս :

— Դու, պատիկ, միթէ քնացած չե՞ս դեռ :

— Ո՛չ, հայր իմ, կը մտածէի թէ ինչպէս ձեզ ըսեմ որ ես դարբինէն գործ ուղեցի, և նա ինձ առաջարկեց փուքով կրակն փշել, չարաթն Զ Փըրանք վարձքով :

— Բայց դպրո՛ցը, տղաս, այնչափ սորված չես որ ալ չչարունակես ուսմունքդ, և արդէն իմ փափաքսէ որ քեզ ուսուցածնին կատարելապէս գիտնաս :

— Այդ պարագ ային վրայ խորհելով, քիչ մը կը յուզուիմ, որովհետեւ դեռ բաւական ատեն ուսուցչին դասերուն կարօտ եմ. բայց ես զինքն տեսնել պիտի երթամ և նա ինձ այս մասին խորհուրդ մը պիտի տայ, որպէս զի այնպէս կարգադրեմ: Հանգիստ եղիք, հայրիկ, և մի՛ խորհիք ձեր մարդագետինն վաճառել :

Մօրիս զուսուցիչն տեսնել կ'երբայ.

Հետեւեալ առաւօտուն, խանութը բացուած ատեն Մօրիս դարբնոյն քով գտնուիլ շյապաղեցաւ: Պէսթրան անոր պիտի կաշիէ զոգնոց մը նուիրեց փայլուն ճարմանդով մը, և նա բոլոր օրն

շափահաս մարդու մը պէս աշխատեցաւ: Երբ կրակը շփշէր, ուրիշ գործի կ'պաղէր և երբէք պարապէ չէր կենար: Նոյն իսկ գործաւորին բացակայութեան ատեն վայրկեան մը մուրճը ձեռքն առաւ :

«Գիտե՞ս որ բոլորովին անյաջող չես, ըսաւ դարբինն :

— Տէր իմ, սորվելու մեծ փափաք ունիմ. ուշ բեմն զիս երբեմն աշխատցուցէք, գիտէք թէ ես աշխատութենէ չեմ փախիր և պիտի ջանամ ըստ կարելոյն ձեզ գոհացնել:

Կէս օրին, Մօրիս գնաց ուսուցիչն գտնելու և ըսաւ .

«Պարոն Ռըմի, ահա արդէն տաս երկու տառեկան եմ: Զօրութիւն չպակսիր ինձ և ժամանակէ որ իմ կարգիս աշխատիմ: Յորմէ հետէ հայրս վատառողջէ, ոչ ոք կը շահի մեր տան մէջ, վասն զի կրան Պիշ այլ եւս չկրնար հայրս մինակ թողուլ»:

Եւ անոր պատմեց թէ դարբինին քով իրբեւ սպասեալ մտածէ :

«Իրաւունք ունիս տղաս, ըսաւ ուսուցիչն, այո՛, հարկէ մտածես թէ ի՞նչ կերպով կրնաս ընտանիքդ ինամել քու կարեացդ համեմատ :

— Բայց, պարոն, ձեր ինձ աւանդած դասերուն վրայ կատարեալ հմտութիւն չունիմ, և այս մասին հայրս կը ցաւի, գիտէք, որ և ամենափոքր բան մը սկատնառ բոնելով կը արտնչայ :

— Բարեկամ, այդ մասին զինքն հանդարտեցնելն դիւրին է: դու ամեն երեկոյ, դարբինին քով գործերդ աւարտելէ յետոյ ինձ կու զաս և ես ալ քեզ կ'ուսուցանեմ կարդալ, զրել և հաշուել:

— Ո՞՛ : չնորհակալ եմ, Պարոն Ուժի, ո՞րքան
մեծ ծառայութիւն մը կը մատուցանէք ինձ : Պէս-
թրանի քով տակաւ առ տակաւ արուեստ պիտի
սորվիմ քիչ մը բան շահելով, և քիչ ատենէն հայ-
րըս կատարելապէս խնամելու վիճակին մէջ պիտի
ըլլամ:

— Զգուշացիր սակայն, Մօրիս, դարբինն
խստարարոյ մարդ մ'է և ուրիշէ մ'աւ ելի քեզ պի-
տի շխնայէ, եթէ իրեն բարկութեան տեղի տաս :

— Զինքը լաւ կը ճանչնամ, Պարոն, և պիտի
ջանամ ամենայն կերպով զինքը դոհ ընել և ըս-
րարկացնել :

Մօրիս տուն դառնալով իւր հօր քով վազեց
և ըստ թէ ուսուցիչն կը յօժարի բարեկամաբար
ամեն օր նմա դաս աւանդել: Ճէրօմ այնքան դոհ
եղաւ զայս լսելով որ լաւ զիշեր մ' անցուց, ինչ
որ երկար ատենէ ՚ի վեր բնաւ չէր պատահած :

Երբ, շաբաթէ մը վերջը, Մօրիս իւր աշխա-
տութեամբ շահած զ ֆրանդ հօրը բերաւ, խեղճ
մարդը զայն իւր բազկաց մէջ սեղմելով, ըստ ար-
տասուալից :

«Այսպէս դու զիս այժմ կը սնուցանես, փո-
խանակ ես զքեզ սնուցանելու, զարմանալի բան,
ահա՛ աշխարհս վեր ընդ վայր կործանած է :

— Դարձեալ, ըստ կրան Պիշ, այդ խօսքե-
րովդ այս պլոտիկին ուրախութիւնը մի՛ վրդովեր :

— Մայր Պիշ, ըստ Մօրիս, երբ աւելի ստակ
շահիմ՝ քեզ ալ պիտի տամ:

— Ո՞՛, սիրելի սիրա, միթէ ես բանի մը կա-
րօտ եմ. ինձ միայն ճեր երկուքին դոհ սիրո ու-
նենալն պէտք է և ոչ աւելի :

Մօրիս վարժապետին ազքը կը մտնէ.

Պարոն Ուժի, ուսուցիչն, Մօրիսի հետ մտեր-
մացաւ : Կիրակի օրերն զանի քաղաք կը տանէր,
աղան ամեն տեսածին վրայ հարցումն կ'ընէր և
ուսուցիչն այնպէս ճարտար կերպով կը պատաս-
խանէր որ կ'ստիպէր զնա նորանոր հարցումնէր
ընելու, ասով տղուն միաքն կատարեալ կրթու-
թիւն մը կ'ստանար և գլխուն մէջ խումբ մը ման-
րամասն ծանօթութիւնք կը ժողուէին :

Պ. Ուժի, բոլորովին զարմացեալ այն դիւրա-
հասկացողութենէն որով Մօրիս իրեն ըսուածներն
կ'ըմբռնէր, օր մը գնաց ձէրօմը տեսնելու և ըստ
անոր :

«Ճէրօմ, եթէ ուզէք աւելի յառաջ վարել
զՄօրիս, մեծ յառաջադիմութիւն պիտի կրնայ ը-
նել: վստահ եմ թէ զիւրին պիտի ըլլայ զինքն ար-
ուեստական դպրոցին մէջ մտցնել :

— Պարոն, ի՞նչ կը սորվին այդ դպրոցաց մէջ։
— Հոն կ'ուսանին փայտի և երկաթի վրայ
զրեթէ ամենամեծ կատարելութեամբ աշխատիլ,
յետոյ այն ամեն ուսումներն որք անհրաժեշտ կա-
րեւոր են գործաւորին :

— Բայց, Պարոն, այդ վարժարանաց միոյն
մէջ ուսումն կատարելութելէ յետոյ նա պիտի
կարենայ աւելի երջանիկ ըլլալ քան թէ Պէսթրա-
նի քով աշակերտութիւն ընելով :

— Այս՝, անտարակոյս, աւելի երջանիկ պի-
տի ըլլայ, վասն զի իւր իմացականութիւնն աւելի
ընդարձակած պիտի ըլլայ և ամեն տեսածին պիտի

կարենայ խելամուտ ըլլալ»:

Այսն միջոցին ժէրօմի այցելութեամ կու գար ժողովրդապետն որոյ այս մասնին կարծիք հարցուց խեղճ հայրը :

«Իմ կարծեացս համաձայն չէ որ Մօրիս բարձր ուսմանց ձեռնարկէ , ըստու ժողովրդապետն , ուրովհետեւ այս տղան իւր հօր միակ միաթարութիւնն ըլլալով , ծանր է զայն իւր հօրմէն բաժնել անսատոյդ արդեանց համար . սակայն եթէ դուք , Պ. Ռլմի , շարունակէք ձեր դասերը Մօրիսի աւանդել , յաջողակութեամբ և ճաշակով պիտի աշխատի , իւր ապրուստն պատուաւոր կերպով պիտի հայթայթէ , միտքը մշակելու ալ դրադելով» :

Եզանց վաճառականն վերստին զիւդէն կ'անցնի.

Ամիս մ' անցաւ այսպէս , և Մօրիս իւրաքանչիւր շաբաթագլուխ միշտ նոր հաճոյքով մը իւր հօր կը բերէր Զ Փրանդ շաբաթականը , Երբեմն Երբեմն ընդունած ընծաներն ալ Կրան Պիշի կու տար , որ գանոնք խնամով կը սպահէր իւր սպահոցին մէկ անկիւնն , որպէս զի եթէ բաւական հաւաքուի , տրդուն վերաբերեալ բան մը գնէ :

Շատ անդամ Մօրիս տուն կը դառնար այնքան խոնջեալ որ ոչ կ'ընթրէր և ոչ ալ գիշերն հանգիստ կը քնանար , այն ատեն Կրան Պիշ անոր մէջքն , բալուկներն և ծունդերն ասուի կտորով մը կը շփէր , յետոյ անոր քիչ մը շաքարախառն տաք գինի կու տար , որ իրեն ամենամեծ դեղն

էր : Տղայն կը քնանար և ազէկ գիշեր մ' անցընելէ յետոյ , հետեւեալ առտուն կ'ելլէր անխոնջ և կազմ ու պատրաստ նորէն իւր գործն սկսելու . ժէրօմ որ ինքզինքին ամեն ինչ կը խայէր , չէր ուզեր բնաւ որ Մօրիս պիտք եղածէն զրկուի , և արդէն իւր որդւոյն քաջութիւնն զինքն հպարտ և գոհ կ'ընէր :

Եզանց վաճառականն գիւղէն անցնելով՝ դարբինն տեսնել եկաւ և առաջարկեց Մօրիսի կրկին եզներն վարել , փոխարէն Զ Փրանդ վարձք խոստանալով :

«Պարոն , շատ չնորհակալ եմ , բայց այժմ որ օրականով կ'աշխատիմ , կը ցաւիմ որ իմ ձեռքս չէ ձեր առաջարկն ընդունիլ :

— Գնա՛ եզներն առաջնորդել , տղաս , ըստո Պէռթրան , Զ Փրանդ շահին գէշ բան չէ : Յիրաւի վաղն ես Կրասէ յ պիտի երթամ երկաթ դնելու , և գործաւորք հեռոււն պիտի աշխատին . ուստի և հնոցն պիտի չվառենք և դու ազատ ես երթալու :

— Շնորհակալ եմ , Տէր իմ , ձեր բարեսրութենէն ա :

Մօրիս հետեւեալ օրն կանուխ Ֆրիզէի հետ ճամբայ ելաւ . էկս օրին վաճառականն զանոնք իւրեն հետ սեղան նստեցուց :

«Կ'ուզէ՞ս Օռէան երթալ , պզտիկ , հարցուց Մօրիսի :

— Շնորհակալ եմ , Պարոն , շատ գոհ պիտի ըլլայի տեսնելով այս մեծ քաղաքն և այն գեղեցիկ Լուսու գետն , որոյ համար կ'ըսեն թէս ամբովք մեր դիւղէն աւելի լայն է . բայց դարբինին քով աշակերտութիւն կ'ընեմ , նա ինձ պիտք ունի և

ամեն առաւօտ ժամանակին իւր դարբնոցը չդըտ-
նուիլս անպատշաճ է ինձ :

— Ութ օրուան համար քեզի թոյլտուութիւն
կ'ընէ և քու ընկերդ կ'ապահովցնէ քու հայրդ թէ
ես կը տանիմ զքեզ ինձ հետ :

— Բայց, Պարոն, գէշ գործ մ' ըրած պիտի
ըլլամ շփոթի մէջ ձդ ելով դՊէսթրան որ ինձ առ-
բուստո ճարել կու տայ . Եթէ այսպէս պարտա-
ւորութեանս մէջ պակաս գտնուիմ, այլ եւս չեմ
համարձակիր հօրս դէմը ելլել որ միշտ ինձ կը յոր-
դորէ որ պատուաւոր տղայ մ'ըլլամ :

— Ուրեմն հայրդ շատ խստաբարոյ է :

— Ո՛չ, ո՛չ, Պարոն, բոլորովին հակառակը .
բայց կ'ըսէ յաճախ թէ աշխարհիս առաջին բարիքն
մաքուր և լաւ խղճմուանքն է, և թէ ինքն ցաւէն
պիտի մեռնէր, եթէ ես ուզգամոռութենէ շեղէի :

— Բայց եթէ զքեզ բարիկ տանիմ, կարծեմ
այդքան անկարելիութիւններ յառաջ բերելով պի-
տի չդիմադրես ինձ . միթէ այս քաղաքին անունն
զքեզ չի հրապուրեր :

— Այո՛, Պարոն, այդպէս է և այս պատճա-
ռաւ ձեզ կ'աղաքեմ որ այլ եւս այդ մասին վրա-
յօք ինձ չխօսիք : Երբ իմ վիճակս ապահովցնեմ,
կ'ուզեմ Գաղղիոյ մէջ շրջան մ' ընել, ինչպէս Մօ-
ռէն, Կրասէյի դարբինն, որ տեսած երկիրներուն
վրայ գեղեցիկ սլատմութիւններ կ'ընէ :

Ճերօմ զգալով քէ իւր կենաց վախճանն մերձ է,
կ'ուզէ իւր կտակն ընել .

Վեց ամիսէն, Մօրիս շաբաթն Յ Փրանդ վարձք
ընդունիլ սկսաւ, երկրորդ տարին Ա Փրանդ, վեր-
ջապէս տաս և կինդ տարեկան եղած ատեն Յ Փր-
քանդ կը բերէր իւր հօր ամեն շաբաթ : Երբէք
յանդիմանուելու տեղի չէր տար ոչ իւր հօր տու-
նը, և ոչ ալ դարբինին քով։ Ճէրօմի յարատեւ
հիւանդութիւնն և անոր չկրնալ աշխատելուն մա-
սին ունեցած խորին վիշտը Մօրիսի բանականու-
թիւնն ժամանակէ առաջ զարդացուցած և հա-
սունցուցած էր : Խեղճ տղան կը ջանար իւր հայրն
ուրախացնել՝ ըսելով թէ քիչ ատենէն բաւական
ստակ պիտի շահի, և անով պիտի կարենայ գնել
երկար ատենէ ՚ի վեր իւր հօր բաղձացած այգւոյն
մէկ չորրորդ մասն :

Բայց Ճէրօմ երբէք չէր միսիթարուէր . ոչ
Կրան Պիշի արթուն հսկողութիւնքն և ոչ ալ Մօ-
րիսի գորովալից սէրն կըցէր էին նորա վշտերն
փարատել : Եօթն տարիէ ՚ի վեր իւր թիկնաթուին
մէջ բեւեռեալ էր . իւր առողջութիւնն օր ըստ օրէ
կ'սպասէր, ոչ ոք կարող էր ճանչնալ այն յաղթ-
անդամ գործաւորն որ այժմ տժդոյն և ծիւրեալ
էր և երբեմն արեգակ եղած ատեն դուրս կ'ելլէր
օդ շնչելու համար . քիչ ատենէն զայն տեղէն շար-
ժելն ալ անհնար եղաւ, վասն զի շատ ակարա-
ցած էր :

Ժողովրդապետն որ յաճախ կու գար զՃէրօմ
տեսնելու, որ մը անոր քով մինակ մնալով, խեղճ
մարդն ըսաւ անոր .

«Պարոն, Ժողովրդապետ, կ'զգամ թէ վախճանս մօտ է և կ'օրհնեմ զբարերարն Աստուած որ զիս առ ինքն կը կոչէ . Երկար ատեն կեանք չնորհեց ինձ որ իմ որդւոյս քաջութեամբ և լաւ ընթացքով զարդանալն տեսնեմ : Շնորհիւ ձեր և Պ. Ուշմիի դասերուն, վատահ եմ որ պատուառը անձ մը պիտի ըլլայ . ուրեմն հանդիսա պիտի մեռնէի եթէ կրան Պիշի ապագայն միայն զիս չտանջէր :

— Եւ ինչ մասին անհանդիսա կ'ընէ զձեզ :

— Երբ ես մեռնիմ, իմ աներձագներս, Սէն Ժօրժի Միջօ Եղբարք թողած պզտիկ ժառանգութեանս գործին պիտի խառնուին և հաւանական է որ խեղճ աղջկան նկատմամբ չմտածելով բնաւ, զանի անբաժին հանեն, ես կ'ուզեմ որ ամեն ինչ արդի վիճակին մէջ մնայ . ահա' ձեզ կը յայտնեմ Պարոն Ժողովրդապետ, որպէս զի իմ մահուանէս յետոյ իմ կամքս անոնց իմացնէք :

— Բարեկամ, միայն ինձ յայտնելն բաւական չէ, վասն զի օրինաց առջեւ արժէք չունի :

— Ինչպէս ընենք ուրեմն, որ ամեն ինչ իմ մահուանէս յետոյ այնպէս մնայ, ինչպէս իմ կենդանութեանս ատեն :

— Պէտք է ձեր կտակն պատրաստել . քաղաքէն նօտար մը բերել տուէք և ձեր տղուն ինամակալ մ' ընտրեցէք :

— Եթէ Պ. Ուշմի խնամակալութեան պաշտօնն յանձն առնու, ինձ մէծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլայ :

— Կ'ուզէք որ այս մասին իրեն խօսիմ :

— Այս', Պ. Ժողովրդապետ, բարեհաճեցէք այս գործոց վրայ անձամբ զբաղել, բայց զգուշա-

նալով որ կրան Պիշն և պկտիկ Մօրիսն բան մը չխմանան, վասն զի պիտի վշտանան և իրենց ցաւն ինձ մնացած քիչ մը զօրութիւնն պիտի բառնայ յինէն :

Ժողովրդապետն առանց դժուարութեան հաւանեցուց զրւուցիչն՝ Մօրիսի խնամակալութեան պաշտօնն ընդունիլ . նօտար մը բերել տուաւ, կտակը գրուեցաւ երկու վկայից առջեւ որ այս կտակաղիրն ստորագրեցին :

Քանի մ' օրէն յետոյ ձէրօմ հոգին աւանդեց մեղմիւ, մինչդեռ Ժողովրդապետն անոր սնարին քով ծունր իջած կ'աղօթէր :

Մօրիս ազդու կերպիւ կը վիրառորուի իւր հօր մահուան վրայ, ևս խնամակալն կը ջանայ զանի զուարքել .

Մօրիս իւր հօր մահուան վրայ մեծ ցաւ զգաց . թէ ինքն և թէ կրան Պիշն ձէրօմը կորսնցնելնուն վրայ բնաւ չէին մսիթարուեր : Այս մահուան յաջորդ օրերն խեղճ պառաւ աղջիկն չգտնելով այլ եւս իւր սիրելի հիւանդն որ խնամէ, չէր գիտեր թէ ինչո՞վ զբաղի : Մօրիս, որ առաջ իւր հօր արխութիւնը փարատելու միջոցներն կ'երագէր, այլ եւս բանի մը վրայ չէր մոռածէր, քանի որ ալ ձէրօմ չկար : իւր խնամակալն զանի զուարթացնելու և վշտերն փարատելու համար շրջագայութեան կը տանէր :

Զատկական տօնէն երկու օր առաջ Պ. Ուշմի առաջարկեց Մօրիսի ընկերանալ իրեն դէպ 'ի խօ-

սուարն , ուր պիտի երթար տեսնել իւր հօրեղ-
բայրներէն մին , որ նոյն քաղաքին դարբինն էր :

«Բօտիկն անցնելով , ըսաւ անոր , և մըոն ճամ-
բայ ունինք . վաղն , առաւօտուն միայն դաս ու-
նիմ և եթէ կ'ուզես , իսսուալն կը ճաշենք :

— Ինչայէս որ ձեղ հաճոյ կը թուի , սիրելի
խնամակալու , երբ ձեղ հետ եմ , ամեն տեղ ինձ
համար աղէկ է » :

Հետեւեալ օրն , կէս օրին մեկնեցան և ժամը
հինգէն առաջ Պարոն Վուազէնի տունը հասան ,
որ քաղաքին ամենէն ճարտար գործաւորն էր :

«Ոլրելի Զօրեղբայրս , ըսաւ ուսուցիչն մոնե-
լով , ձեղ կը ներկացացնեմ իմ սանս , որոյ վրայ
յաճախ խօսած եմ ձեղ և ձեր բարեկամութիւնն
կը խնդրեմ առ այն , վասն զի արդարեւ արժանի է :

— Բարեա՛ւ եկայք , երկուքնիդ ալ , ըսաւ դար-
բինն . հոս իբրեւ ձեր տունը նկատեցէք և ըստ
այնմ վարուեցէք :

Մինչդեռ կերակոյ պատրաստութիւն կը տես-
նէին , տանը ամենէն երեւելի մասին մէջ զետեղեալ
ժամացոյց մը ժամը վեց զարկաւ . այն ատեն Մօ-
րիս տեսսաւ որ ժամացոյցին սնտուկին վրայ դըր-
ուած պզտի դղեկի մը քովընտի մէկ դուռը բաց-
ուեցաւ . կին մը դուրս ելաւ տասը հարիւրոդա-
մէթր բարձրութեամբ խիստ լաւ հագուած : Դըլ-
եակին առջեւէն անցնելով , ելած դռանը հակա-
ռակ դռնէ մը ներս մտաւ : Մեծ թուչուն մը , որ
աշտարակին ծայրն թառած էր , մետաղեայ զան-
գակի մը վրայ կտուցի հարուածով և թեւերն բաղ-
իւելով ժամերն կը զարնէր :

Մօրիս ՚ի տես այս ժամացոյցին ունեցած զար-

մանքին հակառակ , չիշխեց հարցումն ընել , դեռ
աղէկ չճանշնալով դարբինն անոր հետ խօսակցե-
լու համար , որ գաղտնի երփասարդն կը դիտէր :

Հետեւեալ օրն , պատարագն լսելէ վերջը ,
Պ. Վուազէն իւր հիւրերն քաղքին մէջ պտըտցուց
և իրենց ցուցուց հիւանդանոցն և Անդղիացիներէն
շինուած երեւելի աշտարակը : Երբ տուն կը մըտ-
նէին ճաշելու համար , ժամացոյցն ժամը տաս եր-
կուք կը զարնէր . Մօրիս վերատին տեսաւ պզտիկ
կնոջ մը ելլելն ու նորէն մտնելն :

Արդէն թանը խմած էին , և Պ. Վուազէն
փուռն եփած ընտիր ոչնարի զիստ մը կը կտրէր ,
երբ թուչունն կէս օրուան առաջին հարուածը
զարկաւ . այն ատեն դղեակին ամեն դռներն մէ-
կէն բացուեցան , մէկ պզտիկ կնոջ տեղ քսան և
չորս կին ամենքն տարբեր կերասով հագուած կողմ-
նակի դռնէն դուրս ելան , դղեակին առաջին դը-
րան սանդուղին վրայ կեցող պզտիկ մարդու մ'առ-
ջեւէ անցան և դաշնակաճայն սիրուն նուագ մը
լսուեցաւ . Մօրիս , աղջած և բերանաբաց մնաց
առանց կերակուր ուտել մտածելու :

«Ոլրելի հօրեղբայրս , ըսաւ Պ. Ռըմի , ձեր
ժամացոյցին տեսքն բաւական է իմ խեղճ Մօրիսի
ախործակն դոհացնել . տեսէ՞ք , դեռ կտոր մը չէ
կերած :

— Մօրիս տղու պէս է , միայն ժամացոյցին
վրայ դրուած խաղակիքին ուշադրութիւն կ'ընէ ,
տոանց նկատելու թէ ինչո՞վ կը տարբերի ուրիշ
ժամացոյցներէ :

— Իրաւունք ունիք , Պ. Վուազէն , ըսաւ Մօ-
րիս , դեռ ես դղեակին և այս պզտիկ կանանց միւ-

այն ուշադրութիւն ըրի , որք անտարակոյս ժամերն կը ներկայացնեն . բայց եթէ թոյլտուռութիւն ընէք ինձ ժամացոյցն աղէկ մը դիտելու , թերեւս ուրիշ բաներու ալ ուշադիր ըլլամ :

— Նախ ճաշենք , յետոյ ուզածնուս պէս կը քննենք :

Ճաշէն յետոյ , Մօրիս ժամացոյցին մօտեցաւ : Ժամերու մեծ տախտակին վրայ , ուրիշ շատ պըզտիկներ ալ յաւելեալ էին . անոնցմէ միոյն վրայ նշանակուած էր 1790 էն մինչեւ 1890 տարիները և սլաքը 1807 տարւոյն վրայ էր :

«Ի՞նչ , ըստ Մօրիս . միթէ այս սլաքն տախտակին բոլորափքը մէկ շրջան մ'ընելով դա՞ր մը պիտի տեւէ :

— Այո՛ , բարեկամ , և ասով կը տարրերի ուրիշներէն որք միայն մէկ վայրկեանէն կրկին նոյն անցքն ընել կ'սկսին : Ահա՝ ամսոց և աւուրց տախտակն : Ժամացոյցն նայելով կը հասկնամ իսկոյն տարին , ամիսը , օրը , ժամը , վայրկեանն և նոյն իսկ երկվայրկեանն :

— Բայց Պ. Վուազէն , այս ժամացոյցն 'ի հարակէ շատ սուղ գնած էք :

— Նոյն իսկ ինքն հօրեղբայրս շինած է զայն առանց ուրիշի օգնութեան , ըստ Պ. Որմի :

— Ի՞նչ , գոչեց Մօրիս , ուրեմն այսպիսի գործի մը ձեռնարկելու քաջութիւնն ունեցաք :

— Այո՛ , տղաս ; և որ աւելին է , զայն հատարելագործելու համբերութիւնն ունեցայ :

— Ուրեմն դուք ժամագործ էք :

— Ե՞ս , ոչ բնաւ . ես իբրեւ զրօսանք շինեցի զայս :

— Բայց ի՞նչ բան ձեզ գաղափար տուաւ զայն շինելու :

— Ահա՝ ձեզ պիտի պատմեմ :

Պ. Վուազէն կը բացատրէ Մօրիսի քէ ի՞նչ կերպով ձեռնարկած է իւր ժամացոյցն շինելու .

«Մեծ վիշտ մը մոռնալու պէտքը , շարունակեց դարբինը . ստիպեց զիս այս ժամացոյցն շինել : Ամուսնացած էի և ընտանեաց տէր ու հայր . և նոյն տարուան մէջ կրուսի կինս և երկու տղաքը սիանդամացն : Երբէք պիտի չկրնայի այսպէս ծանր ցաւ մը կրել , եթէ անդադար անոր վրայ մտածէի : Որոշեցի ուրեմն իմ պարապ ժամերս որ և իցէ աշխատութեան մը նույիրել , վասն զի աշխատութիւնն ալօթքէն յետոյ այս կենաց նեղութեանց ամենէն մեծ դարմանն է . ուստի այս ժամացոյցն սկսայ բոլորովին պարզ ընելու դիտաւորութեամբ . յետոյ երբ աշխատութիւնն կը յաւազանար , մանրամասն գործ մը ձեւացնելու գաղափարն ծնաւ յիս : Գիշերն եթէ չքնանայի , կամ ցերեկն քալած ատեն , գործածելիք մեքենական կերպերուս վրայ կը մտածէի . ստիկայ մտքիս մէջ կը հասուննար , և երբ գործս լսաւ մը կարգադրուած համարէի , աշխատութեան կ'սկսէի , մոքիս մէջ կազմած դաղափարներս գործադրելու համար : Այսպէսով այս վիճակին բերի զոր դուք այժմ կը տեսնէք . վերջապէս աւելցուցի այն խաղալիկն որ նախ ձեր ուշը դրաւեց : Տղայական պարզ խաղալիկ մ'է , բայց դարձեալ հարկ եղաւ շատ խոր-

հրդածութիւններ ընկել, որպէս զի ամբողջն միատեղ յառաջ քալեն :

— Բայց գիտէ՞ք, Պ. Վուազէն թէ այս գործն խիստ հետաքրքրաշարժ է :

— Ուրիշներ ալ զայդ ինձ ըսին յաճախ . և այս գործին համար ինձ լաւ գին տուին, բայց ես իմ ժամացոյցս վաճառելու դիտաւորութեամբ չեմ շնած : Ես կը սիրեմ զայն, ոչ այնքան իւր կատարելագործութեան և կանոնաւորութեան համար (վասն զի բնաւ չեղած կամ աւրուած չէ), որքան այն լաւ վայրկեաններուն համար զորս իրեն կը պարտիմ : Այս գործիս վրայ ընդ երկար մտածեցի աշխատութեան ձեռնարկելու համարձակելէս յառաջ : Ասի ինձ կը յիշեցնէ իմ ցաւերս և միանդամայն ուրախութիւններս : Ոչ ոք կրնայ գիտնալ այն միմիթարութեանց գինն զոր ես այս գործէս ստացայ :

— Ցիրաւի, Պ. Վուազէն, բնաւ չեմ կրնար խելամտիլ, թէ ի՞նչպէս առանց ժամագործ ըլլալու կրցած էք այսպէս կատարեալ գործ մը յառաջ բերել :

— Տղա՛ս, երբ որ մէկն իւր իմացականութիւնըն բոլորովին իւր ընկելիք որ և իցէ գործին կը նուիրէ, շատ քիչ անգամ կը պատահի որ չկրնայ յաջողվլ : Երբէք անփոյթ կերպով չեմ նկատած շնկելիք ամենափոքր գործիս . վասն զի ճանչցած եմ թէ ամենադոյզն գործ մը իւր կատարելութեան աստիճանն ունի, որոյ համեմին շատ դիւրին չէ, և այս լաւ սովորութենէն մեծ առաւելութիւններ ստացած եմ:

— Շատ երկար ժամանակի մէջ անշուշտ կա-

տարելագործեցիք այս ժամացոյցն, այնպէս չէ՝ ըստ Մօրիս :

— Ոնտարակոյս, բայց միայն պարապ ժամերս այս գործին նուիրած եմ: Արուեստիս պէտք ունէի և կ'ուզէի ալ որ այդ մասին համբաւ ստանամ:

— Եւ իրաւունք ունէիք, հօրեղբայրս : Երբ բանի մը աշխատի մէկն, պէտք է միշտ լաւ քննել :

Մօրիս փափաքելով ժամացոյցին մեքենայն տեսնել, Վուազէն զայն բացաւ . երիտասարդն շատ զարմացաւ այնպէս տարբեր երկու մանրամասն շարժումներ յառաջ բերելու համար գործածուած միջոցներուն պարզութեան վրայ : Անկեղծ չնորհակալութիւն յայտնեց դարբինին իւր բարեսրտութեան և լաւ ընդունելութեան համար, յետոյ Զատիկի երրորդ օրուան տօնէն վերջը, գիւղը վերադարձաւ իւր խնամակալին հետ, որ իրեն ըստ ճամբաւն մէջ .

«Տե՛ս ուրեմն, տղաս, ինչ որ կրնայ յառաջ բերել յարատեւ և փութաջան աշխատութիւնն :

— Բայց ես չեմ կրնար խելամոլիլ, Պարոն, պէտք է որ ձեր հօրեղբայրն տարօրինակ մէկն եղած ըլլայ :

— Ոչ, բայց միայն իրեն ոկզբունք ըրած է, ուզածը լաւ և հաստատ կերպով ուզել և անդադար ուզել :

Մօրիս կը մէկնի գաղղիոյ մէջ շրջան մ' ընելու,

Ժամ և ութ տարեկան եղած ատեն . Մօրիս յայտնեց իւր խնամակալին թէ կ'ուզէ ճամբորդ ել

Գաղղիոյ մէջ, Պ. Ռըմի դէմ չղրաւ բնաւ և ըսաւ անոր .

«Յատ աղէկ կ'ընես, բարեկամ, ճանապարհորդութիւն մ'ընելով: Այս արհեստաւորն որ կուսանի և կը գործածէ զիւր արհեստն խղճի մտօք, դոփելի անձ մը կ'ըլլայ. լաւ աշխատելու փափաքն միշտ զիսրդ դէսլ 'ի լաւն կ'առաջնորդէ. այսպէս ուրեմն դու ալ այս փափաքն ունեցիր և պահէ, այն առեն լաւ հետեւութիւն պիտի գտնես :

— Հանգիստ եղիք, սիրելի խնամակալս, ամեն ջանք 'ի գործ պիտի դնեմ իմ արուեստիս մէջ ճարտար ըլլալու համար, թէեւ մեր զիւղին մէջ միայն պիտի կրնամ գործածել, վասն զի աւելի ընել կրցողը՝ նուազն ալ կրնայ ընել :

Երբ Մօրիս իւր հրած եշտի ողջոյնը տալու գընաց ժողովրդ առկետին, սուրբ մարդն անոր ըսաւ.

«Խեղճ տղայ, դու զեռ շատ երիտասարդ ես բոլորովին ազատ ապրելու համար: Մինչեւ այսօր պատուաւոր տղայ մ'եղար, բայց երբէք փորձութեան մը չենթարկուեցար. սակայն այժմ այնպէս պիտի շղլայ. խոստացիր ինձ որ ամեն երեկոյ անցուցած օրուանդ վրայ հաշիւ տաս ինքզինքիդ և հարցունես թէ հայրդ անոր վրայ գոհ պիտի ըլլար. Այս կերպով պիտի զիտնաս թէ խիղճդ ո՞ր կէտին հասած է, և մի՛ մոռնար, բարեկամ թէ ոչ ոք աշխարհիս վրայ ճշմարիտ երջանկութիւն կ'ունենար, եթէ խիղճն մաքուր չէ»:

Պէսթրան շատ զ ժ գոհ եղաւ Մօրիսի մեկնելու համար տուած որոշումն լսելով, վասն զի լաւ գործաւորէ մը կը զրկուէր :

«Կը հարցնեմ քեզ, թէ ի՞նչ պէտք ունիս դաշ-

տերու մէջ վազվելու, ըսաւ անոր, և միթէ ես երկրին պէտք եղածին չափ չե՞մ կրնար սորվեցնել քեզի :

— Տէր իմ, կ'ուզեմ երկրներ տեսնել, ասով մարդ գաղափարներ կ'ստանայ. յետոյ միտքն և յատկութիւններն կենդանի կերպով կը կազմուին, այնքան տարբեր մարդոց մէջ »:

Կրան Պիշ յուսահատեցաւ երբ իմացաւ որ իւր սիրելի Մօրիսն զինքը թողուլ կ'ուզէ :

«Պու բաւական չե՛ս գիտեր, ի՞նչ հարկ կայ այլ և այլ երկիրներ երթալ և անծանօթներու հետ ազլիլ: Եթէ ուզէիր. հոս աշխատելով, կըրնացիր քու վարպետդ ալ գերազանցել:

— Ոչ Մայր Պիշ, շատեր ինքզինքնին ճարտար կը կարծեն երբ իրենց գիւղին դուրս չեն ելսծ. յետոյ, երբ ուրիշ տեղ գտնուիլ հարկ ըլլայ, բընաւ բան մը չեն գիտեր :

— Բայց տես անոնք որ գիւղին մէջ սորված են, նոքա ալ նուազ երջանիկ չեն, թէեւ իրենց գիւղը չեն թողած՝ ուրիշ տեղ ուսանել երթալու համար :

— Այդ մասին վատահ չեմ, դոնէ Պէսթրանի վրայ հաշուեցէք: Սայդ եմ թէ 'ի գարձին մեր գիւղն աւելի պիտի սիրեմ»:

Պ. Ռըմի, Մօրիսի մեկնելին առաջ անոր գործերն կը կարգադրէ .

Մեկնելուն նախորդ օրը, Պ. Ռըմի ըսաւ անոր . «Բոչ' ինձ, Մօրիս, խնայողութիւն ընելով, քիչ մը

ստակ հաւաքա՞ծ ես :

— Այո՛, պարոն, 500 ֆրանդ կայ տունը
պահուած :

— Զքեղ այդքան հարուստ չէի կարծեր :

— Կրան Պիշի խնայողութեան արդիւնքն է :

— Ուրեմն ունեցածդ պէտք է բաժնել անոր
հետ . կրնայ պատահիլ որ դու գործ չգտնես կամ
հիւանդ ըլլաս . ուստի պէտք չէ որ առանց ստակի
մեկնիս , որպէս զի այդպիսի պարագայի մը մէջ
չի չփոթիս :

— Պարոն , ինձ համար 100 ֆրանդ կը բաւէ :
Երբ մէկն աշխատելու կամք և փափաք ունի , ան-
հնար է որ գործ չգտնէ . և փառք Աստուծոյ , ա-
ռողջութիւնս ալ տեղն է :

— Անոր խօսքին ուշադիր մի՛ ըլլաք . Պ. Ռու-
մի , ըստ Կրան Պիշ , ամենքն ալ անոր տուէք ,
ես բանի մը կարօտ չեմ :

— Բայց մայր , ուսկի՞ց ստակ պիտի առնես ,
երբ ես հս չըլլամ , հողը բանեցնելու ծախքը վճա-
րելու համար :

— Անհոգ եղիր , ես իմ գործերս կարգի կը
դնեմ :

Վերջապէս որոշուեցաւ որ Մօրիս 100 ֆրանդ
միայն առնէ իրեն հետ և մնացեալն կրան Պիշ ու
զածին պէս գործածէ :

«Մայր , պէտք է որ ինձ կտաւէ երեք փոքր
քսակ շինես , որպէս զի շահած ստակս մէջը դնեմ :
Մէկը քեզի և միւսն ալ խնայողութեանց համար ,
որոց իւրաքանչիւրին մէջը իմ շահածէս շարաթը
2 ֆրանդ պիտի դնեմ . իսկ երրորդը , ընթացիկ
քսակը պիտի ըլլայ , ուրեկէց պիտի ընեմ իմ ծախ-
քերս » :

Մերուկ աղջիկն , աչքերն արտասուօք լեցուած
իրեն ձեռքով հիւսուած կտակի մը կտորէն պար-
կերն շննեց : Մօրիսի ճերմակեղէններն ու հագուստ-
ներն դրաւ պատիկ մորթարկղին մէջ , զոր Պ. Ժո-
ղովրդապետն իրեն տուաւ . նաև ամոր մէջ դադո-
նի սպահեց իրեն թողուած 200 ֆրանդէն 100ը ,
այնպէս որ ոչ ոք կրցաւ նշմարել :

Երբ Մօրիս կը մեկնէր , մայրն զանի ողջագու-
րելով ըստաւ :

«Խեղճ տղայ , ես ալ շատ ծերացած եմ . թե-
րեւս 'ի դարձին այլ եւս զիս չգտնես :

— Ի՞նչ աղետալի գաղափար . սիրելի Մայր :
Միթէ ստիպեալ չե՞մ երեք տարիէն հոս գտնուիլ
զինուորագրութեան վիճակ քաշելու համար : Հան-
գիստ եղիր , նորէն պիտի տեսնուինք և ես դեռ
ընդ երկար պիտի սիրեմ զքեղ :

Մօրիս կը մեկնի եւ Պուրծ կ'երթալ .

Մօրիս՝ իստուլնէն անցնելով Պուրծ գնաց :
Երկու օրէն աշխատելու գործ գտաւ տիրոջ մը
քով , որ իրեն անունդ և բնակարան տալէ յետոյ ,
օրն ալ 1 ֆրանդ կու տար : Այսպէսով կրցաւ մէկ
շարաթուան մէջ իւրաքանչիւր քսակին 2 ֆրանդ
դնել և ամսէ մը վերջը կրան Պիշի բաժինն զրկեց :

Մօրիսի նոր տէրն , որ շատ ճարտար գործա-
ւոր ժէր , համակրութիւն ունեցաւ անոր նկատ-
մամբ , և արուեստին բոլոր նրբութիւններն ցու-
ցուց : Բայց Մօրիս ուսնելու մեծ փափաք ունե-
նալուն հետզհետէ անհամբեր կ'ըլլար և յաճախ

իւր գործէն կը տաղտկանար : Օր մը իւր տէրն ը-
սաւ անոր .

«Մայր Եկեղեցին տեսած ես :

— Այո՛, տէր , և զարմանալէ չեմ դադրած :
Մտացս մէջ երբէք չէի երեւակայած որ այս տա-
րածութեամբ չէնք մը կառուցանել կարելի ըլլայ :

— Ես կ'ուզեմ այժմ զքեզ հետո տանիլ այ-
ցելութիւն մ'ընելու համար Մայր Եկեղեցւոյն, որ
աւելի մանրամասնաբար քննես , այն ատեն աւելի
պիտի զարմանաս : Լուսարարը կը ճանշնամ , և
կիրակի օրն առաւտօնեան պատարագի և երեկոյեան
աղօթքի միջոցին կը չընք ներքին սրահներու մէջ
վերնատունը , գաւիթն եռ :

Երբ այս սքանչելի չէնքին մէջ չըջեցան , որ
դեռ նոր կ'երեւէր 600 տարիէ յւետոյ , Մօրիս
ըսաւ .

«Ինձ աւելի զարմացնողն այն չէ թէ այսպիսի
եկեղեցի մը շինելու զաղափարն ի՞նչպէս ունեցած
են , բայց մանաւանդ թէ այդքան երկար ատեն
աշխատելու քաջութիւնն ի՞նչպէս ունեցած են :

— Այդ ըսածէդ յայտնի է որ , տղաս , դու
դեռ լաւ չես ըմբռնած այն առաւելութիւններն ,
որ յառաջ կը բերէ յարատեւ աշխատութիւնն ,
այս ամենամեծ առաքինութիւնն գործաւորին , որ
գործադրաբար չատ հաղուագիւտ է , թէեւ ասի
իրեն աշխատութեան նպաստող մեծ պատճառնե-
րէն մին ըլլայ : Պէտք է որ գիտնաս թէ գաղափար
մ'ունենալ և զայն գործադրելն բաւական չէ , ե-
թէ գործն չլմնայ . ի՞նչպէս կը հասկցուի թէ այն
յացեալ գաղափարն լաւ է թէ գէշ , ի՞նչպէս կը
գիտուի թէ կարող եղած են այդ գաղափարն

ըստ պատշաճի գործադրել :

— Տէր իմ , բարձր աշխարակին վրայ աշխա-
տելու համար լինուած տախտակամածն միայն շատ
տարիներ տեւած ըլլալու է :

— Արդարեւ այնպէս է , բայց զայն շինելու
արդեկք եղած չէ . տե՛ս և հասկցի՛ր . Մօրիս , թէ
ի՞նչ է մարդկային ձեռաց աշխատութիւնն : Ոնո-
ղորկ քարերն փոխուած է գեղեցիկ արձաններու և
այնքան նուրբ զարդերու , որ մարդ չկրնար կար-
ծել թէ ատոնք կը մնան տակաւին այն ժամանակ-
ներէն ՚ի վեր , ուր բացօթեայ անձրեւի ենթար-
կուած էին :

— Ցիրաւի ամօթով եմ , յարատեւ աշխատու-
թեան մը այսքան մեծ արդեանց առջեւ վհատու-
թիւն ցուցնելուս . կը խոստանամ ձեզ , Տէր իմ ,
ի՞նչպէս նաեւ իմ անձիս իսկ որ վերստին այս վհա-
տութեան մէջ չիյնամ , և պիտի տեսնէք թէ խօս-
քըս ի՞նչպէս կը բռնեմ :

Մօրիս՝ յաճախ կը շրջէր իւր տիրոջ և ուրիշ
հասակաւոր գործաւորաց հետ , փոխանակ իւր ըն-
կերաց հետ զբոսանքի և այլ և այլ խաղերու եր-
թալու . այս առթիւ իւր ընկերներն զինքն կը ծաղ-
րէին անդադար :

«Մեր կարգին մեք եւս պիտի ծերանամք , կ'ը-
սէր Մօրիս անոնց , և պիտի չախորժիմք բոլորովին
լքեալ և անօգնական մնալու . ծերերն աւելի աշ-
խատած և աւելի ուսած են և իրենց ընկերութիւն
ընողն միշտ առաւել չահ մը կ'ունենայ » :

Մօրիս Պուրծին կը մեկնի .

Վեց ամսէն յետոյ , որ ատեն կրան Պրիշի ստակներն զրկելու չէր մոռցած , Մօրիս որ արդէն իւր արուեստին մէջ կատարեալ էր , ուզեց Պուրծին մեկնիլ .

«Ուր երթալ կ'ուզես այժմ , հարցուց իւր աէրն :

— Տէր , Յարիզ երթալու վախաք ունիմ :

— Սիրելի բարեկամ , եթէ դու քու անձիդտաէր ըլլալով ինքզինքդ աղէկ առաջնորդես , Բարիզ մէջ պիտի կարենաս կատարելապէս աշխատել սորվիլ , բայց զգո՞յշ լեր , շատ փորձութիւններ պիտի պատահին քեզ :

— Ո՛հ , իմ մասիս պատասխանատու կ'ըլլամ որ անմոռութիւն պիտի չընեմ :

— Բոլորովին վատա՞հ ես . ամեն պարագայի մէջ՝ անոր կարելիութիւնն նուազցնելու համար ձեզի նամակ մը պիտի տամ զոր պիտի յանձնես իմ հօրելբայրներէս միոյն որ Ֆէռայլի նաւահանգստին մօտ մանր երկաթեղինաց վաճառական է , և հոն հասնելուդ պէս , զքեզ աղէկ գործի մը պիտի դնէ , որպէս զի թէ ժամանակդ և թէ ստակդ չկորսնցնես :

— Շնորհակալ եմ , Տէր , զիս երախտապարտ կ'ընէք , վասն զի մարդ բոլորովին կը շփոթի այդպէս մեծ քաղաքի մը մէջ , երբ չգիտէ թէ որո՞ւ պէտք է դիմել :

Մօրիս հետեւեալ կիրակի օրն մեկնեցաւ Պուրծին իւր տիրոջ նամակին առնելով : Ճիշնի , Մօր-

թարժէի , ֆօնդընապլօի , Նըմեւոփ և կասոնի ճամբան բան յոնեց : Այս քաղաքներէն իւրաքանչիւրին մէջ մէկ քանի շաբաթ աշխատեցաւ , աւելի երկիրներ ճանչնալու համար . վերջապէս երկու ամսէն բարիզ հասաւ :

Մօրիս 'ի Բարիզ .

Կիրակի օր մ'էր , սքանչելի օդ մը կար , երբ Մօրիս Բարիզ մտաւ . բոլոր ժողովուրդն ըջադապ յութեան ելած էին և խեղճ տղան ափ 'ի բերան մնաց այս մեծ շարժումէն : Հետեւեալ օրն ուզեց նամակն երկաթավաճառին տանիլ և Ֆէռայլի նաւահանգստին ճամբան հարցնելէ յետոյ սկսաւ երթալ : Մօրիս կանգ առաւ վաճառատանց առջեւ , որոց մէջ զետեղեալ ապրանքներուն շատութենէն զարմացած մնաց , և ահա անօթութիւնն վրայ հասաւ . հացագործի մը խանութ մանելով պլատիկ հաց մը գնեց , յետոյ նորէն սկսաւ ժամանակին պարապ անցընել , վաճառքներու փոխադրութեան և ուրիշ տեսածներուն ուշ դնելով և ջանալով միտքը պահել . և որ զինքն աւելի կը զարմացնէր , աշխատութեան արդեանց մեծ տարբերութիւնն էր , որ ամեն ինչ մեր գործածութեան համար կը փոխադրէ : Բոլոր օրն այսպէս անցաւ և գրեթէ կատարելապէս մոռցաւ նամակն և երկաթի վաճառականնն : Այսպէս եղաւ հետեւեալ օրերն ալ . իւր զարմանքն հետղիւտէ կ'աւելնար երբ նորանոր բառներ տեսնելով , կը ջանար զայն գոհացնել : Վերջապէս Բարիզի այս մեծ յուղումն անոր դլուխն

դարձուց, իւր աչաց առջեւ տեսածներուն զբաղած, ամենեւին ուրիշ բանի չէր մտածէր.

Մօրիս երաժշտութենէն տարօրինակ հաճոյք մը կ'զգար. երբ շընդ երգիչներու պատահէր, կը կենար լսելու համար և միշտ անոնց քիչ մը ստակ կու ար, վասն զի իրաւունք կը համարէր վճարել այն հաճոյքին զոր լսել կ'ախործէր: Մանաւանդ իրիկուններն քանի մը ժամ կ'անցընէր փողոցի երաժշտաց քով, որք գետինը դրուած խեղճ կանթեղի մը աղօտ լրւով, որ և իցէ նուագարան մը կը զարնեն: Այն ատեն բոլորովին խանդաղատեալ պառկելու կ'ելքէր և իւր գիւղն և իւր սիրելիները կը մտածէր: Կը խորհէր թէ ժամանակն արագընթաց կը սահէր և դեռ ինքն կրան Պիշի քսակին մէջ բան մը դրած չէր. ուստի և ինքնին կը խոստանար քնացած ատեն՝ իրեն յանձնուած նամակը տեղը տանիլ, բայց հետեւեալ օրն նախորդ օրերուն պէս ամեն բան կը մտոնար: Տասն և հինգ օրէ ՚ի վեր Բարիդ մտած էր և դեռ իւր տիրոջ նամակն տեղը տարած չէր: Իրեն պէս անդործ ընկերներ գտնելով, անոնց հետ պանդոկ մտաւ և նախաճաշեց. հոն փոփոխակի զիրար գրգռելով, չափէն աւելի խմեցին: Առանց կատարեալ գինովնալու, գլուխնին սաստիկ տաքցած էր, այնպէս որ այս երիտասարդներէն երկուքին մէջ վէճ մը ծագեցաւ և շատ գէշ հետեւանք մ'ունեցաւ: Անոնցմէ միոյն դէմքն գէշ կերպով վիրաւորուեցաւ շիշ մը կտորուանքներէն: Մօրիս ալ կը ջանար զանոնք իրարմէ բաժնելու, երբ պահապան ոստիկան մը վրայ հասաւ. ՚ի զուր Մօրիս իւր անմեղութիւնն կը յայտնէր, միւսներուն հետ ինքն ալ բանտ տա-

րուեցաւ. շատ տիսուր գիշեր մ' անցուց, միտքն տիսուր գաղափարներով զբաղեցուցած, որք կարծես այս բնակարանին սովորական էին: Շատ խորհրդածութիւններ ըրաւ և յաճախ իւր աչքերն արտասուօք լեցան, մտած ելով թէ ի՞նչ պիտի ըսէր իւր հայրն, եթէ զինքն այս վիճակին մէջ տեսնէր: Հոն Մօրիս երդուընցաւ այլ եւս գինետուններն չյաճախել և այս դիպուածին տպաւորութիւնն այնքան խորին եղաւ, որ իւր կենաց մէջ երբէք չմոռցաւ: Հետեւեալ օրն բանտէն արձակուեցաւ. այլ եւս վաճառատուններն իւր ուշը չէին գրաւեր. ճամբան յառաջ տարաւ զլւկսն խոնարհած և իւր քայլերն դէպ ՚ի ֆէռայլի նաւահանգիստն ուղղեց:

Մօրիս կ'երբայ տեսնել գերկարավաճառն .

Երբ երկաթավաճառն Մօրիսէն նամակն ստացաւ, անոր ըսաւ .

«Շիտակը, տղաս, զքեզ կորսուած կը կարծէի: Եղբօրորդիս յարմար ատենին քու գալըստեանդ վրայ տեղեկութիւն տուած էր, և ես զբաղած էի քեզի գործ մը գտնել աղէկ տիրոջ մը քով, որ առ իս ունեցած բարեկամութեան համար յանձնն առաւ ամիս մը սպասել. բայց ստիպողական գործեր ունենալուն, հարկադրուեցաւ ուրիշ գործաւոր մ'առնել. ըսէ՛ ուրեմն ինծի, Պուրծէն մեկնելէդ ՚ի վեր ի՞նչ եղար, ինչո՞ւ այսքան ուշացար :

— Պարոն, նախ երկու ամիս ճամբայ քալեցի, վասն զի ուր որ գործ գտայ, կեցայ աշխատելու

համար, Բարիդ հասնելս ալ 15 օր է. այս քաղաքին տեսիլն իւր բովանդակութեամբ զիս ապկեցուց, ուզեցի ամեն բան տեսնել ու ճանշնալ, այսպէս անմտութեամբ ունեցածս վատնեցի :

— Ադկից մեծ չարիք մը չետեւիր, միայն թէ դու զգալու ես որ ինքինքդ յանդիմանելու չափ մեծ պակասութիւն մը գործած չըլլաս :

— Միայն մէկ թերութիւն մը գործեցի, Պարոն, բայց այն զիս բժշկեց այն տեսակ մ' արրեցութենէն, որով համակռւած էի յորմէ հետէ Բարիդ մտայ » :

Եւ անոր պատմեց նախորդ օրուան իրեն պատահածը :

«Թող ասիկայ քեզ իրեւ մեծ դաս մ' ըլլայ, երիտասարդ դու, ըստ ծերունի երկաթավաճառը, կը տեսնես որ գէշ ընկերութիւններէ մարդ բան մը չիշահիր, բայց քու ամրիծ միամտութիւնդ որով ինքինքդ կը դատապարտես, ինձ կրնայ մեծ ապացոյց մ' ըլլալ այն ամեն բարելաւութեանց, որոց վրայ ինձ խօսած է եղբօրորդիս քեզ նկատմամբ, այժմ պիտի ջանամ քեզ ազէկ գործ մը գտնելու զբաղիլ, վաղն առաւօտ նորէն հոս եկու, կարծեմ ամեն բան պատրաստ պիտի ըլլայ :

— Շնորհակալ եմ, Պարոն, ձեր ազնիւ բարեսրութենէն » :

Մօրիս իւր սենեուկն վերապարձաւ :

Ներս մտնելով իւր ստակն հաշուեց, զրը երկար ատենէ ՚ի վեր մոռցած էր, և տեսաւ որ բերած ստակին հաղիւ կէսը մնացեր էր • որովհետեւ ուզելով ամեն ինչ մանրամասնաբար քննել, սլառտաւորէր էր մէկ անդամէ աւելի ստակ տալ. նաև

շատ անդամ ալ իւր ընկերաց նեղութեան ատեն օգներ էր : իւր մորթարկոն կարգադրելու զբաղեցաւ, յուսալով հետեւեալ օրն բնակութիւնը փոխել: Երբ սնտուկին մէջի եղածներն կը հանէր մի առ մի, կրան Պիշի կտաւի մէջ փաթթած և շապիկի մը մէջ պահուած 100 ֆրանգը գտաւ :

«Խեղճ սուրբ աղջիկն, գոչեց արտասուալից աչօք, իրեն բարեկեցութեան համար պահուած ստակն ինձ կու տայ, մինչդեռ ես զինքը մոռցեր եմ, ես որ կը պարտէի միշտ շահածիս աւելորդն անոր տալ » :

Անկողին մտնելով անհանդիսա քուն մ'ունեցաւ, վասն զի խիղճն հանդարս չէր :

Մօրիս դարբնի մեծ արուեստանոց մը կը մտնէ.

Հետեւեալ օրն, երկաթավաճառն տարաւ զՄօրիս դարբինի մը քով, որ Շաուօն փողոցը մեծ արուեստանոց մ' ունէր, և որոշուեցաւ որ Մօրիս հոն աշխատի օրը 5 Փրանգ վարձքով: Խեղճ տղուն ուրախութիւնն անշափ եղաւ մտածելով՝ որ իւր ծերունի Մայր Պիշի համար պիտի կրնայ քիչ մը ստակ մէկ կողմ դնել, վասն զի երկար ատենէ ՚ի վեր բոլորովին թողած էր զայն :

Ամիսէ մը վերջը, պնդակառաց անիւներն երկաթեայ շրջանակով պատելու յանձնարարութիւն եղաւ, արուեստանոցին բոլոր գործաւորներն սովորական զնով չուզեցին աշխատիլ, յուսալով թէ իրենց տէրը պիտի սահպուի գիներն աւելցնել, քանի որ առաջարկեալ գործն ստիպողական էր: Ու-

զեցին Մօրիսն ալ համողել որ իրենց օրինակին հետեւի :

«Ոչ, ստուգիւ, ես ձեզ պէս պիտի չընեմ, պատախանեց անոնց, մեր տիրոջ խոստացած եմ աշխատիլ, և իրեւ պատուաւոր տղայ, պիտի ջանամ խոստումն կատարել:

— Ուրեմն դու կը կարծե՞ս որ մենք ալ պատուաւոր անձինք չըլլանք :

— Ոչ, այդ պէս չեմ կարծեր. սակայն բնաւ չեմ տեսած որ ազնուական անձինք իրենց խոստաման հակառակ վարուին. դուք որ ինքզինքնիդ այդքան պատուաւոր կը համարիք, չէ՞ք ամինար ուրեմն որ ձեր տէրն նեղութեան մէջ կը ձգէք, ձեր դաշանց հակառակ :

— Բայց ինքն, քիչ գործ ունեցած ատեն մեր օրականները նուազեցնելու պիտի չամչնար :

— Շատ կը սխալիք և ամեն առթի մէջ, ձեր տիրոջ անիրաւութիւնը մէջ բերելով, չք կրնար արդարանալ. և այն ատեն երկու անիրաւութիւն մէկն պիտի ըլլար : Դարձեալ և այդ պէս ենթադրելու իրաւունք չունիք, վասն զի մեր տէրն շատ անդամ սովորական վարձքով զձեզ քովը պահած է, նոյն իսկ երբ գործ չունի աշխատելու . ասի դուք ինքնին ըսիք ինձ : Եւ այսօր վատութեամբ կ'ուզէք որ իրեն յանձնուած գործերուն մէջ պակաս գտնուի կամ թէ իրեն շահերն նուազին :

Գործաւորներն վայրկեան մը լուս կեցան. յետոյ ամենէն մեժերնին յարեց .

— Վստահ եղիք որ այս անփորձ երիտասարդն իրաւունք ունի . ուղղամուռթենէ շեղելու շատ կերպեր կան : Նաեւ Պ. Պլտնչառ յամառ է, մեր

առաջարկութեան պիտի չհաւաանի, ես իւր բնութիւնը լաւ կը ճանչնամ, իրեն յանձնարարեալ գործն ետ ձգելը աւելի լաւ պիտի համարէ :

— Կը հարցնեմ ձեզ, ինչո՞ւ պիտի հաւաանի . միթէ բարիզի մէջ ձենէ ուրիշ դարբնութեան աշխատող գործաւորներ չկա՞ն, որքան որ ուզէ կը նայ գտնել, վստահ եղիք :

— Ասի հաւաանական է :

— Թէ որ ինձ հարցնէք, պիտի յորդորեմ որ կենաք . այսօրուընէ վազը գործ գտնելն դիւրին չէ և մարդ ունեցած ստակն ալ վատնել կ'ստիպուի . ըսէք ինձ, ի՞նչ առաւելութիւն կամ ախորժ կ'զգաք ձեր տէրն ու աշխատած փողոցը փոխելէ, երբ արդէն մէկ տեղ մը քիչ շատ ծանօթացած էք և բաւական ալ յարգ ստացած : Գիտէք թէ ինչի՞ կը նմանի այսպէս խանութէ խանութ պտըտելն : Կը նմանի այն անձանց, որք ինքզինքնին կատարեալ կերպով չճանչցնելու բանաւոր պատճառներ ունին :

— Այդ ամենն բարի է և գեղեցիկ, ըստ ապահովաց գլխաւորն, բայց այսչափ յառաջ երթաւէ յետոյ զիջանին դժուար է . այնպէս չէ՞ :

— Եթէ գործը միայն այդ կտորին մնացած է, եթէ կ'ուզէք, ձեր կողմէն կը խօսիմ մեր տիրոջ » :

Գործաւորներն դեռ քիչ մ' ալ վիճարանեցան, յետոյ Մօրիսի յանձնեցին որ գործը կարգակրէ :

Մօրիս իւր տիրոջ՝ Պանչառի տունը կը բնակի.

Երեկոյին, փոխանակ միւսներուն հետ խառնութէն դուրս ելլելու, Մօրիս մտաւ Պլանշարի ընտանեաց ժողոված սրահը. դարբինն հոն էր իւր կնոջ և որդւոյն՝ Ժիւլիէնի հետ, որ Մօրիսէն քիչ մ'աւելի մեծ էր և իւր հօր բացակայութեան միջոցին խանութը կը կառավարէր :

«Բարեկամ, ըստ Մօրիս, իմ ընկերներուս կողմանէ կ'ուգամ ձեզ աղաչել որ անցեան մոռնաք. իրենք իսկ իրենց ըրած անմտութեան վրայ դղացած են, և այժմ կ'ուզեն վերստին արուեստանոցն մնալ:

— Հա՛, հա՛, զարմանալի բան, ուրեմն ուրիշ տեղ գործ չե՞ն գտեր :

— Բայց տէր, ապահով եղիք, որ արդէն գործ չեն փնտուած :

— Հայր, ըստ Ժիւլիէն, այս վեհանձն երիտասարդն ձեզ ըստեր թէ նոյն իսկ ինքն ստանառ եղաւ անոնց մնալուն, իրենց այս ընթացքին վրայ ամչցնելով զիրենք :

— Ուրեմն ինքն ալ այս յանդուգն ապստամութեան մասնակից չէ՞ր :

— Ոչ, տէր իմ, երրէք խոստմազանց չեմ դանուած, և կը յուսում որ Աստուծոյ չնորհիւ, այս ընթացքս պիտի շարունակեմ:

— Հաւ, թէեւ քու ընկերներէդ դժգոհ եմ, բայց քու աղաչանացդ զիջանելով զանոնք քովս պիտի պահեմ: Բայց ըսէ՛ ինձ, քու մատղաշ հասակդ կարծեմ չներէր միայնակ Բարիզի մէջ ապրելու համար :

— Իրաւունք ունիք, տէր, թէեւ դժուարէ բայց հարի է հանդուրժել:

— Լսէ՛, տղաս, կը դիտեմ որ դու յաջողաւիութեամբ և ճարտար արագութեամբ կը գործես, և պարագա աշխատութեանց ժամավաճառ շես ըլլար բնաւ. նաեւ աղաս՝ Ժիւլիէնն քեզ նկատմամբ բարեկամական համակրութիւն մը կ'զգայ. կ'ուզեղ մեզ հետ բնակիլ, Ժիւլիէնի սենեակը պիտի պառկիս, կինս ալ ճերմակեղէններդ պիտի հոգայ և ես քեզի ամիսը 40 Փրանդ պիտի տամ:

— Կարի չնորհակալ եմ, տէր, ամենայն սիրով կ'ընդունիմ ձեր առաջարին, վասն զի բոլորովին մինակ եմ այս խուռն բազմութեան մէջ, որք ինձ անծանօթ են. նաեւ սա ալ կայ որ ուրիշներու հետ ճաշած տոեն, մարդ կ'ստիպուի շուզածէն աւելի վատնել:

— Ուրեմն դու խնայողութիւն կը սիրե՞ս :

— Ցէր, հայրս եռեսուն երկու տարեկան եղած ասեն հիւանդանալով կ'ողըար իւր ծերութեան համար քիչ մը ստակ հաւաքած չըլլալուն վրայ. ուստի ես ալ կ'ուզեմ քիչ մը ստակ մէկ կողմ զնել, մտածելով որ թերեւս ես ալ օր մը հիւանդանամ:

— Օ՞ն ուրեմն, այս իրիկուն մեղ հետ պիտի ընթրես, և վաղն սնտուկդ հոս պիտի վոխադրես :

Մօրիս իւր տիրոջ անհանձար վարմունքը
կը դիտէ .

Երբ Մօրիս մասնակցեցաւ այս ընտանեաց ,
զոր խիստ երջանիկ կը կարծէր , չուտով նշմարեց
տիկին Պլանշառի տան մէջ տիրած նեղութիւնը :
Հասկցաւ նաեւ որ ամուսնոյն յաճախակի բացա-
կայութիւնները միշտ գործերէ պատճառեալ չէին ,
ինչպէս որ ինքն կը կարծէր : Յաճախ կը պատճառէր
որ Մօրիս յանկարծ տիկին Պլանշառի սենեակն
մտնելով . կը տեսնէր որ նա իսկոյն իւր աչքերէն
սահած արտասուռաց կաթիլները կը սրբէր :

Պ. Պլանշառ , որ ճարտար գործաւոր մ'էր ,
լաւ պաշտպանութիւն մ'ստացած ըլլալուն , պէտք
էր որ մեծ շահ ընէր . բայց քանի մը տարիէ ՚ի
վեր պնդակառաց ճախարակներուն շնորհը և զրո-
սականաց պատրաստութիւնն իրեն յանձնուած
ըլլալով , ինքզինքն նշանաւոր մարդ կարծէց և այլ
եւս գրեթէ չէր աշխատեր : Երբ որ դուրս ելլէր
երկաթ գնելու կամ իւր հաշուետեարը կառաց
գործակին տանելու , միշտ քանի մ'ընկերներ կը
դտնէր , որ զինքը բռնի որճարան կը տանէին . այս-
պէսով վարժուեցաւ և ախորժ զգաց հոն յաճա-
խեէ , յետոյ ստակով թուղթ խաղցողներուն ըն-
կերութեան մէջ մտաւ . շատ անգամ կը պատճառէր
որ Պ. Պլանշառ բաւական օրեր տուն չէր մտնէր :
Երբեմն իւր վրայ ունեցածէն աւելի ստակ կոր-
սնցնելով՝ հատուցանելի տունակներ կու տար և
անոնց վրայ չէր պարծեր :

Նախ՝ իւր կինը ուզեց ամուսնոյն գէշ ըն-

թացքին վրայ դիտողութիւններ ընել , բայց չյա-
ջողեցաւ , վասն զի Պլանշառի բարեկամները կը
ծաղրէին այն անձինքը , որք իրենց կանանց խօսքին
ականջ կը դնէին :

Այն միջոցին որ Մօրիս այս տիրոջ քով կը
մտնէր , նորա պաշտպանութիւնը կ'սկսէր տակաւ
առ տակաւ նուազիլ , հակառակ տիկին Պլանշառի
խնամոց , որ կը չանար իւր ամուսնոյն յոռի ընթաց-
քըն ծածկէլ : Սակայն ձիւլիէն , կը չանար արուես-
տանոցին կարգադրութեան մասին իւր հօրը տեղ
լեցնել : Միշտ լաւ պատճառներ կը գտնէր իւր հօր
բացակայութիւնն արդարացնելու համար և չէր
ուզեր բնաւ որ ոչ ոք զանի ծաղրէ :

Պլանշառի բարեկամներք .

Երեքշարթի օր մը , արուեստանոցին մէջ զբա-
զած էին զսպանակաց մեծ յանձնարարութիւն մը
աւարտել , տէրն եռանդեամբ կ'աշխատէր , վասն
զի խոստացած էր մինչեւ շաբթու վերջը լմնցնել և
տեղը յանձնել : Պլանշառ , ձիւլիէն և Մօրիս միւս
գործաւորներէ պատրաստեալ երկաթն թրչելով
վերջի ձեւն կ'ուտային անոնց . այս երեքն միայն
աւելի յաջողակութեամբ կ'աշխատէին այս գործն
կատարելագործելու : Պլանշառ , որ ճանչցած էր
Մօրիսի հանձարելութիւնը , իրեն հետ ամենէն
գժուարին գործոց կ'աշխատցնէր , և այսուէսով
զայն քիչ ատենէն կատարեալ գործաւոր մ'ըրաւ :

Նոյն միջոցին , Պլանշառի երկու բարեկամները
մտնելով , անոնցմէ մին գոշեց . «Ճարմանալի բան :

ի՞նչ կ'աշխատիս այդպէս գլուխող կախած , կարծես թէ այդ աշխատութեանդ վարձքովն հացդպիտի ճարես :

— Միթէ քեզի պէս անձի կը վայէջ ամբողջ օրն գործաւորի մը պէս իւր սալին վրայ զարնել, ըսաւ միւսը . թո՛ղ շուտ մուրճն և գողնոցն , և եկու մեզի հետ փորձել պնդակառաց նոր տեսակ մը . եթէ յաջողիս՝ հնարիչն քեզ պիտի յանձնէ ճախարակաց երկաժող պատելն և զսպանակաց շինութիւնն :

— Բարեկամք , պիտի չկրնամ ձեզ ընկերանալ , պէտք է որ շաբաթ օրն՝ տաս երկու զոյգ զըսպանակներն տեղը յանձնեմ , և առ այժմ ըննալն տարակուսելի է :

— Բայց ի՞նչ կ'ըսես , ատի գործաւորացդ աշխատութիւնն է , մինչեւ ե՞ր գործին տէրն գործաւորաց հետ պիտի աշխատի :

— Քանի որ ամենէն ճարտարն է , ըսաւ տիկին Պլանշառ , որ նոյն միջոցին ներս կը մտնէր :

— Եթէ մեր բարեկամներն տեսնէին զքեզ այս վայրկենիս , Պլանշառ , գժուարաւ պիտի ճանչնային թէ դու այն զուարթ անձն ես որ ամեն բանի վրայ լսու կը խօսի և որ իւր վիճակի մարդոց ամենէն զերազանցն է . եկո՛ւ ուրեմն Կլալնէլի զաշտին մէջ փորձել կառքը , յետոյ թեթեւ ճաշ մը կընենք : Հան գտնուիլող շահաւոր է քեզ :

— Բարեկամք , լաւ ուրեմն , ինձ սալասեցէք . պատասխանեց Պլանշառ . գործաւորի գողնոցն թողլով , ահա՛ հագուել կ'երթամ :

— Ոիրելի առնւսինս , ըսաւ տիկին Պլանշառ ախուր դէմքով , զսպանակներն մինչեւ կիրակի ա-

ռաւուօտ պիտի չլմննան այս ընթացքով . գործական արդէն սպառնացաւ , գիտցած ըլլաս որ այս գործն պիտի կորսնցնես :

— Այդպէս կը կարծես , Ժօղէ Փին :

— Ստուգիւ , և մանաւանդ սա ալ կայ որ ստակ ալ պիտի չտան մեզ :

— Հա՛ , ըսաւ բարեկամներէն մին . կը տեսնեմ որ այս բնակութեան գլխաւոր կառավարողն միշտ կինն է . ուրեմն մնաս բարեւաւ , ամենքն պիտի գիտնան թէ Պլանշառ աղէկ գործերէ զուրկ կը մնայ , վսան զի Տէ՛վն իրեն շիներէր դուրս ելլել :

— Կը սխալիք , եթէ զիս տան տէրն չէք կարծեր , և զայս ձեզ հաստատելու համար , ձեզ կը հետեւիմ ահա՛ . գացէք մօտը գտնուած սրճարանն ինձ սպասելու , սակայն ես ալ շատ պիտի շուշանամ :

Տիկին Պլանշառի վիշտն .

Տիկին Պլանշառ խանութին ներքնակողմն մըտաւ , մինչդեռ իւր ամուսինն հագուել գացած էր . և որովհետեւ ճաշի ժամն կը մօտենար , Մօրիս իսկոյն տիրուհւոյն քով գնաց , մինչդեռ Ժիւլիէն մէկ քանի մանր գործեր տեղը յանձնել զացած էր : Զանի բոլորովին արտասուաց մէջ գտաւ :

«Տիկին , ըսաւ անոր , ի՞նչ առթիւ այսպէս կը վշտակիք , այս առաջին անդամն չէ որ մեր տէրն արուեստանոցէն կը մեկնի :

— Դժբաղդարար ոչ , Մօրիս . կը վշտանամ , վսան զի 1500 ֆրանդի փոխանակագիր մ'ունինք ,

տրոյ սպայմանաժամն երկուշաբթի օրն կը լրանայ ,
և ես այս գումարին կէսն ալ չունիմ . ամեն կողմ
մտածեցի , բայց ոչինչ գտայ :

— Տիկին , քիչ շատ առանց ստակի եղած ըլ-
լալու չէք կարծեմ :

— Ստուգիւ ոչ , բայց Պլանշառ ստակին այն-
պէս կը վասնէ որ կարծես թէ առանց նեղութեան
շահուած է . այսպէսով իմ քովս խիստ քիչ բան
կը մնայ , զորս ընդունածիս ոէս խնայողութեան
արկղին մէջ պահել կը տանիմ : Երէկ առնելու չը
գացի , որովհետեւ տալիք զսպանակներէն ստակ
կը յուսայի . դատեցէք ապա իմ շփոթս , ժամա-
նակին պիտի շմնան , վասն զի կը ճանշնամ իմ
ամուսինս և իւր բարեկամները , որք իւրեանց օգ-
տին համար զանի կը վարեն : Նենդաւոր ամօթն
արդելք պիտի ըլլայ զանի հաւանեցնելու թէ աշ-
խատելու պէտք անի և վասոհ եմ որ կիւրակէն
առաջ զինքը պիտի շտեսնենք :

— Հանդարտեցէք , տիկին , եթէ ձիւլիէն ալ
համակամ դանուի , այս գիշերէն սկսեալ մինչեւ
կիւրակէ , գիշերներն կ'աշխատինք մինչեւ ժամը մէկ ,
և երկուքս մէկէն տիրոջ ընելիքը կ'ընենք , միայն
կրակարանը փշելու համար մէկը պէտք է դանեւ :

— Մօրիս , այդ սպաշտոնին համար շատ հե-
ռու չերթանք , վասն զի , քանի որ մարդասէր և
ազնիւ տղայ մը մեր օգտին և պատւոյն համար իւր
քունը կը դո՞նէ . ես ալ իմ անկողնոյս մէջ պիտի
չմնամ և ձեզի հետ պիտի աշխատիմ . նաեւ , ազ-
նիւ բարեկամ , պէտք չէ որ մէկն իւր անձկութիւնն
կամ իւր նեղութիւնն օտարաց յայտնէ : Ուստի
աշխատինք որ ընելիքնիս ոչ ոք իմանայ :

Մօրիս եւ ձիւլիէն զիշերներն կը հսկէն
զսպանակներն դարբնելու համար .

Մինչդեռ Տիկին Պլանշառ կը խօսէր , ձիւլիէն
ներս մտաւ , և իւր մօրմէն իմացաւ ունեցած անձ-
կութիւնն և Մօրիսի սիրալիք առաջարկն : Ձիւլիէն
որ արդէն չափազանց կը սիրէր զիւր ընկերն , զայս
լսելով անոր վզին փարեցաւ ըսելով թէ անկից
յետոյ ցիեանս պիտի չմնոնայ զինքն : Որոշուեցաւ
որ նոյն գիշերն սկսին հսկել , և մինչեւ ժամը մէկ ,
կէս գիշերէն յետոյ դարբնեցին , և հետեւեալ օրն
ալ միւս գործաւորներուն հետ որոշեալ ատենին
արուեստանոցն գտնուիլ չյապաղեցան և ամբողջ
օրն զսպանակներուն աշխատեցան փութաջան .
այսպէս եղաւ նաեւ երկրորդ օրն :

Հինգշաբթի առաւաօտ , Պլանշառ նախաճաշե-
լու եկաւ : Երբ իրեն յանցաւոր ըլլալը գիտնար ,
քիչ կը խօսէր , բայց այս անգամ կնոջը տժգու-
նութիւնը տեսնելով՝ ըստ :

«Ի՞նչ ունիս , ձօգէֆին , հիւանդ ես :

— Բան մը չէ . պատասխանեց տիկին Պլան-
շառ , լաւ չքնանալուս հետեւութիւնն է » :

Իսկոյն Պլանշառ նախաճաշէն յետոյ , քիչ մը
ստակ առնելով նորէն դուրս ելաւ :

Հետեւեալ գիշերն ալ նախորդ երկու գիշեր-
ներուն պէս անցաւ : Խեղճ տիկին Պլանշառ , որ
փուքին չղթայն քաշելու չէր սորված , երկու ու-
սերուն մէջ կոնակը սարսափելի ցաւ մը կ'զգար ,
բայց չէր տրանջար , հետեւարար և գործն յառաջ
կ'երթար միշտ :

Հինդերորդ գիշերը, երբ ուրախութեամբ
զրազած էին զսպականաց վերջի զյոյզը դարբնե-
լու, Պլանչառ, որ խմացած էր թէ իրեն նենդու-
թիւն կ'ընեն խաղին մէջ, բոլոր ստակը կորսնցնե-
է յետոյ, ընկերութիւնն թողլով առւն կը վերա-
դառնար ամօթալից և խստադէմ։ Առաւոտեան
ժամը մէկն էր, և ինքն զարմացաւ իւր արուեստա-
նոցին մէջ երկաթ ծէծելու ձայնն լսելով։ Որովհե-
տեւ Յուլիս ամսոյն մէջն էին և սաստիկ տաք կ'ը-
նէր, Ժիւլիէն պատուհանին փեղկը կիսաբաց թո-
ղած էր քիչ մը ոդ շնչելու համար, ուստի և կըր-
ցաւ տեսնել կնոջը փքոցն քաշելը, մինչդեռ եր-
կու երիտասարդներն երկաթը ջուրը կը միշէին և
կը դարբնէին։ յանկարծ Պլանչառ երեւցաւ։

«Ի՞նչ կ'ընէք այդ տեղ, հարցուց խստութեամբ։
— Բարեկամ, պատախանեց կինն մեղմիւ,
կը չանանք մեր տան և հինգի փոխանակագրոյն
ստակը շահիւ։ Ահա՛, հինգերորդ գիշերն է որ այս
սիրելի տղայք կ'աշխատին աւարտել այն զսպա-
նակներն, զորս վազը յանձնել խստացած ես։
Եւ գիտես որ չեն ուզեր տրուելիք ապրանքներուն
վրայ և ոչ իսկ փոքր առ հաւիւ մը տալ։

Եւ այս հինգ գիշերն ալ, կրակը դո՞ւ փչեցիր,
Ժօղէ Փին։

— Այս՛ հայր իմ, ըստ Ժիւլիէն, և անստա-
ռակոյն խեղճ մայրս պիտի հիւանդանայ։»

Զդումն Պլանչառի.

Այս ամենապարզ խօսքն, մեծ ազգեցութիւն
ըրաւ գարբինին և զայն ընկձեց, բազմոցի մը վրայ
ինկաւ և աչերն արտասուօք լեցուեցան։

«Դուք ամենքով ալ ինչ աւելի կ'արժէք, գո-
չեց խոկցյն, երբ կարող եղաւ խօսիլ։ Մօրիս, դու
որ քանի մ'ամսէ ՚ի վեր հոս ես, գիշերուան քու-
նող զոհեցիր զմեզ անձկութենէ ազատելու համար,
մինչդեռ ես, տան գլխաւորն, անմիտ պարծեն-
կոտութենէ մղեալ, դուրսը կ'զբանում։ Ասի մեծ
դաս մ'է զոր դուք ինձ կու տաք, սիրելի տղայք,
և որ առ յաւէտ պիտի չկորնչի, կը խոստանամ
ձեզ։ Քառասիրութեամբ կ'ուզէի ինքզինքս ցու-
ցընել այն սատիճանին մէջ, որուն չեմ հասած։
Ա՛հ, երիտասարդք, գէջ ընկերութիւններէ միշտ
զգոյշ կեցէք, որճարան երթալու սովորութիւնն
մի՛ ունենաք։ Գալով ինծի, ձեր երեքին առջեւ
կը խոստանամ այլ եւս ոտքս հոն չկորնել։

— Բարեկամ, ըստ կինը, պէտք չէ մէկ ծայ-
րայեղութենէն միւսին մէջ իննալ, երբեմն, երբեմն
սրճարան երթալէն վասս յառաջ չի գար։

— Ժօղէ Փին, ես իմ ըստած գիտեմ, աւելի
դիւրին է բոլորովին կտրուիլ այնպիսի բանէ մը,
որ ընդ երկար եղծման պատճառ եղած է, քան
ի՛է չափաւորութեամբ ընել։ Ո՛չ, այլ եւս որճա-
րան պիտի չերթամ, և եթէ այս վայրկենիս ձեզ
ըրած խոստանաս հակառակ վարուիմ երբէք, ը-
սէք թէ Պլանչառ սիրտ չունի։

«Խեղճ կինս, ներէ ինձ՝ մինչեւ ց'այժմ քեզի

պատճառած նեղութեանցս համար . դիտես թէ
ո՞քան կը սիրեմ զքեզ, ինչպէս մեր ձիւլիէնը .
բայց չես գիտեր թէ գէշ սովորութիւնն ինչ զօ-
րութիւն կ'ստանայ : Տասն և հինգ տարի գործիս
փութաջան էի , նախ մէկ գործաւորով սկսանք և
այժմ տասը հատ ունինք . բայց գլուխս տկարա-
ցած է և յաջողութիւնը կորոյս զիս , ես որ բաւա-
կան քաջութիւն ունիմ շար բաղդն յաղթահարե-
լու համար : Ես արթէք շտուող մարդոց հետեւելու
տկարութիւնն ունեցայ , և եթէ քանի մը դաւաթ
ոգելից ըմակելիք խմեմ , ուր ըլլալս խկ չեմ գի-
տեր : Կ'զգամ թէ ըրածս գէշ է , բայց աւելի լաւ
ընելու կարողութիւնն չունիմ : Երբ տուն դառնա-
լով քու արտասուելից աչքերդ կը տեսնեմ , բարի
ժօղէֆինս , իմ անմտութիւնս կ'անիծեմ . կ'ուզեմ
որ զիս յանդիմանես , բայց դու , սիրելիդ իմ , ոշ-
ինչ կ'ըսես : Այն ատեն կատաղութեամբ գործի
կ'սկիմ և արուեստանոցին մէջ , մինչեւ խկ ամե-
նէն դիմադրաւն և յանդուդն կը դողացնեմ . ես
ինքզինքս կը խոստանամ չնորոգել այս վարմունքն,
բայց երբ իմ ծախիւքս զուարձացող բարեկամնե-
րէս մին կուգայ ինձ ըսել . « Լաւ ուրեմն , այսօր
կինդ հրաման կուտայ , դուրս ելլալու արտօրնու-
թիւնն ունիք » , այս խօսքերն զիս կը խայթեն և
ես կրկին յաղթահարեալ սալը կը թողում :

« Տասն մասին ըրած անիրաւութիւնս չեմ
անդիտանար , վասն զի լաւ կրնամ խելամտիլ որ ,
եթէ տէրն բացակայ է , գործերն դադարման մէջ
են , և ես նա զարմանալով կը հարցնեմ ինքնին թէ
դու ինչպէս կ'ըսես որ փոխանակազրերը ժամա-
նակին կը վճարես , և գործաւորներն իրենց գոր-

ծին կ'աշխատեցնես :

— Հայր , ըսաւ ձիւլիէն , մայրս որ սրտին լա-
ւութեան հաւասարով գլուխս մ'ալ ունի , գիշեր ցե-
րեկ մեր պատուոյն և մեր բաղդին վրայ հսկած է :

— Ձիւլիէնն ալ , յաւելցուց Տ. Պլանչառ , ե-
րեսուն տարեկան մարդու պէս գործաւորաց հետ
յարգանօք կը վարուի :

— Դուք երկուքդ ալ իմ ազատիչ հրեշտակ-
ներս էք . կրկին անգամ , սիրելի կինս , ներէ ինձ:
Այժմ իմ անցեալ ընթացքս պայծառ . կը տեսնեմ ,
իբրեւ թէ ուրիշ մ' եղած ըլլայ . Ժօղէֆին , կը
խոստանամ քեզ , եթէ Աստուած ատեն շնորհէ ,
քու մնացեալ աւուրցդ համար քեզի դիւրութիւն
մը պատրաստել :

Պլանչառ . զսպանակներն կ'աւարտէ .

Դարբինն իւր տղուն մուրճն առաւ , վասն զի
տղան մօրը աեղ փուքն կը քաշէր , և վերջապէս
Մօրիսի օղնութեամբ զսպանակներն լմնցաւ : Այս
միջոցին , տիկին Պլանչառ փոքրիկ ճաշ մը պատ-
րաստեց և ժամը չորսին (Եւրոպական) սեղան նըս-
տան : Պլանչառ հարցուփորձ ըրաւ Մօրիսի իւր
երկրին և ընտանեաց վրայ , և երբ աւելի մտեր-
մութիւնն հաստատուեցաւ , Մօրիս ըսաւ անոր .

« Տէր , կը ներէք ինձ որ գիտողը թիւն մ' ը-
նեմ , բայց մի՛ դուցէ բարկանաք :

— Խօսէ՛ , տղաս , այսօր ամեն ինչ ըսելու ի-
րաւունքն ունիս :

— Լաւ ուրեմն , ձեզ պիտի ըսեմ թէ մեծ
8

զարմանք է ինձ , որ ձեզ նման գործաւոր մը կիրակի օրերն առաւօտէն չգոցեր իւր արուեստանոցն :

— Ատով ի՞նչ առաւելութիւն կրնամ ստանալ քու կարծեացդ համաձայն :

— Նախ , Աստուծոյ հրամանաց հնազանդ պիտի ըլլաք , և այն ատեն ազատ պիտի ըլլաք եկեղեցի երթալ ազօթելու համար : Յետոյ՝ վեց օր աշխատելէ զկնի օր մը հանգստանալն առողջութեան նպաստաւոր է . և վերջապէս մեզի պէս անձինք , մարմնաւոր սնոււնդն հոգ ալու համար շաբաթուան վեց օրը փութաջան աշխատելէ յետոյ մեծ պէտք ունին եօթներորդ օրուան մը , իրենց հոգւոյն վրայ մտածելու և իրենց միտքն սնոււցանելու համար :

— Կարծեացդ հաւանութիւն կու տամ և կը ջանամ անդամ մը փորձել :

— Նաեւ ուրիշ առաջարկ մ' եւս ունիմ ձեզ ընելիք :

— Աներկիւզ խօսէ՛ , դեռ ի՞նչ կ'ուզես :

— Արուեստանոցին մէջ փոքրիկ աշակերտ մը կայ , զոր իւրաքանչիւր ոք մեր գործաւորներէն իրեւ ծառայ կը գործածեն իրենց յանձնարարութիւններն ընելու , և յաճախ յանիրաւի թշնամանուած է . վերջապէս , ամենէն աւելի դժնդակն սա է որ բնաւ իւր արհեստն չուսնիր :

— Ի՞նչ կ'ուզես որ ընեմ : Աիշտ այսպէս է արուեստանոցներուն մէջ , և ոչ ես և ոչ ժիւլիէն ժամանակ ունինք անոր վրայ հոգ տանելու :

— Կ'ուզէք զայն ինձ յանձնել հսկելու և առաջնորդելու համար : Ազնիւ և բարի տղայ մ'է և խելք ալ ոչ նուազ ունի . պիտի ջանամ չուտ

զանի գործաւոր մ'ընել : Սակայն պէտք է դուք ըսէք որ միայն իմ սալիս վրայ պիտի աշխատի և միայն իմ ծառաս պիտի ըլլայ :

— Հանդարտէ՛ , վաղուընէ սկսեալ այդ տղան քեզ պիտի յանձնուի , փափաքիդ համեմատ :

Դարբինն կիրակի օրերն արուեստանոցն կը գոցէ .

Հետեւեալ առաւօտուն , երկու երիտասարդներն աւարտեալ զսպանակներն իրենց տեղը յանձնեցին , և տիկին Պլանչառ անոնց գինն ստացաւ :

Միւս շաբաթ օրն , դարբինն ըսաւ իւր գործաւորաց թէ կիրակի օրն արուեստանոցն պիտի շրանայ . կանխաւ իմացուց նաեւ անոնց թէ իւրաքանչիւր ամսոյ գլուխ պարզեւ պիտի տայ այն ամեն գործաւորաց , որք երկուշարթի օրերն բացակայ չին գտնուեր զրօսանաց պատճառաւ : Ասի նախ մեծ արդիւնք մը չունեցաւ , բայց տակաւ առ տակաւ գործաւորներն աւելի փութաջան եղան և գրեթէ առանց երբէք բացակայութեան՝ ամենքն ալ եռանդեամբ կ'աշխատէին :

Պլանչառ , իւր կինն և երկու երիտասարդներն կիրակի օրերն , երբեմն Աէն-Գլու , երբեմն ալ Նէօլի կամ Վէուսայլ կ'երթային , վերջապէս այն ամեն տեղերն , ուր օգտակար բան մը տեսնել կը յուսային : Յաջորդաբար այցելեցին Բարիզի բոլոր յիշատակարաններն . և յաճախ արուեստից վարժարանն այցելել կ'երթային : Երբեմն եթէ շատ յոգնած ըլլային , սրճարան մը կը մտնէին . բայց Պլանչառ դռանն առջեւ կ'սպասէր և անյաղթելի

դիմադրութեամբ կը մերժէր իւր կնոջ աղայանքն :
«Խոստացած եմ ես ինքվինքիս բնաւ սրճարան
չմտնել, և միթէ այս խոստումս չբռնել կարեփ՞ է :
Պէտք է որ մարդ աւելի իրեն մասին ուղղութիւն
ունենայ քան թէ այլոց : Սակայն, ասիկայ պատիժ
մ' զոր ես իմ անձիս սահմանեցի, ուստի դուք
այս կտորին մի՛ խառնուիք» :

Երբ տեսան որ Պլանշառ վերստին եռանդ-
եամբ կ'աշխատի իւր գործոյն և ընտանիքը չթո-
ղուր, իւրաքանչիւր ոք իւր յարդանքն մատոյց նը-
մա, և նորէն շատ յանձնարարութիւններ ընդու-
նեցաւ : Գործերն այնքան բազմացան, որ չէր կը ը-
նար հասնիլ ամենուն, բայց արդէն իւր ճարտա-
րութիւնը հոչակեալ ըլլալուն, ամենքն անոր կը
յանձնէին իրենց գործերը, հետեւարար ստիպ-
ուեցաւ գործաւորաց թիւն ալ աւելցնել և այս-
պէսով մեծ շահ ըրաւ :

Մօրիս կը հիւանդանայ .

Երկու տարիէ 'ի վեր Մօրիս իւր աիրոջ տան
մէջ կը բնակէր, ուր իրեւ երկրորդ որդի կը նը-
կատուէր, Երբ, անդամ մը քրտնած միջոցին, օ-
դոյ հոսանքի (courant d'air) մը ենթարկուելով, կո-
ղացաւէ հիւանդացաւ վտանդալի կերպով. բժիշկն
յայտնեց թէ հիւանդութիւնն երկարատեւ պիտի
ըլլայ և թէ մեծ խնամոց կարօտ է :

Մօրիս, բժիշկին այս խօսքերն լսելով, աղա-
չեց իւր տիրոջը, որ զինքն հիւանդանոց փոխադ-
րել տայ :

«Ո.յդ առաջարկութիւնդ արդարեւ անհան-
դուրժելի է, ըստ Պլանշառ . եթէ ձիւլիէն հի-
ւանդ ըլլար, հոն զրկելու անմտութիւնն պիտի
ունենայի :

— Եւ մեք ձեր երկուքին մէջ խտրութիւն չենք
ըներ, յաւելցուց տիկինն Պլանշառ . կ'ուզեմ ես
ինքնին խնամել զքեզ փոխադարձ քու ինձ ըրած
զոհողութեանդ . առ այժմ ձիւլիէն՝ հօրաքրոջը
սենեակը պիտի պառկի ։

Մօրիս վերակենդանացաւ չնորհիւ իւր բարե-
սիրտ տիրուհւոյն խնամոց, բայց վրան մեծ տկա-
րութիւն մը մնաց : Երբ ալ կարող եղաւ դուրս
ելլեւ ըստ իւր տիրոջը .

«Տէր, առ այժմ շուտով պիտի չկրնամ մուր-
ճը գործածել, լսւ կ'զգամ զայս . եթէ գուք ալ
յարմար կը դատիք, քիչ մ'ատեն երկաթադործի
մը քով աշխատիմ, վասն զի քանի որ կ'ուզեմ իմ
դիւզիս մէջ հաստատուիլ, պէտք է որ իմ վիճակիս
յարաբերութիւն ունեցող արուեստներուն վրայ
ըստ բաւականին տեղեկութիւն ստանամ :

— Գնա՛, տղաս, երբոր ուզեմ՝ աղատ ես գալ
զարնել քու սակագ վրայ, որ զքեզ լսւ կը ճանչ-
նայ :

— Բայց տէր, շատ գոհ պիտի ըլլամ՝ բոլորո-
վին զձեզ չթողլուս, եթէ տիկինն ուզէ ըստ սո-
վորականին զիշերներն զիս իւր տան մէջ պահել :

— Ա.յդ մասին իրեն հետ խօսէ, ես չեմ դի-
մադրեր, ատոնք իմ գործերս չեն» :

Տիկին Պլանշառ յայտնեց թէ շատ գոհ և ու-
րախ պիտի ըլլայ, եթէ Մօրիս իւր տունը բնակի,
որքան ոլ մտադիւր է բարիզ մնալու :

Վեց ամսոյ չափ Մօրիս իւր տիրոջ արուեստանոցէն դուրս երկաթագործի մը քով աշխատեցաւ, մինչեւ որ կատարելասկէս զօրանալով, իւր սալին վրայ դարձաւ :

Մօրիս զօրաժողովի կողմանէ իւր գլուհը
կը կանջուի .

Սեպտեմբեր ամսոյ մէջ, Մօրիս իւր խնամակալէն նամակ մ'ստացաւ, որ կ'ստիաէր զինքն Բարիզը թողուլ Ցունուարի սկիզբներն և դիւզը դառնալ զինուորութեան վիճակադրութեանն ներկայ գտնուելու համար : Մօրիս իւր մօտակայ բաժանման վրայ խօսեցաւ Պլանշառի Ընտանեաց, որք ամենքն ալ այս բանիս վրայ տրամեցան :

«Մօրիս, ըստե Ժիւլիէն, եթէ լաւ թիւ մ'ունենաս, պէտք է կրկին հոս վերադառնաս, մէկ քանի տարի աշխատելու համար, վասն զի դու ինքնին արուեստանոց բանալու մասին դեռ չատ Երիտասարդ ես :

Մօրիս խոստացաւ կատարել ինչ որ առաջարկեցին . երբ կարգն տիկին Պլանշառի հետ հաջիւ տեսնելու եկաւ, այս բարի կինն Մօրիսի արուեստանոց դուրս աշխատած վեց ամսուան համար տան վարձք ընդունել մերժեց :

«Ոչ, Մօրիս, ինձ ոչ ինչ կը պարտիս . միայն գիշերուան հանդստանալուդ համար վարձք չեմ կրնար ընդունիլ, վասն զի քեզ կը պարտիմ իմ ամուսնոյս դէշ վարմանքէն յաշխատութիւն դառնալն : Եթէ, յանկարծ վրայ հասած այն գիշերը,

ուր երեքնիս կ'աշխատէինք, միայն Ժիւլիէնը աշխատութեան մէջ գտնէր, իրեն խիստ բնական բան մը պիտի թուէր, և ինքնին պիտի չվերադառնար . բայց քու անձնուիրութենէդ զգացուեցաւ, դու որ իրեն համար աշխատելու այնքան պէտք չունէիր» :

Ամբողջ ընտանեօք ընթրիք մ' ըրին իրբեւ հրաժեշտի, վասն զի Մօրիս իրիկուան կառքով սիրտի մեկնէր, որով հետեւեալ առաւօտուն վիէրզօն պիտի հասնէր . իւր բարի ճամբորդութեան համար գինի խմեցին, և իրարմէ բաժնուելու միջոցին, տիկին Պլանշառ ոսկեայ մատանի մը անոր մատն անցուց :

«Պահէ՛ վայս, Մօրիս, ՚ի յիշատակ մեր անկեղծ մտերմութեան և քու մեզի մատուցած ծառայութեան :

— Եւ որովհետեւ դու չատ Երիտասարդ ես, և Երիտասարդութիւնը յաձախ սխալանաց ենթակայէ, յաւելցուց դարբինն, կը պատուիրեմ քեզ որ աչքդ միշտ այս մատանիին վրայ դարձնես . վասն զի ասի քեզ պիտի յիշեցնէ թէ ազնուասիրտ մարդ մը ի՞նչ վտանգներու կ'ենթարկուի, երբ իրեն վրայ ուշադիր չըլլայ :

Տիկին Պլանշառ անոր յանձնեց պղտիկ ծրար մը, յորում կը պարունակէր բրուեղէն ընտիր ոստայնէ հանացի պարեգօտ մը, զոր Կրամ Պիշի կը նուիրէր :

Մօրիս իւր զիւղը կը վերադառնայ .

Կրան Պիշ միայնակ անկիւն մը քաշուած նստեր
էր կրակին առջեւ , վասն զի սիրտն այնպիսի ցա-
ւերով համակեալ էր . որք նոյն իսկ քալելուն ար-
գելք կ'ըլլային : իւր դրան բացուիլն լսելով , զը-
լուին դարձուց և տեսաւ որ սեւ մօրուսաւոր ե-
րիտասարդ մը ներս մտնելով , իրեն վիզն փաթ-
թուեցաւ և գուեց .

«Մայր , մայր , բնաւ չէք խօսիր , զիս տես-
նենուդ գոհ չչ'ք ուրեմն :

Խեղճ պառաւուը , որ իւր աղան չէր ձանչցեր ,
անոր ձայնը լսելով այնքան ուրախացաւ որ տկա-
րութեան մէջ ինկաւ : Այն ատեն Մօրիս զղաց
այնպէս յանկարծակի ներս մտնելուն : Երբ կրան
Պիշի նուաղումն փարատեցաւ , քաղցրութեամբ ե-
րիտասարդին նայելով , ըստ .

«Ոստուած իմ , ինչ գեղեցիկ տղայ մ'է եղեր ,
եթէ խեղճ ձէրօմ կենդանի ըլլար . ո՛րքան արդ-
եօք պիտի հպարտանար զիւր որդին այս վիճակին
մէջ տեսնելով » :

Մօրիս իւր հայրն յիշելով լսցաւ . երբ քիչ մը
հանդարտեցաւ , ըստ .

«Մայր , ահաւասիկ ես եկայ զքեզ տեսնելու
և քեզ քերելու խնայրութեամբ հաւաքած քիչ մը
ստակու . վասն զի ձեզ 100 ֆրանդ պարտք ունիմ :
Պէտք էր որ աւելի հարուստ ըլլայի , բայց ի՞նչ կ'ու-
զէք , երիտասարդութիւնը զրօսանքէ կ'ախորժի :

— Եւ խիստ լսւ ըրիր գու պատուաւոր կեր-
պով զրօսնելով . տղաս , պահէ քու ստակդ , ես

բանի մը պէտք չունիմ . քու ինձ ձգած 100 ֆրան-
դը և դեռ քիչ մ'ալ բան ունիմ :

— Բայց մինչեւ այսօր ինչո՞վ ապրուստդ ձա-
րեցիր , խեղճ մայր :

— Պիշ՝ քեզ ըսեմ , որովհետեւ եր'րին բա-
նոզէքները սուզ են , միայն կէսը բանեցնել տուի ,
ինչպէս նաեւ պարտէզն . կանեփի արտը վարձու
տուի և տմենուն հասոյթովը կրցայ լսւ ալլըիլ .
ինձ պէս պառաւի մը ապրելու համար , գիտե՞ս թէ
որքան քիչ բան կարեւոր է :

— Մայր , կը հասկնամ որ գոհ ապրեր էք .
ահաւասիկ քեզ տաքուկ պարեգօտ մը , զըր ինձ
տուաւ բարիզի տիրուհիս , որպէս զի քեզ յանձնեմ» :

Դախաճաշէն յետոյ , երբ Մօրիս քիչ մը հանդ-
շեցաւ , զնաց Պ. Ժողովրդապետն տեսնելու : Պէո-
թուանի խանութին առջեւէն անցնելով զայն բա-
րեւեց :

«Հա՞ , հա՞ , ըստ դարբինն , ուրեմն վերա-
դարձար , պարոն ճանապարհորդ :

— Այո՛ , հայր Պէոթրան , և եթէ յանձնելու
դործ մ'ունիք ինձ , պատրաստ եմ աշխատելու :

— Տեսնենք » :

Մօրիս շարունակեց ճամբան , քայլելն զէպ 'ի
երիցատունն ուղղելով , ուր գտաւ նաեւ իւր ինա-
մակալն Պ. Ռըմի . ամենքն ալ զիրար կրկին տես-
նելուն շատ ուրախացան :

«Հաւ ուրեմն , բարեկամ , ըստ Հովիւը , գա-
ցած ժամանակուանդ ունեցած բարի և պարզ
խղճմտանօքդ կը դառնա՞ս մեզ թէ ոչ :

— Այո՛ , Պ. Ժողովրդապետ , Աստուծոյ շնոր-
հիւ ձեր խրատներէն և ոչ մին մոսցայ , և ինք-

զինքս յանդիմանելու մեծ պատճառ մը չունիմ։
— Տեսնենք, ըստ Պ Ուրմի, ի՞նչ սորվեցար
քու ճանապարհորդութեանդ մէջ և ինչե՞ր ունիս
ըսելիք մեզ։

— Պարոն, ուսայ թէ չկայ բնաւ դժուարու-
թիւն մը, որոց չչաղթէ աշխատութիւնը . և լաւ
նկատեցի որ միայն աշխատող մարդն կրնայ կա-
տարեալ և ճշմարիտ երջանիկ ըլլալ . որովհետեւ
միայն նա կ'զգայ իւր ապրին, և իւր իմացակա-
նութեան ճիշդ շափն ունիւր Ես այժմ իմ արհեստա
առաջուրնէ շատ աւելի կը սիրեմ, անտարակոյս,
վասն զի աւելի լաւ տեղեակ եմ, և համոզուած եմ
որ աշխատելով երջանիկ բազդ մը և ապագայ մը
պիտի ունենամ։

— Կը տեսնեմ բարեկամ, որ ճամբորդութե-
նէդ մեծ օգուտ ես քաղեր . լաւ զգացումն և մի-
անդամայն արիութիւն ունիս . ասով մարդ միշտ
կրնայ յաջողիլ։

Մօրիս վիճականութեան մէջ գէշ թիւ մը
կ'ունենալ .

Վիճականութիւնը կատարուեցաւ և Մօրիս
թէ թիւ մ'ունեցաւ : Այս բանիս վրայ կրան Պիշ
այնքան ցաւ զգաց, որ զինքը միմիթարեն անհնար
ելաւ . և ձողովրդապետն 'ի զուր կը քարոզէր թէ
պէտք է հնազանդիլ Աստուածացին կամաց։

«Մայր, ըստ Մօրիս, ինչո՞ւ այսքան կը վհա-
տիք . ճամբորդութիւնը կը սիրեմ և այժմ առանց
ծախոք մ'ընելու պիտի ճանապարհորդեմ։

— Լաւ, բայց բան մը պիտի շահի՞ս :
— Ճշդիւ հնազանդելու սովորութիւնն պիտի
շահի, ըստ Ժողովրդապետն, և օտարաց հետ
ապրելով, նոցա թերութիւնքը համբերութեամբ
պիտի կըէ :

— Օ՞ն ուրեմն, սիրելի մայր, ալ մի՛ լաք, այս
պատերազմն չարունակ պիտի չտեւէ և ես քու քովդ
ապրելու համար քիչ ատենէն հոս պիտի վերա-
դառնամ։

Մօրիս ինքնին կը մոտածէր թէ Կրան Պիշ ի՞նչ
պիտի ըլլար, եթէ ինքնն այլ եւս ստակ չկրնայ
զրկել։ Արդէն խեղճ աղջիկն տկար էր, և քիչ ա-
տենէն զինքը խնամելու համար մէկու մը պէտք ու-
նէր, Ուստի զնաց իւր խնամակալին խորհուրդ
հարցնելու թէ ի՞նչ հարկ է ընել իւր սիրելի մօր
մնացեալ առուրց երջանկութիւնն ապահովցնելու
համար։

«Վասն զի, պարոն, յաւելցուց Մօրիս, շատ
ձախողակի դէ ալքէր կրնան պատահիլ, այնպէս՝ որ
ես բանահէն չկրնամ դառնալ. և եթէ ես մեռ-
նիմ, Սէն—ժօնածի Միշօ մօրեզրօրդէիքս պիտի
ժառանգեն իմ ունեցածս և կրան Պիշն պիտի ճամ-
բեն . այն ատեն ի՞նչ պիտի ըլլայ խեղճ մայրս այն
հասակին և այն վիճակին մէջ։

— Բարեկամ, ըստ ուսուցիչն, այս ամսոյն
երկուքին բանակը պիտի մտնես, ուստի մինչեւ այն
ատեն կրնաս դու ինչքդ կարգադրել.

— Եթէ ունեցածս կրան Պիշն ապրեցնելու
համար բաւական եկամուտ թերէ, առեն բան իւր
նախակին վիճակին մէջ թողուն աւելի կ'ընտրեմ.
բայց շեմ ուզեր որ խեղճ կինն ինքինքը ամեն

բանէ զրկելով ապրի , ինչպէս որ մինչեւ ցայժմ ըրած է : Կ'ուզէի իրեն ցիկանս եկամուտ մը կապել ծախելով այս տունը սա պայմանաւ որ մինչև իւր մահն հոն բնակի . այդին և միւս ունեցած երկիրներն պիտի թողու և միայն պարտէ զը պիտի մնայ իրեն . այս ամենն գնողն 550 Փրանդ ո՛է տք է վճարէ և այզիէն ելած գինուոյն մէկ քառորդն սիրելի մօրս տայ , որոյ դեռ ընդ երկար ապրիլն տարակուելի է . ի՞նչ կը մտածէք , այս մասին , պարոն :

— Այդ գործոյն կատարումն ինձ թող , կը յուսամ որ քէնէ աւելի աղէկ պիտի ընեմ :

Ցիրաւի , քանի մ' օրէն վերջը , Մօրիսի խնամական յայտնեց նմա թէ իւր գրացի պանդոկապետը ամենուն 360 Փրանդ կը վճարէր Մօրիսի առաջարկած պայմաններով : Նաեւ ամեն տարի խեղճ աղջկան 150 լիար գինի և իւրաքանչիւր ձմեռուան համար 100 խուրճ ցորեան պիտի տրուէր :

« Շնորհակալ եմ , սիրելի խնամակալս . այժմ սիրտս հանդիսաւ է , և մեկնելու պատրաստ եմ , քանի որ ես ապահով եմ որ բարի մայրս իմ բացակայութեանս ատեն բանի մը կարօտ պիտի չըլլոյ » :

Մօրիսի նրաժեշտն .

Մօրիս Շաթօ—Ոռու գանուելու հրամանն ըստացաւ . հոն իրեն և ուրիշ նոր զինուորաց յանձնուեցաւ ճամբայ մը , որ Գերմանիա պիտի տանէր , ուր հարկ էր որ ամսէ մը ներկայ գտնուէին :

Մօրիս գիւղ վերադարձաւ ամենուն հրածեշտի ողջոյն տալու համար : Կրան Պիշ շատ արտասուք թափեց վերջին անգամ զայն գրկելով :

« Խեղճ տղաս , ըստ արտասուալից աչօք , այլ եւս զքեղ պիտի չունիսեմ : Ալ երկար ապրելու յոյս չունիմ , և երբ Աստուծոյ քով ըլլամ , պիտի աղաչեմ որ 'ի քեզ զեղու իւր օրհնութիւններն , 'ի հատուցումն քու խանդակաթ սիրոցդ . վասն զի գիտեմ թէ դու ինձ համար քու ինչքէդ կը զըրկուիս : Ամեն ամիս , այս ինչ օրն , քեզի համար պատարագ մը պիտի ընել տամ . բայց սիրելի տղաս , պատառ մը հացն հանդստութեամբ պիտի չուտեմ , մոտածելով որ դու իմ վերջին աւուրցս բարեկեցութեան համար ամեն բան ծախեցիր :

— Միթէ զայդ ընելն պարագս չէ^o , սիրելի մայր : Ինձ համար նուիրական պարտաւորութիւն մ'է օգնել իւր ծերութեան ատեն այնմ՝ որ իմ մանկութեանս վրայ հսկած և իմ հայրս այնքան քաջցրութեամբ խնամած է . ինծի համար մի՛ ցաւիք բնաւ . աշխատելու համար ուժեղ բազուկներ և գործերս կարգադրելու համար ամիովի միտք ունիմ , և իմ ապագայ բազուկս վրայ անհանգիստ չեմ : Ուստի անհոգ ապրեցէք պէտք եղածն ուտելով . սրտերնիդ քիչ մը ուրախ բռնեցէք , և վըրանիդ խնամք տանելու համար մէկը բռնեցէք , չըլլայ որ մէն միայնակ այս տան մէջ ապրիք . բան մի՛ խնայէք . 'ի գարձիս ձեզի աւելի լաւ ընծաներ պիտի բերեմ :

— Երբ դու վերադառնաս , Մօրիս , ես վարը եկեղեցւոյն ճիշդ դիմացը պիտի ըլլամ , և իմ վրաս խոտը աճած պիտի ըլլայ :

— Այդպէս մի՛ խօսիք, սիրելի մայր, ալէտք
չ մեր հրաժեշտին տիսուր կերպարանք մը տալ,
դժնդակ գաղափարներ զարթուցանելով մեր մտաց
մէջ» :

Վերջապէս Մօրիս մեկնեցաւ՝ Պ. Ժողովրդա-
պետին և Պ. Ռումին չորհակալ ըլլալով իրենց
բարի խրատներէն և խանդակաթ խնամքներէն,
որք երբէք չէին զլացած իրենց կողմէն։ Այս բա-
ժանումն տիսուր եղաւ, վասն զի ո՞վ կրնար ըսել
թէ կրկին զիրար պիտի տեսնէին։

Մօրիս Աւստրիա հասաւ, Վիէննայի առաջին
առման ատեն։ զանազան յաղթութիւններ ըրաւ
առանց վիրաւորուելու և չուտով յիսնապետ կար-
գուեցաւ։ բայց Դանուրի ճահճաց մէջ տենդէ
բոնուելով՝ հիւանդանոցէ հիւանդանոց տարուե-
ցաւ առանց բժշկուելու։ ուստի ստիպուեցան զա-
նի Գաղղիա զրկել, իւր բանակին յանձնելու համար։

Մօրիս բանակին կ'արձակուի.

Երբ 1815ին, Լուառի բանակն արձակեցին,
Մօրիս որ Պուրժ կը գտնուէր՝ իւր արձակուրդն ըս-
տացաւ։

Իւր գիւղը վերադարձաւ բաւական ստակով,
որ աւելի շատ պիտի ըլլար եթէ իւր քսակն յա-
ճախ ընկերաց համար բաց չըլլար։ Սակայն կրան
Պին չկար, այլ եւս զայն վայելելու համար։ ինչ-
պէս ինքն նախագուշակած էր, խոտն այժմ կ'ա-
ճէր իւր դրուած տեղւոյն վրայ, և նա իւր յետին
չունչն փչած էր, օրհնելով զՄօրիս։

Ուսուցիչն տան բոլոր կարասիները ժողված
էր։ իւեղճ աղջկան պահոցին մէջին դտան 280 ֆը-
րանգ, վասն զի բնաւ ձեռք զարկած չէր այն ըս-
տակին, զոր Մօրիս Գաղղիա ճամբորդած ատեն
թողած էր։ Դժուարաւ համոզած էին զանի որ
փոքրիկ սպասուէի աղջիկ մը բռնէ իւր կենաց վեր-
ջին երեք տարիներուն ատեն։ Կրան Պի՛ Մօրիսի
թողած էր ինչ որ ունէր։

«Վիրելի և բարի մայրս շատ լաւ ըստ թէ այլ
եւս զիրար պիտի չտեսնենք», ըստ Մօրիս իւր
արտասուքներն որբելով, որք առատապէս կը հո-
սէին երբ իւր խնամակալն կրան Պիշի վախճանն
կը պատմէր։

Մօրիս վիրաւորուեցաւ տեսնելով գնդասեղան
մը իւր նախկին տան մէջ, զոր շատ կը սիրէր, թէ
և տիսուր պարագաներ ալ կը զարթուցանէր մտաց
մէջ։ Բայց այս վիշտը չուտ վանեց իրմէն, ինչպէս
կը վանեն գէշ խորհուրդ մը։ և ինքն միայն կը մը-
տածէր՝ իրբեւ ճշմարիտ մայր սիրող կնոջ մը վեր-
ջին տարիներուն դժուարութիւնները դիւրացնե-
լուն երջանկութեանը վրայ։

Երբ կրկին Պ. Ժողովրդապետն տեսաւ, իրեն
տարած յաղթանակներն պատմեց նմա։ Յետոյ
գնաց տեսնելու սայլագործն որ իւր հօր հին ա-
շակերաններէն էր, և թէեւ վեց տարւոյ չափ Մօ-
րիսէն աւելի մեծ էր, բայց ընտիր բարեկամներ
էին։ Անկից ալ անցնելով գնաց զՊէոթրանն գըտ-
նելու, որ անախորժ ընդունելութիւն մ'ըրաւ։

«Ինձ աշխատցնելու համար գործ մ' ունի՞ք,
Պ. Պէոթրան, ըստ անոր։

— Ոչ, պատասխանեց դարբինն, մէկ գործաւոր

մունիմ և երկրորդի մը կարօտ չեմ։
— լաւ, ես ալ ուրիշ տեղ ինծի համար գործ
կը փնտռեմ» :

Մօրիս կ'ամուսնանայ .

Մօրիս բոլոր շրջակայ տեղուանքը գնաց գործ
մը դտնելու համար և վերջապէս կրասայի մէջ զե-
տեղուեցաւ դարբնի մը քով, որ չատ յաճախորդ
ունէր, վասն զի սովորական գործաւորներէն աւե-
լի յաջողակութեամիր և ճարտարութեամիր կ'աշխա-
տէր երկաթին վրայ : իւր նոր տէրը զգալով թէ
Մօրիսի հետ կապուելով ի՞նչ առաւելութիւն կը ը-
նայ ունենալ, իւր քսանամեայ միամօր աղջիկն՝
ֆրանսուազն անոր կնութեան առաջարկեց :

Մօրիս զայն իրեն յարմար դատելով, ամուս-
նացաւ . և որոշուեցաւ որ դարբինն, որ դիւրու-
թեամիր կ'ապրէր, այս նորեկ ամուսնացեալներն
իւր քով պահէ և տարին 300 ֆրանդ տայ Մօրի-
սի : Ֆրանսուազի հայրն իրեւ խնամակալ, ուղեց
որ իւր փեսան հաշիւներն իրեն ներկայացնէ, բայց
Մօրիս մերժեց ըսելով թէ իւր կինն միամօր ալ-
ջիկ ըլլալով, պէտք չէ այդքան վէճերու տեղի տալ
և թէ ինքն չուզեր կողովսել իւր աներն, որոյ
հանգստութեան ինքն իսկ մասնակից պիտի ըլլայ :

Առաջին տարին ամեն բան աղէկ գնաց, բայց
երկրորդին՝ աները 500 ֆրանդն վճարել հարկ ե-
ղած ատեն դժուարութիւններ երեւան հանեց,
պատճառելով թէ ֆրանսուազի նորածին տղայն
տնական ծախքը կ'աւելցնէր :

«Ուրեմն Շառլի ծնունդէն դժգո՞հ էք, ըսաւ
Մօրիս :

Դարրինն չպատասխանեց, բայց երրորդ տա-
րին բացարձակապէս յայտնեց թէ 500 ֆրանդի
տեղ 200 ֆրանդ միայն պիտի տայ, երկրորդ
տղու մը ծնունդը պատճառ բռնելով :

Այս անգամ Մօրիս բնաւ չխօսեցաւ . քանի
մ' օրէն վերջը սայլ մը վարձեց որով իւր գիւղը
պիտի փոխադրուէր ընտանեօք, և իւր կնոջն ըսաւ
որ ծրարներն պատրաստէ : Ֆրանսուազ հնազան-
դեցաւ ամուսնոյն արտասուալից աչօք : Կը մտա-
ծէր թէ ի՞նչպէս իւր ծերունի հայրն մինակ պիտի
թողլու :

Երբ դարրինն մեկնելու համար եղած պատ-
րաստութիւններն երեկոյին տեսաւ, հարցուց թէ
ի՞նչ կը նշանակէ :

«Սա կը նշանակէ թէ, պատասխանեց Մօրիս,
երբ ընտանիք մը միարանութեամիր չեն կրնար ապ-
րիլ, հարկ է որ բաժնուին :

— Այսպէս ուրեմն զիս կը թողնուս և աղջիկս
կը տանիս :

— Կինս և զաւակունքս կը տանիմ, և իմ երկ-
րիս մէջ խանութ մը բանալով պիտի աշխատիմ:

— Գնա՛, խելքիդ վհածին պէս ըրէ, բայց պի-
տի տեսնես որ ստակ շահին կարծածիդ չափ դիւ-
րին չէ » :

Մօրիս իւր բնիկ գիւղին մէջ կը հաստատուի.

Հետեւեալ օրն , Մօրիս կառքին վրայ բեռցուց ֆրանսուազի ծրարներն , որք բազմաթիւ էին , վասըն զի տան մէջ դտնուած բաւական կանոնաւոր կարասիկն հայրը իւր աղջկան հետ բաժնած էր : Մօրիս իւր կինն ալ կառքին մէջ նստեցուց , տղաքներն ալ անոր տուաւ , և յետոյ ինքն ալ ելլելով՝ անդրանիկն իւր բազկաց վրայ տուաւ , մինչդեռ մայրն լալով պատիկին կաթ կու տար , և կը ցաւէր իւր հօր հրաժեշտի ողջոյնն տուած չըլլալուն , որ առաւօտուն կանուխ դուրս ելած էր և իրենց մեկնելուն համար դեռ տուն դարձած չէր :

«Մի՛ վհատիր , սիրելի կինս , ըստւ Մօրիս , կրասէյէն շատ հեռի չենք երթար , սակայն եթէ 20 տարի ալ հոն կենայինք , ստակի մը տէր պիտի չըլլայինք , և պէտք է մեր զաւակաց վրայ մտածել : Հօրս և կրան Պի՛ հին կարասիներն ու ճերմակեղէններն դեռ դրած են , հետեւաբար առ այժմ այս մասին ծախք ընելու պէտք չունինք , քիչ ատենէն աւելի վայելուչ կերպով մեր կարասիներն պիտի կանոնաւորենք : Բնակելու համար սենեակ մը պիտի վարձեմ , և խցիկ մ'ալ պիտի փնտուեմ առ այժմ իրբեւ դարձնոց դործածելու համար . բայց պիտի տեսնես թէ քիչ ատենէն այնքան յանձնարարութիւններ պիտի ընեն ինձ , որ պիտի չկըրնամիլ :

Երբ գիւղը մտաւ Մօրիս , խուռն բազմութեամբ ամենքն անոր բոլորակիքը ժողուեցան և անոր հոն հաստատուիլն լսելով շատ ուրախացան : Պանդո-

կին գաւիթը միայնակ սենեակ մը և անոր քով աւ հին ախոռ մը վարձեց , ուր հաստատեց իւր դարբնոցը : Յետոյ երբ իւր ընտանիքն զետեղեց՝ Վիէրզոն գնաց իւր գործին պէտք եղածն դնելու :

Երկաթ , ածուխ և ուրիշ պէտք եղած գործիքներն գնելէ , և քանի մ'ամսուան ցորեանը պատրաստելէ յետոյ քովը 10 ֆրանդ մնաց : Իւր կինն որ մինչեւ այս հասակն երբէք դրամական նեղութիւն չէր տեսած , լալ սկսաւ :

«Մի՛ անհանդիստ ըլլար , բարի ֆրանսուազ , ըստւ Մօրիս . կը խոստանամ քեզ որ երբէք բանի մը կարօտ պիտի չըլլանք . իմ վրաս վատա՛հ եղիր , միթէ կ'ուզե՞մ ես զքեզ և մեր տղայքը թշուառութեան մէջ տեսնել » :

Ֆրանսուազի հայրն զիւր աղջիկն փնտուել կուզայ .

Հետեւեալ շարթուն Մօրիսի աները գիւղ եկաւ , և յոյժ զարմացաւ տեսնելով որ դարբնոց մը բացերէ և եռանդեամբ կ'աշխատի Մօրիս :

«Ուրեմն ամեն ինչ կարգադրած էիր , որ զիս թողուցիր , ըստւ ֆրանսուազի հայրը՝ Մօրիսի . երբէք զքեզ այդպէս դործի մը ձեռնարկելու կարող չէի կարծեր :

— Ինչո՞ւ չէ , աներ , քանի որ ալ մէկ մէկէ յոյս չունինք և դուք չէք ուզեր որոշեալ պայմաններուն համեմատ վարուիլ . աւելի աղէկ չէ՞ որ իւրաքանչիւր ոք իրեն համար աշխատի , քան թէ ամենքն մէկտեղ գժտութեամբ ապրին . ես բնաւ անիրաւութեան չեմ կրնար հանդուրժել , ասով

միշտ իրարու հետ վէճ պիտի ունենայինք : Այս-
պիսի անիրաւ դատաստան մը շուտ կը մոռնամ,
բայց կ'զգուշանամ կրկին ենթարկուելէ :

— Բայց դու գործը մեծցուցիր . ես քու 300
Փրանդդ պիտի տայի :

— Քանի որ ինձ կը պարտէիք , հարկ էր որ
ժամանակին վճարէիք առանց յապաղման :

— Ա՛հ , դու ինչպինքդ ուրիշներէ աւելի գիտ-
նական համարելով , կը կարծես թէ միշտ իրա-
ւունք ունիս :

— Գիտուն ըլլալու հարկ չկայ արդարութիւնն
անիրաւութենէն զատելու համար . նորածին երա-
խայն անդամ այդ կտորն ձեզ և ինձ շափի կրնայ
որոշել . վասն զի Աստուած առաջին օրէն այս ծա-
նօթութիւնը դրած է մարդոց մտքին մէջ , որպէս
զի յանդէտս չարութիւն չդործեն » :

Ֆրանսուազի հայրն չկրցաւ պատասխանել և
նորէն մեկնեցաւ առանց իւր աղջիկն տեսնելու ,
որ մեծ ցաւ գուաց այս գժտութեան վրայ :

Մօրիս իւր աներոց նետ կը հաշտուի .

Մօրիսի բոլոր կին բարեկամներն իրենց գոր-
ծերն Մօրիսի յանձնեցին և շրջակայներէն շատ կալ-
ուածատէրք հաւանեցան՝ պէտք եղած ատեն ի-
րենց գործերն Մօրիսի յանձնել : Դղեակէն անոր
շինել տուին նախ սանդղց բազրիք մը և այս գոր-
ծին շինուածքէն շատ գոհ եղան : իւր իմացակա-
նութիւնն և իւր ճարտարութիւնն այնքան շուտ
ճանչցուեցաւ , որ դարբնութեան և կառաջնուու-

թեան վերաբերեալ բոլոր գործերն իրեն յանձ-
նուեցաւ : Դղեակին համար յանձնարարեալ գոր-
ծերն այնպէս լաւ կատարեց , որ բոլոր երկրին մէջ
իւր համբաւն հոչակուեցաւ և հարկադրուեցաւ ի-
րեն հետ աշխատցնելու համար գործաւոր մ' առ-
նուլ : Ֆրանսուազ ալ իւր կողմէն խնայող և իրեն
վերաբերեալ գործոց փութաջան էր :

Այս նորահաստատ ընտանեաց մէջ ամեն բան
կանոնաւոր և յաջողակ կ'երթար : Այսկայն Ֆրան-
սուազ որ իւր հօր հետ գժտեալ ըլլալուն միշտ
տիսուր էր , իւր բնակութեան տեղին շատ գէշ և
անպատշաճ կը գտնէր . այլ իւր ամուսինն անդա-
դար կը կրկնէր .

«Համբերէ' , սիրելի կինս , եթէ ինձ գործ
յանձնարարուի , անկէ եղած շահը քու քսակիդ
մէջ կ'իյնայ : Հանգիստ եղիր , որ մը գեղեցիկ տուն
մը պիտի ունենաս , միթէ աշխատութիւնն անկա-
րելի բան կ'ենթադրէ :

— Միայն թէ կով մ'ունենայի :

— Եթէ զքեզ գոհացնելու համար միայն այդ
կարեւոր է , յառաջիկայ տօնավաճառին պիտի ու-
նենաս կով մը , հետն ալ այծ մը . զանոնք պահե-
լու համար ախոռ մը պիտի վարձեմ : Անոնց կա-
թովն ինչ որ կ'ուզես ըրէ , քու անձնական շահդ
պիտի ըլլայ այն » :

Երբ տարւոյն առաջին օրը հասաւ , Մօրիս ը-
սաւ կնոջը .

«Ֆրանսուազ , բնաւ սիրու հանգիստ չէ , յոր-
մէ հետէ հօրդ հետ գժտեալ եմ :

— Նյոնպէս ալ ես , այնպէս խօրին վիշտ մ'ու-
նիմ , որոյ չեմ կրնար յաղթել :

— Հայրդ մեզ խոժոռածէ , չուզեր մեզ տեսնելու գալ , թէեւ իրաւունք չունի , ուստի պէտք է որ մենք սկիզբ տանք : Հարկ չէ տարին միմեանց պաղութիւն ցուցնելով սկսիլ . կառք մը պիտի վարձեմ այժմ որպէս զի կրասէյ երթանք : Տղաքն հագուեցուր , պէտք է որ նոքա այժմէն սկսին իրենց մեծ հայրը սիրել սորպիլ :

Ծերունի դարբինին տունը մոնելով տեսան որ նա իւր կրակարանին առջեւ նստած , կը մը տածէր այն հաճոյից վրայ զոր պիտի զգար եթէ իւր որդիքն իւր քով ըլլային այն օրն , ուր ամեն ընտանիք 'ի մի կը հաւաքուին : Ծերունի հայրն շատ զարմացաւ երբ դրան հանած ձայնէն ասդին դառնալով իւր ընտանիքն քովը գտաւ : Նախ անոնց հետ պաղութեամբ վառւրիլ փորձեց , բայց երբ իւր աղջիկն անոր բազկաց յանձնեց իւր կաթընկեր զաւակն , և պղտիկ Շառլը նորա ծնդաց վրայ մազլցելով կ'ուզէր զնա գրկել , ալ չկրցաւ դիմանալ և տղու մը պէս լալ սկսաւ :

«Օ՞ն ուրեմն , սիրելի աներս , ըստ Մօրիս , թող ամեն ինչ մոռցուի և միաբանութեամբ ապրինք : Շահու համար բաժանեալ ընտանեաց գէշ օրինակ մը չտանք երկրին . թողէք որ ձեր զաւկըներն զձեղ սիրեն : Զեր աղջկան սիրտն կը ճանչէք , և գիտէք թէ ես ալ ուրիշ մաւելի գէշ շեմ : իւրաքանչիւրնիս մեր կողմէն աշխատելով , շաւ տուն մը կը լինենք ձեր թոռանց համար և իրարու խիստ մօտ կը բնակինք , որպէս զի յաճախ զիրար տեսնենք :

— Այո՛ , Մօրիս , թող անցեալն մոռցուի , վասն զի բնաւ երջանիկ չեմ :

— Ոչ ալ մենք , ըստ ֆրանսուազ զձեղ թողելնէս 'ի վեր մեզ համար ճշմարիտ ուրախութիւն չկայ :

— Աղջիկս , մեզ լաւ ընթրիք մը պատրաստէ , և բան մի՛ խնայեր , այսօր մեր ընտանեաց մեծ տօնի օր մ'է » :

Մօրիս հետեւեալ իրիկուն իւր ընտանեօք դիւլ վերապարձաւ և այս օրէն 'ի վեր , իւր աներն ու ինքը միաբանութեամբ ապլեցան և յաճախ իրարու այցելեցին » :

Մօրիս կ'ուզէ իւր տունը նորին գնել .

Մօրիս այս կերպով շորս տարի աշխատեցաւ : Երկրորդ տարին ուրիշ դործաւոր մ'ալ առաւ , վասն զի ստիպողական յանձնաբարութիւններ անպակաս էին . ֆրանսուազ ալ խնայող ըլլալուն բաւական ստակ կրցան հաւաքել :

Ամեն անգամ որ Մօրիս հայրական տան առջեւն կ'անցնէր , սիրաը կը փղձկէր և բոլորովին տիսուր կերպարանք մը կ'առնուը : Վերջապէս օր մը չիրնալով այլ եւս հանդուրժել , այս տունը գնող պանդոկապետին քով գնաց :

«Հայր Շաթէնիէ , ըստ անոր , եկայ ձեզ առաջարկելու որ նորէն ինձ ծախէք այս տունը աւելի բարձր գնով , այսինքն 100 ֆրանդ տւելի :

— Բարեկամ , կը ցաւիմ որ այդ մասին քեզ պիտի դժկատակիմ . ինչ խնդրածդ անկարելի է : իւր արժէքին համար չէ որ քու տունդ չեմ ուզեր տալ , այլ իւր օգտակարութեամը համար . գիւղին

մէջ չկայ ուրիշ տուն մը որ ինձ քուկինիդ տեղ ծառայէ , դու խսկ զայս յայտ յանդիման կը տեսնես :
— Այս է ձեր վերջին խօսքը :

— Այս , Մօրիս , տանդ վրայ ալ մի' մտածեր , ինչու որ ինձ անհնար է անկէ զրկուիլն . բայց և այնպէս կը յուսամ թէ այս մերժմանս հակառակ միշտ մտերիմ բարեկամներ պիտի ըլլանք , վասն զի դու արդար անձ մ'ըլլալովդ չես կրնար պահանջել որ իմ շահս քու հաճոյիցդ զբհեմ . նաեւ գիւղին մէջ ասկէ աւելի արժէք ունեցող տուներ հազուագիւտ չեն , հաշուէն դուրս ձգելով թէ դու քու ընտանեացդ յարմար տուն մը կրնաս շնել :

— Ո՞հ , հայր Շաթէնիէ , մի և նոյնը բանը չէ : Ես այս տան մէջ եմ ծներ , հոս հայրս այնքան նեղութիւն կրեց , հոս կրան Պիշ իւր գորովալից խնամօք զմեզ երկուքս սիրեց , և վերջապէս հայրս և մայր Պիշն հոս մեռած են : Սակայն չեմ ստիպեր զձեզ , որ ինձ թողուք զայն , քանի որ ձեր անձնական շահուն կը նպաստէ այդ տունն իւր յարմար գիրքովք :

Մօրիս ուրիշ տուն մը նայեցաւ , բայց ախորժեկի չերեւցաւ իրեն , մանաւանդ ալ որ շաս սուզէք : Տուն մտնելով ըստաւ կնոջը .

«Ո՛քան ձանձրացած եմ վարձկան ըլլալէ , երբ կ'զգամ որ մենք մեզի տուն մը կրնանք դիւրութեամբ ունենալ : Միայն թէ զիւղին մէջ աղէկ դիրքով երկիր մը գտնէինք , շուտով տուն մը կը կառուցանէի . բայց դղեկին պառաւ օրիորդը բուլը իրեն սեփհականեալ ոտացուածքն հաստատ կը պահէ , և շուզեր գոնէ մաս մը երկիր այլոց վաճառել :

Մօրիս տուն մը կը շինէ .

Երկու տարի ալ անցաւ , պառաւ օրիորդը մեռնելով անհուն ժառանգութիւն թողուց , և իւր ժառանգորդները աճապարեցին իրենց մաս ինկած երկիրներն վաճառել : Մօրիս իւր տունը շինելու համար դաշտ մ' ընտրեց , որ զառ ՚ի վայր մինչեւ գետը կը հասնէր , և որ կը նայէր այն ճամբուն վրայ , որ գիւղին մուտքն էր : Այդ երկիրը գնելուն հետեւեալ օրն , հիմերը փորեցին : Արեւմտից կողմը բացուած գաւիթ մը գծեց և տունը բարձրաւանդակին վրայ չինեց հարաւային կողմը դարձած : Սայլագործն անոր այսպէս ընելն տեսնելով բաւաւ :

«Միթէ այսպէս տունդ բաց օդին պիտի ձըգես . ամառուան տաքուն անհնար կ'ըլլայ հոն բընակիլ :

— Ամառն շուտով կ'անցնի , Գոռտիէ , և ես տաքէն չեմ վախնար , ամենէն առաջ վնտածս , շինելիք տանս առողջարար օդ ունենալն է , և դիտած եմ որ մեր գիւղէն աւելի տաք չեղած երկիրներուն մէջ , հարաւային կողմը շնուած տուներն աւելի առողջարար և զուարթ օդ կ'ունենան :

— Ես որ արեգակը չեմ սիրեր , իմ տունս հիւսիսային և արեւմտեան կողմերուն մէջտեղը շինած եմ :

— Այդ պատճառաւ է որ քու գաւիթդ միշտ խոնաւ է : Նաեւ դու քու չէնքդ քանի մը սոք աւելի շես բարձրացուցած . հետեւաբար և երկու զաւակներդ հետզետէ կորուսիր :

— Կը կարծե՞ս որ այդ խոնաւութիւնն ըլլայ իրենց տկարութեան պատճառ :

— Այս՝ անտարակոյս , անոնց հիւծման պատճառն , խեղճ Գոռտիէ , միայն տանդ խոնաւութիւնն է : Եթէ քու տեղդ ըլլայի , հարաւային կողմը պատուհան մը կը բանայի որ գոնէ արեգ ակն քիչ մը նպաստէր այդ խոնաւութեան : Ահա՝ այս միջոցաւ միայն իրնաս առողջ պահէլ փոքրիկ ձագդ քու վերջին և միամօր զաւակդ . վասն զի կը վախնամ որ նա ալ միւսներուն բաղդին մասնակից ըլլաց :

— Մօրիս , զիս կը վախցնես . ըսածիդ պէս պիտի ընեմ : Աստուած իմ , եթէ խեղճ կինս , որ ալ երիտասարդ չէ՝ այս զաւկէն ալ զրկուի , վիշտէն կը մեռնի :

Ֆրանսուազ տունը լմենայուն պէս կ'ուզէ հոն փոխադրուի .

Արդ Մօրիսի տունն հարաւային կողմը կը նայէր չորս քայլ բարձրութեամբ և տան քիւը պարտիզին վրայ էր , որ գաւթին ծայրը արեւելեան կողմը կը գտնուէր : Մօրիս այս շնչը շարունակեց դէպ ՚ի ճամբուն կողմը , և հոն նախ իւր դարձնոց հաստատեց , որ տանը կից էր . յետոյ շննեց նաեւ մեծ դուռներով գոցուած տեսակ մը շտեմարան , ուր կը պահէր այն սալերն , կառքերն և ուրիշ առարկաներ , որոց վրայ ինքն կ'աշխատէր :

Հազիւ թէ այս տունը լմեցաւ . Ֆրանսուազ ուզեց հոն փոխադրուիլ . այնքան անհամբեր էր իւր ուսուց բնակելու :

Բայց Մօրիս , իրբեւ խոհեմ մարդ , անոր խնդրանաց չհաւանեցաւ :

« Այրեմի կինս , ըսաւ , նոր տան մէջ բնակելէն աւելի վտանգաւոր բան չկայ . պատերէն այնպիսի խոնաւութիւն մը յառաջ կու գայ , որ յօդացաւութեան և տեսակ տեսակ հիւանդութեանց տեղի կու տայ , և առաջին անգամ տղաքն կը բռննուին : Կ'ուզե՞ս զանոնք հիւանդացնելու վտանդի մը դիմել :

— Ի՞նչ կը խօսիս , Մօրիս , թերեւս դու ինքնին այդ տեսակ տարօրինակ գաղափարներ կ'ըստեղծես : Գիտեմ շատեր որ նոյն իսկ տունը չը լմեցած , հոն կը մտնեն բնակելու համար :

— Բայց նոքա ամենքն ալ կը տրտնջան յօդացաւութենէ՝ իրենց ամեն հասակին մէջ . անոնցմէ որքան խուլացեալ տղայք կան . ֆրանսուազ , առողջութիւնն ամեննեցուն անդին է , բայց տուել անոնց համար որք անդուլ կ'աշխատին ապրելու համար : Վասն զի հիւանդութիւնն ոչ միայն կը նեղէ զանոնք , այլ և կը կործանէ իսկ : Եւ ես առ իւրեանց ընտանիս յանցաւոր կը գտնեմ զանոնք , որք իրենց առողջութիւնը պահէլու միջոցները զանց կ'առնեն : Երբ մէկը միայն բազուկներով ընտանեացը սնունդ պիտի հայթ այթէ , պէտք է հսկէ որ հիւանդութիւնն տան մէջ մուտ չգտնէ . եթէ անգամ մը ոտքը ներս դնէ , ընտանիքն կորսուած է : Մեր տունն այս ձմեռ և ամբողջ գարնան ատեն կը չորնայ . ամառն զայն կը ծեփեն , և մենք ալ աշնան վերջը հոն կը մտնենք :

Ի զուր զրացի կանայք կ'ըսէին ֆրանսուազի մեծ ապչութիւն է տուն վարձելն , երբ մէկն

իրեն յատուկ պարապ տուն ունի , բայց Մօրիս
հաստատ կեցաւ . իւր պարտէղը մշակել տուաւ և
ծառեր տնկեց , որպէս զի տունը մոտած ատենին ,
բաւական բերք ունենայ պարտէղը :

Պետքան դարբինը կը նախանձի Մօրիսի վրայ .

Շառլ , Մօրիսի տղան վարժարան կ'երթար Պ .
Որմիի քով , որ իւր հօր ուսուցիչն և խնամակալն
եղած էր : Տասն երկու տարեկան էր : Ֆրանսուա-
զի ունեցած չորս զաւակներին ողջ մնացին միայն
Շառլն ու փոքրիկ Գլէմանթինը , որ հազիւ երեք
տարեկան էր : Շառլ ուսմանց մէջ զգալի յառա-
ջակիմութիւններ կ'ընէր և իւր հայրն անով կը
հպարտանար : Արձակուրդի օրերն , տղան երբ
պարտականութիւնները պատրաստած ըլլար , դարր-
նոցին մէջ կ'աշխատէր և այն հասակէն կը ցուցը-
նէր թէ իւր հօր պէս քաջասիրտ և ճարտար պիտի
ըլլայ ապագային մէջ :

Իրիկուն մը , կալուածատէրներէն մին իւր ձի-
երը բերաւ որ անոնց ոտից պայտ բեւեռուի :

« Մօրիս , ըսաւ անոր , գործս ստիպողական է ,
պէտք է որ վաղն առաւօտ դեռ արեգակը չծա-
գած դէպ ՚ի վիճակոն ճամբայ ելլեմ . կրնաք այս
իրիկուն առանց յապաղելու՝ ձիերուս գործին
զբաղվլ :

— Այս՝ անտարակիցո , քովս միշտ պատրաստ
կը գտնուին երկաթից մթերք , զորս կը դարբնեմ
երբ կարեւոր գործ մը չունենամ . սակայն կը զար-
մանամ որ իմ բոլոր պայտերս ձեր ձիոց ոտքե-

րուն չեն յարմարիր . բայց դուք սովորաբար Պէռ-
թրանի յանձնէիք ձեր գործերն , ուրեմն ինչո՞ւ
կը թողուք զայն :

— Վասն զի երբէք գործոյն գլուխը նատած
չէ և միշտ զիս ընդ երկար սալասեցնել կու տայ .
հետեւաբար ինձ չյարմարիր :

Մօրիս իսկոյն աշխատութեան սկսաւ :

Արդէն մէկ ձին պայտած էր և միւսին առա-
ջին ոտքը կը բռնէր , երբ յանկարծ Պէռթրան
բարկութեամբ ներս մտաւ :

« Արդէն լաւ կանխագուշակած էի , գոչեց . որ
դու հոս հաստատուեցար միայն իմ շահերս կոր-
ծանելու և իմ յաճախորդներս քեզի քաշելու հա-
մար :

— Հայր Պէռթրան , այդ մասին ինձ բարկա-
նալու իրաւունք չունիք , երբէք ձեր շահուց վնա-
սել չեմ ուզած :

— Ատոնք չեմ գիտեր , բայց եթէ իմ յաճա-
խորդներս քեզի եկած ատեննին ճամբէիր , պար-
տաւորեալ էին նորէն ինձ դառնալ :

— Բայց ոչ , Հայր Պէռթրան , ձեզ ալ պիտի
չդառնային , միայն թէ նզր դարբին մը եւս պիտի
հաստատուէր հոս , և այն ատեն երկուքնիս ալ
պիտի չշահէինք : Յորմէ հետէ մեծ ճամբան գիւ-
ղէն կ'անցնի , երկունքնիս ալ բաւական գործ ու-
նէինք աշխատելու . եթէ ուրիշ անգամներու պէս
հանճարեղ ըլլայիք , պիտի բաւականանայիք ձեր
յաճախորդներէն՝ և ես իմիններէս , և մենէ իւրա-
քանչիւրին գործն աղէկ պիտի ըլլար . բայց ըսէք
ինձ թէ միշտ գժտեալ ըլլալուն արդիւնքն ի՞նչ է :
Օ՞ն ուրեմն , կ'ուզէք խաղաղութիւն հաստատել ,

այս գիշեր միատեղ պիտի ընթրենք :

Պէոթրան առանց պատաժիսանելու , կռնակը դարձուց , բայց Մօրիս տեսաւ որ իւր խօսքերն մեծ տպաւորութիւն ըրած էին անոր վրայ :

Պէոթրանի ջարուրիններն .

Պէոթրան ոչ այնքան կը բարկանար իւր գործերուն նուազման համար , որքան իւր կարեւորութիւնը կրունցնելուն : Խիստ լաւ գիտէր , թէ քանի որ մեծ ճամփան կատարելագործուած էր , գիւղին մէջ երկու դարբին շատ շէին : Բայց Մօրիսի գալն առաջ ինքն երկրին առաջինն էր , ամենքն խուռն բազմութեամբ ծեր դարբինին դրանն առջեւ կը հաւաքուէին ճաշի ատեն և իրիկունները , մանաւանդ ամառը աշխատութենէ դառնալու միջոցին , ինքն ալ իւր կարծիքն կը յայտնէր իրեն հարցուածներուն վրայ , և ձանր պարագայից մէջ կու գային անկէ խորհուրդ առնելու : Բայց , այժմ Մօրիս ստացած էր այս կարեւորութիւնը , քանի որ արուեստին աւելի հմուտ էր և մանաւանդ ալ երբէք սրճարան չյաճախսելուն՝ ժողովրդեան աւելի համակրութիւնն դրաւած էր : Կանայք ալ ֆրանսուազի ջերմասենեակը կը ժողովրդին , երբեմն ալ կ օգնէին նմա ամական գործոց . այսպէսով Պէոթրանի տունն ամացացեալ անապատ էր դարձած :

Այս լքումէն միսիթարուելու համար , յաճախ սրճարան կ'երթար որոյ տէրն իրեն դրացի էր , և ուր միշտ մէկը կը գտնէր խօսակցելու համար . իւր որդիքն ալ իրենց հօր օրինակին հետեւելով՝ շատ

քիչ անգամ իրենց խանութը կը գտնուէին , հետեւաբար յաճախորդներն ալ ձանձրանալով , հոնշէին երթար :

Ֆռանսուազ օր մը իւր սենեակը մտաւ , ուր Ժողովրդապետն կը խօսէր Մօրիսի հետ :

« Ի՞նչ ունիս , ֆրանսուազ , ըստ Մօրիս , ո՞րքան կարմրած ես , յայտնի է որ բարկութիւնդ գրդուած է :

— Դարձեալ մեխակներս ջախջախեալ վիճակի մէջ են , ես որ միշտ լաւ կը խնամեմ այս ծաղիկներն . հապա քու կաղամբներդ , գնա՛ տես թէ ի՞նչ սիրուն վիճակի մէջ են :

— Ըսել է որ պարտէզին մէջ կենդանի մը մտած է , ըստ Ժողովրդապետն :

— Ոչ , Պարոն , ըստ ֆրանսուազ՝ պարտէզին ցանկապատը շատ հաստատուն է և մեր գաւթին դռնէն միայն կարելի է հոն մտնել : Բայց այնպէս չէ . շար Պէոթրանն իւր պարտէզը մաքրել տալով քարերն մեր պարտէզին մէջ կը նետէ . այս տեսակ դրացիի հետ ապրին մեծ թշուառութիւն է :

— Ֆրանսուազ , ըստ Մօրիս , միթէ այդ տեսակ անշահութեանց ուշադրութիւն ընել կ'արժէ : Անոտի գործեր են ատոնք և պէտք չէ դու այդպէս պզտիկ պատճառով մը քու գոհ սիրտդ խոռովիս :

Ֆռանսուազ , աւելցուց անդիէն Ժողովրդապետը . Պէոթրան երջանիկ չէ . թէև պակասութիւն ունի , բայց ոչ նուազ կը նեղուի . և թշուառ մարդոց ներողամիտ ըլլալ պէտք է : Եթէ ըրած չարութեանցն ուշադրիր ըլլաք՝ շուտ կը հանդարտի , վասն զի ալ կը ձանձրանայ :

— Պարոն Ժողովրդապետ, ուրեմն ըրածներուն իրաւունք կու տա՞ք :

— Ասուղիւ ոչ, վասն զի ինչ որ չար է, ինձ համար հաճելի չկրնար ըլլալ . բայց կ'ուղեմ որ նա սկսի նորէն իւր նախնին բարի գլացութիւններն կրել . և գիտցէք որ միայն քաղցրութիւնն ու համբերութիւնը կրնան իրեն դարձին նպաստել : Այս ընտիր յատկութիւններն այնքան ցոյց տալու է անոր, որ դժուար ըլլայ յաղթելը :

— Պ. Ժողովրդապետն իրաւունք ունի . հարկ չէ վէճերն նորոգել . այսպէս, ֆրանսուազ, շըլլայ որ Պէոթրանի այս անմտութիւններն դրացուկեաց պատմելով տրտնջաս, ասով գիւղին բնակիչներն կուսակցութեան պիտի բաժնուին և ես չեմ ուզեր անմիաբանութեան առարկայ ըլլալ : Դու Պէոթրանի ընտանիքէն աւելի երջանիկ ես . և չեմ տարակուսիր ըսել թէ դու անոնցմէ շատ աւելի կ'արտես . և ի՞նչ հարկ կայ անոր ըրած չարութեանցն փոխարինել : Գիտեմ Պէոթրանի բարկութեան պատճառը . Պ. Լընուա, դղեակին նոր տէրը, անցեալ օր զայն կաեշել տուեր է բոլոր փականքները շտկելու համար, վասն զի աւրուած էին . ծեր դարբինը զանոնք ամենքն ալ քակեր է, բայց չէ յաջողեր զանոնք քալեցնել . այն տաեն զիս կանչեր էին :

— Եւ դու յաջողեցա՞ր, հարցուց Ժողովրդապետն :

— Ո՛հ, այո՛, Պարոն, վասն զի Բարիզ գրտնուած միջոցիս՝ մեր արհեստին այդ ճիւղին ալ բաւական զրաղեցայ :

Մօրիս չի նեղեր զանոնք որք իրեն կը պարտին .

Մօրիս չէր նեղեր իւր պարտապաններն, որք անկարող էին վմարել իրեն . բայց որովհետեւ ինքն ուղղամիտ անձ մ'էր, իւր հաշիւներն կանոնաւորութեամբ կը բանէր և երեք ամիսն անդամ մը իւր յիշատակարանն կը ներկայացնէր, որպէս զի խառնակութիւններ տեղի չունենան, ինչպէս որ կը պատահի եթէ հաշիւներն երեսի վրայ թողուած ըլլան, վասն զի այն ատեն կը մոռցուի պէտքի համար մատակարարուած իրերն : Որովհետեւ ինքն որմաշէններու, քարահատներու և հիւսներու գործիքներն կը նորոգէր, և երկրագործաց ձիերն կը պայտէր, երբ իւր տուեն շինել ուզեց այս մարդիկն գործածեց : Քարահատն քար մատակարարեց որով որմաշէնն որմերն շինեց, հիւսն ալ ատաղճներուն աշխատեցաւ, և վարձկաններն այլևայլ նիւթեր բերելու զբաղեցան . բալոր այս մարդիկ Մօրիսի պարտապաններն էին, ուստի տան շինութեան համար շատ ստակ ծախք ընելու պէտք չունեցաւ, վասն զի նոքա կ'աշխատէին իրենց դարբնին ըրած յանձնարարութեանց ստակին տեղ, և իւրագանչիւր ոք տեսնելով որ հաշիւն կը հաւասարէր՝ գոհ կ'ըլլային :

Կիրակի օր մը, երբ Մօրիս սայլագործին տան առջեւէն կ'անցնէր, նա հարցուց :

« Ո՞ւր կ'երթաս, Մօրիս :

— Բուզըլաս կ'երթամ յուշատեարս տանելու համար :

— Դարձեալ յուշատեարիդ հետ ես, կը հար-

ցընեմ քեզ թէ այդպէս յաճախ զանոնք ներկայացընէլէ ի՞նչ կը շահիս , միթէ աւելի՝ լաւ գնով կը վճարեն քեզ :

— Այո՛ Գոռտիէ , քենէ աւելի աղէկ կը վճարեն իմ ստակներս . դու լաւ գիտես թէ մեր երկրին ագարակապետներն իրենց հաշիւներն չեն տեսներ և կարծեմ թէ ես իրենց մեծ ժամացութիւն մ'ըրած պիտի ըլլամ , ժամանակ առ ժամանակ յիշեցնելով ինչ որ ինձ կը պարտին :

— Եթէ կը կարծես թէ ատով իրենց հաճոյք կը պատճառես , հաւատա՛ թէ կը սխալիս :

— Գոռտիէ , դու մոռցեր ես թէ պարտապան մը մեռնելու որ ըլլայ , կամ գործերն գէշ երթան , օրէնքն կը հրամայէ որ գործաւորն միայն աշխատանաց վերջի վեց ամիսներնու ստակն առնէ . երբ ես իմ յուշատերս կը ներկայացնեմ յաճախ անոնց և ստորագրել կու տամ , քենէ շատ աւելի քիչ ստակ կը կորսնցնեմ :

Մօրիս իւր ճամբան շարունակեց և Բուղըլասի ազարակապեան կողացաւէ հիւանդ պառկած գտաւ :

« Լաւ ուրեմն , Պ. Ռումէ , կ'երեւայ թէ անզգութեամբ հիւանդութենէ բռնուեցար :

— Աստուած իմ , այո՛ , անդամ մը շատ տաքցայ և փոխանակ ճերմակեղէններս փոխելու , թողուցի որ վրաս չորնան , ասի ինձ սուզի նստաւ :

— Եւ ի՞նչու ներքին զգեստներդ չփոխեցիր , երբ քրտնած էիր :

— Միթէ ինքինքս խնամելու ատե՞ն ունիմ . հարկ է որ իմ գործոյս ամենէն մանրամասն կտորներուն վրայ անձամբ ուշադիր ըլլամ :

— Բայց ի՞նչ կ'ըսէք , միթէ ձեր կեանքէն ա-

ելի լաւ խնամելու թանկագին բան կա՞յ . ամենինչ կափութենէ կախեալ է , վասն զի երբ գուք հիւանդ էք , ամեն ոք ձեր տան մէջ կը նեղուի . բժշկն ի՞նչ գաղափար ունի ձեր հիւանդութեան վրայ , 'ի հարկէ արիւն առաւ ձենէ :

— Ոչ բնաւ , լսաւ տիրու հին . ամուսինս չուզեց իսկ որ քաղաքը մարդ զրկենք բժիշկ վնասուելու և բերելու համար :

— Ի՞նչ , տիկին , դուք ալ անհոգութեամբ վարուեցա՞ք . հիւանդին խօսքին ականջ կախելու չէ երբ խնդիրն անոր կեանքը ազատելուն վրայ է :

— Ձեր կարծածին չափ հիւանդ չեմ , և ըսածիս ասպացոյցն տալու համար ձեր յուշատերն սիտի ստորագրեմ , և առաջին երկուքին ստակը սիտի տամ . կին , ստակին արկդը ինձ տուր » :

Կինը քառակառւսի ոտքով պահարան մը բացաւ որ ընդհանրապէս Պէռուիի ամեն ազարակներու մէջ կրակարանին և տիրոջ անկողնոյն միջոցը կը գտնուի Ռումէ 150 ֆրանգ տուաւ դարբինին և վերջի երեք ամսոց հաշիւն գոցեց :

Օչարակ մը բերին Մօրիսի , որ տիրոջ բարի առողջութիւն մաղթելէ յետոյ դուրս ելաւ և ըսաւ տիկինոջ որ զինքն մինչեւ դուռը տարած էր .

« Կը վախնամ , Տիկին , որ մի՛ գուցէ ձեր ամուսնոյն հիւանդութիւնն վտանգաւոր ըլլայ , վասն զի շատ ձնչեալ կը թուի ինձ : Հաւատացէք ըսածիս , շուտ մարդ զրկեցէք կամ կրասէյ և կամ Ռէզյլ բժիշկ մը վնասուելու համար » :

Երեք օր վերջը , սայլագործն եկաւ Մօրիսի իմացնելու թէ Ռումէ մեռած է :

« Լաւ ուրեմն , խեղճ Գոռտիէ , քեզ ըսածս

Կը յիշե՞ս . Ոռումէ ո՞րքան տալիք ունէր քեզ :
— Երկու հարիւր ֆրանգ . տաս և ութ ամսէ
'ի վեր բնաւ ստակ չեմ առած :

— Խեղճ ընկեր , այժմ հազիւ հաշուոյդ 1/3 ը
պիտի ընդունիս , եթէ այն ալ ձեռք ձգես , դոհ
եղիր : Խեղճ ազարակապետն անչափահաս զաւա-
կունք կը թողու , որք խնամակալութեան կարօտ
են . հետեւաբար և պարտքերն պիտի նուազին .
այժմ զիս կ'արհամարհե՞ս յաճախ յիշատակարանս
տանելուս » :

Ֆելիքս , Մօրիսի առաջին գործառորն ,
ճիռ . ոտքի հարուած մի կ'ընդունի .

Առաւօտ մը , Մօրիսի խանութը խեռ ձի մը
բերին պայտելու համար : Բողոր ներկայ եղողներն
անոր ետին կենալով զայն լաւ բռնեցին . Ֆէլիքս
Մօրիսի առաջին գործառորը , ետեւի ոտուըներէն
մին կը պայտէր , զոր երեք անձինք բռնած էին ,
երբ ձին , թէւ կապուած , ուզեց փախչիլ , կա-
պերը քակել փորձելով և իւր ոտքովն այնպիսի
հարուած մը տուաւ Ֆէլիքսի կուրծին , որ զայն
թաւալագլոր գետինն ձգեց :

— Շառլ , շուտ կրասէ յ վազէ բժիշկը գտնե-
լու , զոչեց Մօրիս , ըսէ՛ թէ շատ ստիպողական է
և հարցուր թէ ի՞նչ պէտք կրնայ ըլլալ այս հար-
ուածին համար , և ինչ որ յարմար դատէ՛ դեղա-
գործէն ա՛ռ » :

Այս դիպուածին լուրը շուտով բոլոր գիւղին
մէջ տարածուեցաւ և սայլադործն իւր բարեկամին
քով վազելով ըսաւ .

«Մօրիս , կ'ուզե՞ս որ երթամ դղեակէն կառքն
փոխ ուզեմ , որպէս զի խեղճ տղան հիւանդանոցը
փոխադրենք :

— Հարկ չկայ , վասն զի Ֆէլիքս մեր տան մէջ
պիտի խնամուի :

— Բայց գիտե՞ս թէ այս հիւանդանութիւնն կըր-
նայ քեզի մեծ ծափեր բանալ :

— Հաւանական է , բայց տես , Գոռատիէ , այս
ոսկեայ մատանին , զոր երբէք չեմ հանած մատէս
յորմէ հետէ Տիկին Պլանչառ մատս անցուց : Ասիկա
ինձ կը յիշեցնէ թէ , երբ բարիզի մէջ հիւանդացայ
իմ տէրս և տիրուհիս չմտածելով բնաւ թէ ես այս
հիւանդ վիճակովս տան մէջ չփոթի և ծախուց ա-
ռիթ պիտի ըլլամ , զիս իրենց տունը պահեցին և
իբրեւ տանն հարազատ զաւակ զիս խնամեցին :
Երբ անկողնոյս մէջ կը տառապէի և բարեսկրտ Տ:
Պլանչառ քովս կը հսկէր , ես ինձ խոստացայ , եր-
բէք իմ գործաւորներէս մին հիւանդանոց շղնել ,
որքան ալ ծանր հիւանդ որ ըլլայ : Ֆրանսուալ
պիտի խնամէ զֆէլիս , ինչպէս որ պիտի խնամէր
զՇառլն : Հոս ոշինչ պիտի պակսի Ֆէլիքսի բար-
ևքման համար , մինչեւ իսկ մոտային հաճոյքներն
պիտի կատարուին ըստ կարելոյն » :

Ցիրաւի , Ֆրանսուալ , քանի մը բարի դրացի
կանանց օգնականութեամբ , կը հսկէր հիւանդին
վրայ : Բժիշկն շաբաթը երկու անգամ կ'այցելէր ,
և հարկ եղած դեղերն ամեն օր կը բերուէին դե-
ղարանէն :

Երբ Ֆէլիքս բաւական զօրացաւ և կերակուր
ուտելու հրաման ստացաւ , Ֆրանսուալ կը ջանար
անոր ախորժակը բանալու կերակուրներ եփել :

Եթէ ստիպողական գործ չունենային , Մօրիս կամ Շառլ իրենց սալը ձգելով կու դային նմա զուարձակի ընթերցումներ ընելու : Պ. Ժողովրդապետն ալ ամեն օր ամբողջ ժամ մը անոր քով կ'անցընէր բարյական ոքանչելի պատմութիւններ կ'ընէր և կ'ուսուցանէր թէ ի՞նչ է մարդուն պարտաւորութիւնն առ Աստուած և առ իւր նմանիս ,

Ֆէլիքս իրեն նկատմամբ տարուած խնամքներէն այնքան զգացեալ էր , որ միշտ արտասուալից անոնց վրայ կը խօսէր :

« Տղաս , կ'ըսէր Մօրիս , երբ Ֆէլիքս չնորհակալութեան զգացումներ կը յայտնէր , օր մը դու ալ քու գործաւորացդ միոյն այս ծառայութիւնն պիտի մատուցանես , վասն զի կը տեսնես թէ լաւ աշխատող գործաւորն իւր տիրոջ տան մէջ իրբեւ զաւակ կը նկատուի :

Մօրիս իւր որդուոյն յարատեսորիսն
կ'ուսուցանէ .

Երկու տարի վերջը , Մօրիս դաւթին միւս կողմը , տանը ճիշտ դիմացը , պատիկ ախոռ մը շինել տուաւ նախկին յարդանոցին տեղ , ուր կը ստահէր իւր կովն ու այծը : Նաեւ ջրհոր մը բացին և աւելցուցին չինքին վրայ հաւնոց մը , կաթնարան մը և ածխանոց մը , վասն զի ածուխն առաջ բացօթեայ կը մնար . և այս ամենն շինուեցան խիստ հաստատ աղէկ քարով և աղէկ փայտով : Այս կրկին յաւելուածոց չինութեան համար ալ , ինչպէս իւր տանը համար , Մօրիս շատ ստակ չվասնեց , վասն զի գործաւորք և մշակք անպակաս էին , որք իրենց

պարտուց տեղ անվարձ աշխատիլն աւելի լաւ կը համարէին և այսպէսով Մօրիս ընդունած կ'ըլլար իւր պարտքերն , զորս ուրիշ կերպով ստանալն անհնար էր :

Շառլ , որ բաւական ատենէ 'ի վեր դարբնոցին մէջ կ'աշխատէր , արդէն իւր վրայ կատարելութիւն ստանալու յարմարութիւններ կը ցուցնէր : Այս աղան շատ չուտ մեծցաւ , սակայն իւր հօր զօրութիւնն , աշխոյժն ու հաստատամտութիւնը չունէր և շատ անգամ յօդնութենէ կը գանդատէր :

Օր մը , համբերութիւնն հաստաւ սայլի մը կազմածներն դարբնելու ատեն , վասն զի զանոնք ձեւաւորելն դժուար կը դանէր , և երկար ատեն երակաթը ծեծելէ յետոյ չկրնալով ուզած ձեւը տալ մուրճը թողուց դոչելով .

« Պիտի չկրնամ բնաւ այս գործն աւարտել :

— Ի՞նչ , ըստ Մօրիս հանդարտօրէն , կարելի՞ է որ մարդ իւր ուզածն չկրնայ ընել :

— Ոչ . հայր իմ , ամեն ատեն մարդ իւր կամքին ուզածը կատարելու չյաջողիր :

— Կը սիսակիս , որդեակ . այդպէս կ'լայ՝ եթէ հարկ եղած ջանքն 'ի գործ չդրուի , բայց յարատեւ աշխատութեամբ՝ մարդ կրնայ ամեն ինչ 'ի դլուխ հանել . և գիտցիր որ յաղթեալ դժուարութիւնն ամեն բանէ աւելի կը գոհացնէ զմարդ :

— Ո՛հ , այս մասին կը ցաւիմ որ ձեր գաղափարին հակառակը ոլիտի յայտնեմ , վասն զի ըստ ինձ՝ ամեն բանի մէջ յաջողիլն անհնար է :

— Ի՞նչ կայ , ըստ ուսուցիչն որ նոյն միջոցին ներս կը մտնէր , ինձ կը թուի թէ Շառլ զայրոյթը գրգռուած է :

— Այս՝ Պ. Ուզմի, իւր գործոյն դէմ բարկացած է, և յարատեւութեան մասին թէրութիւն ունի. ես որ տղայութեանս ատեն քիչ մը այս տեսակ վարուած եմ, բայց շուտով ճանչցած եմ սխալս, իրեն կ'ըսեմ թէ հաստատուն կամքն ամեն բանի մէջ կը յաջողեցնէ զմարդ :

— Բայց վերջապէս, հայր իմ, ես դեռ շատ տկար եմ, ըստ Շառլ, և ինքնին մեծ արդիւնք մը չեմ կրնար ունենալ :

— Եթէ քու տկարութիւնդ կը ճանչնաս, տղաս, ուժիդ չափ աշխատէ : Ես քեզի ստիպողական աշխատութիւն մը չեմ յանձնած . համբերութեամբ աշխատէ . աւելի երկար ատենէն լմցուր գործդ, բայց վերջապէս կը բաւէ որ լմցնես :

— Շառլ, ըստ ուսուցիչն, քենէ աւելի տկար բան մը կայ, որ ժամանակին օդնութեամբ մեծ արդիւնք մը յառաջ բերած է :

— Ի՞նչ է այդ, Պարոն :

— Դիտած ես բնաւ այն մեծ քարն որ եկեղեցւոյն քիւին խողովակին ճիշտ տակը կը գտնուի, դէպ 'ի դպրոցին կողմը :

— Այս՝ Պարոն, ճիշտ այն տեղն էր որ դըպը ըսցէն գուրս ելած ատենիս քարէ դնդակ կը խաղացիք, վասն զի այն քարին մէջ գտնուած խոռոշն մեր խաղին շատ յարմար կու գար :

— Այդ խոռոշն, ինչպէս որ դու կ'անուանես, դիտէ՞ս թէ ո՞վ ձեւացուցած է :

— Ոչ, Պարոն, վասն զի այդ մասին մինչեւ իսկ չեմ խորհած :

— Ուրեմն քեզի ըսեմ . այդ ծակն ձեւացած է այն ջուրի կաթիլէն որ անդադար այն սալաքա-

ըին վրայ կ'յնայ : Քենէ շատ աւելի տկար է այս ջրոյ կաթիլն և այն քարն ալ երկաթին չափ կարծր է, բայց միշտ ողոյն տեղը կաթելու զօրութենէն, յաջողեր է ջրոյ կաթիլն քարը ծակել և այն խոռոշն ձեւացունել, զոր դու կը ճանշնաս : Ահա տես թէ ի՞նչ արդիւնք կրնայ ունենալ յարատեւ և հաստատուն աշխատութիւն մը » :

Շառլ շատ զարմացաւ այդ ամենափոքր ջրոյ կաթիլին՝ կայծքարին վրայ յառաջ բերած արդիւնքն լսելով : Հանդարտութեամբ կրկին մուճն ձեռքն առնելով գործի սկսաւ և իրեն յանձնուած կազմածներն գիւրութեամբ աւարտեց և գոհ ու զուարթ դիմօք զանոնք հօրը ցոյց տուաւ :

«Կը տեսնե՞ս, տղաս, ըստ Մօրիս, ո՞վքան գոհ սիրտ կ'ունենայ մարդ երր գործ մը կը լմցնէ : Ասի ամենամեծ հաճոյից կարգէն է : Կան անձինք, որք անդադար կ'զբաղին որ և իցէ գործ մը կատարելադործելու և ատով շատ գոհ կ'ըլլան : Աշխատութիւնն նախ և առաջ իմացականութիւն և ճանք կը պահանջէ թէեւ, բայց յետոյ աւելի կ'երջանկացնէ զմարդ, երր նա գործ մը լսւ ընելու յաջողի :

Մօրիս իւր ծունկին հարուած մը կու տայ.

Շառլ արդէն տասևհինդ տարեկան էր և իւր հօր դարրնոցին մէջ գործաւորի մը արժէքն ունէր՝ երր օր մը Մօրիս դրանց զսպանակներ դարբնելու ատեն, շուն մը անոր սրունկներուն մէջ նետուելով գետինն տապալեց . Մօրիս ուզելով ինքզինքն

բռնել, սալը թողուց և մուրճն իւր ծունկին վրայ ինկաւ :

«Ո՞հ, Աստուած իմ, հայրս, » գոչեց Շառլ զայն բռնելու համար տեղին ցատկելով :

Մօրիս գրեթէ զգայութիւնն կորուսեր էր, ֆէլքս դնաց քացախ բերելու և ֆրանսուազ արտասուալից ներս մտաւ իւր ամուսնոյն ծնօտներն շփելու համար :

«Բան մը չէ, ըստ Մօրիս ինքզինքին դալով : Ֆրանսուազ, դնա' քափրախսառն ալքօլի (alcool camphrē) սրուակը բե՛ր: Այժմ երբ ծունկերս լաւ մը շփուին, անկողին պիտի մտնեմ և վաղը ցաւն բոլորպին անհետացած պիտի ըլլայ, »

Յիրափի հետեւեալ օրն, ցուը նուազած էր և երկու օրէն յետոյ Մօրիս նորէն գործի սկսաւ և մեծ անհանգստութիւն չզգաց : Բայց քիչ ատենէն դիտեց որ սովորականին պէս ծունկն չէր կրնար խաղցընել և այս նեղութիւնն օր ըստ օրէ կ'աւելնար :

«Շառլ, ըստ Մօրիս առաւօտ մ'իւր որդւոյն, գնա' բժիշկը գտիր, պէտք է հասկնամ թէ ի՞նչ է այս ծունկիս տկարութիւնը :

— Բայց ես բնաւ բան մը չեմ տեսներ, որ բժշկին դալուն հարկ ըլլայ, ըստ ֆրանսուազ :

— Բոլորպին ալ աղէկ չէ, կիմս, և սիւաք չէ վստահիլ : Չեմ ուզեր որ անդամալոյն ըլլալէս յետոյ սկսիմ ինքզինքս խնամել . կանուխին հոգ տանելով, ես ալ ցաւէն չուտ կ'ազատիմ» :

Բժիշկն զՄօրիս անկողին դնել տուաւ և հըրամայեց ութ՝ օր շարունակ ամոքիչ սպեղանի դնել անոր ծնկան վրայ . խոստացաւ հետեւեալ շաբ-

թուն նորէն այցելու և զհիւանդն զովացուցիչ ըղդուցութեան մէջ դրաւ : Երկրորդ այցելութեան յայտնեց թէ ծունկին ոսկրներուն մէջ ցաւն բոյն դրած է և թէ ինքն այն տեղն պիտի ճեղքէ :

Մօրիս այս տաժանելի գործողութեան ատեն քաջութեամբ դիմացաւ, թէեւ սարսափելի ցաւ կ'զգար : Այս վիրահատութիւնն նորա ցաւերն ամոցեց և այն վայրկեանէն ապաքինումն յառաջ քայեց : Սակայն տաս և կինդ օր գեռ անկողնոյ մէջ մնաց և խղճամութեամբ բժշկին պատուէրներն կէտ առ կէտ կատարեց :

Երբ գժուարին յանձնարաբութիւն մ' ընելու համար յաճախորդ մը գար, Մօրիս կը կանչէր զՇառլ և իւր առաջին գործաւորն և իրենց գործածելիք կերպերն այնպէս յստակ կերպով կը բացատրէր, որ գործը լմնալէն վերջը կարծես թէ նոյն իսկ Մօրիսի ձեռքէն ելած էր, այնքան լաւ կը գործադրէին նորա ցուցուցած ձեւերն :

Հայր թոռեն .

Առաւօտ մը ձողովրդապետն Մօրիսի հետ խօսակցելու զբաղած էր, երբ Հայր Թոռէն ներս մը տաւ : Ծերունի զինուոր մ'էր այս, «որ սրունքէն գէշ կերպով վիրաւորուելով, մերժեցին զանի բանակէն առանց ոռճիկ մը տալու . իւր վէրքն յաշճախ արդելք կ'ըլլար աշխատելու և ասով մեծ նեղութեան մէջ կ'իյնար, թէեւ ինքն աշխատասէր էր : Իւր կինը միշտ վատառողջ էր և իւր աղջիկն ալ մնելով տկարութիւն մ'ստացած էր :

« Պ. Մօրիս, ըսաւ ծերունին զանոնք ողջունելէ յետոյ, մեր տունն ալ հաց չմնաց և իմ խեղձ սրունքս կրկին ինձ աշխատելու արգելք կ'ըլլայ : Զէք կրնար անդամ մ' ալ զիս գործածել փուքը քաշելու համար . այս գործին աշխատած միջոցիս նստած պիտի ըլլամ, և գոնէ անդործ բազուկներս խաշածեւ դրած պիտի չմնամ : Ինչ վարձք որ կ'ուզէք այն տուէք, ոչինչէն աւելի աղէկէ, վասն զի այս թշուառական ստամբուն բնաւ խօսք չհասկնար :

— Այս', Հայր Թուէն, ձեր ուզած պաշտօնն պիտի ստանաք և այդ պաշտօնին վրայ եղող պզտի գործաւորն ուրիշ գործի պիտի աշխատի, բայց քանի որ ձեր ստամբուը խօսք չհասկնար, պէտք է նախ զայն գոհացնել . վասն զի ասիկայ կրնայ ձեզ խոչընդոտ ըլլալ աշխատելու, եթէ զայն չգոհացնէք 'ի հարկին : Այժմ Ֆրանսուազ իրեն շինած հացէն հատ մը ձեզ կու տայ, փութով զայն տուն տարէք և ճաշելէ անմիջապէս վերջը ուրիշ գործի չնայած ձեր նոր պաշտօնն պիտի սկսիք :

— 0'հ, Մօրիս, ըսաւ Հայր Թուէն խանդադապատեալ, Աստուած միշտ զմեզ պիտի օրհնէ, վասն զի երբէք բարեգործութիւն ընելէ չէք խորշը :

— Ինչո՞ւ այդ նեղ վիճակիդ մէջ զիս գտնել չեկար, Հայր Թուէն, ըսաւ Ճողովրդապետը :

— Վասն զի, Պ. Ժողովրդապետ, գուք ալ հարուստ չէք և առ ձեզ դիմողներուն ձեր կարողութենէն աւելի կը չնորհէք իրեւե ճշմարիտ պաշտօնեայ Աստուծոյ, ինչպէս որ էք : Դուք ձեր կերակրէն իսկ կը զրկուէլք, զայն ինձ դրկելու համար : Դարձեալ, կը տեսնէք թէ ոքքան դժուար

է ձեռք երկնցնել այլոց, երբ աշխատելու փափաքն չպակսիր .

— Յաւալի վիճակ, բարի մարդ, ըսաւ չրջականերէն եկող ծեր պարոն մը, որ իրեն համար դարբնել կու տար պարտիզի գործիք մը իւր ցուցած կերպերով : Կ'ուզեմ քեզ սահմանեալ չափով մը գինի դրկել, որպէս զի մէկ մէկ քիչ խըմելով զօրութիւն ստանաք :

— Ցիրաւի այդպէս է, Պարոն, շատ ուրախ պիտի ըլլամ երբեմն գինեւոյ մէջ հաց թաթխելու դիւրութիւնն ունենալուս, մանաւանդ այն օրերն երբ թան մ' անդամ չկայ տան մէջ : Շատ չնորհապարտ եմ ձեզ, Պարոն և յամենայն սրտէ չնորհակալութիւնն կը յայտնեմ ձեզ :

— Բայց, ըսէք ինձ, առանց հունձք ընելու ինչպէս կը վճարէք ձեր տան վարձքն :

— Պարոն, ամեն տարի մեր ուսուցիչն ինձ համար աղերսագիր մը կը գրէ առ պատերազմական պաշտօնեայն . յետոյ մեր քաղաքապետն որ հին պաշտօնակալ մ'է, քիչ մը կ'օդնէ այս մասին և ինձ 50 Փրանդ օգնութիւն կը զրկուի, առանց որոյ հարկ պիտի ըլլար մեզ մացառի մ' անկիւնն քնանալ և շատոնց գետնի վրայ պիտի մնայինք :

— Ուրեմն ինչո՞ւ ամուսնացեր էք, քանի որ կ'զգայիք թէ անկարող էք ընտանեաց ոնունդ մատակարարել :

— Նախ իմ վէրքս բժշկուած կը թուէր երբ ամուսնացայ, բայց չորս տարի ետքը նորէն բացուեցաւ . յետոյ, Պարոն, երբ մարդ աղքատ է, ընտանիք մ'ունենալ և անկէ սիրուիլ կ'ուզէ : Մէք գիւղացիս, միայնակ չենք կրնար ապրիլ, եթէ

իրիկունը դաշտէն թրջուած և ցուրտէն սառած ետ դարձած ատեն իմ թանս պատրաստ չգտնեմ, տաքնալու համար կրակ չըլլայ և պղտիկ տղայոցս զուարթութիւններն պակսին իմ սիրտս տաքցընելու համար, հասա ուսկի՞ց խրախոյս և զօրութիւն պիտի առնեմ ապրելու, վաթանի մէջ ծեր հօրագոյր մ'ունիմ, որոյ համար կ'ըսեն թէ շատ հարուստ է, բայց նա բնաւ ինձ չի մտածեր և ոչ փոքրիկ օգնութիւն մը տուած է :

Մօրիս կը հաշտուի Պէոթրանի նետ .

Մինչդեռ Հայր Թուէն իւր հացն առած դուրս կ'ելէր, Շառւ ներս մտնելով ծեր պարոնին յանձնեց ուզած գործիքն, ուսկից շատ գոհ եղաւ նա: Մօրիս իւր որդւոյն բարկութիւնն նշմարելով հարցուց թէ ի՞նչ է պատճառը :

« Հայր իմ, Պէոթրանի թոռն մեր խանութին առջեւէն կ'անցնի ու կը դառնայ, կարծեմ դիտաւորութիւնն զմեղ լրտեսել է . չորս կինդ անգ ամ այս պղտիկին ականջ չդրի որ բնաւ մեր դաւթին մէջ մտնելու իրաւունք չունի և անտարակոյս մրտնելն ալ աղէկ նպատակով մը չէ :

— Քեզի երբէք չարութիւն մ'ըրած, և արրտնջալու տեղի տուած, հարցուց Ժողովրդապետն,

— Ոչ, Պարոն Ժողովրդապետ, բայց արդէն գիւղին մէջ իրբեւ ստահակ ճանչցուած է :

— Ասի քեզ պատճառ մը չկրնար ըլլալ զայն ամբաստանելու եթէ քեզի ուզզակի չարութիւն մը ըրած չէ, վասն զի սրտեակ մը, ինչպէս որ դու

զայն կ'անուանես իւր կենաց ամեն վայրկենին մէջ այնպէս չըլլար :

— Բայց ամենուն իմ հօրս վրայ չար կը խօսի և կը ջանայ զմեղ անսպատռել :

— Գնա՛ քու սալիդ վրայ աշխատէ, տղաս, ըսաւ Մօրիս, և այդպէս սնոսի խօսքերով մի՛ դրազիր : Միթէ մեր խանութը աւելի՛ շատ յաճախորդներ չունի՞ քան Պէոթրանինը, որ իմ նախկին վարպետս է : Մենք ամեն տարի բաւական գումար մը կրնանք պահեստի դնել, մինչդեռ նա տակաւ առ տակաւ հօրմէն ստացած ինչքն կը վաճառէ :

— Աղէկ միտքս եկաւ, ձեր դրացի Պէոթրանն, ըսաւ մարդ մը որ իւր ձին պայտել կուտար, առաջարկեց ինձ գնել այն մարդագէտինն, զոր ձեր կանեփի արտին վարի ծայրն է, Պարոն Մօրիս . բայց ես բնաւ պէտք չունիմ:

— Օ՛, Ճան-Լուի, գոչեց դարբինն, զնէ՛ զայն և յետոյ ինձ կը վաճառես . վասն զի ինձ շատ կը յարմարի այդ երկիրն, բայց հաւանական է որ Պէոթրան ուղղակի ինձ վաճառել չուզէ :

— Մօրիս, ըսաւ Ժողովրդապետն, այդ մասին Պէոթրանը կարծեմ պիտի չներէ քեզ :

— Պարոն, կը կարծէ՞ք որ այդ հողը գնելուս մէջ չարութիւն մ'ըլլայ :

— Ոչ, ստուգիւ ոչ, բայց փոխանակ ուրիշի մը ձեռքէ գնելու, աւելի աղէկ է այդ գետինն իրմէ ինդրել . ասով նորէն բարեկամութիւն պիտի հաստատուի ձեր մէջ . ինձ համար, ցաւալի է որ իմ Ժողովրդոց մէջ ձեղ պէտ երկու պատուաւոր անձինք այդպէս միմեանց հետ գժտեալ լլան :

— Իրաւունք ունիք, Պ. Ժողովրդապետ, թէև

նա իմ կործանմանս փափաքրող է , բայց ես ընդհակառակն անոր չահն կ'ուզեմ , վասն զի նա առաջին անդամ ինձ ստակ չահեցուցած և արուեստը սորվեցուցած է , Խեղճ մարդը ցաւալի վիճակի մէջ է : իւր անդրանիկն փոխանակ խանութին մէջ աշխատելու , ինչպէս որ խելացի մարդու մը վայելուչ է , ընկերներ գտնելով դինետուն կը յաճախէ , ինչ որ ընտանեաց տէր եղողի մը չյարմարիր : իրաւ է որ ասիկայ անոր մեծ վնաս չի տար , վասն զի ստակն յաճախորդը կը վճարէ , բայց իրենց կործանման պատճառն ոչ այնչափ վատնած ստակնին է , որքան չաշխատելով կորուսածնին : Նաեւ տուներնին ամեն օր կերուխումն պակաս չէ : Ժան—Ղուի , գնա՛ ըսէ Պէոթրանի , թէ Պ. Ժողովրդապետն և ես իրեն ըսելիք ունինք » :

Երբ Պէոթրան դրանն առջեւ երեւցաւ , Մօրիս ըսաւ :

« Մաէք , Հայր Պէոթրան . Պ. Ժողովրդապետն ու ես ձեզ հետ խօսիլ կ'ուզենք » :

Պէոթրան մտաւ , բայց իրեն առաջարկուած աթոռն մերժեց :

« Ուշադիր եղէք , ըսաւ Մօրիս , Ժան—Ղուի ինձ ըսաւ թէ դուք վաճառել կ'ուզէք այն մարդն որ մեր կանեփի արտին ծայրն է , ես կը բաղձամ անոր , ուստի առաջարկեցի նմա որ ինք գնէ և յետոյ ինձ վաճառէ : Բայց Պ. Ժողովրդապետն վիտացած է երկու պարտաւոր անձանց գժտութեան վրայ . եթէ չէք ուզեր որ ես այդ հողմն տէր ըլլամ , չեմ ստիպեր զծեզ : Սակայն եթէ ուզէք զայն ինձ վաճառել , չատ չնորհակալ պիտի ըլլամ և ձեր վրայ միշտ անկեղծ վատահութիւն ունենալուս աս

պացոյց մը տալու համար , կը խնդրեմ ձենէ որ դինն որոշէք և ես ձեր առաջարկածն ընդունելով խկոյն պիտի վճարեմ » :

Պէոթրան վարանեալ կը թուէր :

« Տեսնենք , Պէոթրան , ըսաւ բարի Հովիւն , ի՞նչ հաճոյք կ'զգաք ձեր ընկերոջ հետ գժտեալ ըլլալով : Միթէ գիւղին մէջ ձեր երկուքն ալ գոհացնելու շափ բաւական գործ չկայ : Փոխանակ մէկզմէկու վնասել ջանալու , աւելի քրիստոնէավայել չէ՞ր ըլլար , եթէ , ընդհակառակն , իրարու օդնէիք ամեն պարագայի մէջ :

— Բայց . Պարոն Ժողովրդապետ , ըսաւ վերջապէս Պէոթրան , ամենուն կարծիքն այնպէս է թէ միայն Մօրիսի ձեռքէն ելած գործերն ընտիր ընտիր և ձեւաւոր են :

— Մօրիսի իւր արհեստին լու տեղեակ ըլլալովն , քու ճարտարութիւնդ բնաւ չվնասուիր , բարեկամ , դուք երկուքդ ալ ձեր արժէքն ունիք :

— Ես բնաւ չեմ մոռցած , Հայր Պէոթրան , ըսաւ Մօրիս , որ դուք ինձ ուսուցիք ամենէն առաջ իմ արհեստո , և թէ դուք տղայութեանս ատեն իմ թշուառ վիճակիս վրայ գութ ցուցուցիք : Օ՞ն ուրեմն , խաղաղութիւն հաստատենք մեր մէջ , և դուք ալ իմ խնդրանաց համեմատ ձեր երկիրն ինձ վաճառել մի զլանաք :

— Լաւ ուրեմն , կը հաւանիմ վաճառել , քանի որ մեր յարդելի Հովիւն իսկ կը բաղձայ :

— Եւ միշտ ճշմարիտ և անկեղծ մտերիմներ ըլլալ կը խոստանա՞ք ինձ :

— Այո՛ , վասն զի գժտութեամբ ապրելովս՝ ընաւ երջանիկ չեմ :

— Վասն զի, ըստւ Հովհանն, Աստուած ռւզեց որ ամեն յանցաւոր իւր պատիմն կրէ, և նա որ իւր որտին մէջ բարկութիւն կը սնուցանէ, տւելի կը նեղուի քան զայն որ բարկութեան առարկայ եղած է :

Մօրիս ոտքի ելլել կ'սկսի.

Վերջապէս Մօրիս անկողնէն ելաւ : Իւր յարդեայ թիկնաթոռն գաւթին մէջ խանութին առջեւ դնել տուած էր և իւր սրունքն բարձի մը կրթնցուցած էր : Այս դիրքով նստելուն՝ դարբնոցն կը տեսնէր և գործաւորաց վրայ խնամք կը տանէր :

Պ. Լընուաս, Ճողովրդապետին հետ անկէ անցնելով, ուզեց ողջունել զդարբինն, և երկուքն աւ գաւելթը մտան : Շառլ գնաց աթոռ բերել այս նորեկաց համար, որք իւր հօր հետ խօսիլ սկսան :

«Ահա գրեթէ կատարելապէս առողջացեր էք, խեղճ Մօրիս, ըստւ Պ. Լընուաս :

— Այս', Պարոն, փառք Աստուածոյ . ապաքինմանս համար միայն խնամք և խոհեմութիւն կարեւոր էր, և կարծեմ ես ոչ միայն և ոչ միւսին զանցաւութիւն ըրի :

— Սակայն այս պատահարն զքեղ նիւթական մասին բաւական տկարացուց :

Ի՞նչ կը նանք ընել, Պարոն, գժբաղդութիւն մ'է, որոյ ամենքս աւ ենթակայ ենք : Այս առաջին անգամը չէ որ ստակի մասին կորսւստ ունինք բայց և այնպէս այդպիսի վնասու մը համար բնաւ

ինձի վճառութիւն չեմ բերած . փոխանակ այդ կորուստներու վրայ ողբալու, նոյն իսկ աշխատած ատենս անոնց դարման մը գտնելու կը մնածեմ:

— Այս ամենուն ստակին վճարուածէ, հարցուց Հովհանն, տունը, պարտէ զն և երկրորդական փոքր չէնքերն ցուցնելով :

— Այս' Պարոն, Աստուածոյ չնորհիւ այժմ իմ ստացուածքս եղող տան մէջ կը բնակիմ, ես որ 14 տարի առաջ գրեթէ ոչինչ դրամագլուխով մը հսու եկայ հաստատուելու :

— Այս չնորին մէջ մուրճի հարուածներ շատ ըլլալու են, ըստւ Պ. Լընուաս :

— Եւ նաեւ շատ ալ քրասանց կաթիլներ, յաւելցուց Մօրիս : Երբ կը տեսնեմ որ խանութս լսու կարգադրուած է, տանս կարասիքն կանոնաւոր են, երբ կը տեսնեմ կիրակի օրերն տղայքս մաքուր հատդուած, զրա իրենց մօր հետ պատարագի կը տանիմ, և կը խորհիմ թէ այս ամենն արդիւնաւորողն այս սեւ ձեռքն է, սիրտս ուրախութեամբ կը լցուի, որ կարծես թէ բաւական տեղ չգտնելով դուրս պիտի զեղու :

— Եւ արդեօք այդ ուրախութեան մէջ հապատութիւնն ալ փոքրիկ մաս մը չունի^o, ըստւ Ճողովրդապետն ժպտելով :

— Յիրաւի, Պ. Ճողովրդապետ, շիտակն չեմ գիտեր, միայն սա կրնամ ըսել թէ ես ինքզինքս ուրիշ մ' աւելի ընտիր չեմ համարիր : Գործի համար քաջութիւն ունեցող գործաւոր միայն ես չեմ, և կան շատեր որ ինձմէ աւելի լսւ գործեր կ'ընեն, մանաւանդ քաղաքներու մէջ . բայց ես

միշտ գոհ եմ տեսնելով որ իմ աշխատութեամբու
ընտանիքս կրնայ երջանիկ ապրիլ :

— Ուրեմն զքեզ գոհացնելու համար բան չի
պակսիր , ըստ Պ. Լընուառ :

— Զեմ համարձակիր խոստովանիլ թէ առա-
ջին օրն որ անդործ անկողնոյս մէջ մնացի , ակա-
մայ աւելի աղէկ ըլլալու միջոց փնտուցի . բայց
ասի հանճարեղ խորհուրդ մը չէր . վասն զի այն-
քան երջանիկ եմ որ կանխաւ չէի յուսար . բայց
ինչո՞ւ մարդիկ միշտ իրենց բաղդէն գոհ չեն ըլլար ,
բացատրեցէք ինձ այս կտորն , կ'աղաչեմ , Պ. Ժո-
ղովրդապետ , դուք որ գիտէք թէ ի՞նչ բան միշտ
զմեղ նոր առարկաներու կը մղէ , երբ նոյն իսկ
փափաքածնիս ունենանք :

— Բարեկամ , վասն զի մեր սրտին պարապ
տեղը լեցնել կը ջանանք , բայց այս նախակին
բնաւ չենք հասնիր , վասն զի այն պզտիկ անկիւնն
որ երբէք լեցուած չէ , Աստուծոյ տեղն է : Նա
չուզեր լեցուիլ այս աշխարհիս և ոչ մէկ բանով ,
որպէս զի միշտ անոր վրայ մտածենք :

— Պ. Ժողովրդապետ , շատ շնորհակալ եմ
ինձ բացատրելնուդ համար այն խնդիրն , որ զիս
կը տանջէր անդադար . այժմ աւելի հանդիսաւ պի-
տի ապրիմ : Աւելի հաճոյքով պիտի աշխատիմ և
իմ աղէտներս համբերութեամբ պիտի կրեմ :

Հայր Թուէն ժառանգութիւն մը կ'ստանայ .

Թղթաբերն գաւիթը մտնելով սոյն միջոցին
Պ. Լընուառի մէկ քանի նամակներ յանձնեց , յե-
տոյ ուրիշ մ' ալ ցուցուց Վաթանի կնիքով :

« Տեսէք ապա այս մեծ նամակն , ըստ , Հայր
Թուէնի ուղղեալ է , որ պիտի չկրնայ զայն ստո
նալ , վասն զի թղթաբերին 50 սանդիմ վարձքն
պիտի չկրնայ վճարել » :

— Հայր Թուէնի նամակ մը , ըստ Ժողովրդա-
պետն , « Վ գրած կրնայ ըլլալ :

— Թերեւու իւր հօրաքրոջմէն է :

— Պէտք չէ , ըստ Պ. Լընուառ , որ այն խեղճ
մարդն այս նամակին պարունակութիւնն անդիտա-
նայ . ա՛ռ , թղթաբեր , 50 սանդիմ վարձքդ , և
նամակն իրեն տուր :

Հինգ վայրկեան յետոյ , Հայր Թուէն եկաւ
չնորհակալ ըլլալու Պ. Լընուառի ըրած բարութեան
համար և աղաչեց Պ. Ժողովրդապետին կարդալ այս
նամակն , որ կնքեալ թուղթ մը կը պարունակէր :

« Բարեկամ , Վաթանի նօտարներէն միոյն նա-
մակն է , որ ձեզ կը զրկէ այն կտակին օրինակն ,
որով ձեր հօրաքրոյն 26.000 Գրանք ժառանգու-
թիւն կը թողու ձեզ :

— Քսան և վեց հազա՞ր . . . :

Խեղճ ծերունին աւելի չկրցաւ խօսիլ , ուժա-
թափ Ժողովրդապետին աթոռին վրայ ինկաւ , որ
անոր տժունին տեսնելով տեղէն ելեր էր :

« Ջրանսուազ , գոշեց Մօրիս , գաւաթ մը ա-
ղէկ զինի բե՛ր . օ՞ն ուրեմն Հայր Թուէն , պէտք չէ

որ դժբաղդութեան մէջ քաջասիրտ եղող մարդ մը,
իւր խելքն կորսնցնէ երբ բաղդն ժալտելով կը ներ-
կայանայ » :

Հայր Թոռէն քիչ մը դինի խմելէն յետոյ , լաւ
սկսաւ և ասով քիչ մը զօրացաւ : Այն ատեն այս
երջանկառիթ լուրն իւր կնոջ հաղորդելու գնաց ,
բայց վերստին Մօրիսի գաւիթը դարձաւ :

« Պ. Ժողովրդապետ , այս ստակով ի՞նչ պիտի
ընեմ , ըստ Թոռէն :

— Բարեկամ , պէտք է կալուած գնել , վասն զի
ստակն կ'երթայ , այլ երկիրն կը մնայ յաւէրժ : Մի-
այն փոքր գումար մը պահեցէք , ձեր հողերն բա-
նեցնելու և գէշ տարիներուն դժբաղդութեան դէմ
գնելու համար : Դուք կը ճանչնաք մէծ Շոմյի տու-
նը , գիւղին ամենէն վերջինը , Տուփլ ասպետն որ
իւր ընտանեօք հոն կը նստի՝ կ'ուզէ վաճառել զայն ,
որ կը պարունակէ երկիրներ , պարտէղ մը , մար-
դաղեափններ , այգիներ , վերջապէս ինչ որ կա-
րեւոր է : Դուք հոն հանդիսաւ և ընդարձակօրէն պի-
տի բնակիք , ձեր ուտեատն ալ առատ պիտի ըլլայ ,
նաև իրնայ ըլլալ որ սենեակ մը և մառան մը վար-
ձու տաք գիւղէն մէկուն :

— Բայց , Պ. Ժողովրդապետ , նախ կառք մը
պէտք է Վաթան երթալու և ժառանգութիւնն
սոնելու համար , վասն զի հետիոտն չեմ կարող
երթալ և առանց ստակի ի՞նչպէս ընեմ :

— Հանդարտեցէք , Հայր Թոռէն , ըստ Մօրիս ,
այժմ որ ստակի կարօտ չէք՝ ամենուն քով վարկ
պիտի ունենաք :

— Բայց քանի որ ստիպեալ է վազը վաթան
դտնուիլ , և կառքին ծախքէն զատ ուրիշ վոքրիկ

հաշիւններ ալ կան , ես 10 ֆրանք փոխ կու տամ ,
ըստ բարեգութ Հովիւն :

— Բարի և վեհանձն մարդ , ըստ Պ. Լը-
նուառ , ձեր շահուց հոկեցէք , քաղաքացիք հանձա-
րեղ և նրբամիտ են :

— Ո՛հ , Հայր Թոռէնն անմիտ չէ , ըստ Մօրիս ,
՚ի զուր նոքա նրբութիւն պիտի ցուցնեն , ինքն զա-
նոնք պիտի գերազանցնէ իւր սարզ դէմքով , պիտի
թողու որ նոքա իրենց կարծիքն յայտնեն . բայց
նորէն իւր խելքին համեմատ պիտի գործէ :

Ֆրիզէ կու գալ զՄօրիս տեսնել :

Մօրիս գործի սկսած էր և կը ջանար կորսուած
ժամանակին տեղը լեցնել . երբ , առաւօտ մը որ
արօրի խոփի մը կ'աշխատէր . Ֆրիզէ , իւր վաղեմի
ընկերն , եկաւ դարբինին աշխատելու տեսնելու ։
Ծոյլ մ'էր սոփիկա , որ միշտ պարասր մնալու միջոց
մը կը գտնէր . նոյն իսկ երբ սախողական գործեր
ըլլային վաճառանոցի օրեր քաղաք կ'երթար , ցո-
րենոյ կառքերն պարսելու համար և մէկ օրուան
մէջ 5—4 ֆրանք կը չափէր . Բայց տունը իւր ըն-
տանեաց ամենեւին բան մը չէր տանէր . նաեւ
ջնար կը զարնէր և կիրակի օրերն երիտասարդներն
կը խաղցնէր : Վերջապէս ըլլակայից մէջ կատար-
ուած ամեն հարսանեաց և խնջոյից ներկայ կը գըտ-
նուէր . Բայց գինետուննէն այն առեն միայն գուրս
կ'ելլեր , երբ ստակի կ'սպառէր , հետեւաբար իւր ըն-
տանիքն յետին ծայր չբաւորութեան մէջ կ'ապ-
րէր : Իւր երկու անդրանիկներն գրեթէ բոլորովին

մերկ՝ դաշտերը կը վազէին, խեցգետին որսալով, սունկ ժողվելով, և յաճախ որոզ այթ՝ լարելով կը ջանային որսի հաղուագիւտ կտորներ ձեռք ձգել: իւր կինը նախ փորձած էր այս սոսկալի թշուառութեան դէմ մաքառիլ, բայց տեսնելով թէ անհընար է, բոլորովին թուցած էր. փոխանակ իրրե կանոնաւոր տանտիկին, ընտանեկան հագուստներըն նորոգելու և ճերմակեղէններն լուալու, դրոնէ ՚ի դուռ հաց կը մուրար իւր յետին կաթնկեր մանուկն բազկաց վրայ բոնած:

« Ահա՛ կատարելապէս առողջացեր ես, Մօրիս, ըստ Ֆրիզէ, յիրաւի ես ալ ամենուն համակարծիք էի թէ ամբողջ կենացդ մէջ տկար պիտի մնաս:

— Հաւանական էր որ ճեր կարծիքն ճիշտ ելէր, եթէ ինքզինքս լւա չխնամէի: Բայց վերջապէս այժմ առողջ եմ. գիտեմ թէ որքան կորուստ ըրի, բայց ինչպէս որ կ'ըսեն, Սուսէ նշուառաննէւն ունչւէ: Եւ դու, Ֆրիզէ, ըսէ տեսնենք ի՞նչ վիճակի մէջ ես:

— Գրեթէ միշտ նոյնն եմ: Բայց այս տարի ցրտէն սառելու վախ շունինք. Ճեր պարոնն յիսուն խուրծ փայտ զրկեր է կնոջս:

— Զե՞ս ամչնար որ ողբանութիւն ստանալով կ'ապրեցնես ընտանիք, երբ Աստուած քեզ երկու զօրաւոր բազուկներ տուած է, որք հաստատ կերպով քու մեծ մարմնոյդ կապուած են: Ի՞նչու դու և տղայքդ միանդամայն չէք աշխատիր:

— Ճշմարիսն ըսելով, Մօրիս, երբ կը տեսնեմ որ գիւղին մէջ ամենքն իրենց գործին զբաղած են, այնպէս որ շեմ դաներ մէկն հետը խօսելու համար,

ուրախ շեմ ըլլար: Զեմ գիտեր թէ ասի ի՞նչպէս կ'ըլլայ, բայց աշխատելու փափաք զգացած ատենս իսկ գործ չեմ գտնար: Ավկայն չմոռնանք ըսելու թէ բնաւ երջանիկ օր մը շեմ անցուցած:

— Ֆրիզէ, երջանկութիւնն կ'ուզէ որ իւր ետեւէն երթան և շեմ կարծեր որ երբէք անոր հասնելու փորձն փորձած ըլլաս:

— Շատ մեծ կը խօսիս, Մօրիս, դու որ միշտ լւա բազդ մ'ունեցած ես:

— Հա՛, հա՛, այդպէս կը կարծես: Լաւ ուրեմն, կ'ուզե՞ս որ քեզ ըսեմ թէ ո՛ւսկից ստացած եմ այս լաւ բազդն և թէ դու ի՞նչպէս կրնաս անոր նման բազդ մ'ունենալ:

— Այս՛, պատմէ ինձ ասիկա, ուրախ պիտի ըլլամ գիւտիդ պատմութիւնն լսելով:

Մօրիս կը հասկցնէ Ֆրիզէի թէ ո՞ւսկից գտած և իւր բարեյաջող բաղդն.

« Նախ, շարունակեց Մօրիս, բնաւ գինետուն շեմ երթար, վասն զի մեր փնտուած բազդն հոն չէ հաստատած իւր բնակութիւնն:

— Ի հարկէ պիտի չերթաս, քանի որ տանդ մէջ գինին անպատճաս է:

— Պիտի ցուցնեմ քեզ որ, քու գինետան մէջ ըրած ծախքէն շատ տւելի քիչ կ'ընեմ ես զինւոյ համար, թէ եւ տան մէջ ամենքն ալ կը խմեն:

— Տեսնենք, այդ հաշիւն գիտանալու հետաքքիր եմ:

— Լայ ուրեմն. շարաթը գոնէ երեք որուակ

կը խմես գինետան մէջ , այնպէս չէ :

— Չորս ալ ըսէ , որպէս զի շնառալիս , և
թերեւս հատ մ'ալ նորէն մոռցած ըլլաս :

— Չորս հաշուենք . մէկ սրուակը դոնէ 23
սանդիմ ըլլալու է , ուստի շաբաթը կ'ընէ 1
Փրանք :

— Ինձ հետ խմող բարեկամաց համար ալ 30
սանդիմ դիր :

— Շաբաթը 1 Փրանք՝ տարին 52 Փրանք . բա-
րեկամաց համար ալ շաբաթը 50 սանդիմ վատնե-
լով՝ տարին կ'ընէ 26 Փրանք , ընդ ամենը 78 Փրանք
տարին : Այս գումարով , Ֆրիզէ , կրնաս Նօհանի ե-
րեք տակառ գինի գնել , տակառն 45 Փրանք . պար-
պուածներն ետ տալու պայմանաւ , որ աւելի կը
յարմարի քեզ : Փոխադրութեան ծախքովը մէկ տա-
կառն 48 Փրանք կ'ըլլայ , ընդ ամենը 54 Փրանք .
կը տեսնես որ 24 Փրանք կը չահիս : Ի՞նչ , Ֆրիզէ ,
միթէ մեր տանց համար տարին երեք տակառ գի-
նին չի՞ բաւեր :

— Հաւատա՛ , որ երրէք այս հաշիւն ըրած
չեմ , բայց գանք այժմ քու յաջող բաղդիդ :

— Իմ բաղդս , ահա քեզ ցաեմ : Երբ դու ճա-
շելէդ վերջը կ'պօսնուս կամ կը քնանաս , ես ան-
դադար մուրճս սալին վրայ կը վարնեմ . և եթէ
գիշերն այնքան խոր քուն չունենաս , պիտի լսես
որ յաճախ ժամը տասն անցած դեռ երկաթ կը ծե-
ծեմ :

— Ի՞նչի՞ կը ծառայէ այդպէս գիշերն ալ գրա-
վիլն , երբ ամբողջ օրը կ'աշխատիս :

— Կը հարցնես թէ ինչի՞ կը ծառայէ , լսւ , իմ
իմ յաճախորդներս գոհացնելու՝ զորս երրէք չեմ

սպասեցնէր . օրը երկու ժամ աւելի աշխատելով՝
տարին վեց հարիւր ժամ կընէ . որ յիսուն օր ը-
սել է : Շառլ որ դեռահաս է , շատ անդամ ինձ
պէս գիշերներն կը հսկէ . ահա իմ բաղդս , բա-
րեկամէ իմ , և իւրաքանչիւր ոք կրնայ արժանա-
նալ այնմ . իմ ընթացքս քուկինիդ հակապատկեր
մ'է , վասն զի դու անհոգ կ'ըլլաս քու գործիք աշ-
խատելու , մէկ կողմը կը ձգես զայն և վերջապէս
կիսկատար կը թողուս , մինչդեռ ես , ընդհակառա-
կըն միշտ կը ջանամ կարելի եղածին շափ յառաջ
երթալ , վասն զի չեմ գիտեր թէ հետեւեալ օրն
ի՞նչ կրնամ ըլլալ և գուցէ այնպիսի դէպք մը պա-
տահի որ յաճախորդացս տուած խոստումն չկրնամ
կատարել : Կը տեսնե՞ս , Ֆրիզէ , իմ սալս երրէք
ինձ տակ հայթայթել չմերթեր , երբ իրմէ կը
ինդրեմ մուրճի յարատեւ հարուածներով :

— Ատիկա կարելի է , բայց կարծեմ աշխա-
տութենէդ վերջը բազուկներդ գէշ ցաւ կ'զգ ան :

— Ըստդդ չեմ ուրանար , յաճախ կը պատա-
հի այդ . բայց երբ բազուկներս վերցնելու գժուաշ-
րութիւնն ունենամ , քանի մը վայրկեան տուն
կ'երթամ հանդիսաւ առնելու : Փրանսուազ գաւաթ-
մը գինի կու տայ ինձ , խմած տոենս , անդամ մը
աչքերս կը դարձնեմ իմ մաքուր և կանոնաւոր
սենեկիս վրայ , կը տեսնեմ տղայքս վայելչապէս
հագուած և բոլորովին զուարթ , մինչդեռ կինս եր-
գելով կ'որորէ իւր կաթնեկեր մոնուկն , այն տոեն
կը կարծեմ թէ բազկացս ցաւերն կ'անշետանան .
հետեւարար նորէն գործիս դառնայալով մուրճս ձեռք
կ'առնում և աւելի եռանդուն կ'աշխատիմ :

— Ո՞ն , ես այդպէս չեմ , բնաւ տունը գըտ-

նուիլ չեմ ուզեր և եթէ ստիպուիմ իսկ հոն միտանելու, երբ կը տեսնեմ այն մերկ և ցուրտ սենեակն ու տղայքս ցնցոտիներով ծածկուած, անմիջապէս գարշելով դուրս կ'ելլեմ:

— Այս', անէդ դուրս կ'ելլես և շիտակ գինետուն կերթաս ինքզինքդ միմիթարելու այնպիսի թշուառութեան մը վրայ, որոյ հեղինակն դու ինքըն ես :

— Բայց տան համար պէտք եղածն մատակարարելու համար հարկ է շափազանց նեղուիլ :

— Եթէ ամեն ինչ առանց նեղութեան ձեռք ձգէինք, ֆրիզէ, այն ատեն ամենեին արժէք մը շունենալով պիտի երթայինք այս աշխարհէս : Կարօտութիւնը, մեր գլուխն կը դրդէ որ աշխատի, բայց և մեր սրտերն կը ջեռուցանէ : Երբ ամեն առաւօտ իմ ընտանիքս սնուցանելու և զայն զուարք թացնելու միջոցներուն վրայ կը խորհիմ, ալ աւելի կ'ոգեւորիմ. սուուզիւ ո՞րքան կը սիրեմ կինս և զաւակունքս » :

Մօրիս գործ կ'առաջարկէ ֆրիզէի.

«Ինչ որ ինձ կը պատմես, Մօրիս, զիս կը զարմացնէ : կը փափաքիմ քու յաջողութիւնդ ես ալ փորձել, վասն զի, կը տեսնե՞ս, (ասիկա միայն քու վրայ վատահութիւն ունենալուս կըսեմ,) երբ բոլը ստակս զինետան մէջ կը վատնեմ, ողբութեան հացն խիստ դառն է ինձ :

— Եւ գիտցիր որ աշխատութեան հացն ալ չատ քաղցր է և մեծ ախորժակով կ'ուտուի:

— Ըստածներէս կը հասկնաս որ յարատեւ աշխատելու սովորութիւնն երկար ատենէ 'ի վեր մոռցած եմ, միայն հիմակ փոկի հարուած տալրու յարմար կու դամ. աս ալ կայ որ ինձ դործ ո՞վ պիտի ուզէ տալ այժմ :

— Ես, ֆրիզէ . պարտիզիս մէկ մասն բոլորովին քարուտ ըլլալուն անբերրի է . եթէ կ'ուզերս այդ քարերն ամբողջ հանել, քեզի օրական 1 ֆրանք 25 սանդիմ կու տամ, որ մէկ շաբաթը կ'ընէ 7 ֆրանք 50 սանդիմ : Այս գործին վրայ առ նուազն ամիս մը աշխատելու է, կատարելապէս կանոնաւորելու համար այն տեղն : Բայց որովհետեւ գիտեմ ստակիս յարդն, զոր ճակտիս քրտինքովն կը շահիմ, չեմ ուզեր յանօդուտս վատնել, քեզ կ'իմացնեմ կանխաւ և գիտնաս որ ՚ի մօտոյ վրադ պիտի հսկեմ : հետեւարար գինետուն յաճախելն բոլորովին պիտի վերջանայ . ինչպէս, այս պայմանն քեզ կը յարմարի :

— Այս', Մօրիս . կ'ուզեմ գիտնալ թէ ամեն ըսածին պէս, մարդ յիրաւի ճշմարիտ հաճոյք և գոհութիւն կ'ունենա՞յ, շաբթուն վերջն իւր աշխատութեան արդիւնքն ընտանեացը տանելով : Բայց գիտե՞ս որ 7 ֆրանք 50 սանդիմ վեց հոգւունդին շբաւականանար :

— Եւ երբ ամենելին բան մը շունենաս անոնց տալրու աւելի՞ լաւ է . հաւատա՛ ինձ որ քու ընտանիքդ քենէ յոյսերնին կտրած, իրենց իրենց հացը կը ճարեն, կը հարցնեմ քեզ, երբէք անոնց վրայ հոգւ տարա՞ծ ես : Այս միջոցիս, որ դեռ հունձքն չէ սկսած, լաւ գործաւորներն իսկ հազիւ կրնան շահիլ քեզի տուած վարձքս : Եթէ կա-

նոնաւոր աշխատիս և շաբաթականդ տւելորդ ծախ-
քերու չվատնես՝ զքեղ հանգիստ կ'ասքրեցնէ, միա-
ցեալ այն Յ—Ա Գրանքին հետ զորս կիրակի օրերն
ջնար զարնելով կը չահիս : Տեսնենք, որոշեցի՞ւր .
այս ըսելիքդ լաւ ընտրութիւն մ'է : Ատկայն եթէ
կ'զգաս որ աշխատելու համար քաջալերութեան
պէտք ունիս, գնա՛ գտիր Պ. Ժողովրդապետն . նա
քեղ պիտի համոզէ որ ժամ յառաջ աշխատու-
թեան սկսիս, հասկցնելով քեղ թէ Աստուած զմեղ
աշխատելու համար ստեղծած է . նաև վստահ եմ
թէ այս պատուարժան Հովիւն պիտի սիրէ զքեղ,
և անոր պէս ընտիր մարդու մը սէրն, կը տեսնե՞ս
ֆրիզէ, անկարելին կարելի կ'ընէ :

— Օ՛ն, աշխատութեան փորձն առնել որոշե-
ցի բացարձակապէս» :

Ֆրիզէ աշխատութեան կ'ախործի.

Ֆրիզէ բոլոր չաբաթն խղճի մտօք աշխատե-
ցաւ, և շաբաթ օրն երբ Մօրիս անոր օրականնե-
րըն տուաւ, կատարեալ աղու պէս ուրախացաւ :

« Մօրիս, պէտք է որ կինս ալ աշխատի . ըսէ՛
ֆրանսուազի որ իւր կանեփէն կնոջս տայ մանելու
համար . զիտեմ որ նա ալ եթէ փափաք ունենայ
աշխատելու, շատ բնտիր կը գործէ :

— Գնա՛, զանի ալ հոս կանչելու, անոր ալ
գործ պիտի տրուի . և քու երկու տղայքդ, ըսէ՛
ինձ թէ այդպէս տունը մնալով ի՞նչ պիտի ըլլան .
դու անփոյթ կը թողուս որ նոքա ամեն տեղ թա-
փառին . ամեն օր ստահակութեան և օրինապան-

ցոթեան նոր ապացոյցներ կու տան, և կը զարմա-
նամ որ դեռ իրենց պատիժն չեն կրած : Ի՞նչու
համար զանոնք աղարակապետի մը քով չես զներու
Քիչ ատենէն չարութեան կատարեալ տիպարներ
պիտի հանդիսանան և դու ալ իրենց վիճակին վը-
րայ ձանձրոյթ և պժգանք պիտի զգաս :

— Ես ալ կ'ուզեմ զանոնք գործի զնել : Ցորմէ
հետէ քու պարտիզիդ մէջ կ'աշխատիմ և քու մուր-
ճիլ հարուածներն կը լսեմ, որք բնաւ չեն դադ-
րիր, լսւ զաղափարներ մոքիս մէջ դիպուեցան .
բայց թշուառ մանկունքս բոլորովին մերկ են . այդ-
պիսի վիճակի մէջ ո՞վ կը հաւանի զանոնք քովն
առնուէ :

— Անոնց աշխատելուն արգելքն այդ է միայն :
Շարլ պղտիկցած հագուստաներ ունի, որք քու պլզ-
տիկիդ կը յարնարին . գալով միւս որդւոյդ, Հին
սոնազգեստ մը և բաճկոն մը կը դանեմ առ այժմ
զայն հագուեցնելու համար, մինչև որ ինքն ստակ
շահելով աւելի կանոնաւոր զգեստներ գնէ . վաղ-
ուընէ անոնց աւել մը գտիր :

— Եւ իմ աղջիկս Մարին, որ տասն երեք տա-
րեկան է, հարկ է որ անէն դուրս ելլայ աշխա-
տելու համար :

— Աղջկանդ յարմար տեղ մը զիտեմ . Գոռ-
տիէ իր քովն եղող կովարած աղջիկէն զժգոհ ըլլա-
լով ձամբեր է . այժմ եթէ ես երաշխաւորելու ըլ-
լոմ՝ քու աղջիկդ կ'առնէ այս պաշտօնին համար :

— Կրնաս երաշխաւորել, Մօրիս, իմ աղջկանս
համար . բաւական հանճարեղ է և մեր ընտանե-
կան խումբին ամենէն գործունեայն է » :

Երբ պարտէզը բոլորովին մաքրուեցաւ, Պ.

Աընուառի ագարակապետն ֆրիզէն իւր քովն առաւ Մօրիսի յանձնաբարութեամբ , և շատ դոհեղաւ իւր այս նոր գործաւորէն , ուստի և իւր գործոց վերակացու կարգեց զայն , միւսներէն աւելի հանձարեղ գտնելով և պարզ գործաւորի մը վարձքէն աւելի ստակ տուաւ անոր :

Մօրիսի տաճ երեկոյթն .

Ամենայն որբոց տօնէն յետոյ , գիշերներն Մօրիսի տաճ մէջ ընկոյզ կը կոտրէին : Դրացիներն և ֆրանսուապի բարեկամուհիներն կու գային նմա օդնել ընկոյզներն կեզւելու համար , ինչպէս որ սովորութիւն է : Կը խօսէին , կը խնդային և իւրաքանչիւր ոք իւր պատմութիւնն կ'ընէր : Մայր Թիւրին անուանեալ պառաւ կինն որ ողբրութեամբ կ'արթէր , ըստ թէ ցրտէն պիտի սառի յառաջիկայ ձմեռուան մէջ , որ յայտնի կերեւէր թէ իւստ պիտի ըլլար :

— Լաւ , բայց Մայր Թիւրին՝ աշխատիլ ալ չեք ուղեր , ըստ ֆրանսուազ . անցեալ օր ձէռպօթինձ ըստ թէ քեզ առաջարկէր է յաճախ , իւր փոքր տղան հսկելու , երբ ինքն դղեկին մէջ զբաղեալ է , բայց դուք մերժեր էք :

— Ի՞նչ կ'ըսէք , օրը Յ սու վարձք կու տայ:

— Երեք սուն ոչինչէն աւելի լսու չէ^o , Մայր Թիւրին , և որովհէտեւ ճաշն ալ հոն պիտի ընէիք . ձեր Յ սուն քովերնիդ պիտի մնար . տասն օր 15 սանդիմէն՝ կ'ընէ 1. Փրանք 50 սանդիմ , և սասլ զլմանոց մը կամ ներքին հագուստ մը կրնայիք

գնել : կը տեսնէք որ պզտի շահ չէ :

— Եւ փոքր շահերն մեծերու առաջնորդ կ'ըլլան , յաւելցուց Մօրիս . ես իմ մասիս , հաւատացէք որ 50 սանդիմոց կարթ մը կամ բանալի մը դարբնելու համար գիշերն անկողնէս պիտի ցատուէի :

Մօրիս՝ Ճաճ—Բիեռի տունը կ'երբայ .

Մօրիս ծեծուելիք ցորեան ունենալուն , իրի կուն մը Ճաճ—Բիեռ անունով մարդու մը տուն գնաց որ բարի գործաւոր մ' էր և գիւղին ծայրը կը բնակէր : Երբ դարբինն ներս մտաւ , գործաւորն իւր ընտանեաց հետ սեղան նստելու վրայ էր և Ա.հա՛ , Պ. Մօրիս , գուք ինձ կու գաք ձեր ստակն պահանջելու՝ պատրաստ է , վասն զի աւելի լսու համարեցի զայն պահել ձեզ յանձնելու համար , քան թէ ձմեռուան սոնագգեստ մը գնել ինձ , որոյ մեծ պէտք ունիմ . բայց ամեն բանէ առաջ հարկ է պարտքն վճարել . կին , ես տղան կը բռնեմ , դու դարանին մէջէն 10 Փրանք բեր :

— Անհանգիստ մի՛ ըլլաք , վիքթուառ , միթէ երբէք ստակ յետո պահանջած եմ բարի մարդէ մը որ պարապ չմնալու համար ձեռքէն եկածն կ'ընէ . ես կ'սպասեմ որ գիւրութիւն ունեցած ատենն նա իւր պարտքն վճարէ . այժմ , Ճաճ—Բիեռ , ոչ միայն քենէ ստակ պահանջել չեկայ , այլ անկէ շահելու աշխատութիւն մը առաջարկել եկայ քեզ . կրնա՞ս ունեցած փոքրիկ հունձքս աղալ :

— Այո՛ , 'ի հարկէ և չնորհակալ եմ որ զիս

մասածեր էք, Պ. Մօրիս, բայց քիչ մը նստեցէք
հանդիսատ առնելու համար :

Դարրինն, խօսած առեն, Վիքթուառի տնաւ-
կան ընթացքն մանրամասնաբար կը դիտէր : Ամեն
ինչ այնքան մաքուր և կանոնաւոր էր, որ գործա-
ւորին յետին աղքատութեանն հակառակ, այս
տունը զննողին մեծ հաճոյք կը պատճառէր :

«Չեմ դիտեր, Վիքթուառ, յիրաւի, ի՞նչպէս
կ'ընէք որ ձեր տունն և չորս զաւակունք այսքան
մաքուր կը բռնէք քիչ մը շահով. տղոց հագուստ-
ներուն վրայ պատուած մը չեմ տեսներ :

— Ո՛հ, վասն զի կինս ծոյլ չէ, պատասխա-
նեց Ժան—Բիէռ, գրաւ կը դնեմ որ գիւղին մէջ
անկից աւելի կանուխ ելող և աւելի ուշ քնացող
չկայ :

— Այս ձմեռն խիստ դժնդակ պիտի ըլլայ,
խեղճ ժան—Բիէռ, ցորենին դինը հետզհետէ կը
բարձրանայ. ի՞նչ պիտի ընես այս խումբ մը զաւա-
կացդ սնունդ մատակարարելու համար :

— Գիշերներն պիտի չքնանամ: Թէեւ օրական
աշխատութեամբ մէկ ֆրանդ միայն կրնամ շահիւ,
սահպեալ դադարմանց պատճառաւ, սակայն իմ
ընտանիքս կրնամ սնուցանել: Երբ աշխատելու
կ'երթամ, անդրանիկ տղաս դործիքներս մէկտեղ
բերելով, տակաւ առ տակաւ զանոնք գործածելու
կերպերն կ'ուսանի: Կրտսերն՝ այծը կը տանի ա-
րածելու, դաշտերու և մացառներու մէջ. Վիք-
թուառ՝ անտառն կ'երթայ, մինչդեռ աղջիկն կը
հսկէ իւր եղբօրը վրայ որ յաճախ կը քնանայ:

— Փետրուար ամսէն սկսելով, յաւելցուց Վիք-
թուառ, մարդագետիններուն մէջ բանջարեցն և

մանիշակ կը ժողվեմ, երբոր ծաղկելու ըլլան, յե-
տոյ աղջիկս քաղաք կը տանի զանոնք վաճառելու
համար, և երբ գաղտային աշխատութեանց ատենն
դայ, ամեն օր կ'երթամ:

— Եւ այս պղտիկն ի՞նչ կ'ընես այն ատեն,
վասն զի 'ի հարկէ կ'աղաղակէ և կու լայ :

— Միշտ հետը կը տանի զայն, ըստ Ժան—
Բիէռ, իրեն երկար կողով մը շինեցի մէկ կողմէն
վրձանակով, տղան անոր մէջը կը դնէ իւր բարձին
վրայ հաստատ կապելով, և զանի հետը դաշտն
կամ մարդն կը տանի. աղջիկս պղտիկին քով կը
կենայ զրոցնելու համար և այսպէսով Վիքթուառ
իւր օրականն կը շահի: Զմեռն մեր կանեփը կը մա-
նէ, զոր ինքն պատրաստած է. և որովհետեւ չեր-
կնշիր գիշերն միայնակ մէկ անկիւնն քաշուած՝ կը
բարկին քով հսկէի, երբ մենք սմենքս կը ննջենք,
ուրիշներու համար ալ հիւսելու կանեփ կ'առնէ
և այսպէսով իւր կառախ բանողչէքն կը շահի :

— Եւ ես ալ կ'աշխատիմ, Պ. Մօրիս, ըստ
փոքրիկ աղջիկն ։ Խծուծն կը հիւսեմ, և ամառը,
երբ պղտիկ եղբայրս կը քնանայ, դաշտին մէջ ե-
լակներ, վայրի հազարներ և սունկեր կը ժողվեմ
քաղաք տանելու համար: Հայրս կարթ մը շինած
է ինձ աղբիւրէն ջրկոտեմն առնելու համար, ան-
տառաց մէջէն կաղին և սին (corme) կը ժողվեմ,
այսպէսով միշտ քաղաքն վաճառել տանելու պա-
շտը մը կ'ունենամ:

— Դուք ամենքդ ալ բարի և քաջասիրտ ան-
ձինք էք, և ոչ ոք պիտի մերժէ ձեզ դործ առա-
ջարկելու :

— Տրանջալու տեղ մը չունինք: Եթէ, որ և

իցէ դործի մը մարդ պէտք ըլլայ , առաջին անգամ
զմեզ կը կանչեն . հետեւաբար մենէ աւելի երջա-
նիկ մարդ չկայ , միայն թէ առողջութիւնն չպակսի» :

Աղքատն .

Մօրիս դուրս ելելու վրայ էր , երբ աղքատ
մը ներկայանալով դրանն առջեւ , ըստ .

«Խեղճ ճանապարհորդի մ'օգնեցէք :

— Բարեկամ , քան զձեզ աւելի աղքատ մէ-
կու մը կը դիմէք . բայց փոյթ չէ , մոնէք , յիրա-
վի դիպող ժամանակին հասաք , այժմ թան պիտի
խմենք , և դուք ալ ամենուն պէս պնակ մը պիտի
ունենաք անկէց :

— Բայց ինձ կ'երեւի թէ , ըստ Մօրիս , այդ
թանն հազիւ ձեր ընտանեաց կը բաւէ :

— Ի՞նչ կ'ըլլայ , ըստ փոքրիկ աղջիկն , իւրա-
քանչիւր պնակի մէջ սովորականէն քիչ կը լեցնեն ,
որով ուրիշ պնակ մը կը լեցուի :

Աղքատն մոտաւ և Ժան—Բիէռ իւր տեղն , որ
կրակարանին քովն էր , անոր տուաւ : Վիքթուառ
կրակարանին միւս կողմն իւր զաւակին կաթ տա-
լու զրազած էր , մինչդեռ իւր ամուսինն ամենուն
ալ թան կը բաժնէր . Մօրիս ալ մէկ կողմ նստած
մէծ հաճոյքով անոնց այսպէս ախորժանօք ուտել-
նին կը նկատէր : Թանէն յետոյ բերին պնակ մը
տաք շողգամ , և Ժան—Բիէռ օտարականին գա-
ւաթ մը գինեակ ներկայացուց՝ կերակուրն տալէ
յետոյ , և ըստ .

«Կ'ուզէի աւելի աղէկ գինի տալ ձեզ , բարի

մարդ , բայց այս ամառուան սաստիկ տաքերէն
գինին չտեմարանին մէջ թթուեր է :

— Փոքրիկ դժբաղդութիւն մ'է ատի , պա-
տասխանեց օտարականն , յորմէ հետէ աւրուած
գինին բարւոքելու միջոցն դանուած է :

— Ի՞նչպէս կ'ըլլայ , ըստ Մօրիս . երկու տա-
կառ զէցած գինի ունիմ և ուրախ պիտի ըլլամ
եթէ կրկին իւր նախկին յատկութիւններն ստա-
նայ գինին . վասն զի աւրուած գինին խմելն ար-
խուր խնջոյք մ'է , մանաւանդ որ առողջարար ալ
չէ , սակայն և գինին աւրուած ըլլալուն չեմ ու-
զեր թափել , ինչու որ գրեթէ անցեալ տարուան
ամրող հունձքս է :

— Ուրեմն եռեսուն կռամ գինեմրբային թը-
թու աղ (acide tartrique) առէք իւրաքանչիւր տա-
կառի համար , և գինւոյն հետ խառնեցէք , պիտի
տեսնէք որ քիչ ատենէն ըմալելի պիտի ըլլայ : Չեմ
ըսեր ձեզ թէ իւր նախկին ամեն յատկութիւններն
նորէն կ'ստանայ , կամ թէ երկար ատեն կը դի-
մանայ , բայց բոլորովին անհամ չըլլար և վնասա-
կար ըլլալէ ալ կը դադրի : Իմ երկրիս մէջ , որ է
Անկումա , ուր գինի պահելն շատ դոււար է ,
յաճախ այս միջոցն կը գործածեն գէցած գինին
բարւոքելու համար :

— Յիրաւի այդ կերպն փորձել կ'ուզեմ . այս
գիշեր մեր տունը պիտի հանգստանաք , Պ. ճանա-
պարհորդ , ձեզ պիտի տրուի փոքրիկ գործաւորին
սենեակն , վասն զի նա հարսանեաց հանդէսի գա-
ցած է : Վաղն առաւոտ գինեմրբայինն թթու աղ
(acide tartrique) պիտի առնել տամ ինծի և Ժան
— Բիէռի համար և դուք զայն գործածելու կերպն

մեղ պիտի ցուցնէք : Մնաս բարեաւ, Ժան—Բիէռ,
վազը կը տեսնուինք : Չմեռուան լաւ անդրավար-
տիք մը գնէ քեզ, բարեկամ, որպէս զի ցուրտէն
չսառիս : Մոտածէ՛ որ այս ամենուն կեանքն քու ա-
ռողջութենէդ կախեալ է» , ըսաւ Մօրիս, փոքրիկ
ընտանիքն ցուցնելով :

Յետոյ աղքատին հետ իւր տունն դարձաւ,
գործաւորին տան մէջ տեսածներուն վրայ խան-
դաղատեալ :

Մօրիս իւր աւրուած զինին յացնելու. փորձ
կ'ընէ .

Հետեւեալ առաւտուուն, մինչդեռ խեղճ ճա-
նապարհորդն Մօրիսի սեղանին վրայ կը նախաճա-
շէր, Պէոթրանի որդիներէն մին եկաւ աղաչել
Շառլի որ իրեն օգնութեան երթայ ստիլողական
գործ մը լմացնելու համար . Շառլ պատասխանեց
թէ քանի մը վայրիեանէն կու գայ և տղան իւր
խանութը վերադարձաւ :

Պարտէզը շրջան մընել գացին, մինչեւ որ
զինեմբային թթու աղն հասնի : Օտարականն դի-
տելով որ շատ նորատունկ խնձորենիներ սպիտակ
աղուանազով ծածկուած են, հարցուց Մօրիսի թէ
ինչո՞ւ ծառերն չէր մաքրեր այն աղուամազին տակ
ծածկեալ ճճիներէն :

«Չէ՞ք գիտեր ուրեմն որ այս ճճիներն ծառոց
կեղեւներն կը խայթեն և վերջապէս կը չորցնեն .
նաեւ այդ ճճիներն այնքան չուտ կը բազմանան
որ քիչ ատենէն ճեր խնձորենիներն անոնցմով բո-

լրո՞վին պիտի ծածկուին :

— Եթէ այդպէս ըլլալը գիտնայի . բայց այր՝,
յիրաւի կը յիշեմ, սայլադործ բարեկամն բոլոր իւր
խնձորենիներն կորոյս քանի մը տարուան մէջ այս
անարդ ճճիներուն խայթումէն , զորո դղեկին պար-
տիզպանն էւդհանուոր լուեր կ'անուանէ , վասն զի
յառաջ կը բերեն այն տեսուկ մը բուրդն , որու
տակ իրենք կը ծածկուին : Ծառին զօրութիւնը կը
տկարացնեն , ճիւղերն կը գոսացնեն , և հետեւա-
բար ծառն կը մեռնի երեք կամ չորս տարիէն :

— Ուրեմն քանի որ այդ էւդհանուոր լուերէն յա-
ռաջ եկած չարիքն զիտէք, ինչո՞ւ զանոնիք ջնջել
չէք չանար :

— Վասն զի անհնար է :

— Անհնա՞ր, ոչ ամենեւին : Խոզանակն օճառի
ջրոյն մէջ թաթիսելով՝ ուժգնութեամբ ծառերն շր-
փեցէք անով, մինչեւ որ ծառին վրան հատ մը չմը-
նայ , և որովհետեւ արմամափն երկարութեամբն
վար կ'իջնեն գետինը հողացն մէջ ծածկուելու հա-
մար , ուստի դուք ալ ջանացէք ծառոյն . կոճը
մանր ածուխով ծածկել . ասիկա իրենց մահացու
գեղն է , և այն տեսն այլ եւս խնձորենիներուն
վրայ ճճի պիտի չգ տնուի : ըսածս կերպը փորձե-
լով պիտի տեսնէք թէ ճեր ծառերն ո՞րքան չուտ
պիտի կենդանանան :

— Հայր իմ, ըսաւ Շառլ, չուտ մը փորձենք
զայս , երթամ տնէն պէտք եղածն բերեմ:

— Ի՞նչ, աղաս , դեռ Պէոթրանի խանութը
չե՞ս գացեր :

— Ո՞ն , հայր իմ, դեռ ժամանակ ունինք , և
նա քիչ մը կրնայ սպասել :

— Շառլ, ով որ կը յապաղի ծառայութիւն մը
մատուցանել, միայն կիսով շափ մատուցած կ'ըլ-
լայ և պէտք չէ որ պատուաւոր անձ մը իրեն ըս-
պառողին՝ վայրկեաններն հաշիւ ընելու շափ ատեն
թողու :

— Իրաւունք ունիք, հայր իմ, ըրածս անի-
րաւութիւն է, բայց կ'ուզէի հոս մնալ գինիին և
ծառոց լաւնալու կերպն տեսնելու համար :

— Գնա՛ Պէտթրանի քով տղաս, և մենք քու
դարձիդ պիտի սպասենք ։

Երբ Շառլ վերադարձաւ, ինքնին մաքրեց
ծառերն վրձինով, մինչդեռ օտարականն անոնց
արմատներն մանր ածուխով կը յարդարէր : Երբ
այս գործն լմնցաւ, եռեսուն կռամ գինեքարեան
թթու աղն դրին գինւոյ տակառներէն միոյն մէջ,
զրո Շառլ, Ժան-Բիէռի օգնութեամբ բաւական
ատեն խառնեց : Որոշեցին որ երբ գինին լսւ մը
հանդարտի, Ժան-Բիէռ նախաձաշելու գայ Մօ-
րիսի տունը, գիտնալու համար թէ այս փորձն
յաջողած է . յետոյ դարբինն օտարականին մեկ-
նած ատեն, նմա քիչ մը բան ընծայ տուաւ յե-
րախտազիտութիւն իւր բարի և հանճարեղ իր-
ռատուց :

Ցան և հինդ օրէն յետոյ, Մօրիս գինւոյն
տակառն բանալով, զայն բաւական լսւ գտաւ և
միտքն դրաւ միւս տակառին վրայ ալ նոյն գոր-
ծ ուղարկիւնն ընել :

Սէն—Մառքէնի

Սէն—Մառքէնի նախորդ օրն, որ գիւղին
պաշտպան Արբոյ տօնն էր, Մօրիս գնաց աղաչե-
լու ժողովրդապետին որ հաճի իւր ընտանեկան ըն-
թրեաց ներկայ գտնուիլ :

«Բարեկամ, պատասխանեց անոր բարի Հո-
վիւն, այսպէս ուշ ատեն դուրս ելլելն շատ դըժ-
ուար է ինձ պէս ծերի մը համար . նաեւ քահանա-
յի մը ներեւալ չէ իւր անէն դուրս ճաշել :

— Ինչո՞ւ համար, Պ. ժողովրդապետ : Դուք
գիտէք թէ մեր տան մէջ ինչ որ խօսուի կընաք
դուք լսել . նաեւ այս առաջին անդամը չէ որ ծեր
ներկայութեամբ պիտի պատուէք մեր սեղանն և
զմեզ պիտի օրհնէք :

— Բայց թերեւս հրաւիրեալներ ունենաք և
ես պիտի վլտանամ ծեր զուարթութիւնն խափա-
նելուս :

— Բարեկամ, հրաւիրեալներն կարի երջանիկ
պիտի ըլլան ծեր ներկայութիւնը վայելելով : Հոն
ներկայ պիտի գտնուին աներս, որ այս տօնն մեզ
հետ ընել եկած է, Միշօ մօրեզդորդիս, որ դեռ
նոր հասաւ, Գոռատիէ՝ մտերիմ բարեկամն, բարե-
սիրտ Հայր Թուէնն և Պէտթրանն :

— Շատ աղէկ էք ըրեր, Մօրիս, ծեր հին
վարպետն հրաւիրելով :

— Ի բաց թողով նաեւ իմ գործաւորներս,
վասն զի ես սովորութիւն ունիմ տան մէջ եղած
ամեն խնջոյից մասնակից ընել զանոնք :

— Եւ խիստ լսւ է այդ պէս ընելն, վասն զի

դուք իրենց յարդանք և սէր ցուցնելով, կը դրդէք զանոնք խկապէս անոր արժանանալու :

— Կ'աղաչեմ Պ. Ժողովրդապետ, որ ձեր մերժումով զմեզ շվատացնէք, վասն զի ձեր բացակայութիւնն մեր ուրախութեանց տիսուր կերպարանք մը պիտի տայ :

— Օ՞ն ուրեմն, բարեկամ, ձեր հրաւիրանաց դժկանակիլ չեմ ուզեր, ուստի կը խոստանամ զայն ընդունիլ :

Ժողովրդապետն ժամը ուժին Մօրիսի տունը հասաւ : Ամենքն 'ի միասին սեղան նստան և ֆլորանսուազ ընտիր ընթրիք մը մատակարարեց . իւրաքանչիւր ոք զուարթ էր և իւր գործոց վրայ ազատութեամբ կը խօսէր : Կրասէյի ծեր դարբինն ըստ թէ, ալ մուրճն կ'սկսէր ծանրանալ իրեն տկարացեալ բազկաց համար և թէ խիստ դժուար էր իրեն համար մէն միայնակ անցընել իւր կենաց վերջին օրերը :

«Ինչո՞ւ մեր քով դալ չէք ուզեր, ըստ Մօրիս, մեզի հետ պիտի ապրիք և երբ որ փափաքիք փոքրիկ ողջոյն մը տալ մեր սալին, ձեզ լսելու միշտ պատրաստ պիտի ըլլայ :

— Մօրիս, իմ փափաքս կը դուշակես զոր երկար ատենէ 'ի վեր սրտիս մէջ կը տածեմ :

— Եւ ինչո՞ւ ձեր փափաքն գործով չէք կատարեր, հայր իմ, ըստ ֆլորանսուազ :

— Ամենով մեր մէջ անցած դէսքին համար, զոր դու լաւ գիտես :

— Ի՞նչ, դեռ անցելցն վրայ կը խորհիք, աներ, ես երկար ատենէ 'ի վեր զայն մոռցած եմ:

— Բայց Մօրիս, զիտէ՞ս որ իրաւունքն քու կը էր :

— Սիրելի աներ, մեր տան ծայրը ձեզի համար սիրուն սենեակ մը պիտի շինել տամ պարտիզին մէջ, վասն զի պէտք է որ քու հասակդ ունեցող մէկն ուզած ատեն հանգիստ ընէ : Բայց մինչեւ որ ամբողջանայ և չորնայ, Գիշմաթինի տեղը ձեզ պիտի տրուի, և նա իրեն համար փոկէ անկողին մը պիտի ունենայ :

— Խիստ լաւ, Մօրիս, բայց ես ինքնին իմ ձաշակիս համեմատ պիտի կառուցանել տամ այդ շէնքն : Հարկէ որ այդ սենեակն բաւական ընագարձակ ըլլայ իմ բոլոր կարասիքս պարունակելու համար, վասն զի կրասէյին մեկնած ատենս ոչ ինչ պիտի վաճառեմ: Շառլ իմ թոռս է, կ'ուզեմ՝ որ անոր ամուսնացած ատեն հարկ եղած կարասիքն ես տամ: Իմ սենեակս լնակելի ըլլալուն պէս նա հոն պիտի փոխադրէ իւր անկողինն, առ այժմ ես պիտի զբաղիմ իմ դարբնոցս անյապաղ թողուլ և տունս վաճառել:

— Հայր Լըուլ, եթէ ուզէք հաւանիլ, ըստ ֆէլիքս, Մօրիսի առաջին դործաւորն որ ատենով մեծ հիւանդութիւն մ'անցուցած էր, կը փափաքիմ Կրասէյի մէջ ձեզ յաջորդ ըլլալ: Մտակին կէսն առժամանակ կը հասուցանեմ և մնացորդին համար պայմաններ կը հաստատենք :

— Տղամ, զքեզ քան զայլս նախամեծար համարելով, իմ դարբնոցս քեզ կը թողում: Հայրդ տարի մը իմ քովս աշխատեցաւ՝ խսուտէն երթակէ առաջ, ուր ամուսնացաւ առանց իւր կանխահաս մահուան տեղեակ ըլլալու, խեղճ երիտասարդն, գործը Մօրիսի յանձնենք, ինչ պայման որ դնելու ըլլայ նա, մենք պիտի ընդունինք :

— Այս՝ Հայր Լըռու, իմ տէրս ինքնին արդարակորով ուղղամտութեան ճշմարիտ տիտար մ'է, ուստի ես աշերս փակած պիտի ստորագրեմ ինձ ներկայացնելիք պայմաններն » :

Փոքրիկ տղայք իրենց մեծ հօր փարեցան զըւարթութեամբ և ֆրանսուազ ուրախութեան արտասուքներով զիւր հայրն համբուրեց :

Մօրիսի եւ գոռատիկի վեճն.

Մեծն պահոց Միջինքին Հայր Թուէն եկաւ ըզ-Մօրիս գտնելու և ըստաւ անոր .

« Ո՞հա՛ այժմ տան, երկիրներու, այգիներու, մարդերու և վերջապէս ամենայնի տէր եմ: Գիտեմ որ կը փափաքիք գնել այն դաշտն, որ ձեր պարտիզին արեւելեան կողմին կից է: Եւ եթէ ըստակի պակասութեան համար չէք գներ, փոյթ չէ: Ես դեռ քիչ մը ստակ ունիմ ձեզ տալիք: Երէկ այս մասին խօսեցայ Գոռատիկի, որ ինձ ըստ թէ, ստակի պակասութիւնն է պատճառն եթէ զայն գնել մերժէք. Ես ալ իրեն ըսի որ այս արդելքն պիտի խօրտակեմ ես ինքնին և դուք վաղուընէ անոր տէրն պիտի ըլլաք, եթէ ձեզ կը յարմարի, վասն զի ինչ դումար որ կը պակսի ձեզ, փոխս տալու պատրաստ եմ: Ուստի Մօրիս, գնեցէք այս երկիրն և ենթադրեցէք թէ անոր գինն դուք ինքնին ունէիք ձեր զրապանին մէջ, զոր յետոյ պիտի վճարէք ինձ ձեր բարեկեցութեամբ առանց ինքնիդնիդ նեղելու. Ես անոր պէտք չունիմ և աւելի լաւ կը համարիմ իմ ստակս ձեռաց մէջ

տեսնել քան թէ ուրիշի մը :

— Շնորհակալ եմ, Հայր Թուէն, մեծ հաճոյք կը պատճառէք ինձ: բայց որովհետեւ նախ երկու կողմէն սպայմաններ հաստատելու է, ստիպուած եմ ձեզ ըսել թէ 1200 ֆրանքի պէտք ունիմ. տեսնենք ի՞նչ շահով փոխ տալ պիտի ուզէք:

— Շահ, Մօրիս, ո՞վ կը կարծէք զիս + շահով ստակ փոխ տամ ձեզ նման բարեսիրտ մարդու մը որ իմ չքաւորութեանս մէջ զիս կը կերակրէիք, առանց զիս անցնելու, վասն զի ծերունի զինուորին հպարտութիւնն լաւ կը ճանչնայիք: Այժմ իմ ստակս պիտի առնէք և երբ որ յարմարի այն ատեն յետո պիտի վճարէք, եթէ կ'ուզէք նոյն խկտասն երկու տարիէն. շահու մասին բնաւ չխօսինք, կ'աղաւէմ:

— Արժանաւոր անձ մ'էք, Հայր Թուէն, բայց որովհետեւ ամեն բանէ առաջ արդարացի ըլլալ հարկ է, այս դաշտին հունձքը մեր մէջ պիտի բաժնենք, ինչպէս նաեւ ծախքն ու տուրքը:

— Լաւ ուրեմն, Մօրիս, թող այդպէս ըլլայ ատոր չեմ դժկամակիր :

— Ուրեմն յարմարեցանք, խկոյն դաշտին տիրոջ քով պիտի երթամ խօսելու» :

Հայր Թուէն գնաց զֆրանսուազն ողջունելու և ֆողովրդապետն ալ քիչ մը ետքն եկաւ, սիրուն փոքրիկ գրքոյկ մը բերելով Գլէմանթինի, որ քրիստոնէական ուսմանց մէջ խիստ յառաջադէմ էր: Հազիւ քիչ մը խօսակցեր էին, երբ Մօրիս ներս մտաւ յուզեալ դիմօք :

Այդ ի՞նչ է, գոչեց ֆրանսուազ, ի՞նչ ունիս, սիրելի ամուսինս :

— Կը հարցնէք թէ ի՞նչ ունիմ. լաւ, ձեզ կը յայտնեմ որ Գոռատիէն աւազակ մ' է, անպատիւ անձ մ' է . . . : Մանկութեան ընկեր մը, մտերիմ բարեկամ մը այսպէս խաղ մ' ընէ ինձ . ո՛հ, ո՛շ, ցկեանս պիտի չներեմ անոր :

— Նա ի՞նչափս քու բարկութեանդ տեղի ուր- ւաւ, և զքեզ քու չափաւորութեանդ սովորու- թենէն դուրս հանեց բոլորովին . եթէ գիտնաս թէ ի՞նչ սարսափելի վիճակի մէջ ես, ըստ Հովիւն :

— Ոհա լսեցէք թէ ի՞նչափս իմ բարկութիւնս գրգռեց, Պարոն, նա, իմ պարտիվիս կից եղող դաշտն գներ է . բարեկամ մը . այժմ որո՞ւ վստա- հելու է, Աստուած իմ:

— Բայց ես ատոր մէջ մեծ չարութիւն մը չեմ տեսներ :

— Ի՞նչ, Պ. Ժողովրդապետ, ատոր մէջ մեծ չարութիւն չկայ կ'ըսէ՞ք: Գոռատիէ գիտեր թէ կը փափաքէի ես գնել այս դաշտն որ իրեն բնաւ բա- նի մը չծառացեր . բայց որովհետեւ ստակ կը պակ- սէր ինձ զայն գնելու համար, առ այժմ կը մտա- ծէի: Երէկ, Հայր Թուէնն, որ հոս ներկայ է, ը- սեր է անոր թէ ինձ ստակ պիտի փոխ տայ, որ- պէս զի գնեմ, ուստի Գոռատիէ աճապարեր է այդ երկրին ինքը տէր ըլլալ: Ասի հին բարեկամաց մէջ անպատշաճ է կարծեմ. այնպէս չէ՞ , Պ. Ժողովր- դապետ :

— Յիբաւի, ասիկա վայելուչ ըլլալէն զատ մեծ չարութիւն է: Բայց չեմ կարծեր որ այս դէպքն ձեր վազեմի բարեկամութեան կապերն խզելու առիթ մ'ըլլայ » :

Ժողովրդապետն գծուորիսններն կ'արհամարնէ.

«Ի՞նչ, Պ. Ժողովրդապետ, չէ՞ք կարծեր որ այս պատահարն արդարացի պատճառ մ'ըլլայ Գոռ- ատիէի հետ յաւերժ գժտեալ մնալու :

— Ոչ, Մօրիս, եթէ լաւ բարեկամութեան և ընտիր ծառայութեան քառասուն տարիներ բաւա- կան չըլլան թերութեան մը ներողամիտ ըլլալու, ի՞նչափս պիտի համարձակինք վստահիլ Աստուծոյ ողորմութեան վրայ, զրբ յաճախ կը թշնամաննենք: Սայլագործն քու բարեկամդ ըլլալէն չէնտեւիր որ նա կատարեալ և տկարութենէ զերծ ըլլայ: Ի՞նչ կ'արծէ բարեկամութիւն մը, որ միակ ընտիր յատ- կութիւններն վայելել գիտէ առանց պակասու- թեանցն հանդուրժելու . միթէ բարեկամի մը նե- րողամիտ չե՞ս կրնար ըլլալ, երբ նա պակասու- թեան մէջ է:

— Ի՞նչպէս, Պ. Ժողովրդապետ, կը կարծէ՞ք որ այդպիսի ընթացքի մը ներողամիտ ըլլալն կա- րելի է . ոչ, ոչ, երբէք պիտի չներեմ այս անպատ- շեհութեան և փոխադարձաբար ես ալ իրեն պի- տի ընեմ, երբ առիթը ներկայանայ:

— Բարեկութիւնը գլուխոդ դարձուցած է, Մօ- րիս: Ես որ զքեզ լաւ կը ճանաչեմ, վստահ եմ թէ այս չարութիւններն պիտի մոռնաս: Գիտցիր որ եթէ դու ալ փոխադարձաբար իրեն չարիք հա- տուցանես, պիտի ցուցնես թէ դու ալ քան զայն աւելի արծէք մը չունիս, մանաւանդ նա ձեր երա- կուքէն աւելի զգաստն պիտի համարուի՝ այս մա- սին առաջնութիւն ստանալով: Այն ամեն չարու-

Թիւներն զոր այժմ գոռոտէի նկատմամբ կը խօսիս,
իրաքանչիւր ոք իրաւունք պիտի ունենայ նոյն իսկ
քեզ նկատմամբ խօսիլ : Պիտի գտնուին ումանք որ
ձեր գրէժխնդրութեան համար պիտի ծափուհա-
րեն , բայց ոչ ոք զքեզ պիտի յարգէ և գովէ , հա-
ւատա՛ ինձ :

— Իրաւունք ունիք , Պ. Ժողովրդապետ , ըստ
Մօրիս՝ վայրկեան մը մտածելէ յետոյ , յիրաւի գրէժ
պիտի չլուծեմ , բայց յաւիտեան անոր հետ ոխ
պիտի պահեմ :

— Այդպէս ընելն ի՞նչի կը ծառայէ , Մօրիս ,
ոխն կը թունաւորէ սիրան : Անցելցն պէս հան-
գիստ և գոհ ապրելու տեղ , այլ եւս պիտի չունե-
նաս հաճոյք մը որ խոռովիշալ ըլլայ այն լեղիով ,
որով քու հոդիդ լեցուած է : Ամեն ինչ , մինչեւ
իսկ աղօթքն քեզ դառն պիտի ըլլայ : Զեմ կրնար
կարծել թէ սայլազործն քեզ նեղութիւն պատճա-
ռելու դիտումն ունենայ , վասն զի ես միշտ զինքն
իբրև պատռաւոր անձ նկատած եմ . բայց հաւա-
նականաբար կ'ըսեմ թէ այս գործն ըրած է այն
գէշ վայրկեաններուն միոյն մէջ , որոյ մենք ստենքս
ենթակայ ենք : Հպարտութիւնն՝ այս ոխերիմ թըշ-
նամին , որ անդադար մեր շուրջն կը հսկէ , անոր
արգելք պիտի ըլլայ քենէ ներումն ինդրելու : Գոռո-
տիէի դու քու կողմէդ ներելով , Մօրիս , նորա
խաղաղութեան պատճառ պիտի ըլլաս և քու դիւր
կենացդ հանդսառութիւնն ալ պիտի վայելես . և
վերջապէս , սիրելի բարեկամ , այդ անպատշաճ ըն-
թացքով ի՞նչ օրինակ պիտի տաս որդւոցդ և բա-
րեկամացդ , որք ամենքն ալ զքեզ կը յարգեն :
Նոքա դաշտի մը նկատմամբ եղած այս յանկարս

ծական գժտութիւնն անցադ տենչանաց հետեւու-
թիւնն պիտի համարին և ստուգիւ ձեր երկուքին
ալ բարի համբաւն պիտի աղարտի : Դու մինչեւ
ցայժմ առանց այդ դաշտին երջանիկ էիր , ուրեմն
ասկէց յետոյ ալ առանց անոր չե՞ս կրնար ապրիլ :

— Պարոն , այլ եւս դաշտին վրայ շեմ խոր-
հիր , սակայն նորա անվայել ընթացքն սիրտս կը
վիրաւորէ :

— Զայդ եւս կը մոռնաս , Մօրիս . միթէ Աս-
տուած նախատանաց ներելու օրինակն մեզ տուած
չէ , և արդեօք այս օրինակն քեզ համար պիտի
կորսուի : Մնաս բարեւաւ , քեզ խօսածներուս վը-
րայ խորհէ՛ և վաղը կրկին կը տեսնուինք :

Երբ Ժողովրդապետն մեկնեցաւ , Հայր Թոուէն
ըստ :

« Մօրիս , ըրէք ինչ որ ըստ մեր բարի չովիւն ,
վստան զի նա սուրբ մ'է յերկրի : Զեմ գիտեր թէ
ի՞նչպէս կ'ըլլայ այս . բայց ես որ անոր ըսածնե-
րուն և ոչ մէկն կրնամ ըսել , ունկնդիր եղած ա-
տենս կը կարծէի թէ խօսածներն արդէն ես մոռ-
ծած էի : Իւր բարի յորդորներն լցուի պէս իմ
սիրտս կը լււաւորէր և երեւան կը հանէր այնպիս
սի ընտիր գաղափարներ , զորս ունենալ չէի կար-
ծեր » :

Մօրիս կ'երբայ սալլագործն տեսնելու .

Հետեւեալ օրն , Պ. Ժողովրդապետն իւր պա-
տարագն ընելէ անմիջապէս յետոյ Մօրիսի տունը
դնաց :

«Հաւ ուրեմն , բարեկամ , ըստ անոր , դիշերային խորհուրդներդ լաւ հետեւանք ունեցան :

— Այս , Պարոն , ով կարող է դիմադրել ձեր խօսքերուն . այլ եւս սրտիս մէջ ոխ չունիմ և ինքզինքս թռչնոյ պէս թեթեւ կ'զգամ . կը խոստովանիմ սակայն թէ այս առանց պատերազմի չեղաւ , բայց որոշեցի վերջապէս շգթափի Գոռտիէի հետ , հաւատացէք ինձ :

— Ուրեմն միատեղ երթանք զինքը տեսնելու :

— Զինքը տեսնելու , ո՞հ , ո՞չ , այս մասին , Պ. Փողովրդապետ , կը ցաւիմ որ ձեզ դիմադրել ըստիպուած եմ . վասն զի ինձ կը թռուի թէ նախկին այցելութիւնն ընել ինձ անկ չէ , քանի որ թշնամանուողն ես եմ :

— Թշնամանեալն դու ըլլալուդ համար քեզ կը վայելէ անոր դէմն երթալ : Դատէ անգամ մը թէ խեղճ մարդն ո՛քան անհանգիստ է , վաստահ եմ թէ պիտի չկրնամ զինքն համոզել որ անձամբ հոս դայ : Խւր թերութեան բեռն այնքան ծանր է որ պիտի չկրնայ զնու մինչեւ հոս բերել . ի՞նչ մնաս կայ քեզի եթէ առաջին անգամ ձեռքդ նմա երկնցնես քանի որ թեթեւ խիզճ մ'ունիս : Խորհէ՛ թէ այդպէս գէպի մը մէջ , թշնամանուողն աւելի թշուառ չէ : Եթէ դու առ բարեկամու յանցաւոր գտնուէիր , գոհ պիտի չըլլայի՞ր արդեօք աւեռնելով որ նա առ քեզ կու դայ փարատելու անձնասիրական նեղութիւն մը , որ միշտ կսկածական է . միթէ զօրաւորին անկ չէ զիջումն ընել :

— Յիրաւի ճշմարիտ են ձեր ըստածներն , Պարոն , բայց թող նոքա ալ իրենց հպարտութիւնն նուածել ջանան :

— Զեն կրնար , վասն զի բաւական լաւ քրիստոնեայ չեն և բաւական չեն դիմեր Աստուծոյ առջեւ խոնարհիլ :

— Օ՞ն ուրեմն , Գոռտիէի տունն երթանք , ձեզ դիմադրելու համար երկաթեայ անսասան սրտեր պէտք են :

Սայլագործն որ իւր դրանն առջեւ կ'աշխատէր , Ժողովրդապետին և Մօրիսի գալը տեսնելով այնքան գէշ զգացուեցաւ որ իւր սրունքներն դողալ ոկան և չկրնալով յոտին մնալ , ստիպուեցաւ նստիլ :

Մօրիս մօտենալով , ձեռքն անոր երկնցուց բարեկամարար և ըստ յուզիչ ձայնով .

«Դու ալ երկնցուր ձեռքդ , Գոռտիէ , և թող չըսուի թէ մանկութեան երկու հին բարեկամներ իրարու հետ գժաեր են մասմը հողի համար . կարծեմ թէ այդ դաշտէն վայելէլիք հաճոյքդ պիտի չհատուցանէ քեզի իմ բարեկամութեանս կորուստն» :

Սայլագործն վայրկեան մը ապշած մնալէ յետոց Մօրիսի վիզն փարեցաւ ըսելով .

«Միշտ ըստ եմ , թէ դու հարիւր անգամ քան զիս առաւել արժէք ունիս :

— Մի՛ փութար այդքան զիս գովելու . առանց Պ. Ժողովրդապետին յորդորանաց , որոնցմավ իմ բարկութիւնս զսպեց , այժմ զեռ զըստած պիտի ըլլայինք , թէեւ ես ինքզինքս խիստ թշուառ կը համարէի , յորմէ հետէ զքեզ ըստ սոսվորականին չէի սիրեր :

— Ոհ , չնորհակալ եմ , Պ. Ժողովրդապետ , չնորհակալ եմ . գուք յինէն կը բառնաք այն անհեթեթ բեռն , որ սիրաւ կը խորտակէր . ահա՛ Մօ-

րիս, այն մուրհակն, որ զիս այդ դաշտին տէր կը հրատարակէ . այս թուղթն զիս կ'այրէ և ես այժմ պիտի պատռեմ զայն, վասն զի ալ չեմ ուղեր այդ դաշտն :

— Այդպէս չեմ ուզեր, Գոռտիէ, ես չեմ եկած քեզ զոհողութիւններ ընել տալու, ուստի պահէ՝ զայն :

— Յիրաւի ոչ, չեմ ուզեր բնաւ : Կրնա՞մ ոտքս հոն դնել առանց կարմրելու, վասն զի հոն ստորին գործ մը գործեցի, կ'զգամ զայս :

— Բարեկամք, ըսաւ Ժողովրդապետն, ձեր մէջ միաբանութիւն պիտի հաստատեմ . Մօրիս իրեն պարտիզին կից եղած մասն պիտի առնէ դաշտէն, միւսը՝ Գոռտիէ, քեզ պիտի մնայ :

— Այդպէս է, ըսաւ Մօրիս, այլ եւս չխորհինք այս գործին վրայ . և դու, Գոռտիէ բարեկամ, այս իրիկուն Հայր Թուէնի հետ մեր տունն եկէք ընթրելու :

Ֆրիզէ զՄօրիս ընթրելու կը նրանիրէ.

Հետեւեալ տարին, բարեկենդանի տօնին, Ֆրիզէ մաքուր և գեղեցիկ հագուստներով եկաւ աղաջել Մօրիսի, անոր աներոջ և Շատրվուր կիրակի օրն իւր տունն ընթրելու գան :

«Ֆրիզէ, չեմ ուզեր որ դու մեզ համար ծախք ընես . ուստի ընթրիքն մէկդի թո՛լ:

— Անհնար է որ դու ինձ այս հաճոյքն մերժես, Մօրիս, վասն զի բաւական չէ միայն երախտիք ընել մէկուն, այլ պէտք է նաեւ զայն մէծա-

րել՝ առանց ասոր, կը տեսնե՞ս, խիստ ծանր է ուրիշէ մը բարերարութիւն ընդունիլն . եթէ մեր տունը ճաշել չգաս, պիտի ըսեն թէ դու զիս կ'արհամարհես, և ասի մեծ անպատռութիւն է ինձ գիւղին մէջ . առանց հաշուելու թէ քու այս մերժումիդ ցիեանս վիշտ պիտի պատճառէ ինձ . կինս իւր սազի ձագերէն երկուքը քեզ համար պարարտացուցած է, ուստի հարկ է որ անպատճառ զանոնք ուտել գաս :

— Իրաւունք ունիս, Ֆրիզէ, պիտի գանք ձեր տունը ընթրելու, վստահ եղիր :

Կիրակի օրն, Մօրիս մտնելով Ֆրիզէի տունն, ուր երկար ատենէ 'ի վեր չէր գացած, մաքուր և կանոնաւոր սենեակ մը դտաւ, ուր սեղանն պատրաստուած էր . տան տիկինն մաքուր հագուած էր, ինչպէս նաեւ տղայք որք այն օրն հրաման տուեր էին իրենց տիրոջմէն, յատկապէս դարրինին հետ ճաշելու համար :

«Ահա՝ ես ալ քեզ նման երջանիկ եմ, Մօրիս, ըսաւ Ֆրիզէ, թէ եւ հարուստ չեմ : Մեր երեք զաւակունք զոհ են իրենց ծառայութենէն, ուր լս ընթացք մ'ունին և առողջութիւննին ալ կատարեալ է . փոքրիկը դպրոց կ'երթայ և կարծես թէ ծնողացը համայք պատճառելու յատուկ ձիրք մը ունի : Ես կ'աշխատիմ բոլոր շաբաթն առանց օր մը կրրանցնելու . վերջապէս կինս տնէն դուրս գործ չգտած ատեն, քու կնոջդ կանեփն կը մագործ չգտած ատեն, զիս կնոջդ կանեփն կը մագործ չգտած ատեն, զիս կնոջդ կանեփն կը մագործ չգտած ատեն, զիս կնոջդ կանեփն կը մագործ չգտած ատեն :

— Բայց միայն ես չէի, Պ. Ժողովրդապետն ալ ոչ նուազ քու բարերփմանդ պատճառն եղած է :

Այդ ճշմարիտ է . առանց անոր յորդորանց , հաւանական էր որ նորէն իմ նախկին սովորական ծուոլթեանս մէջ իշնայի , վասն զի նախին ծանր կը թուէր արշալցուէն առաջ անկողինն թողուլ ցորեան ծեծելու համար բոլոր օրն : Երբ բաղուկներս կը ցաւէին , կը մտածէի թէ քեզ ալ նոյնը կը պատահէր , բայց քեզ արգելք մը չէր ըլլար աշխատութիւնդ շարունակելու , թէեւ դուն պէտք չունէիր անդադար աշխատելու . և եթէ քաջարատութիւնն ալ պակսէր ինձ և թունայի գործոյս մէջ , կէս օրին կ'երթայի գտնել մեր բարի և արժանաւոր չովիւն որ ինձ աշխայժ և եռանդ կ'ազդէր . յետոյ հաճոյալից և զուարթ՝ գործոյս կը գտառնայի : Վերջապէս աշխատութիւնն և գործունէութիւնն ինձ բնական սովորութիւն մ'եղաւ , այնպէս որ կարծեմ թէ , այսօր ինձ եթէ ո' և իցէ մեծ գումար մ'առաջարկուէր նորէն պարագ ժամեր անցընելու համար , բացարձակապէս պիտի մերժէի :

Քեզի զայդ կանխաւ չըսի՞ , սիրելիդ իմ ֆրիդէ , թէ աշխատութեան մէջ միայն երջանկութիւն պիտի գտնես . դեռ քանի մը տարի սպասէ , երբ քու խնայողութեամբ կարող ըլլաս քիչ մը հող գնել պիտի տեսնես թէ ինչ մեծ հաճոյքով պիտի մշակես այն դաշտդ , վասն զի այնքան նեղութիւններով ձեռք բերուած ստացուածն մեծ հրապրոց ունի :

Ուրքան ճշմարիտ է ըսածդ , Մօրիս . այժմ շապիկ մը հագեր եմ որ շինուած է մեր հնձած կանեփով , զոր կինս քաղեց , փշրեց , սանտրեց և հիւսեց . այս շապիկն ինձ մետաքսի չափ թան-

կադին է : Աստուած իմ , ո՛քան ուրախութիւններ ունիմ այժմ , որոց վրայ կ'ամաչեմ ըսելու թէ՝ բընաւ գաղափար չունէի : Ակրուն աղայք , եկէ՛ք չնորհակալ ըլլալու այս մարդուն որ մեր բարերարն է . առանց անոր դուք այսօր սրիկաններ պիտի ըլլայիք և ամենին դեռ պիտի նախատէին ձեր հայրըն , որ ձեզ պարզ ջուր միայն կը խնմնէր , մինչդեռ ինքն գինետունն կ'արքենար . վասն զի կը տեսնես դու իսկ Մօրիս , որ հոս ամենուն համար գինի կայ և ես միայն իմ մասս կը խմեմ :

Մօրիս զանոնք ամենքն ալ ողջագուրելէ յետոյ իւր տունն վերադարձաւ , մեծ ուրախութիւն զզալով սրտին մէջ Ֆրիդէի ընթացքին փոփոխութեան վրայ , որ ընտիր գործաւոր մ'եղած էր :

Մօրիս կիրակի օրն կ'աշխատի օտարականի մը ստիպողական պէտքն լեցնելու համար .

Անանային կիրակի առաւօտ մը Մօրիս իւր դրանն առջեւ նստած՝ Աչն Վէնսան առ Բօլի կենաց նկարագ իրն կը կարգար իւր կնոջ և դստեր , երբ օտարական մը ներկայանալով ըսաւ .

Ճիւրեկամ , կառքիս զսպանակներէն մին կոտրեցաւ ձեր զիւղը հասած միջոցիս . առաջին դարբինին խանութը մտայ այս դիստածական վնասին դարման մը գտնելու համար . բայց նա խոստովանեցաւ թէ ինքն այս աշխատութիւնն գլուխ հանելու անբաւական է և թէ դուք միայն կարող էք զայն կատարել : Ըստ համեւ թէ կիրակի օրերն չէք աշխատիր , սակայն իւր որդին զիս ապահովցուց

թէ դուք յանձն պիտի առնէք դործել երբ խընդիրն որ և իցէ մէկն շփոթէ ազատելու վրայ է : Ուրեմն ճշմարիտ ծառայութիւն մը կու դամ խնդրել 'ի ձէնջ , վասն զի հարկ է որ այս իրիկուընէ առաջ Ռէօյի գտնուիմ ամենակարեւոր դործոյ մը համար :

— Պարոն , այդ երկու անձինքն ալ ճշմարիտ ըսած են , պատասխանեց Մօրիս : Երբէք կիրակի օրն չեմ աշխատիր , վասն զի Աստուած այս օրն հանգստեան զոհեց , ուզելով որ մարդ ամբողջ շաբաթն նիւթական դործերով զբաղելէ յետոյ , գոնէ օր մը պարապ ունենայ որպէս զի կարենայ իւր հոգւոյն վրայ ալ մտածել : Բայց այսպիսի պարագայի մը մէջ աշխատելովս չեմ կարծեր որ գԱստուած նախատած ըլլամ : Գլէմանթին , դուստր իմ , ես կրակն վառած ատենս , դու գնա եղայրը գանել որ ուսուցչին հետ ըրջագայութեան գացած է . մինչեւ անոր վերադարձը մայրդ փուքով կ'արծարծէ հնոցն :

— Բայց բարեկամ , ինձ դժուար կ'երեւի որ դարրին մը կիրակի օրն խանութը գոցէ :

— Յիրաւի այդպէս է , Պարոն , ասի նախ մեծ դժուարութիւններ հանեց ինձ դէմ , բայց դիտաւորութիւնս չփոխել որոշեցի . նախ թէեւ բաւական դործ կորոնցուցի այս ընթացքովս , բայց ուսրախութեամբ կ'ըսեմ թէ վերջապէս իմ շահուցս բնաւ վնաս մը չըրաւ :

— Գործաւոր չունիք :

— Այո՛ , Պարոն . փառք Տեառն , երկու դործաւոր և հաստ մ'ալ փոքրիկ տղայ մը կը դործածեմ , առանց հաշուելու Շառլ որդիս որ ամենէն

աւելի լւա կ'աշխատի : Սակայն կիրակի օրերն աղատ կը թողում զիրենք , որք իրը ճշմարիտ պատուաոր երիտասարդ , այս օրն անմեղ զրօսանաց զրհելու համար քաղաք գնացած են :

Մօրիս գնաց տնէն կրակ բերելու և ֆրանսուազն ալ կանչեց , որ երբ փուքին շղթայն բըռնելով փշելու կը պատրաստուէր , օտարականն ըստ Մօրիսի .

«Զէմ կրնար հանդուրժել որ տիկինն փուքը քաշէ . քանի որ ես հոս եմ , այդ պաշտօնն պիտի կատարեմ :

— Ոչ Պարոն , եթէ կը հաճիք , վասն զի ատի ոչ վայելուչ և ոչ ալ արդարացի է » :

Հայր Թուէնն որ Մօրիսի հետ խօսիլ կու գար դարրնոցին առջեւ կանգ առնելով գոչեց .

«Ի՞նչ կը տեսնեմ հոս , Մօրիս կիրակի օրով կ'աշխատի և իւր կինն կը փշէ , ուրեմն աշխարհ վեր ընդ վայր տապալած է . Ֆրանսուազ , աղկէ ելիր և չուտ աթոռ մը բերել տուր ինձ , դեռ երկար ատեն չէ որ այս փուքն կը քաշէի իրբեւ թէ շահելու համար այն հացն զոր ամռասինդ ինձ կու տար . բաղդն ոչ ինչ մասցնել տուաւ ինձ :

— Իմ բարի Հայր Թուէնն , բաղդն բնաւ չէ ապականած մեր սիրտն , ինչպէս յաճախ կը պատահի անոնց , որոց բազդն կը ժապի :

— Ի՞նչ ունի այս մարդն որ զինքն այնքան երջանիկ կ'ընէ :

— Պարոն , Տէրութեան հին զինուոր մ'է , որ պատերազմի ատեն մեծ վերք մ'ստացաւ և երեսի վրայ մնաց : Յաճախ երբ իւր վէրբին ցաւն կ'արգիւէր զանի աշխատելու , հաց չէր գտներ . բայց օր

մը իւր վիճակին վրայ տրտունջ չէր յայտնած : Ա-
մենասպարզ կերպով իւր չքաւորութիւնն կ'ըսէ՛
և իւրաքանչիւր ոք իւր կարողութեան համեմատ
ձեռնտու կ'ըլլար անոր :

— Ճշմարիտ է, ընդմիջեց Հայր Թուէն, բայց
ձեզ ըստաւ Պարոնն թէ ձեռնտու ըլլաղն յաճախ
ինքն էր :

— Իւրաքանչիւր ոք վստահ էր թէ, ըստ Մօ-
րիս, երր նա կարող ըլլար աշխատելու՝ չէր փախ-
չէր աշխատութենէ և մէկուն ալ չէր դիմեր :
Վերջապէս պառաւ հօրաքոյր մը մօտերս 26,000
Փրանգի ժառանգութիւն մը թողուց :

— Եւ իմ ուրախութիւնս այնքան ծայրայեղ
եղաւ, ըստ Հայր Թուէն, որ քունէս անգամ
զրկուեցայ ՚ի սկզբան : Բայց դիմէք որ ամեն բա-
նէ աւելի հարստութեան վարժուիլն դիւրին է : Ես
որ յաճախ ամենէն երախտիք կ'ընդունէի, կրնամ
այժմ իմ կարգիս երախտապարտ կացուցանել
զոմանս :

Պարոն, հաճոյք մ'է այս ուսկից մարդ բնաւ
չթունար : բայց ոէտք չէ կարծել թէ այս բաղ-
դըն իմ սովորութիւններս փոխած է : իւրաքան-
չիւր ոք մեր տան մէջ իւր զօրութեան համեմատ
աշխատիլն կը շարունակէ, նոյնպէս և ես կրցած
ժամանակներս : Բայց երբ որունքիս ցաւն ստիպէ
զիս տաւնը մնալ, այն ատեն միայն ցաւն զիս կը
նեղէ, որ գրեթէ ոչինչ է բազդատմամբ այն մե-
ծամեծ վիշտերւն զորս անդադար կը կըէի երբ
այս ստիպողական դադարումներն զլեզ թշուա-
ռութեան անդնդոց մէջ կը թաղէին :

Շառու կու զայ իւր նօր օգնելու .

Շառու այս միջոցին ներս մոտաւ քիչ մը բար-
կացու դէմքով, ըսելով թէ զինքը կանչելնին մեծ
վասէ էր իրեն . վասն զի ուսուցիչն իրեն ընտիր
յորդորներ և տեղեկութիւններ կու տար :

«Երիտասարդ է ձեր ուսուցիչն, հարցուց օ-
տարականը :

— Ոչ, Պարոն, և ասի մեծ դժբաղդութիւն
է մեր երկրին համար . նա ու մեր բարի ժողովը-
դապետն եօթանասուն տարեկան ըլլալու են :

— Բարեկամ, ուրեմն ի՞նչ նիւթի վրայ կը խօ-
սէր ձեզ ձեր ուսուցիչն որ այսքան լաւ կ'օդտէին
ձեզ, ըստ օտարականն :

— Պարոն, ինձ կը հասկցնէր մարդոց և կեն-
դանեաց մէջ եղած տարբերութիւնն :

— Եւ ի՞նչպէս կ'ըսէր ձեզ զայ :

— Կա ինձ կ'ըսէր թէ ո՛ և իցէ անդամներէն
մէկէն զրկուած կենդանի մը ա՛լ բանի չծառացեր,
քանի որ իւր կեանքը պահելու համար հարկ եղա-
ծըն չկրնար հայթայթել . բայց այն մարդն, որ
բազուկ կամ սրունք մը և նոյն իսկ աշերն կոր-
սնցուցած է, միջոց մը կը գտնէ իրեն և այլոց օդ-
տակար ըլլալու : Ծնդ հանրապէս ամեն տեսակ տը-
կարութիւններն դրեթէ իւր իմացականութեան չեն
վնասեն երբէք, այլ ընդ հակառակն կ'ըսէն թէ
որքան մարմնն տկարանայ և նուազի այնքան միտ-
քըն կը զօրանայ : Մեր կրած բոլոր նեղութիւննե-
րն չեն արգիլեր մեր մտաց իւր խորհուրդներն
յեղեղել և հոգին աղատ է միշտ բարձրանալ սըր-

տեռանդ և ջերմ աղօթիւք առ գահոյս ամենակալին Աստուծոյ : Վերջապէս նա իմ ուշադրութիւնս կը հրաւիրէր դիտելու թէ լաւ սնուցեալ և ընտանի կենդանիներն միշտ ուրախ և կայտառ են քան զայլ , ինչ որ կ'ապացուցանէ թէ ասի բաւական է զիրենք երջանիկ ընելու . մինչդեռ կան մարդիկ որ թէեւ առատութեան մէջ կը լողան և իրենց գործոց տէր են , սակայն դոհ չեն դարձեալ , վասըն զի հոգւոյն պէտքն մարմնոյն պէտքէն տարբեր է և թէ ճշմարիտ երջանկութիւն չկայ երբ հոգին նեղութեան մէջ է :

Շառ, նոգոյն վրայ ունեցած գաղափարն
կը բացատրէ.

«Հոգւոյն վրայ կը խօսիք , երիտասարդ , իրեւ թէ ի՞նչ ըլլալն ըմբռնած ըլլայիք : Միայն , դիտէ՞ք թէ դուք զայն կառավարելու աղատութիւն ունի՞ք և թէ մեք մեր խորշդոց տէ՞րն եմք : — Ո՛հ , այս՝ Պարոն , ուսուցիչն զայս ամենն լաւ բացատրեց ինձ :

— Տեսնենք ուրեմն թէ ի՞նչպէս հասկցած էք :

— Նախ ինձ դիտել տուաւ թէ միշտ մեր գաղափարաց տէրն չեմք և թէ յաճախ մեր կամաց հակառակ չար գաղափարներ կը ծնին 'ի մեզ : Ինչպէս , օրինակի համար , տենչանքն , որ այլոց ունեցածին փափաքելու չար խորհուրդն կու տայ մեզ , թէեւ մեք մեր սրտին խորը քննելով կը տեսնենք թէ պատուաւոր անձինք ենք : Ուրիշ հողամանէ , մեք առանց գիտնալու՝ դէշն լաւ կը համա-

րինք տգեղն՝ գեղեցիկ , և անիրաւն՝ արդար : Այս ժամօթութիւններն մեր հոգւոյն մէջն էին , երբ Աստուծած զայն մեզ տուաւ : Մեր խղճմտանաց յօֆարութեան համեմատ բարիք գործելու աղատութիւնն տուած է մեզ , ինչպէս նաեւ չարիք գործելու , առ որ զմեզ կ'առաջնորդէ յաճախ մըտացածին հաճոյքն . ուրեմն բացարձակապէս մեր կամքէն կախեալ է մեր չար միտմանց ուշ չդնելու . պէտք է միայն հաստատ կամք ունենալ և Աստուծոյ աղջթել մեզ օգնութեան հասնելու համար : Պ. Ուրիշ զայս աւելի զգալի օրինակաւ մը բացատրեց ինձ ; երբ քոյրս զիս կանչել եկաւ և երբ ես իմ շարժումներով յայտնի ըրի թէ այս անդամ հօրս հրամանին իսկոյն հնազանդիլ չէի ուզեր , նաըստ ինձ . « Աւելի լաւ պիտի համարէիր ինձ հետ « շրջագայութիւնդ շարունակել և օգտակար նիւ « թէրու վրայ խօսիլ , քան թէ հօրդ օգնութեան « երթալ . բայց 'ի ներքուստ ձայն մը կ'ըսէ քեզ « թէ հարկ է հնազանդիլ հօրդ և զայն շփոթէ առ « զատել : Ի զուր ինքնին պատճառաբանութիւններ « կ'ընես , չես կրնար այս ներքին ազդու ձայնը « լուեցնել : Այժմ որ քու խղճիդ և քու բաղձաւ « նացդ տուած պատճառաբանութիւններն լսեցիր « կրնաս ինքնին որոշում տալ : Անտարակոյս բառ « բին չարէն զատելու այս կամքն է որ քու հոգ « ւոյդ անձնիխանութիւնն կը կազմէ : Աստուծ « զայն աղատ թողած է , որպէս զի դու ընտիր ու « բոչմանցդ արժանիքն ունենաս և չարերուն ալ « կշտամբանքն կրես . ահա՛ այս պատճառաւ չարի « ընտրութիւն ընողին թողութիւն չկայ , քանի որ « մարդ կրնայ միշտ լաւն ընտրել : Ուրեմն բարին

« գործելու և չարէն խուսափելու անկարելիու-
« թիւն չկայ, մանաւանդ եթէ մարդ կանուխէն
« իւր կամքն կառավարելու սովորութիւնն ստա-
« նայ » :

— Աեղ ըսածներդ լաւ ըմբռնա՞ծ ես, հար-
ցուց Մօրիս :

— Այս՝, հայր իմ, լաւ ըմբռնած եմ և շատ
ալ ճշմարիս կը գտնեմ: Այսպէս մեր հոգին այն
զօրութիւնն է որ կը կառավարէ զմարմինն և զոր
չեն կրնար բռնադատել, ըլլալ՝ ինչ որ չկրնար ըլ-
լալ: Կարելի է որ մեր մարմինն բանտարկեն և հա-
զարաւոր նեղութիւններ կրել տան նմա: Բայց «չ
ինչ ազատ է լուսւթիւն հրամայելու մեր հոգւոյն
մէջ բարձրացած ձայնին: Զարերն եթէ կարող
ըլլային, իրենց հոգւոյն ձայնն պիտի խեղդէին,
բայց նա անոնց կամաց հակառակ աւելի ազդու
կերպով զգալի կ'ըլլաց և միայն մահուան ժամուն
յաւիտենականապէս կը լոէ » :

Օտարականն կը յորդորէ զՄօրիս որ իւր որդին
առելի յառաջ մղէ.

«Յիրաւի ձեր որդւոյն խօսքերն զիս սրանչա-
ցուցին, ըսաւ օտարականն: Արդարեւ ձեր ու-
սուցիչն արժանաւոր անձ մ' է. բոլոր լսածներս
հաստատապէս որոշել տուին ինձ որ Օռմըթօյի եր-
կիրն գնելով, հոն բնակիմ, վասն զի արդէն այս
ստացուածին վերաբերեալ խնդրոյ մը համար ՈՒ-
ոյիի նօտարին պիտի երթամ այս իրիկուն » :

Նոյն միջոցին ֆողովրդապէտն աճապարանօք
ներս մտնելով ըսաւ .

— Մօրիս, քու հնոցիդ ծուխէն և մուրճիդ
հարուածներուն ձայնէն հետաքրքրութեամբ հոս
վազեցի: Խորհեցայ թէ անսարակոյս տարօրինակ
գործ մը պատահած ըլլալու է որ կիրակի օրով քու
կրակի կը վառի:

— Դատեցէք, Պ. Ժողովրդապէտ: Այս Պա-
րոնն կարեւոր գործոյ մը համար այս իրիկուն կ'ըս-
պասուի 'ի Ռէզյլի, բայց իւր ձամբան սիտի չկրը-
նայ շարունակել եթէ չնորոգեմ իւր կառքին զըս-
պանակներէն մին որ մեր զիւզը մտած ատեն
խորտակուեր է. արդեօք այսպիսի սրարագայի
մը մէջ կիրակի օրն աշխատելուս զիս պիտի կըշ-
տամբէք :

— Ոչ, Մօրիս, մարդն միշտ պարտաւորեալ
է իւր ընկերին ամեն առթի մէջ օգնել, մանաւանդ
դու ալ դիտես որ Տիրոջ այս օրն 'ի մասնաւորի
ընակիր գործոց նուիրեալ է :

— Պարոն Աբբայ, ըսաւ օտարականն, ներե-
ցէք ինձ որ ձեղ խնդակից ըլլամ ձեր թեմին մէջ
այսպէս ընտիր անձինք ունենալուուդ, ինչպէս այս
մարդն և իւր որդին, որոց հետ կէս ժամէն աւե-
լի է որ կը խօսակցիմ. կամ մանաւանդ խնդակից
կ'ըլլամ անոնց որ իրենց առաջնորդ և հոգիւ ու-
նին ձեզ նման յարգելի երէց մը: Այս զիւզն հա-
սած ատենս դեռ երկիմտ էի ձեր մօտերն երկիր
մը գնելու խնդրոյն վրայ, բայց ձեր թեմին վե-
րաբերելու, ուսուցչին և այս բարի անձանց դրա-
ցի ըլլալու փափաքն այս անորոշութեան վերջ
տոււաւ » :

Զսպանակն նորոգուելով, օտարականն վե-
հանձնաբար Մօրիսի աշխատութեան վարձին ար-

ւաւ և յետոյ Հայր Թուէնին ալ ընծայ մը տուաւ
՚ի փոխարէն իւր աշխատութեան :

«Ճնորհակալ եմ, Պարոն, ձեր ստակն պահե-
ցէք : Ես Մօրիսի երախտիք մ'ըրի , այն քաջին որ
ինձ պէս բանակին մէջ ծառայած է . Նա կը ճանչ-
նայ իմ անձնութիրութիւնս և դիտէ թէ մեր մէջ
փոխադարձարար ծառայութիւն մը չվարձատ-
րուիր » :

Օտարականն մեկնելէ առաջ , ըստ , Շառլ
Գուցնելով .

«Բարեկամ , այս տղան շատ հանճարեղ է և
կրթութեան մասին ալ թերութիւն չունի , պէտք
է զայն կանոնաւոր պաշտօնի մը դնել :

— Բայց Պարոն , իմ արհեստիս կ'աշխատցը-
նեմ , և ինչպէս որ դուք ալ անճամբ կրցաք տես-
նել , իբրեւ դարբին գէշ շախատիր :

— Ինչո՞ւ զանի աւելի յառաջ չէք մղեր , եթէ
դուք եւս հաւանէիք այս մասին , ես կրնայի զին-
քը կամրջոց վարչութեան մէջ իբրեւ վսրիչ մըտ-
ցընել , կարծեմ այսպէս շատ աւելի աղէկ կ'ըլլար :

— ԱՌ , Պարոն , ամեն վիճակ լաւ է . և Շառլ
մեր արհեստն լաւ ուսանելով , իւր իմացականու-
թիւնն աւելի լաւ պիտի գործածէ քան թէ ձեր
առաջարկած պաշտօնին մէջ . բայց , Պարոն , որ-
քան որ ձեր առաջարկութիւնն չեմ ընդունիր ,
ոչ ինչ նոււազ չնորհակալ եմ սակայն ձենէ , մեզ
նկատմամբ ցոյց տուած համակրութենէն » :

Շառլ զինուոր ըլլալ կ'ուզէ.

Տարիներն սահելով կ'անցնէին և Մօրիսի գոր-
ծոց յաջողակութիւնն հետզհետէ կ'աւելնար , վա-
սըն զի իւր բարեկեցութիւնն կը կրկնապատկէր աշ-
խատութեան համար ունեցած սէրն , և կատարե-
լապէս երջանիկ կը համարուէր : Շառլ քսան տա-
րեկան էր և մօտերն ըլլալիք զինուորական վիճա-
կագրութեան վրայ կը խորհէր : Այս տղան շատ
շուտ զարգացաւ : Առաջին հայեցուածքին թերեւս
վախցուէր թէ զինուորական ծառայութեան աշխա-
տանաց դիմադրելու անկարող ըլլայ , բայց նա
ընդհակառակն զօրաւոր էր և գեղեցիկ ու հաստա-
տուն կազմ ունէր :

Հայր Թուէն , կիրակի օր մը , երեկոյեան առ-
զօթքէն յետոյ Մօրիսն գտնել եկաւ , որ ուսուց-
չին հետ պարտիզին մէջ կը չըջագայէր , վեճարուա-
րի այն գեղեցիկ արեգակնային օղով մը , որ յա-
ճախ կը պատահի ձմեռուան ցրտէն յետոյ :

«Մօրիս , ըստ անոր , եթէ որդւոյդ վիճակն
ապահովցնելու մասին շփոթած ես , Հայր Թուէնն
իւր քսակին մէջ դեռ քանի մը սկուտ ունի և ինչ-
պէս որ դիտէք , զանոնք ձեր ուզածին պէս գոր-
ծածելու աղատութիւնն ունիք :

— Ճնորհակալ եմ , սիրելի Հայր Թուէնս , պա-
տասխանեց Մօրիս , նորա ձեռքն բարեկամարար
սեղմելով : Եթէ Շառլ գէշ թիւ մ'ունենայ , պիտի
մեկնի գիւղէս բանակին մէջ ծառայելու համար .
թէեւ ինձ մեծ վսաս պիտի ըլլայ , վասն զի անոր
հաւասարող գործաւոր մը չունիմ , բայց ես չեմ

մոռնար երբէք զինուորութեան վիճակիս մէջ ստացած օգուտներս և խիստ գոհ պիտի ըլլամ եթէ որդիս ալ յաջողի այդ շահերէն մաս մը գոնէ առնուլ :

— Հապա ֆրանսուազը՝ հապա մեծ հայրը :

— Ո՛հ, ստուգիւ, ամենադժուարին կէտն այդ է, բայց թերեւս զիրենք համոզէմ իրաւունքն 'ի դործ դնելու համար :

— Բայց տեսնենք թէ Շառլն ալ ձեզ համասխոհ պիտի գտնուի՞, ըստ ուսուցիչն :

— Ինքնին կ'երեւակայեմ, Պարոն, թէ մեկնելուն վրայ պիտի չտրտնջայ, վասն զի նորանոր երկիրներ տեսնելու բաղձանք ունի. Եթէ կ'ուզէք զինքը հոս կանչեմ :

Երբ Շառլ եկաւ, Պ. Ռըմի հարցուց անոր թէ զինուոր ըլլալէ կը վախնայ :

«Ոչ, Պարոն, ընդհակառակն բոլորովին : Ինքնին երթաւ չեմ ուզեր, վասն զի հօրս օգտակար եմ հոս, բայց եթէ բաղդէն այնպէս վճռէ, ամենայն հաճոյքով պիտի մեկնիմ, և աւելի ուշ, պիտի գամ հաստատուիլ այս երկրին մէջ հօրս պէս և կը յուսամ թէ անոր պէս սիրելի և յարդելի ըլլալու պիտի չյապաղիմ» :

Դրացի կիներէն մին այս խօսակցութիւնը լրսելով, խկրյն գնաց ֆրանսուազի պատմեց և անոր ցաւակից եղաւ որ Մօրիս քիչ մը ստակով իւր որդւոյն վիճակն չէր ուզեր ապահովցնել :

Ֆրանսուազ զայս ըսելով լալ սկսաւ.

«Եթէ քու տեղդ ըլլայի, ֆրանսուազ, ըստ դրացի կինը, այս մասին այնքան կը տրտնջայի ամուսնոյս դէմ, որ վերջապէս կ'ստիպուէր սկտք

եղած միջոցներն ձեռք առնուլ: Միթէ դատապարտելի չէ՞ մարդ մը որ ուզածին չափ ստակ կը շահի, բայց ստիպողական առիթներու մէջ իւր որդւոյն պէս աննման գործաւորէ մը զրկուիլ յանձն կ'առնու, առանց անոր վիճակն ապահովցնել ջանալու :

— Կը խօսիս, առանց ըսածդդ զիտնալու, պատասխանեց Մօրիսի կինն . նախ՝ ամուսինս կարծածիդ չափ ստակ չունի, և միայն շահն չէ իւր անուածնորդն : Բայց նա այնպէս տարօրինակ գաղափարներ ունի, որ ուրիշներու չեն նմանիր, և եթէ ինքն ուզէ որ Շառլ մեկնի, իւր խորհուրդէն ետ չկենար բնաւ» :

Ֆրանսուազ կ'երբայ զժողովրդապետն գտնելու.

Ֆրանսուազ արտասուբներն սրբելով, իւր ամուսնոյն քով վազեց որ բարեկամացը հետ կը խօսեցէր :

«Մօրիս, ըստ յուզիչ ձայնավ, ինձ ըսին թէ կ'ուզես որ մեր տղան զինուորութեան համար մեկնի : Գիտեմ թէ ստակի մասին քիչ մը նեղութիւն ունիս, և այս պատճառաւ թերեւս այդ որոշումն տուած ըլլաս . բայց կը ճանշնամ մէկն որ քեզ 1000 ֆրանդ պիտի տայ առանց շահու և փոյթ չէ որ չկրնայ զանոնք յետո առնուլ:

— Ո՞վ է այդ, սիրելիդ իմ ֆրանսուազ:

— Ես, Մօրիս . դու լաւ կը յիշես անշուշտ որ իմ շինած կարագէս և պանրէս ունեցած շահերս չուզեցիր որ հասարակաց քսակին մէջ դնեմ, որ-

թերու և ամիկներու ինչպէս նաեւ պտղոցս ստակն ինձ թողուցիր, որպէս զի իմ և տղայոցս զգեստներն հողամ:

— Լաւ ուրեմն, վերջը :

— Վերջը կ'ուզե՞ս գիտնալ, լաւ, այնպէս խնայողութեամբ գործածեցի որ տասն և ութ տարուան մէջ մէկ մէկ սուով 1000 Փրանդ հաւաքեցի. Ես այն ստակն պահեր էի որ աղջկանս հարսանեկան օժիտներն պատրաստեմ և անոր տնական պէտքերն հողամ. ա՛ռ զանոնք 'ի հարկին գործածելու, սիրելի ամուսինս, և մի՛ թողուր որ մեր տղան մեկնի:

— Հազա՞ր Փրանդ, ըսաւ Պ. Ռըմի, ինչպէս կարող եղեր էք այդպէս խնայողութիւններ ընել, դուք որ միշտ մաքուր հագուած էք ինչպէս նաեւ ձեր տղայք:

— Պարոն, վասն զի իմ ունեցածներս լաւ կը խնամեմ և յետին աստիճան մաքրութեան մէջ կը պահեմ, ասով երկար ատեն գործածելի կ'ըլլան: Միշտ մաքուր և զարդարուած ըլլալու համար մեծ ծախքերու հարկ չկայ, բաւական է որ մարդ իւր բռնելիք ընթացքն գիտնայ:

— Ստակի պակասութիւն ունենալուն համար չէ որ Մօրիս՝ Շառլի մեկնիլն կ'ուզէ, ըսաւ Հայր Թուէն, վասն զի ես ալ եկայ իրեն իմացնելու թէ կրնամ այս առթին մէջ նորէն իրեն ստակ փոխ տալ. այլ նա ուրիշ գաղափար մ'ունի իւր մտաց մէջ:

— Աիրելիդ իմ Ֆրանսուազ, ստակդ պահէ՛, միտքդ դրածիդ պէս գործածելու համար երբ աղջիկդ ամուսնացնես. թերեւս Շառլ բարեյածող բաղդ մ'ունենայ:

Ֆրանսուազ տառապեալ այլ ոչ յուսաբեկ՝ գնաց Պ. Ժողովրդապետն գտնելու և աղաչեց նմա իննօրեայ պաշտամունք մ'ընել, որպէս զի իւր որդին վիճակահանութեան մէջ լաւ թիւ մ'ունենայ:

«Ֆրանսուազ, ըսաւ բարի Հովիւն, ինձմէ խնդրածնուդ վրայ լաւ խորհա՞ծ էք: Դուք գիտէք որ զինուորական ծառայութեան համար սահամանեալ մարդոց թիւն ամեն տարի նոյնն է: Կը հասկնա՞ք ուրեմն որ եթէ աղջկամ Աստուծոյ որ Շառլն աղատէ, բացարձակապէս սա ըսել է թէ ես իրեն կ'աղօթեմ որ ուրիշ ընտանեաց մէջ ձըդէ այն վիշտն, զոր ես ձեր ընտանիքն վերցնել կ'ուզեմ: Արդարացի կը գտնէ՞ք զայս, ոչ, այնպէս չէ՞: Աստուծ, որ ամենուս հայրն է, այդպիսի աղօթից ուշադիր չըլլար. իւր որդւոյն բաժանման գաղափարին վրայ լացող մայր միայն դուք չէք, և վայելուչ կը գտնէ՞ք որ ձեր վիշտն ուրիշ սրտի մը վրայ իշնայ ձերը միսիթարելու համար: Ֆրանսուազ, ինձմէ խնդրած իննօրեայ պաշտամունքն պիտի չընեմ, վասն զի անհնար է աղօթել Աստուծոյ որ անիրաւութիւն մ'ընէ»:

Մօրիս խաբեութիւնն կ'արհամարնե.

Մինչդեռ Ֆրանսուազ դեռ Ժողովրդապետին քովն էր, Գոոտիէ եկաւ գտնել զՄօրիս, իւր մտերիմ բարեկամն:

«Զե՞ս գիտեր, Մօրիս, ինչ որ լսեցի երէկ ՚ի Աըռմէլ, ուր օրականով կ'աշխատէի: Անցեալ տարի, զինուորական վիճակահանութեան գէշ թիւ-

ւին մէկը Պ. Սուրբիոնի որդւոյն ինկերէ . գիտե՞ս
թէ ինչ գեղեցիկ և վայելահասակ տղայ մ'է . է՞հ
լաւ ուրեմն , սիրելի բարեկամն , զայն ազատելու
համար խիստ լաւ կերպով երեւակայեալ խորա-
մանկութիւն մը գործածեր են , այնպէս որ զայն
զինուորական ծառայութեան յարմար չեն դատեր.
կ'ուզե՞ս դու ալ այս կերպն գործածել :

— Աստուած մի՛ արասցէ . նոյն իսկ չեմ ու-
զեր որ գործածած կերպերնին ինձ ըսես , վասն
զի խարէութիւն մ'է այդ , զոր ես բնաւ չեմ ու-
զեր 'ի գործ դնել , եթէ նոյն իսկ անոր մէջ իմ
օգուտս ըլլալը գիտնամ : Եթէ Շառլ , որ զինուոր
ըլլալու յարմար է , խորամանկութեամբ ազատի ,
հարկ է որ բաղդին յաջողութեամբ լաւ թիւ քա-
շողներուն գլխաւորն անոր տեղ մեկնի : Զեմ ու-
զեր բնաւ որ ես ու տղաս մեր խղճերուն վրայ
ամբողջ ընտանեաց մը արտասուքն կրենք , որոյ
տղան թերեւս Շառլէն աւելի կարեւոր է իւր ծը-
նողաց : Ասի անարդարութիւն մը կ'ըլլայ և Աս-
տուած յինէն կը պահանջէ անոր հաշիւն ինչպէս
նաեւ եթէ ստակ վճարելով զայն աղատեմ :

— Յիրաւի , շատ խղճամիտ ես , Մօրիս , և
չեմ գիտեր թէ ես ալ քու տեղդ այդքան պիտի
ըլլայի՞ :

— Այս' , Գոռտիէ , դու ալ ինձ չափ խղճա-
միտ պիտի ըլլայիր . վասն զի դու ալ պատիւդ
ճանչող անձ մ'ես : Ուշադիր եղիր , ենթադրենք
թէ դու տղայ մ'ունիս , որոյ թիւն արդարու-
թեամբ զայն ազատ կ'ընէ :

— Լաւ , յետո՞յ :

— Դու կ'ուրախանաս , կ'ուզես զայն ամուս-

նացնել , և ինքզինքդ կատարեալ երջանիկ կը հա-
մարիս , այնպէս չէ՞ :

— Այս' :

— Բայց ահա այն ցնծալից ժամուն . որոյ
դու անձկաւ կ'սպասես , քենէ կը յափշտակեն
զայն , վասն զի ես իմ տղաս ազատելու համար
նենդաւորութիւն մ'ըրի . ապա թէ ոչ ստիպեալ
էր նա անպատճառ մեկնիլ : Ի՞նչ պիտի ըսէիր այն
ատեն :

— Կը խոստովանիմ թէ մեծ միշտ պիտի ու-
նենայի :

— Կը տեսնե՞ս այժմ , բարեկամ , երբ մարդ
այնպիսի գործ մը կը գործէ , որ մեզ պայծառ
չերեւար , բայց որու մէջ պատասխանատուու-
թիւն կայ , պէտք է միայն մտածել թէ այս դաւն
ուրիշէ մը կազմուած է և նոյն իսկ մեզ դէմ , ա-
սով չուտ կը հասկցուի որ լա՛ւ է թէ ոչ : Արդէն
Շառլ մեկնիլ կ'ուզէ : Դու զիտես որ որոշուած է
թէ Աէն—Ժօրժի Միջօ մօրելզօրորդիս իւր աղջիկն
կնութեան պիտի տայ նմա , և որովհետեւ աղջիկն
դեռ տասն և հինգ տարեկան չկայ . Շառլ յար-
մար ատենին պիտի վերադառնայ ամուսնանալու
համար :

Շառլ արդարեւ անյաջող բաղդ մ'ունեցաւ
վիճակահանութեան մէջ և մօրը վշտաց հակառակ
որոշուեցաւ որ պաշտօնապէս կանչուելէ տապաջ
մեկնի , որպէս զի ընտիր գնդի մը մէջ հաստա-
ռուի :

«Տղաս , ըստ Մօրիս , գնդաճիդ բանակի մը
մը մէջ իբրեւ դարբին մոնել ջանա՛ : Շաթօ—Ռու-
դտնուող նոր զօրած ողովի հազարասկետին ծառա-

յած եմ ատենօք, երբ նա դեռ տեղակալ էր. նա ինձ մեծ մարդ ասիրութիւն ցուցուց. ուստի քեզ նամակ մը կու տամ անոր յանձնելու համար, վստահ եմ թէ քու գործդ լաւ պիտի կարգադրէ :

Յիրաւի, այդ զօրապետն երկրորդ գնդամիդ բանակին մէջ դրաւ զՇաոլ: Այս բանակն Պղանսօնի մէջ պահպանութիւն կ'ընէր:

Շառլ՝ իւր ընտանեաց հրաժեշտ տալէ յետոյ, Պղանսօն գնաց. հոն հասած ատեն, անոր փոքր քննութիւն մ'ընելով զայն կարող գտան և զինուորական դպրոցին մէջ զայն ուսուցիչ աշակերտ կարգեցին: Կարդալ, դրել և հաջուել ուսած ատեն, նաեւ երկրաշափական գծագրութեան և մաթէմաթիգական գիտութեանց վրայ ալքիչ շատ ծանօթութիւն կ'ստանար: Իւր հեղահամբոյր բնութեամբ և հանձարեղութեամբ իւր գլխաւորաց ուշն շուտով գրաւեց և մնոնց վստահութեան արժանացաւ:

Շառլ սահմանաց վրայ կը հսկի.

Հաղիւ մէկ երկու ամիս անցեր էր Շառլի բանակին մտնելուն վրայ, երբ հրաման եղաւ իրենց՝ սահմանակից քաղաք մը երթալ, արգիլելու համար մաքսանենգութիւնն, որ ապատ կերպով հոն կը կատարուէր: Շառլ իւր ընկերներէն միոյն հետ աղքատ կնոջ մը տունը դրուեցաւ, որ հինգ զաւակ ունէր, ամենքն ալ աղտոտ և պատառատուն զդեստներով, որոց ամենէն կրտսերն դեռ ոտքի

չէր ելած: Անկողին մը միայն կար հոն և տղայք սենեկին մէկ անկիւնը դիզուած յարդերուն վրայ կ'անցընէին գիշերն:

Երկուո գնդամիդներն այս խեղճ կնոջ տուին իրենց օրական մսի բաժինն, որոյ վրայ Շառլ քիչ մ'ալ ստակ աւելցուց պատուիրելով որ տան մէջ եղողներուն ամենուն համար ալ թան պատրաստէ: յետոյ ընթրեաց ատեն երկուքն ալ մէկ մէկ շիշ գինի բերին:

Երբ սեղան նստան, Շառլ գթաց տեսնելով որ խեղճ տղայք պնակներուն վրայ հակած՝ թանն ու միսը կը հոտոտէին, և մեծ տպաւորութիւն մ'ըրին անոր վրայ տղոց անյաղաբար բոլոր կերպակուրն լափելը:

«Ուրեմն այրի էք դոք, տիկին, ըսաւ, վասըն զի հոս մարդ չեմ տեսներ:

— Ոչ, ըսաւ պղտի տղայ մը, հայրս պահուեցաւ, իմանալով որ քաղաքին մէջ զինուորներ եկեր են:

— Կը լոե՞ս, թշուառական տղայ, ըսաւ մայրըն սարսափահար, կ'ուզե՞ս ուրեմն մեր ամենուն կորստեան պատճառ ըլլալ:

Շառլ չըել ձեւացուց: Իւր աչերն անդադար տղոց վրայ դարձուցած էր, որք ուրախութեան ցոյցերով իրենց տրուած զինին կը խմէին: Մայրն դիտելով որ Շառլ իւր տղոց կը նայի, ալը խուր ժամանով մ'ըսաւ.

«Ցանախ շիմելուն այսպէս ձեւեր կ'ընեն» :

Հետեւալ օրն Շառլ քաղաքին մէջ շընագայենով, ամեն տեղ մի և նոյն ծայրայեղ աղտեղութիւնը և թշուառութիւնն գտաւ, որ իրեն մեծ աղ-

դեցութիւն ըրած էր իւր բնակած տան մէջ : Այս աւերեալ քաղաքին դիմացն , ուրիշ սիրուն քաղաք մը կար , որ այս կողմինէն միայն գետով մը բաժնուած էր , հոն մեծ գործունէկութիւն մը կը տիրէր : Բնակիչներն , զրոս հեռուէն հրապարակին վրայ տեսնելն դիւրին էր , մաքուր և լաւ հագուած էին : Շառլ էխս օրուան ճաշի ատեն տուն մտած ատեն , զինքը ընդունող կնոջն ըստ :

«Ի՞նչալէս կ'ըլլայ որ այս քաղաքին գետին անդիի կողմի մասն հարուստ և մաքուր է , մինչդեռ ընդհակառակն այս կողմն աւեր և թշուառութիւն կը տիրէ :

— Ա՛հ , վասն զի Զուիցերիոյ այն քաղաքին մարդիկն ամենքն ալ կ'աշխատին և ասով հարուստ կ'ըլլան :

— Գաղղիական քաղաքին մէջ ի՞նչու չեն աշխատիր :

— Վասն զի սովորութիւն չկայ . գետին անդիի կողմը գտնուողներն ժամացոյցներ կը չինեն , զրոս մեր քաղաքի մարդիկ մաքսանենդութեամբ կը փախցնեն :

— Բայց գիտէք թէ ձեր երկրին մարդոց արհեստն գէշ և ստորին է . մուտքին հարկն արգիլելով՝ տէրութիւնը կողոպտելն կամ մասնաւոր անձ մը կողոպտելն բոլորովին նոյն բանն է : Եւ կ'երեւայ թէ այս արհեստով մարդ չյաջողիր երբէք հարստանալ , ըստ Շառլ , աւերեալ սենեկին վըրայ հայեցուածք մը ձգելով :

— Ա՛հ , Աստուած իս . ոչ , այս արհեստով ալ բաւական ստակ կը չահին , բայց ամեն եղանակի մէջ դիշերներն հսկելու և ասդիմ անդին վազելու

համար , պէտք է քիչ մը արբենալ : Մաքսաւորներն ալ այնպէս լաւ պահպանութիւն կ'ընեն որ յաճախ մեր մարդիկ տուն չեն կրնար դառնալ . վերջապէս այս արհեստն ունեցողը միշտ ինքզինքը պահելու է , չարունակ երկիւղի մէջ ըլլալով . ասի թշուած և տիսուր կեանք մէկ :

— Ինչո՞ւ ուրեմն դուք ալ ժամացոյց չէք միներ , զոր Գաղղիոյ մէջ վաճառելն խիստ դիւրին է , փոխանակ ձեր դրացի Զուիցերացւոց շինածներն նենդութեամբ փախցնելու : Այն ատեն բոլոր շահը ձեղ կ'ըլլայ : Ասի ձեր վարած թշուած և վրտանդալից կեանքէն հարկւր անդամ աւելի լաւ չէ : Մարդ երբ աշխատի , մեծ գոհունակութիւն կ'ըզդայ իւր սրտին մէջ :

— Երբեմն իմ ամուսինս ալ այդպէս կարծիք ներ կը յայտնէ . բայց ո՞ւր և ի՞նչպէս կարելի է աշխատել ուսանիլ երբ կանոնաւոր հագուստ մը գնելու հարկ եղած գումարն կը պակսի , վասն զի հարկ է որ ուսանողն իւր վարպետին վարձք տայ :

Երբէք Շառլ աշխատութեան մեծ առաւելութիւններէն այնպէս զգալի կերպով յափշտակուած չէր , ինչպէս աեսնելով այս երկու քաղաքաց հակապատկերն , որք նոյն անունը կը կրէին , դէմ առ դէմ շինուած և երկուքն ալ միեւնոյն գետին վըրայ , որ զիրենք կը բաժնէր : Մէկ կողմն թշուառութիւն , տղիսութիւն և մօլութիւն . միւս կողմն բարեկեցութիւն և բարոյականութիւն : Բոլոր տեսածներուն վրայ վշտացեալ մեկնեցաւ Շառլ շարթ մը մնալէ յետոյ այն քաղաքին մէջ , որ ատեն ինքն իւր ստակով սնոյց խեղճ կնոջ ընտանիքն :

Շառլ Ալժերի կ'երրայ.

Շառլ քիչ ատենէն ուազմապետ անուանուեցաւ : Երկու տարի Պղանսօն մնալով , իրաւունք ունէր վեցամսեայ արձակուրդ մ'ստանալ , երբ իւր բանակն Ալժերի զրկուեցաւ : Գաղղիան թողած ատեն , խեղճ տղուն սիրտն փղձկեցաւ , վասն զի կ'զգար թէ ալ իւր ընտանիքն քիչ ատենէն չէր կրնար տեսնել երբ այնքան հեռի կը գտնուի :

Շալօնէն բանակն նաւ նստաւ , որ Սաօնէն մինչեւ լիոն և Ռոմէն մինչեւ Ավինեօն իջաւ և այս քաղաքէն Մարսիլեա անցաւ ցամաքային ճանապարհորդութեամբ , որ քանի մը օր հանգչելէ յետոյ , գնդաժիդներն նաւ նստան Ալժերի երթալու համար : Շառլ ծովը տեսնելով մեծ զարմանք զգաց : Ավրիկէ հասնելէն անմիջապէս վերջը իւր հօր նամակ մը գրեց զայն հանդարտեցնելու և իւր յաջողակ ճամբրորդութեան վրայ լուր տալու համար :

«Բարի հոյրա , կը գրէր նա , ահա այժմ ձենէ խիստ հեռի եմ և թերեւս երկար ատեն այդպիս պիտի ըլլայ : Զեմ կրնար և մանաւանդ շեմ ուզեր ձեզ ըսել Գաղղիան թողած ատեն զդացած վիշտ , մանաւանդ որ վերջին անգամ զձեզ չէի համբուրած : Բարի մայրս և սիրելի մեծ հայրս չատ պիտի վշտանան այս բանիս վրայ : Եթէ ձենէ հեռի գըտնուելուն ցաւն չունենայի . կարի գոհ և ուրախ պիտի ըլլայի այս զեղեցիկ երկրիս մէջ գտնուելուն որ մերինէն չատ տարբեր է :

«Ճամբրուն վրայ . Լիոն գեղեցիկ քաղաքին մէջ իջեւանեցանք , որոյ վրայ յաճախ ինձ խօսած էք

և ես հոն ամեն քայլիս զարմանքէ զարմանք կը գլորէի : Հոն տեսածներուս ամենէն աւելի ուշադրութիւնս զրաւողն այն բաղդատութիւնն է զրը կրցայ ընել բուրփիւղուէ մետաքս ծախուած խանութներուն և ամբողջ հիւսեալ և ձեւաւորեալ ծախուած խանութներուն մէջ և վերջապէս այն գեղեցիկ մթերանոցներն , ուր զետեղեալ են այն շքեղ կերպասներն զորս Եկեղեցւոյ իւր զարդ կը գործածեն : Ես ինքնին ըսի թէ չատ ժամանակի և աշխատութեան կարօտ է , որ այն պղտիկ չերամներն կերպարանափախուին այն փայլուն մետաքսեղինաց , որոց համար կ'ըսուի թէ աշխարհիս մէջ իրենց նըմանը չունին :

«Աիրելի հոյր , ես յաճախ կը չանացի ինքնիրենս ծովի գաղափար մ'ունենալ մեր փոքրիկ ճակեներն տեսնելով , բայց երբէք այսպէս սքանչելատեսիլ և հոյակապ տեսարան մը երեւակայել կարող չէի եղած , երբ բոլորովին ծովուն ընդարձակութեան մէջ էինք և միայն երկինք և ջուր տեսնել կարելի էր . իմ յիշողութեանս մէջ եկան դիզուեցան Պ. Ճողովրդապետին՝ Աստուծոյ զօրութեան վրայ ինձ խօսածներն և այն ատեն միայն եւս առաւել ըմբռնեցի :

«Ծնայք բարեւաւ , սիրելի հոյր և բարի մայրիկս . իմ յարգանաց ողջոյներս կը մատուցանեմ սիրելի մեծ հօրս . իմ սիրասուն Գլէմանթինս կը համբուրեմ : Եթէ Միշօ մօրեղբօրորդին տեսնելուառիթ ունենաք , իմ յարգանքներս իրեն մատուցանելիդ կը խնդրեմ և մանաւանդ իւր աղջկան , առոր կ'աղջչեմ զիս բնաւ չմոռնալ :

«Իմ մեծարանքս կը մատուցանեմ Պ. Ճողո-

վրդապետին և Պ. Ռըմիի , որոց ընտիր խրատներն ինչպէս նաեւ ձերիններն երբէք յիշողութենէս չեն վրիպած և միշտ ինձ լաւ ընթացք մ' ունենալու բարի առաջնորդներ են և պիտի ըլլան» :

Զեր հնազանդ և ակնածող որդին ,

ՇԱՌԻ ՖԵՌԱԿԻՒ

Մօրիս կ'այցելէ Միշօ մօրեղօրորդուոյն .

Մօրիս այս նամակն հասած ատեն բացակայէր , իւր մօրեղօրորդին Միշօն տեսնել գացած էր , «Ծ Ան - Ճորժի մէջ կտաւագործ էր , և որ հացկերոյթ մ'ըրաւ դարբնին . վասն զի Միշօ իւր հօրաքեռորդւոյն Մօրիսի վրայ հպարտ էր և իւր բարեկամներն հրաւիրած էր միատեղ ընթրելու , զայն աւելի պատուելու դիտաւորութեամբ :

Հետեւեալ օրն , որ կիրակի էր . Միշօ ցուցուց Մօրիսի՝ նորա կնոջ ֆրանսուազի կտաւն որ գեռ գործիքին վրայ լարուած էր . Մօրիս զայն լաւ գործուած և թելերն միացած գտած ըլլալուն դոհ եղաւ : Յետոյ եկեղեցին գացին պատարագ լսելու համար : Երբ գուրս կ'ելէին անկէց , ձկնորսութիւնն վարձողին հանդիսակեցան , որ Միշօի բարեկամներէն մին էր : Ոյս մարդն առաջարկեց անոնց որ հետեւեալ օրն , կէս օրէն յետոյ երթան ձըգուած ուռկանն քաշելու . նոքա ալ սիրով ընդունեցան :

Յետոյ Միշօ՝ զիւղին շրջականներն պաըտցուց զՄօրիս :

«Զեր բնակութեան տեղւոյն դիրքն աւելի սի-

րուն է քան թէ մերը , ըստ Մօրիս . խիստ երջանիկ պիտի ըլլայի , եթէ քեզ պէս ամեն ատեն աշացս առջեւ ունենայի այսքան գեղեցիկ գետ մը իւր կղզեակներով և անտառախիտ ափերով :

— Մօրիս , յիրավի գետն գեղեցիկ է , բայց իւր մօտն գտնուողներուն ամեն ատեն հաճոյալից չէ : Երբ ջրոց աճումներն զօրաւոր են , գետն կու գայ մինչեւ մեր տունը կը հասնի . ինչ որ ամեն քանէ աւելի առողջութեան հակառակ է :

Հետեւեալ օրն , ձկնորսը կոչեց երկու ազգականներն և ձկնորսութիւնն սկսաւ :

«Գետին ջրերը շատ բարձրացած են , ըստ նաւազարն , կաւանական է որ մեզ գէշ խաղ մը խաղան : Միշօ , քու տանդ քով կաղնիի տախտակներու դէզեր ունիս , որք առանց հրամանիդ ծռվուն մէջ յառաջնալով կրնան միայնակ մինչեւ Նանթ հասնիլ :

— Ինչպէս որ գիտէք , անոնք իմս չեն . ես միայն վարձքով զանոնք պահող եմ և դաշնոց պայմաններուն համեմատ , ես ջրոց աճումէն յառաջ եկած զեղծմանց պատասխանատու չեմ : Նաեւ այս ալ կայ որ Շէս գետն երբէք բարձրացած չէ մինչեւ փայտանոցն որ իմ տունէս աւելի գետէն հեռի կը գտնուի :

— Գետն շատ փրփրալից է և վախնամ թէ այս գիշեր հանդիսաւ քուն պիտի չկրնանք ունենալ : Այս գիշեր հանդիսաւ քուն պիտի չկրնանք ունենալ :

Մօրիս և Միշօ տուն մանելով , ճարճատիւն բոցերով կրակարանի մ'առջեւ նստան . վասն զի գետին խոնաւութիւնն անոնց մարմնոյն թափանցած էր , և յետոյ զուարթութեամբ ընթրեցին իւրենց բերած ձկով :

«Բայց ո՞ւր է անդրանիկդ , հարցուց Մօրիս : — Տէօլս գացած է , կնոջս ազգականներէ միոյն քով . որ կտաւ հիւսելու նոր գործիք մը հնարելու վրայ է . բայց երբ գործն յաջողի , տղաս նորէն հոս պիտի դառնայ , վասն զի երկուքս հազիւ կրնանք մեզ յանձնուած գործոց հասնիլ » :

Յորդումն ջուրց .

Հետեւեալ առաւօտուն , հազիւ արեգակն ծած գած էր , երբ Մօնիս ընդուստ արթնցաւ խուլ մուընչ շիւնէ մը զոր նախ կայծակի ճայն կարծեց , բայց այն ատեն փոթորկայոյդ եղանակին մէջ չէին : Իսկոյն ջրոց զեղման աղմուկն ըլլալը հասկցաւ դարսինն , վասն զի առաջին անգամը չէր որ կը լէր , ուստի դուրս ելլելով ուղղակի Միջոյի սենեակը վազեց , որ արդէն ելած էր , ինչպէս նաեւ իւր կինն որ կը փութար տղայքն հաղուեցնելու :

«Ո՞հ , իւեղմ Մօրիս , ըստ կինն , եթէ մեզ օգնութեան եկող ըլլայ , ամենքս ալ կորսուած ենք : Ճէռ գետն արդէն մեր դուռը հասած է և այլ եւս պիտի չկրնանք դուրս ելլել :

Երկու փոքր տղայք իրենց մօր այս խօսքերն ըլլով , աղաղակել սկսան :

Մօրիս բաց գտնուած պատուհանէն նայելով տեսաւ արդարեւ որ գետն իւր կատաղի ալիքներն տան որմերուն կը բաղխէր :

«Պէտք չէ ողբով ժամանակ անցընել , պատուախանեց , ջանանք աղատել ինչ որ կարելի է : Միջօ , ո՞ւր են քու թղթերդ և ստակներդ , զանոնք

կնոջդ տուր , որ տղոց կետ վերնայարկն պիտի ելլէ , վասն զի արդէն հոս հինդ հարիւրորդամէթիք ջուր կայ և յորդումն հետպէկետէ կ'աւելնայ : Զեր ձերմակեղէններն ու հաղուստներն պիտի ծրարենք . անհնար է որ ձեզ օգնութեան հասնող մը չըլլայ . շուտ աշխատախնք առանց ատեն կրուսցնելու :

— Ձեղ պիտի օգնեմ , ըստ Ալւզան որ արդէն տասեւեօթ տարեկան էր , գիտեմ թէ մայրսթանկագին բաներն ուր կը դնէ , և հարկ է որ նախ զանոնք առնենք :

Մօրիս այս մատաղ աղջկան հանճարեղութեան և պաղարիւնութեան վրայ կը զարմանար , որ երբէք խելքն չըր կորսնցնէր՝ հետպէկետէ աճող վտանգի մ'առջեւ :

Անդադար ջուրը կը բարձրանար , և արդէն մինչեւ ծնկերնին ջրոյ մէջ էին երբ յետին ծրարն պատրաստեցին : Միջօյի կինն սարսափէն կէս մեռեալ դարձած էր , իւր գրկաց մէջ չղածգական կերպով իւր ամենէն փոքր տղան սեղմած , որ հասզիւ չորս տարեկան էր և որ աւելի զարմացեալ քան թէ սարսափահար կը թուէր :

Միջօ և Մօրիս անշարժ կեցած՝ խօսելու չէին համարձակիր :

«Պէտք էր որ զքեզ ալ այս վտանգին մասնակից ընէի , ըստ վերջապէս Միջօ . իմ գժբազդութիւնս ինձ բաւական չէ , նոյն իսկ քուկինիդ ալ պատճառ եղած պիտի ըլլամ :

— Իմս փոյթ չէ , ըստ Մօրիս , նախ պէտք է այս տղայքն և իրենց մայրն աղատել . լողալով ալ կրնանք բաւական գործ տեսնել : Ահա՝ վարն երկու մեծ փայտեայ լաստեր կը նշմարեմ , որք իրաւ

րու շատ մօտ են և կարծես հոսանքն մեր կողմը
կը բերէ զանոնք . եթէ դան և տան զարնուին ,
բաղսումն սոսկալի պիտի ըլլայ . օ՞ն , բոլոր զօրու-
թեամբ օդնութիւն կանչենք » :

Ամենքն 'ի միասին դէպ 'ի լուսանցոյցքն վազե-
ցին օգնութիւն կանչելու համար , քանզի այն կողմն
միայն գիւղին վրայ կը նայէր , երբ տեսան որ ձեկ-
նորսաց գլխաւորն իրենց տան կողմն կու դար . իւր
նաւակն յառաջ մղելու մեծ դժուարութիւն կը
կրէր , թէեւ երկրորդ անձ մը իրեն կ'օգնէր :

« Այրտ առէք , տիկին , ըսաւ Մօրիս խեղճ կնոջ
դառնալով , չնորհակալ եղիք Աստուծոյ որ յար-
մար ժամանակին ձեզ օգնութիւն կը դրէք » :

Միշօ եւ իւր ընտանիքն վտանգին կ'ազատին .

Վերջապէս նաւն յաջողեցաւ մօտենալ , և
ձկնորսն աղաղակեց որ իրեն պարան մը նետեն ,
որոյ մէկ ծայրն առաջուընէ տան աստաղին հաս-
տատապէս կապեն : Յետոյ Մօրիս նաւակին մէջ իջ-
նելով՝ ըսաւ Միշօի :

« Նախ կինդ իջեցուր , կ'օգնեմ քեզ :

— Ոչ ընաւ , ըսաւ խեղճ կինը , մինչեւ որ
բոլոր զաւակունքս վտանգէ չաղատին , տունը պի-
տի չթողում , նոյն խել եթէ մեռնիլ հարկ ըլլայ
յանձն պիտի առնեմ :

— Տիկին , եթէ այդպէս ժամանակ կորսնցնել
տաք մեզ , կարելի է որ ամենքս ալ կորնչինք ,
վասն զի ջրոյն հոսանքը միշտ կը մօտենայ : Օ՞ն ու-
րեմն , Միշօ , տուր ինձ պկտիկ աղադ . լաւ , կիմա

միւսը ահա' անոնք ապահովութեան մէջ են . աղ-
ջիկդ այժմ ։

Մօրիս՝ Ավեզանը բռնելու վրայ էր երբ ալիք մը
գալով նաւակն տնէն քիչ մը հեռացուց . մայրն
սոսկալի աղաղակ մը հանեց . բարեբաղդաբար Միշօ
դեռ աղջիկն բռնած էր , որ , առանց այս զգու-
չութեան՝ ջրոյն մէջ պիտի խորասուզէր . վերջապէս
երկար նեղութիւններէ յետոյ , վասն զի ա՛լ նաւն
հանդարտ չէր մնար , մայրն ալ իւր որդւոց քով
զետեղուեցաւ :

« Այժմ ծրաբներն տուր , ըսաւ Մօրիս , դեռ
ժամանակ ունինք թէեւ , բայց պէտք չէ դանդա-
զիւ :

Ծրաբներն ալ նաւուն մէջ դրուեցան :

« Եւ իմ մանածս , ըսաւ Միշօ , հարկ է զայն
աղատել , վասն զի իմս չէ :

— Ա՛լ ժամանակ չկայ , ահա' երկու լաստերն
կը մօտենան և տանդ վրայ պիտի գտն ջախջախուինք
եթէ քու և մեր կենաց աղատին կ'ուզես , շուտ
ըրէ , շուտ նաւուն մէջ իջիր ։

Միշօ պարանին վրայէն սահելով նաւուն մէջ
իջաւ , զոր ձկնորսն գիւղին կողմն ուղղելու փու-
թաց , որ յորդեալ տեղէն բաւական հեռի բարձր
դիրքով վայր մ'էր :

Երբ նաւէն դուրս ելան , ամենքն ալ ներքին
բնագդումէ մղեալ՝ Եկեղեցւոյն ճամբան բռնեցին
Աստուծոյ չնորհակալ ըլլալու համար . հոն գտան
ժողովրդակետն և ժողովրդեան բարի մասն որք
վտանգի մէջ եղողներուն համար աղօթել եկած
էին :

Անկից ելլելով , տեսան որ փայտեայ լաստերն

Միշօյի տան անդադար կը բաղսէին : Խեղճ մարդն չկրցաւ աչքերն այն տեղէն վերցնել և մեծ ցաւօք իւր տան կործանելն և իւր կարասիքն ու տանիքը ջրոց մէջ անյայտ ըլլան տեսաւ :

«Ի՞նչ պիտի ընեմ այժմ, Աստուած իմ, գոչեց :
— Մօրեղբօրորդիդ իմ, ըսաւ Մօրիս, կը մոռանա՞ս թէ քառորդ մ' առաջ դեռ այդ տան մէջ էինք և կրնար պատահիլ որ անոր հետ անդնդոց մէջ խորասուզէինք: Տունդ ապահովութեան դրած չէ՞ս :

— Այս' բարեբաղդաբար, բայց առ այժմ ո՞ւր պիտի բնակիմ ընտանեօք :

— Մեր տունը, սիրելիդ իմ Միշօ, մեր տունը: Ֆրանսուազ զձեզ ամենքդ ալ ընդունելուն չատ գոհ պիտի ըլլայ: Անյապաղ կ'երթամ կառք մը վարձելու, դու քու բոլոր ունեցածդ ապահով տեղ մը դիր և կինդ ձեզ անհրաժեշտ կարեւոր եղածներն առնելով մասնաւոր ծրար մը թո՞ղ պատրաստէ :

Ճամ մը վերջը Միշօյի ընտանիքն Մօրիսի բնակած գիւղին ճամբուն վրայ էին :

Մօրիս կը բաջակերէ զՄիշօ .

«Ահա՛, սիրելի ֆրանսուազ, ըսաւ Մօրիս, կառքէն վար իջնելով, քեզ ընկերներ կը բերեմ » :

Երբ ամենքն ալ սենեկին մէջ ժողուեցան, Մօրիս պատմեց մի առ մի՝ Միշօյի պատահած դժբաղդութիւնն և իրենց վտանգներն : Ֆրանսուազ դոլդոջուն՝ իւր ամուսնոյն վիզը նետուեցաւ :

«Հանդարտէ, բարի կինս, ահա՛ ամենքս ալ ողջ առողջ ենք. ուստի ալ այս մասին վրայ չխօսսինք : Լաւ թան մը պատրաստէ մեզ և ես ամեն բան կարգի պիտի դնեմ, որպէս զի մօրեղբօրորդւոյս ընտանիքն, անհանգիստ չըլլայ հոս : Երկու փոքրիկ գործաւորներն յարդի շտեմարանին մէջ պիտի պառկին կամ գիւղին մէջ, եթէ բնակելու յարմար տեղ մը գտնեն, միւսն ալ ներքին խուցը թո՞ղ առնէ, այս կերպով երկու անկողիններն ինչպէս նաեւ սենեկակն ազատ կ'ըլլան Միշօյի և իւր ընտանեաց համար :

— Հապա իմ կտա՞ւս, ըսաւ ֆրանսուազ :

— Տիկին, պատասխանեց Միշօ տիսուր կերպարանքով, Աստուած միայն գիտէ թէ ո՞ւր է հիմա ձեր կտաւն, ինչպէս նաեւ ուրիշ մէկ քանի լմացած կտաւներ, զորս դեռ տեղը չէի յանձնած, յետոյ մանածն, կանեփն, հիւսելու գործիքն, վերջապէս ամեն ինչ :

— Ի՞նչ բանի վրայ կը խորհիս, ֆրանսուազ. անոնց բոլոր ըրած կորստեան քով քու կտաւդինչ է :

— Բայց ես անկից տասն երկու շապիկ պիտի շնէի քեզ, վեց շառլի և վեց ալ ինձ համար : Երեք տարիէ ՚ի վեր գիւղին ամենէն ճարտար կիներն զայն ինձ կը մանէին :

— Մինչեւ որ ուրիշ կանեփով նորէն մանել տաս, հիներն նորոգէ, ահա՛ դիւրին միջոց մը : Մարդ իւր կենաց մէջ ամեն փորձանք կը կրէ, ֆրանսուազ, և պէտք է օրհնել զԱստուած, եթէ վտանգներն ասկէ աւելի զօրաւոր չըլլան :

Բոլոր դրացիներն եկան զՄիշօն տեսնելու, և

Ժողովրդապետն իմանալով թէ իւր մխիթարութեանց կարօտ եղող անձինք կան, չյապաղեցաւ ինքն ալ դարբնոյն տռնը մտնելու :

Այս մեծ աղէտքին պատութիւնը լսելէ յետոյ, Պ. Ժողովրդապետն ըստ Միջօյի թէ փոխանակ վհատելու, պէտք է, ընդ հակառակն՝ որ իւր վստահութիւնն Աստուծոյ վրայ դնէ և մտածէ որ այս աշխարհիս մէջ դեռ ո՞րքան աւելի մեծ փորձանքներու պատահողներ կան :

«Յիրաւի, ըստ Մօրիս, մինչեւ ցայժմ միայն երջանկութիւն ունեցար. քու ծնողքդ քեզ պլոտիկ ժառանգութիւն մը թողուցին և զքեզ չարութեան երկրպալին և Աստուծոյ սիրոյն մէջ մեծցուցին; Բարի և վեհանձն կին մ'ընտրեցիր քեզ կենակից, որ քեզ չափ գործունեայ է և որ տուաւ քեզ գեղեցիկ զաւակունք, զորս վայելչասկէս կը մեծցնես: Դըժքաղդութիւնն մինչեւ ցարդ քեզ խնայած էր. դեռ ինչ կուզես, իւրաքանչիւր ոք ստիպեալ է իւր հարկն նմա վճարել: Արդ փոխանակ տրտոնջալով մնացած զօրութիւնդ ալ ցրուելու, նորէն սկսէ աշխատիլ՝ համարելով թէ դեռ նոր ձեռք կը զարնես գործի, և երբէք յետս նայելով անցեալն մի՛ յիշեր. ինձ պէս ըրէ, երբ կորուստ մ'ընեմ, ինչ որ հազուագիւտ չէ իմ վիճակիս համար, ա՛լ կորստեան վրայ չեմ խորհիր և աւելի քաջութեամբ աշխատելով կը մխիթարուիմ :

— Ի զուր կ'ըսես, Մօրիս, երբ կը խորհիմ թէ այնքան երկար ատենէ 'ի վեր տուած բոլոր աշխատութիւնն մէկ աւուր մէջ կը կորնչի, ուրիշ բանի մտածել չեմ ուզեր ալ:

— Միթէ դու աւելի նուազ յարատեւ աշխա-

տող պիտի ըլլաս քան զայն փոքրիկ սարդն, որոյ գործած ոստայնն ամեն օր տան տիկիններն կ'աւրելն և որ ամեն օր առանց խոնջման նորէն կ'սկսի զայն շինել :

— Ո՞վ տեսած չէ մրջիւնն, ըստ անդիէն բարի Ժողովրդապետն, որ քսան անդ ամ նորէն կ'սկսի տանիլ յարդի մը շիւլ կամ ճանձի մը թեւ իւր մրջիւնցին մէջ, առանց երբէք խորչելու իրեն դէմ ելած հազարաւոր արգելքներէն: Եթէ ուշի ուշով մեր բոլորտիքն նայէինք, մեզ շըջապատող փոքր կենդանիներէն շատ նորանոր դասեր պիտի ուսանէինք և մեզ այսքան թերութիւններ գործել տուող հպարտութիւնն պիտի թողէինք տակաւ առ տակաւ:

— Բայց Պ. Ժողովրդապետ, ըստ Միջօ, այս դժբաղդութիւնն բոլոր նպատակներս կը չնջէ. ես կ'ուզէի Ահւզանս Շառլի հետ ամեւսնացնել, և ասի մեծ գոհութիւն կը պատճառէր ինձ, բայց այժմ այդ կէտին վրայ բնաւ խորհիլ պէտք չէ, ա՛լ ամեն ինչ չնջուեցաւ:

— Ի՞նչու համար այդպէս, միթէ աղջկանդ արծէքն երկիւրնէ աւելի նուազցած է, միշտ մի եւ նոյն Ահւզանը չէ՝ որ կը սիրէ զԱստուծուած և զիւր ծնողքն, ու միշտ բարի, հլու, աշխատասէր և կանոնապահ եղած է. պատուաւոր անձի մը երջանկութեան համար ասկէց աւելի ինչ պէտք է, կը հարցնեմ քեզ:

— Խնդիրն այդ չէ Մօրիս, 5000 Փրանք մէկ կողմ դրած էի աղջկանս օժտին համար, բայց այլ եւս այդ գոհմարն պիտի շկրնամ տալ, քանի որ գրեթէ բոլորպին կործանած եմ:

— Լաւ, աւելի ընտիր. իմ փոքրիկ Ահւզանս

պիտի հասկնայ թէ մեք զինքն իւր արժաննեաց համար կ'առնենք և ոչ իւր ստակին համար, ըստ ֆրանսուազ, համբուրելով մատաղ աղջիկն որ լսիկ կուլար:

— Բայց տեսնենք Շառլ ի՞նչ պիտի ըսէ, հարցուց Միշօ:

— Այդ մասին անհոգ եղիր, Միշօ, ըստ Մօրիս. ես իմ տղաս կը ճանչնամ իւր բոլոր յատկութիւններովն, ուստի ես անոր պատախանատուութիւնն յանձն կ'առնում:

— Ես միտքս դրած էի փոքրիկ տուն մը գնել քանի մը դաշտերով մէկտեղ, չարունակեց Միշօ անդադար ողբարով, և ասկից աւելի ի՞նչ երջանկութիւն կ'ըլլար ինձ:

Ճողովրդապետն կը խրախոսէ զՄիշօ.

«Վա տեսնէք, բարեկամ, ըստ Հովհեր, թէ պէտք չէ որ մարդ բոլոր իւր երջանկութիւնն այս աշխարհիս վրայ դնէ. այդ երջանկութիւնն ա'յլ ուրեք է և անդ մեզնէ պիտի շնեռանայ, եթէ մեր բարի ընթացքով անոր արժանանալու բաղդն ունենաք: Մեք եկած ենք երկրի վրայ անդադար դժբաղդութեանց դէմ կոռուկու: Այս յաւիտենական պատերազմն է որ մեր հոգւոյն զօրութիւններն հաստատ կը պահէ և զանոնք եւս առաւել կը կրկնապատկէ արժանի ընելով նորէն առ իւրեանց Արարիչն վերադառնալ: Աստուածային կամաց հնազանդ եղիք, վասն զի նա կ'ուզէ որ ընկձեալն՝ վերստին զօրանայ:

— Յիրաւի ես ալ ընկձեալ եմ, Պ. Ժողովը դապետ, խորհեցէք թէ տանս ապահովութեան համար տրուած ստակովն նորէն ուրիշ մը պիտի չկըրնամ շինել նախկինին նման: Յետոյ իմ կարասիքս ալ կորսուած են ինչպէս նաև տարեկան ցորեանս, և որ աւելի դժնդակէ, 800 ֆրանքէն աւելի կորուսի մանածին համար, որ իմն չէ, առանց հաշուելու ինձ յանձնուած չորս կտոր կտաւն: Եթէ այս վեստներն վճարելու համար ինձ ժամանակ չը թողուն, բոլորովն կորսուած եմ, ալ զօրանալու հնարն չկայ:

— Բայց, ըստ սայլագործն որ ներկայ էր, կարծեմ թէ օրէնքն կը ներէ չվճարել, Աստուածոյ կողմանէ զրկուած պատահարի մը մէջ կորուսուածին գինն:

— Զեմ գիտեր թէ օրէնքն ինձ կը ներէ չվճարել մանածն և կտաւն, զոր ջուրն տան մէջ մնացածներուն հետ քարշեց տարաւ, բայց սա գիտեմ որ խիզմ զիս կ'ատիաէ վճարել եթէ միջոց գտնեմ. շեմ ուզեր որ իմ վրաս վատահութիւն ունեցող անձինք իմ դժբաղդութեամբս նեղուին:

— Զեր խօսքերն արդար մարդ երու խօսքերն են, Միշօ, ըստ Ժողովրդապետն, և շեմ տարակուսիր որ ամենքն ալ ձեր ուղղամառութիւնն անշնալով, ձեզ պէտք եղած ժամանակն պիտի թողուն պարտքերնիդ վճարելու համար առանց դուք ձեզէն նեղուելու:

— Գալով ինձ, մինչեւ որ դործոցդ մէջ լսւ կերպով չհաստատուիս, կտաւն շեմ պահանջեր ՚ի քէն:

— Մորիս, եթէ այդ պէս է, դեռ չատ պիտի

սպասես : Հաշուելով թէ, իմ նոր տունս, անոր կարասիքն, յետոյ հիւսելու գործիքներն չատ սուզ պիտի նստին ինձ, կը տեսնեմ որ կտաւն և մաս նածն վճարելու համար բաւական ստակ պիտի չը մնայ ինձ :

— Հոս թողլով կինդ, Սիւզանն և պղտիկներն, դու Սէն—Ժօրժ պիտի երթաս քու երկիրներուդ մէջ ուրիշ տեղ մը որոշելու տանդ կառուցման համար . բայց զգուշացիր Շէո գետոյն մօտ տեղ որոշելէ, վասն զի այդ գետն իւր մօտն գտնուողներն հանգիստ շթողուր : Քու արուեստանոցիդ վրայ շինէ, զոր մէկ մէթրի չափ հողոցն մէջ պիտի իջեցընս . այսշափն բաւական է, նախկին տունդ գետնին հետ հաւասար էր և ես լսւ դիտեցի որ քու կինդ, հակառակ իւր խնամոց չէր կրնար խոնաւութենէն յառաջ եկած աղտեղութեան դէմ դնել : Այժմու տունդ բլուրին բարձրը շինէ, երեսը հարաւակողմն դարձուցած : Արեգակն առողջարար է և պիտի զուարթացնէ զքեզ երբ մառանին մէջ կ'աշխատիս : ԱԼ Շէո գետն տեսնելդ փոյթ շես ընէր, բայց հիւսիսային կողմն պատոհան մը բանալն անհրաժեշտ է որպէս զի օդն նորոգուի :

— Հանգիստ եղիր, Մօրիս, քու կարծեացդ պիտի հետեւիմ ։

Միշօ իւր տունն դարձաւ և Մօրիս իւր որդւոյն նամակ մը գրեց, մօրեզմօրորդւոյն պատահած դըժ-բաղդութիւնն յայտնելու համար :

Պ. Պէոքիօ՝ Մօրիսի յաճախորդ կը լինի .

Պ. Պէոքիօ, որ գլեկին ագարակն բռնած էր, իւր գործոց Պէոքթրանը կ'աշխատցնէր տասն տարիէ ՚ի վեր որ երկրին մէջ կը գտնուէր : Յաճախ կը յարդիմանէր զնա իւր անմոադրութեան և անհոգութեան համար զորս հետզհետէ կ'աւելցնէր : Վերջապէս համբերութիւնն հատնելով, Պ. Պէոքիօ եկաւ Մօրիսն գտնելու և հարցուց նմա թէ կ'ուղէ՞ իրեն գործոց աշխատելու համար պայմաններ հաստատել :

«Պարոն, ձեզ համար աշխատելուս շատ գոհ պիտի ըլլամ, բայց խեղճ Պէոքթրանն ալ շահելու պէտք ունի և ես շեմ ուզեր անոր յաճախորդներն ինձ դարձնել :

— Քսան անգամէն աւելի իմացուցի իրեն թէ զինքը պիտի թողում . այս իրիկուն այնքան դժգոհ էի իրմէ որ ալ բացարձակապէս ըսի թէ ասկից վերջն ինձ համար պիտի չաշխատի : Նեթէ խզնի տաղնապով չէք ուզեր անոր տեղ ինձ աշխատիլ, Կրասէյ սկիտի երթամ որ արդէն շատ դարբիններ կան պատրաստ իմ գործոցս աշխատելու . վասն զի ինչպէս ամեն վիճակի նոյնպէս և ձերինին մէջ ալ մեծ մրցում մը կայ և իւրաքանչիւր ոք կը չանայ իւր դրացւոյն յաճախորդն պակսեցնել :

— Ի՞նչ կ'ուզէք, Պարոն, պէտք է որ ամեն մարդ հաց ձարէ : Ինձ գալով, տրտնջալու առիթ մը շեմ ունեցած բնաւ, վասն զի մինչեւ ցայժմ յաճախորդներէս և ոչ մին զիս թողած է : Նեթէ մարդ պատշաճ գնով լաւ վաճառք տայ, մրցումէն

նուազ կը նեղուի . նաեւ սա ալ կայ որ , ես իսկ
ուրիներուն հետ կը մրցիմ : Ուրեմն , Պարոն , ըսէք
ինձ ձեր պայմաններն , և ես ձեր առ իս ցուցուցած
նախամեծարութեան համար չնորհակալ եմ ձեզ :

Պ. Պէոթհօ իւր պայմաններն Մօրիսի հետ հաս-
տատելէ յետոյ ըստաւ .

«Ի՞նչպէս կ'ըլլայ որ դուք քաղաքը չէք հաս-
տատուիր , ինձ կը թուի թէ դուք այս աւանին մէջ
կը ձանձրանաք :

— ի՞նչու համար , Պարոն :

— Վասն զի դուք աւելի գիտուն և աւելի
հանձարեղ էք այն անձերէն որոց մէջ կ'ապրիք :

— Պ. Պէոթհօ , դրացիներէս ամենէն պարզն ան-
գամ այնպէս բաներ գիտէ զորս ես կ'անդիտանամ .
և ես մէկուն հետ երբէք երկար ատեն չեմ խօսած ,
նոյն իսկ այն կանանց հետ , որք դիշերային աշխա-
տութեան համար մեր տունը կը հաւաքուին , հե-
տեւաբար և ոչ ինչ ուսած եմ :

— Այդ խիստ կարելի է , բայց ձեզ տրուա-
ծէն հարիւր անդամ աւելի կը հատուցանէք :

— Այդպէս է , Պարոն : Երբ Պ. Ժողովրդա-
պետն , մեր ուսուցիչն և դուք ամենքդ , պարոնայք ,
ինձ հետ խօսիլ գաք , դուք ինձ նորանոր գաղա-
փարներ կու ատք , զորս ես կ'ընդունիմ . հետե-
ւաբար վայելուչ չէ՞ որ ձեր ինձ տուածն ես ալ
վեհանձնաբար իմ դրացիներուս տամ : Եթէ նոքս
վարժարան երթալու բարեբազդութիւնն ունենա-
յին , եթէ ինձ պէս բանակի մէջ ծառայած ըլլային ,
և եթէ Պ. Ժողովրդապետին ու Պ. Ռոմիի մտեր-
մութեան մէջ ապրէին , թերեւս քան զիս աւելի
արժէք կ'ունենային » :

Պ. Պէոթհօ կը զարմանայ , ծնողաց՝ իւրեանց
զաւակունքն վարժարան չդրկելուն .

«Այդ մասին կը տարակուսիմ , Մօրիս , ըստ
Պ. Պէոթհօ . բայց ի՞նչպէս կ'ըլլայ որ գիւղին աը-
ղայոց գոնէ կէսը վարժարան չեն յաճախեր , որ-
պէս պատշաճ է : Եթէ այս երկրին իգական սեռն
հոն գացած ըլլար , իւրաքանչիւր ոք մայր եղած ա-
տեն իւր զաւակունքն աւելի ընտիր դաստիարա-
կութեամբ պիտի կրթէր , աւելի հանձարեղ կեր-
պով զանոնք պիտի խնամէր , աւելի լաւ և աւելի
շատ պիտի աշխատէր , տուներն առաւել առողջա-
րար պիտի ըլլային . վերջապէս տասն տարիէն ա'լ
ձեր գիւղը պիտի չճանչնային , այնքան մեծ փոփո-
խութիւն կրած պիտի ըլլար :

— Ահ , դուք ալ ինձ պէս կը խորհիք , Պ.
Պէոթհօ , բայց եթէ այդպէս խօսիմ գիւղին կա-
նանց , նոքս կ'ըսեն թէ , երբ իրենք այնքան
ընտանեկան մտածմունքներն ունին , ուրիշ բանի
չեն յարմարիր բնաւ :

— Ի՞նչ անմիտ գաղափար . ճիշտ ձեր երկրին
մտրդիկն ալ այդպէս են , որ և իցէ գնով երկիր
մը դնելու համար մեծ պարտքերու տակ կը մնան .
կը հարցնեմ ձեզ թէ աւելի լաւ և խելացի չէ՞ր ըլ-
լար եթէ քիչ մը ստակ պահէին իրենց հողերն
բանեցնելու համար , փոխանակ նեղութեան մէջ
ապրելու , որ թշուառութեան կարի նմանութիւն
ունի : Այս փոքր զգուշութեան մէջ իրարու օդ նե-
լով՝ չեն ստիպուիր իրենց ցորեանն ծախել ստորին
գնով , այլ կը պահէն աւելի բարձր արժէք ունեցած

ատեն ծախելու համար : Այս կերպով իրենց փոքրիկ ստացուածքն կ'աւելցնեն : Բայց մարդիկն ալ իրենց կանանց պէս յամառ են և այսպէս շատ տարիներ պիտի գան անցնին առանց քաղաքակրթութիւնն այս երկրին մէջ մուտ գտնելու , ինչպէս որ մտած է զաղղիս ուրիշ քանի մը մասերուն մէջ : Ես այս կէտին վրայ խօսելէ ճանձրացած եմ :

— Ինչո՞ւ համար , անդադար խօսեցէք , Պարոն , առանց ձմնձրանալու : Ընտիր խորհուրդներն յաճախ կրկնելէ աւելի լաւ է , որ անոնց դործնական օրինակն դուք անձամբ տաք . մեր բարի ձուղվրդապետին պէս ըրէք , որ հազար խօսք կամ խրատ կը թողը որ հովը տանի , որպէս զի գոնէ մին հնձուելով պտղաբերի : Այս սուրբ մարդն լաւ գիտէ թէ ընտիր կարծիքներն պէտք է ըսել և կրկնել անդադար , այս կարծր և իրենց տղիտութեան հակառակ հարարտութեամբ լի գլուխներուն մէջ բողբոշնէ յառաջ : Նոքա չեն կարող հասկնալ թէ ժամանակներն ո՞րքան փոխուած են և թէ նա որ երբեմն իւր գործերն կրնար կատարել առանց կարդալ և գրել գիտնալու , այսօր առանց այդ առաջնորդին չկրնար ընել » :

Ժամանակի յարգն .

Այս միջոցիս մարդ մը որ երկու ձիերու սրարշաւ ընթացքով սայլ մը կը վարէր , Մօրիսի դաւիթն մտաւ :

«Այս կենդանեաց համար պատրաստ պայտեր ունի՞ք , ըստ անոր . քաղաք կ'երթամ և հարկ է

որ երեք ժամէն դառնամ . օ՞հ , երկար ատեն սպասել չեմ ուզեր :

— Այո՛ , Պ. Ուոպէն , ձեզ պէտք եղածն ունիմ և շուտ գործի պիտի սկսիմ : Բայց գուք շատ արագ կը վարէք ձեր ձիերն , եթէ չեմ սխալիր տասը տարի կայ որ այս ընթացքով երթանիդ չեմ տեսած :

— Ո՞հ , բարեկամ , պէտք է ժամանակին հետ ընթանալ հանգուցեալ հայրս արօրին յատկացեալ ձին չէր վազցներ , նոյն իսկ եթէ իւր կեանքն անտի կախեալ ըլլար , կարծէր թէ այս արագ ընթացքով ձին պիտի ձեռքէ ելլէր : Շիտակն ես ալ նախ անոր պէս կը խորհէի , բայց վերջապէս հասկցայ որ եթէ ամեն տեղ հետիոն քալել շարունակեմ , միշտ ամենէն ետ մնալով , իմ գործերս 'ի գլուխ պիտի չկրնամ հանել . այսպէս ըլլալուն կատարեալապէս համոզուած եմ :

— Կը հաւատամ ձեզ , վասն զի վերջապէս , աշխատութիւնն հարստութեան գլխաւոր աղքիւրն ըլլալով , որքան որ մարդ աշխատի այնքան ընչաւէտ կ'ըլլայ :

— Եւ որովհետեւ աշխատութեան ամենէն մեծ գործիքն ժամանակն է . յաւելցուց Պ. Պէոթհօ , ո՛վ որ բնաւ վայրկեան մը չկորսնցնելու շափ իւր գործերն լաւ կը կարդադրէ , միշտ այլոց վրայ առաւելութիւն մ'ունի :

— Ճշմարիտ է ըսածնիդ , Պարոն , և մարդիկ այդ մասին վրայ բաւական չեն մտածեր . կը ճանշնամ շատ անձինք , որք աշխատելու փափաք ունին թէեւ , բայց ասոր հակառակ՝ բարեկեցութիւն չունին , վասն զի ժամանակն պատշաճ կերպով գոր-

ծածել չեն գիտեր . ասով մեծ զրկումներ կրելու կ'ստիպուին , մինչդեռ աւելի կանոնաւոր աշխատութիւն մը կը ներէ իրենց քիչ մը խնայողութիւն ընել , լու ալ կեանք անցընելով :

— Մօրիս , պէտք է ցաւիլ անոնց վրայ որք մէկ ժամուան յառաջ բերած արդիւնքն չեն գիտեր , քանի որ իրենք և իրենց ընտանիքն նեղութեան մէջ են : Որքան որ կ'արհամարհէմ այն դործաւորն որ աղակութեամբ պէտք եղածէն կը զբրկուի , զոր կրնար դիւրին կերպով ընել , այնքան աւելի կը ցաւիմ այն դործաւորին դժբաղդութեան վրայ , որ յարատեւ և հանձարեղ աշխատութեամբ գոնէ չկրնար իւր ընտանեաց պէտքն մատակարարել :

— Որո՞ւ կ'ըսէք զայդ , Պ. Պէռթհօ , այնպիսի դժուարին ժամանակներէ անցած եմ ուր ոչ ոք տան մէջ ուտելու բան կը գտնէր երբ անօթութիւնն զինքը կը տանջէր , և մուրճն իմ բազկացս շատ ծանր էր երբ ստամբսն գոհացած չէր և թէ փոքր առշայք առաւտուն իրենց թանն չէին ունենար :

— Ուրեմն այդ պիսի աղէտից մէջ ալ գտնուած ես , Մօրիս :

— Ասիկա ճշգրտիւ աղէտ մը չէր , բայց ես աներս թողուցի առանց անոր տնէն բան մը բերելու , և թէեւ շատ գործ յանձնուեցաւ ինձ , յաճախորդներնէն ստակ չէի կրնար ուզել սակայն , վասն զի այս ընթացքս զանոնք քովիս հեռացնելու միջոց մ'էր : Հպարտութիւնս ինձ արդիւց աներոջս գիմելու և չուզելով իսկ պարտատէր մնալ , հարկ եղաւ քիչ մ'ատեն նեղուիլ :

Շառու Գաղղիա կը մտնէ եւ Պղանսօն կը դառնայ .

Մօրիս կանոնաւորապէս իւր որդւոյն վրայ տեղեկութիւն կ'ստանար : Օր մը , Ալմէրիէն նամակ մ' առաւ որով Շառու կ'իմացնէր հօրը իրեն Գաղղիա ընելիք վերադարձն և արգունական գլխաւոր օթեւանսապետի աստիճանին բարձրանալն : Այս ընւրն բուրը ընտանեաց մեծ ուրախութիւն պատճառեց : Ջրանսուաղ և իւր հայրն , Երբէք հանգիստ չին՝ մտած ելով թէ Շառու պատերազմական անյաջող բազդի ենթարկուած է , այնպիսի կլիմայի մը մէջ , որ խիստ տարբեր է Պէռթիէն , ուստի և նորա Գաղղիա դառնալու լուրէն հրապուրուեցան :

Շառու մարտկոցն , Երբէք տարի Ավրիկէ մնալէ յետոյ , զիսաւոր բանակին միացաւ , որ չուտով Պղանսօնը թողլու վրայ էր : Երիտասարդն բարեկամական սերտ կապերով միացած էր ուրիշ երկրորդական պաշտօնակալի մը հետ որ իւր ընտանիքն տեսնել պիտի երթար : Այս նոր բարեկամն առաջարկեց . Շառով իրեն ընկերանալ իւր ընտանեաց քով երթալու համար , ուստի և քանի մ' օրուան թոյլտուութիւն առնելնուն յետոյ մեկնեցան լեռնային ճամբայ մը բռնելով :

Երկու զօրտկաններն գիշերն հասան և այնպէս լսւ ընդունելութիւն գտան որ Շառու կարծեց թէ իւր ընտանեաց մէջ է :

Հետեւեալ առաւօտուն , Շառու լսեց բիրտ և միանգամայն սուր ձայնի մը քանի մը անգամ կըրկնուիլն . իսկոյն դուրս ելաւ այս ձայնին ի՞նչ ըլլալ

գիտնալու համար և կարի զարմացաւ երբ տեսաւ որ ամեն մարդ իւր տան ախոռը կը բանայ և կենդանիներն ինքնին կու գան միայնակ այն հրապարակն ուսկից ձայնն եկած էր :

Շառի ընկերն՝ նորա զարմացումն տեսնելով ըստ .

«Կովարածն իւր եղջիւրին մէջ կը փշէ՝ կենդանիներն կանչելու համար զորս արօտավայր կը տանի: — ի՞նչ կ'ըսէք, այս մարդն ամենուն կովարածն է :

— Այս՝ հասարակութիւնն անոր վարձքը կը վճարէ : իւրաքանչիւր ոք հոս ժամանակին յարգը բաւական կը ճանչնայ, ուստի մէկ երկու կովարածելու համար ժամանակաւ չըլլար :

— Յիրաւի, կը զարմանամ ձեր ըստածին : Մեր երկրին մէջ եռեսուն կով արածելու համար առ նուազն քսան հովիւ պէտք է, որք, առհասարակ մանր տղայք են :

— Մանր տղայք, ուրեմն դպրոց չե՞ն երթար :

— Դժբաղդարար ոչ այնչափ, որչափ պատշաճ է :

— Հոս մատաղ աղջկունք և տղայք ամենքն ալ վարձարան կ'երթան և երբ իրենց կարեւոր եղածն գիտեն, ալ անկէց վերջը իրենց ժամանակը եղածակար կերպով գործածելու մասին չեն տարակուաիր :

— Բայց ո՞ւր կ'երթան այս կանայք իրենց կաթնալից անօթներով :

— Պանիրի գործատունն կ'երթան :

— ի՞նչ տեսակ տեղ է այդ :

— Ասի առհասարակ պանիր շինելու յատկա-

ցեալ՝ տեղ մ'է, և զիտցէք որ իրեն հետեւեփառ կան սանիր ծախուածներուն գոնէ 3/4 ը մեր գիւղերէն կ'ելլէ : հետեւերար դու լաւ կրնաս ըմբռունել որ մէկ գոմի մէջ գանուած կովերուն մէկ երկու օրուան կաթն բաւական չէ այս ահագին պանիրներէն մին շինելու :

— Շատ հետաքրքիր եմ, բարեկամ, այդ պանրի գործարանն այցելել, եթէ կարելի է :

— Խիստ գիւրին է . իմ քեռցս կը հետեւինք որք իրենց կաթն կը տանին հոն և երէկուանին սերն կ'առնեն երեսէն » :

Երկու բարեկամք ներս մտան և տեսան պանրագործն, որոյ ստակն գարձեալ հասարակութիւնն կու տար, որ իրեն բերուած կաթն կը չափէր և իւրաքանչիւր կնոջ համար փայտի կաորի մը վրայ այնքան նիշ կ'ընէր ողքան լիսոր կը պարունակէր կաթն, ինչպէս հացագործներն սովորութիւն ունին ընելու մատակարարած հացերնուն համար : Նոյն օրուան կաթն զատ մէկ կողմ զրուած էր, որպէս զի իւրաքանչիւր կին հետեւեալ օրն իւր բաժնին վրայէն սերն առնելով կրակին վրայ դրուած մեծ կաթսային մէջ լեցնէ :

«Բայց, ըստ Շառլ պանրագործին, ի՞նչ կերպով կանանց ստակն կը վճարէք :

— Երբ վաճառականներն դան պանիրներն գնելու, ստակն առժամայն կը վճարեն, զոր կը բաշխուի կանանց մէջ իւրաքանչիւրին բերած կաթին համեմատ : Հոս ամենքն գիտեն թէ մէկ լիսոր կաթն պանիրի փոխուելով ի՞նչ արժէք ունի, ուստի և այս հաշիւներն գիւրին կ'ըլլան :

— Երբէք այս մասին վէճ շըլլար :

— Աչ, վասն զի ամեն ինչ արդարութեամբ կը
դործադրուի :

— Եւ ասի մեծ շահ յառաջ կը բերէ՞ :

— Ըստածէս կրնաք դատել: Մեր երկրն՝ այս-
ինքն Տուասի մէկ նահանգն, ամեն տարի երկու
միկոնէն աւելի արժող պանիր կը հայթայթէ վա-
ճառականութեան :

— Երկու միկոն, Աստուած իւր, միթէ կա-
րելի՞ է: ըսել է որ բոլոր այդ ստակն գիւղին կա-
նանց մէջ կը բաժնուի :

— Ամենքն ալ. գրեթէ շատ քիչ բան մէկ
կողմ կը դրուի :

Շառլ ընկերոջ հետ տուն դարձաւ բոլորովին
զարսացած այս տեսակ մը եղայրափութենէն,
որ երկրն բոլոր բնակիչներն մի եւ նոյն շահու մէջ
կը հաւաքէր, և հառաչեց ի խորոց սրաի մտածե-
լով որ իւր խեղճ Պէտթին իսկստ հեռի էր այս տե-
սակ ընտիր քաղաքակրթութեան աստիճանին հաս-
նելու :

Շառլ ժամացոյց մի գնել կ'ուզէ .

Շառլ ըստաւ օր մը իւր ընկերոջ որ զինքը իւր
տուն տարած և ընտանեաց ներկայացուցած էր .

«Յորմէ հետէ բանակին մէջն եմ, խնայողու-
թեամբ քիչ մը ստակ հաւաքեցի ոսկեայ ժամացոյց
թեամբ քիչ մը ստակ հաւաքեցի ոսկեայ ժամացոյց
մը գնելու համար . թերեւս յիմարութիւն մ'է ,
բայց եթէ ստակս սրճարան երթալով վասնի , ինձ
բայց բարեկամներն ալ այն բազմութեան հետե-
ւեցան և ժողովրդեան լաւ դիրքէն գոհ եղան :

Համար, որոյ հակառակ չեմ 'ի ներքուստ . և քա-
նի որ այնպիսի երկրի մը մէջ կը գտնուիմ , ուր
ժամացոյց կը շննեն , կ'ուզեմ այս պէտքս լեցնել :

— Լաւ, ես ալ ժամացոյց մը պիտի գնեմ .
պառաւ կնքամայրս հարիւր Փրանք տուաւ ինձ ,
որով կրնամ հատ մը գնել : Պէտք է որ ասկից
քանի մը մղն հեռի եղած փոքրիկ քաղաքն եր-
թանք , ուր պիտի կարենանք բուն տեղէն առնուլ .
ասի ճամբայ ընելու նեղութիւնն կ'արժէ :

Երկու օրուան թոյլտուութիւն խնդրելէ յետոյ
կիրակի առաւօտ մը ճամբայ եղան , արեգական ծա-
գումէն առաջ : Հազիւ իրենց ճամբորդութեան
նպատակին հասնելու վրայ էին երբ Շառլ ըստ .

«Զարմանալի՛ բան , ինձ կը թուի թէ առաջին
անգամն չէ որ այս երկիրն կը տեսնեմ » :

Երբ քաղաքին մօտեցան , Շառլ կրկին գոչեց :
«Բայց ես կը ճանչնամ այս գետն , արդէն Զուի-
ցերիոյ այս քաղաքն տեսած եմ որ մեր դիմացն է ,
այլ երբէք հոս եկած ըլլալս չեմ յիշեր » :

Երկու զինուօրականք վերջապէս մտան Գաղ-
ղական երկրին մէջ , որոյ մաքուր և ուղիղ երեք
կամ չորս յարկերէ բաղկացեալ տուներով եզեր-
եալ փողոցներուն մէջ ժողովուրդն խոնեալ Եկե-
ղեցի կ'երթար պատարագ տեսնելու համար : Մեր
երկու բարեկամներն ալ այն բազմութեան հետե-
ւեցան և ժողովրդեան լաւ դիրքէն գոհ եղան :

Պատարագէն յետոյ , Եկեղեցին եղած տտեն-
նին , լաւ հագուած կին մը Շառլի մօտեցաւ և զնա-
իւր ընկերով հրաւիրեց մոնել համեստ երեւյթ-
ունեցող պանդոկի մը մէջ :

Երիտասարդ անձ մը ընդունելութիւն ըրաւ

այս երկու զինուրաց , սենեկին մէջ կային նաև չորս տղայք տարբեր հասակաւ և փոքրիկ աղջիկ մը հազիւ վեց տարեկան ամենքն ալ մաքուր և դեղիկ հաղուած :

Որովհետեւ Շառլ իրեն եղած տարօրինակ ընդունելութենէն կարի զարմացեալ կ'երեւէր , զիւրենք հրաւիրող կինն ըստաւ . «Ուրեմն զիս չճանչցաք :

— Շիտակն խօսելով , Տիկին , գձեզ երպէք տեսած ըլլալս չեմ յիշեր , վասն զի այս երկիրն խեկած չեմ :

— Ուրեմն մոռցե՞ր էք որ հինգ տարի առաջ ձեր մէկ ուրիշ ընկերոջ հետ իմ տունս բնակեցաք :

— Ի՞նչ կ'ըսէք , Տիկին , այս այն աւերեալ քաղաքն է ուրեմն և սոքա ալ . . . :

Եւ լոեց մի առ մի տղայքն դիտելով :

Այո՛ , ասոնք այն թշուառ և ցնցոտիներով ծածկուած տղայքն են և այս ալ այն նախկին աղտոտ տունն է , այսպէ՞ս ըսել կ'ուզէք :

— Այո՛ այդպէս , բայց ամեն ինչ մեծ փոփոխութեան ենթարկուած է :

— Լաւ , Պարոն զօրական , դուք այս փոփոխութեան մէջ մաս մ'ունիք : Ամուսինս , որ մեր անկողնոյն ձեղունին վրայ պահուած ձեր ըսածներն կը լսէր , ձեր մեկնելէն անմիջապէս ետքը վար իջաւ . ձեր խօսքերն այնքան լաւ և ճշմարիտ գտաւ որ երր մեր քաղաքին վերակացուն քիչ մ'ատեն յետոյ հոս եկաւ խնդրելու այնպիսի մարդիկ որք իրենց յօժար կամօք ուզէին ժամադործութեան արուեստի աշակերտութեան մտնել . ամուսինս իւր երկու մեծ տղաքներով առաջին անդամ ներկայացողն ե-

զաւ , և արուեստէն այնքան գոհ եղաւ և ախորժեցաւ որ այժմ երկրին մէջ ժամացոյցի ճախարակի շինողներուն ամենէն ընտիրներէն մին է : Աս ալ փոքրիկ պանդոկ մը կը բանեցնեմ , և ահա՝ կը տեսնէք թէ այսօր ի՞նչ վիճակի մէջ ենք :

— ՈՒրեիլի Տիկին , շատ երջանիկ եմ , հաւատացէք . զնեզ այսպէս յաջողակութեան մէջ տեսնելով , վասն զի ձեր մեծ թշուառութիւնն յիս խորին աղդեցութիւն մ'ըշած էր :

— Պ. Պաշտօնակալ . ըստաւ ամուսինն , յանդէտս ձեր գնած միսով շինուած լաւ թանն խմեցի որ այնքան կազդուրեց իմ փոքրիկ տղայքս . ձեր գինիէն ալ խմեցի և կը յուսամ թէ պիտի չը մերժէք ինձ դուք ինչպէս նաև ձեր ընկերն՝ մեր տունն իջեւանիլ ամեն անդամ որ այս տեղէն անցնելու առիթն ունենաք :

Շառլ այս հրաւիրն սիրով ընդունեցաւ և ամենքն ՚ի միասին սեղան նստան :

Պանդոկ ապէտն կը պատմէ թէ ի՞նչ կերպով բաղարի այսպէս փոխուած է .

Ճաշի ատեն , Շառլ տղայքը կը գիտէր ուշադրութեամբ որք քաղաքավար և կանոնաւոր վարմունք մ'ունիին և կը խորհէր թէ նոքա ի՞նչ վիճակի մէջ էին առաջին անդամ տեսած ատեն : Հայրն անոր այս խորհուրդն գուշակելով ըստ :

«Այժմ այնպէս անյագ չեն , այնպէս չէ : Ասկից յայտնի կը տեսնուի թէ ամեն օր իրենց ախորժակին համեմատ կ'ուտեն :

— Բայց կ'աղաշեմ, Պարոն, բացատրեցէք ինձ
թէ ի՞նչպէս մեր աւերեալ քաղաքն այնպէս մեծ
փոփոխութիւն կրեց շատ քիչ ժամանակի մէջ : Ար-
դարեւ հրաշք մ'է այս : Գիտէ՞ք որ այն Զուիցե-
րիոյ քաղաքն, զոր ասկէ կրնանք տեսնել, այժմ
աւելի սիրուն չէ :

— Այս', հրաշք մ'է այս, ինչպէս որ կ'ըսէք
և զայն գործողն ալ մեր վերակացւն է : Ձեր մեկ-
նեկն քիչ ատեն յետոյ, նա քննութենէ մը դառ-
նալով հսու եկաւ, կարի վատաշեալ տեսնելով այս
դատարկ ժողովուրդն որ սասկալի թշուառութեան
մը որս եղած ոչ բարեւյն և ոչ շարին դաղափարն
ունէր : Նա մի առ մի ամենքս խրատելով, վերջա-
պէս յաջողեցաւ մեղ հասկցնել թէ փոխանակ Զուի-
ցերիոյ քաղաքին շահուն համար ժամացոյցներու
մաքսանենդութեամբ ապրելու յետին թշուառու-
թեամբ, աւելի պարզ և աւելի գիւրին էր Հարցո-
անալ նոյն իսկ մեր ձեռքով ժամացոյցներ շինե-
լով : Յետոյ նա Պղանսօն դարձաւ, անկից ալ Բա-
րիկ գնաց և թախանձանաց միջոցաւ մեր երկրին
յօժարամիտ մարդոց և տղայոց ժամագործութիւն
ուսուցանելու համար հարկ եղած հրամանն ստա-
ցաւ Տէրութենէն և Ընդհանուր ժողովէն : Նախ
շատ քիչ անձինք ներկայացան, վասն զի նենդաւոր
ամօթն շատերն գեռ շարութեան մէջ կը բռնէր :
Սակայն երբ նոքա իմացան որ մենք գոհ եմք աշ-
խատելի և բանի մը պակսութիւն չունինք (վասն զի
աշխատուղներուն առաջիններէն մին էի և ես) եկան
աշակերտութիւն ընելու մեզ հետ և քիչ ատենէն
այս անմատոյց մաքսանենդներն պատուաւոր դոր-
ծաւորներ եղան : Կը տեսնէ՞ք այսօր մեր վերակա-

ցուին հայրական խնամոց արդիւնքն :

— Ըսել է թէ ամեն ոք իւր վիճակն բարւո-
քած է :

— Ոչ կատարելապէս . գտնուեցան ծոյլեր որք
երբէք չհամոզուեցան աշխատելու, բայց և այնպէս
զգալով թէ այնքան աշխատողաց մէջ իրենք անօ-
գուտ էին, մեր երկիրն թողւացին փախան : Ուրիշ-
ներ, արուեստ սորվելու համար շատ ծեր ըլլալով,
քաղաքին մէջ փոքր վաճառականութիւններ հաս-
տատեցին : Ցզայք դպրոց կ'երթան ուր կը փութան
իրենց ուսումն աւարտել, որպէս զի իրենց կար-
գին արուեստ սորվին : Կիներն ալ կ'օգնեն իրենց
ամուսնոց, ժամացոյցի ոլոքներ և ուրիշ փախուկ
մասերն կը շինեն : Վերջապէս բարւոքումն ընդհա-
նուր է և այնքան լաւ զգացուած որ փութանակի
յաջորդեց մեծամեծ զրկմանց : Բայց ի՞նչ առթիւ
այս կողմերն եկաք, քանի որ մեր քաղաքին կրած
մեծամեծ փոփոխութեանց տեղեակ չէիք :

— Հոս եկայ ժամացոյց մը գնելու համար, վա-
սըն զի ընկերս որ Պղանսօնէն է, ըստ ինձ թէ հոս
աժան գնով և աղէկ տեսակ կրնանք դտնել :

— Ճշնարիտ ըսած է . զեեզ այժմ պիտի տա-
նիմ այն վաճառականին, որոյ համար ես և տղայքս
կ'աշխատինք . նա ձեզ շինուածին բուն գնովը պի-
տի վաճառէ, քանի որ ես ձեր հետն եմ » :

Շառլ, իւր ժամացոյցն գնելէ և երկու օր ալ
այս բարի անձանց հետ անցընելէ յետոյ, Պղանսօն
դարձաւ իւր ընկերոջ հետ :

— Բայց կ'ազաշեմ, Պարոն, բացատրեցէք ինձ թէ ի՞նչպէս ձեր աւերեալ քաղաքն այնպէս մեծ փոփոխութիւն կրեց շատ քիչ ժամանակի մէջ : Արդարեւ հրաշք մ'է այս : Գիտէ՞ք որ այն Զուիցերիոյ քաղաքն, զոր ասկէ կրնանք տեսնել, այժմ աւելի սիրուն չէ :

— Այո՛, հրաշք մ'է այս, ինչպէս որ կ'ըսէք և զայն գործողն ալ մեր վերակացուն է : Ձեր մեկնելէն քիչ ատեն յետոյ, նա քննութենէ մը դառնալով հսու եկաւ, կարի վշատցեալ տեսնելով այս դատարկ ժողովուրդն որ սոսկալի թշուառութեան մը օրս եղած ոչ բարւոյն և ոչ շարին դաղափարն ունէր : Նա մի առ մի ամենքս խրատելով, վերջապէս յաջողկցաւ մեզ հասկցնել թէ փոխանակ Զուիցերիոյ քաղաքին շահուն համար ժամացոյցներու մաքսանենգութեամբ ապրելու յետին թշուառութեամբ, աւելի պարզ և աւելի դիւրին էր հարցաւանալ նոյն իսկ մեր ձեռքով ժամացոյցներ չինելով : Յետոյ նա Պղանսօն դարձաւ, անկից ալ նարիդ գնաց և թախանձանաց միջոցաւ մեր երկրին յօժարամիտ մարդոց և տղայոց ժամագործութիւն ուսուցանելու համար հարկ եղած հրամանն ստացաւ Տէրութենէն և Ընդհանուր ժողովն : Նախ շատ քիչ անձինք ներկայացան, վասն զի նենգաւոր ամօթն շատերն դեռ շարութեան մէջ կը բռնէր : Սակայն երբ նոքա իմացան որ մենք գոհ եմք աշխատելէ և բանի մը սպակութիւն չունինք (վասն զի աշխատողներուն առաջիններէն մին էի և ես) եկան աշխարհութիւն ընելու մեզ հետ և քիչ ատենէն այս անմատոյց մաքսանենգներն պատուաւոր գործաւորներ եղան : Կը տեսնէ՞ք այսօր մեր վերակա-

ցուին հայրական խնամոց արդիւնքն :

— Ըսել է թէ ամեն ոք իւր վիճակն բարւուքած է :

— Ոչ կատարելապէս գտնուեցան ծոյլեր որք երբէք չհամոզուեցան աշխատելու, բայց և այնպէս զգալով թէ այնքան աշխատողաց մէջ իրենք անօգուտ էին, մեր երկիրն թողւացին փախան : Ուրիշներ, արուեստ սորվելու համար շատ ծեր ըլլալով, քաղաքին մէջ փոքր վաճառականութիւններ հաստատեցին : Տղայք դ սլրոց կ'երթան ուր կը փութան իրենց ուսումն աւարտել, որպէս զի իրենց կարգին արուեստ սորվին : Կիներն ալ կ'օգնեն իրենց ամուսնոց, ժամացոյցի ոլաքներ և ուրիշ փափուկ մասերն կը շինեն : Վերջապէս բարւոքումն ընդհանուր է և այնքան լաւ զգացուած որ փութանակի յաջորդեց մեծամեծ զրկմանց : Բայց ի՞նչ առթիւ այս կողմերն եկաք, քանի որ մեր քաղաքին կրած մեծամեծ փոփոխութեանց տեղեակ չէիք :

— Հոս եկայ ժամացոյց մը գնելու համար, վասն զի ընկերս որ Պղանսօնէն է, ըստ ինձ թէ հոս ածան գնով և աղէկ տեսակ կրնանք գտնել :

— Ճշմարիտ ըստ ածած է . զձեզ այժմ՝ պիտի տանիմ այն վաճառականին, որոյ համար ես և տղայքս կ'աշխատինք . նա ձեզ շինուածին բուն գնովը պիտի վաճառէ, քանի որ ես ձեր հետն եմ » :

Շառլ, իւր ժամացոյցն զնելէ և երկու օր ալ այս բարի անձանց հետ անցընելէ յետոյ, Պղանսօն դարձաւ իւր ընկերոջ հետ :

Շառլի նամակն .

Օր մը , երբ ֆրանսուաղ ինչպէս նաեւ իւր աղջիկն զրադեալ էին լրւացուած ճերմակեղիններն ծավելու , մինչդեռ իւր հայրն , ծերունի դարբինը Այս ֆրանսուա տը Սալի կենաց նկարագիրը կը կարդար անոնց , Մօրիս ներս մտաւ , նամակ մը 'ի ձեռին և գոչեց .

« Ուրախացէք , Շառլ կը վերադառնայ՝ այլ եւս զմեղ շթողլու պատճառաւ » :

Այս խօսքերուն վրայ , ամենքն ալ իրարու փարեցան ուրախութեան արտասուքներ թափելով :

« Շուտ մեզի կարդա՛ սա նամակը , Մօրիս , ըստ ծեր դարբինն , որպէս զի տեսնեմ թէ այդ տղան դեռ իւր մեծ հայրն կը յիշէ՞ :

— Լուեցէք ուրեմն .

« Սիրելի և բարի ծնողք իմ

« Մեր բանակն Պղանսօնը թողլու վրայ է որ և պէս զի Բարիզի մօտ Վէնսոնի մէջ պահպանու և թիւն ընէ , ուստի ազատ թողուցին այն ամեն և զինուորներն , որոց պաշտօնին լրանալուն համար և դեռ մէկ տարի կ'ուզէր : Երբ կարգն ինձ եկաւ և ներկայանալու , իմ զօրագետս ըստ ինձ թէ պէտք և չէ որ բանակն թողում . վասն զի քիչ ատենէն և բուն պաշտօնակալ կամ գնդաձիգներու ոստիկան և պիտի կարգուէի , որն որ յարմար թուէր ինձ , և ե թէ զինուորական ծառայութիւնը՝ գիւղի մը մէջ և դարբին լլալի՛ աւելի մեծ արժէք ունի : Այս ա մեն առաջարկութիւններն մերժեցի՛ զմեղ ինձ օ և բինակ առնելով , սիրելի հայր : Զեզի պէս ես ալ

« աւելի նախամնածար կը համարիմ ձեռաց աշխատ առութեամբ իմ սիրելացաց մէջ հանդիսաւ ապրիլ և քան թէ բանակին մէջ այնքան մեծ պատուց և համեմիլ : Ամենքն ալ շատ ջանացին զիս համոզեւ և լու , մինչեւ իսկ գնդապետն , ինչ որ մեծ պատիւ բերաւ ինձ , բայց 'ի զուր . վեհանձնաբար և խօսքիս վրայ անդրդուելի մնացի և կը յուսամ և տասն և հինգ օրէ առաջ զմեղ ամենքդ ալ գըր և կերւ երջանկութիւնն ունենալ : Դուք ալ ուրեմն և ինձ պէս երջանիկ եղիք , և այլ եւս շմտածենք և այս երկարատեւ բացակայութեան վրայ , որն որ և այնքան վիշտ պատճառած է բարի մօրս և սիրելի և մեծ հօրս : Միթէ իրաւունք չունէի՞ ըսելու թէ « նա իմ հարանեացս տօնին պիտի խմէ մեր կեւ և նացն . վասն զի , սիրելի հայր , քաղցր է ինձ յու և սալ թէ Միշօյի ընտանիքն զիս չեն մոռցած :

« Մնայք բարեաւ , 'ի տեսութիւն , զմեղ ա և մենքդ ալ սերտիւ կ'ողջագուրեմ .

« Զեր յարդալից և անձնուէր որդին

« ՇՈՒՆ ՖԵՌԱԿԻԻ »

Շառլի վերադարձն .

Կիրակի օր մ'էր , Մօրիսի բոլոր բարեկամներն անոր զաւթին մէջ խոնած էին , ուր կը պակէր միայն պատուարժան Պ. Ռլամին , որ նախորդ ձմեռն վախճանած էր : Հոն Շառլի մօտակայ վերադարձին վրայ կը խօսէին , երբ հեռուէն գնդաձիգ զինուորի մը զալն տեսան : Գլէմանդին առաջին անդամ ճանցաւ զիւր եղբայրն և վազեց իւր մօր իմացնե-

լու որ արդէն իւր բազկաց մէջ կը սեղմէր զՇառլ
մինչդեռ այն խռնեալ բազմութիւնն հաղիւ ժամա.
նակ ունեցաւ զայն նշարելու :

Երբ այս մեծ ուրախութիւնն քիչ մը դադրեցաւ , ծերունի դարբինն իւր թոռան բազկէն բըռնելով ըստ :

«Հիմա որ քովս ես , Պ. զինուոր , ալ պիտի ըը թողում որ երթաս . տեսնենք , հարսանեկան հանդէսն ե՞րբ պիտի ըլլայ :

— Այրելի աներս , քիչ մը հանգչելու ատեն թող անոր . նաեւ ըստ իս զայն ամուսնացնելէ յառաջ , պէտք է անոր յատկացեալ տուն մը շինենք . իմ պարտիկիս կից եղող դաշտն խիստ յարմար է :

— Ուզածիդ պէս կը խօսիս , Մօրիս , այնպէս մէկու մը նման որ իւր առջեւ ժամանակ ունենայ . եթէ դու ալ ինձ նման 75 տարեկան ըլլայիր , քիչ մ' աւելի պիտի աճաւպարէիր . այսուիս մ' յուսար թէ զինուոր երթալու ատենուան պէս դործը քեզ պիտի ձգեմ : Շառլ զինուորութենէ ազատելու համար որոշած ստակս դեռ դրած է և տան ծախքին պիտի դործածուի . այս բանն իմ վրաս պիտի առնեմ , դու խառնուելու պէտք չունիս . առ այժմ իմ սենեկիս մէջ պիտի բնակի . վաղը Մէն-Ժօրժ գացէք և աշխատեցէք հարսանիքն օր մ' առաջ կատարել »:

Մօրիս միեւնոյն առուր մէջ կ'ամուսնացն
իւր երկու զառակունքն :

«Այսրկեան մ'ալ , Հայր Լըռու , վայրկեան մը
ալ , ըստ սայլագործն , օր ներկայ էր . ձեր զա-

ւակն ամուսնացնելու փափաք ունեցող միայն դուք չէք . ես ալ ունիմ տղայ մը , որ զձեզ իրեն մեծ հայր ունենալ կը բաղձայ . ի՞նչ կ'ըսէս , Մօրիս , գաղափարդ յայտնէ :

— Ինձ համար , իմ աղջիկս Գլէմանդինը քու ժագիդ կնութեան տալէ աւելի հաճոյալից բան չկայ :

— Բարեկամ , յաւելցուց Գոռատիէ . իմ ծերութեանս բոլոր երջանկութիւնն այս ամուսնութեան վրայ դրած եմ . ինձ կը թուի թէ մեր բոլորակն մեր թոռանց աճին տեսնելով , զիրար աւելի պիտի սիրենք : Բայց տեսնենք , աղջկանդ ալ հաւանութիւնն խնդրելու է :

Այս մասին հարցուցին Գլէմանթինի որ յայտնեց թէ այս ամուսնութիւնն իրեն շատ պատշաճ էր , ուստի որոշուեցաւ որ քոյր և եղբայր նոյն օրուան մէջ ամուսնանան :

Հարսանեկան հանդէսը Մօրիսի տունը կատարուեցաւ . Գլէմանթին իւր սկեսրայրին տունը բնակիլ գնաց և Շառլ մինչեւ իւր տան աւարտիլն , մեծ հօր սենեկակն բնակեցաւ :

Խեղճ ծերունի դարբինն գոհ որտով ամենուն կ'ըսէր .

«Ոհա՛ , այժմ հանգիստ կ'ապրիմ , ստոյգ եմ որ Շառլ իմ աշերս պիտի փակէ :

Ամուսնութեան նախորդ օրն Մօրիս ըստ իւր որդւոյն 'ի ներկայութեան նորա սովագայ աներոջ .

«Ոիրելիդ իմ Շառլ , ամուսնանակէդ առաջ մեր դաշինքներն ընել հարկ է , որպէս զի վիճակդ կանոնաւոր ըլլայ :

— Հայր իմ , այդ դաշինքներն չուտով հասատելն դիւրին է . ձեզ հետ աշխատիլ կ'ուզեմ :

ինձ վարձք պիտի վճարէք ինչ որ յարմար դատիք և վատահ եմ որ աշխատութեանս համեմատ պիտի վարձատրուիմ :

— Տղաս , գքեզ իբր ընտիր գործաւոր պիտի վարձատրեմ , և քու տնովդ ու քեզի տալիք գաւառովս տրտնջալու տեղ պիտի շունենաս : Նաև օր մը ինձ պիտի յաջորդես և կրնաս վատահ ըլլալ որ այժմէն լաւ ընթացք մը բռնելով , ապագային մէջ լաւ ընտանեաց մը հիմն պիտի ըլլաս » :

Պ. Ժողովրդապետն՝ Շառլի նորաշեն տունն
կ'օրինեն .

Շուտ սկսան Շառլի տունն շինել , և Հայր Լըուռ գողցես իւր երիտասարդութեան գործունէութիւնն վերստին գտած էր՝ գործաւորաց վրայ հոկելու համար : Ուստի անոր ջանքով այս բնակարանը քիչ ատենի մէջ լմնցաւ :

Հետեւեալ տարին՝ յարդելի Ժողովրդապետն , որ արդէն 8օ տարեկան էր , կիրակի օր մը երեկոյեան աղօթքէն յետոյ Շառլի տունն օրէնել եկաւ , ուր ամենայն ընտանեօք ընթրեցին , և որոց մէջ ֆրանսուազ և իւր հարսն նշանաւոր հանդիսացած էին : Ընթրելու տաեն Մօրիս ըստաւ իւր որդւոյն .

«Շառլ , ըսէ՛ ինձ խղճի մտօք ինչ որ կը խորհիս քու նորակառոյց տանդ նկատմամբ . գո՞՛ ես անկէ :

— Այս՛ , հայր իմ , վասն զի չափաւոր և միանդաւութիւնն սիրուն է . նաև այս ալ կայ որ իմ սիւ

բելի հաւուս լնծան է : Բայց ես հոն այնքան երջանիկ պիտի ըլլամ , որքան դուք էք ձերինին մէջ :

— Ինչո՞ւ համար , սիրելի տղաս :

— Վասն զի ձեզ պէս ես ինքնին կարող եղած չեմ իմ աշխատութեամբս անոր տէրն ըլլալ , ուստի և անոր քարերն ձեզ նման պիտի ըլլալում . վասն զի ինձ երբէք ոչ իմ ջանքերուս և ոչ ալ յաղթահարեալ գժուարութեանց յիշեցուցիչն պիտի ըլլան : Ես պիտի չկընամ գոհ սրտով ըսել . Ես ինքնին իմ աշխատութեանս արդիւնքով այս ամենն յաւաջ բերի Աստուծոյ ընորդիւ . իմ կնոջս և զաւակացս բարւոքման հեղինակն եմ» : Ահա՛ , հայր իմ , ասոր հաւասարող գոհունակութիւն ըլլայ » :

— Ճշմարիտ է , տղաս , բայց յաճախս իրեն փոքրիկ բաղդ մ' ստեղծելն ու իւր ինչքն պահելն հաւասար արձէք ունին : Ամենէն աւելի զգալի օրինակ մը կրնայ ըլլալ քեզ Պէռթրանի պատահարն : Սակայն կը կարծես որ ես ալ նեղութիւններ կրած ըլլամ :

— Լաւ զիտեմ , հայր իմ , թէ ՚ի սկզբան ամեն ինչ ձեզ անփուշ և գեղածիծալ վարդեր չեղան , այլ դուք ձեր յարատեւ աշխատութեամբ գժնդակ բաղդն յաղթանակել յաջողեցաք . դուք անկախ դիզք մ'ստացաք և ասի մեծ երջանկութիւն մ'է արդարեւ :

Մօրիս դղեակն երբալու համար կ'ընկե-
րանայ սալլյագործին .

Մօրիս օօ տարեկան եղած էր և դեռ տկա-
րութիւն մը չէր իմացունէր նմա ծերութեան մեր-
ձենալն : Ինչպէս արդէն ըսած էր զոռատիէ , իւր-
եանց բոլորտիքն թոռանց աճիլը տեսնելով եւս ա-
ռաւել կը մտերմանային միատեղ :

Որովհետեւ երկուքին ալ անդրանիկներն իրենց
տեղ կը բռնէին , նոքա հանգչելու ատեն կը գրտ-
նէին : Երկուքն ալ հասարակութեան ատենին խոր-
հրական և եկեղեցոյ վերակացու կարդուած էին ,
և իրենց լաւ իմացականութեամբ և կանոնաւոր ըն-
թացքով ժողովրդեան վրայ մեծ ազդ եցութիւն
մ'ըրած էին . ոչ ոք , առանց անոնց հետ խորհր-
դածելու , գործի մը կը ձեռնարկէր :

Կիրակի օր մը , սայլագ ործն ըսաւ Մօրիսի .

«Ո՞ն , միատեղ դղեակն երթանք . Պ. Աընուառ
քսան գեղեցիկ կնձնիներ կը վաճառէ և ես մեծ
փափաք ունիմ զանոնք գնելու . դու իսկ անոնց
վրայ ունեցած գաղափարդ պիտի յայտնես ինձ :

Երկուքն ալ գացին Պ. Աընուառը գտնելու ,
որ յայտնեց Գոռատիէի թէ իւրաքանչիւր ծառին 20
Քրանդ կը խնդրէ :

«Բարեկամ , սակարկութիւն ընկէ չեմ ախոր-
ժիր , կարծեմ թէ ըսած գինը շատ յարմար է .
ուստի , կամ գնեցէք և կամ թողէք :

— Պարոն , կ'ընդունիմ ձեր առաջարկած գինն
վասն զի դուք արդարախոհ անձ մ'էք . սակայն կը
համարձակիմ ձեղ գիտել տալու որ անոնց մէջ բռւն

արմատէն վերսուած ծառեր ալ կրնան գտնուիլ .
ասիկա միայն տնկելէ յետոյ կը հասկցուի :

— Այս պարագային մէջ , վնասուած ծառն կը
փոխեմ , կամ գնոյն մասին ինչ նուազումն որ ու-
զէք , կը շնորհեմ :

— Ըսել է թէ կատարուած վաճառում մ'է .
ուստի քանի որ հոս եմ , եթէ ձեր ժամանակն կը
ներէ , զանոնք զատել երթանք , որպէս զի վաղն
առաւոտ փոխադրուին և անկուին » :

Վառերուն գտնուած տեղն գացին ընտրելու
համար և տասն երկու հատ հազիւ նշանակած էին ,
երբ աճապարանօք մարդ մը հասաւ . ասի կրասէյի
սայլագ ործներէն մին էր , որ արդէն կանխաւ ե-
կած էր այդ ծառերուն մասին սակարկութիւն ընելը

«Ի՞նչ կը տեսնեմ , Պարոն , ըսաւ , կը վաճառէք
այն ծառերն , որոց նկատմամբ ձեզ հետ սակար-
կութեան մտած էինք :

— Բայց դուք ձեզ առաջարկած գինս տալ չէք
ուզեք :

— Լաւ ուրեմն , Պարոն , քանի որ ձեր ըսա-
ծէն ամենեւին վար պիտի չիջնէք , կը յարմարցնեմ :

— Բարեկամ , շատ ուշ կու դաք , ահա' մարդ
որ զանոնք գնեց առանց սակարկութիւն ընելու :

— Բայց , Պարոն , ձենէ առաւելութիւն ինդ-
րած էի և դուք զայն խոստացեր էիք ինձ :

— Այո՛ , եթէ ձեր ուզածին պէս զանոնք 15
Քրանդի ծախելու դիտաւորութիւն ունենայի . բայց
ես կը գտնեմ այժմ վեհանձն մարդ մը , որ իմ վը-
րաս բաւական վստահութիւն ունենալով՝ առանց
վէճի կ'ընդունի իրեն առաջարկած գինս վճարել :
ինչո՞ւ զձեղ քան զայն աւելի նախամեծար համա-

ըիմ, զնեղ, որ լսւ գիտէք թէ այս ծառերն քսան ֆրանգի գնոլ գործաւորն դեռ չատ աւելի չահ կ'ընէ : Դուք կը ջանայիք աժան գնոլ ձեռքէս առնուլ, կարծելով թէ ստակի կարօտութիւն ունիմ. ո՛չ, այս նախամեծ արութիւնն ձեղ պիտի չտամ, վասն զի անիրաւութիւն մ'ըրած պիտի ըլլամ, և գիտցէք որ ես ալ միշտ անիրաւ գործէ կը խորշիմ :

Այս մարդն ապլեցաւ և առանց բառ մ' արտասանելու մեխեցաւ զանոնք ողունելով :

Պ. Լընուառ, ըսաւ Մօրիս, ձեր այս մարդուն ըսածներէն մեծ զարմանք կրեցի. երբէք այս կէտին վրայ չէի խորհած և կը վախնամ որ այս տեսակ անարդարութիւններ չատ գործած ըլլամ, առանց տարակուսելու : Մեր Ժողովրդ ապետն իրաւացի կ'ըսէ թէ, պէտք է որ մարդ միշտ խոնարհ ըլլայ, վասն զի ինքն իւր անձին պատասխանատու չկըրնար ըլլալ :

Պ. Լընուառ Հասարակութեան Քաղաքապետն զՄօրիսի իրեն Տեղակալ կը խնդրէ .

«Մօրիս, ըսաւ Պ. Լընուառ, Ժողովին ատենակալաց կէսն, ինչպէս նաեւ քաղաքապետն և տեղակալն նորէն պիտի ընտրեն : Կուսակալն կ'առաջարկէ ինձ քաղաքապետութեան պաշտօնին մէջ հաստատուիլ . ընդունեցայ անոր առաջարկն աս պայմանաւ որ դուք ալ տեղակալս ըլլաք : Եթէ ըզ ձեղ ընտրեն, պիտի ընդունի՞ք :

— Պարոն, ինձ մեծ պատիւ կ'ընէք, բայց այդ պաշտօնն ընդունիլն ինձ չատ դժուար պիտի ըլլայ :

Նախ ես իմ ձեռացս աշխատութեան կարօտ եմ, երկրորդ՝ ինձ կը թուի թէ Պ. Պէտթհօ, ձեր վարձակալն քան զիս առաւել կարող է այսպիսի գործի մը մէջ ձեղ ձեռնտու ըլլալ :

— Սիրելիդ իմ Մօրիս, Պ. Պէտթհօ, հակառակի իւր ընտիր իմացականութեան և բարի յատկութեանց՝ ձեղի չափ օգտակար չկրնար ըլլալ հասարակութեան, վասն զի նա օտարէ երկրն և այս պատճառաւ Ժողովրդեան վրայ մեծ ազդեցութիւն չկրնար ունենալ : Գալով ձեր աշխատութեան, ձեղ չվայելէր որ այդպէս երկնչիք ձեր օրական աշխատութեան ժամերէն մէկ երկուքը գողնացով նոյն իսկ ձեր գիւղակցաց բարւորման զոհելու համար զայնս :

— Պ. Լընուառ իրաւունք ունի, ըսաւ սայլագործն՝ Մօրիսի, երկար ատենէ ՚ի վեր հսկող և կանոնաւոր տեղակալ մը չենք ունեցած, հետեւաբար և Ժողովուրդը կը նեղուի, ՚ի բացակայութիւն Պարոնին, որ ամեն տարի ձմերելու համար Պուրծկը փոխադրուի :

— Ո՞ն ուրեմն, Մօրիս, կրկնեց Պ. Լընուառ, մերժումն մի՛ ընէք : Մեք երկուքս երկրին վրայ մեծ վոփոխութիւն պիտի ընենք, գիւղին փողոցներն մաքրել պիտի տանք, որոց այժմու չափազանց աղտեղի վիճակին ես կ'ամինամ: Ինչ որ խնդրէք յինէն պարտաւոր եմ կատարելու, և դուք քան զիս առաւել լսւ գիտէք բնակչաց բարի կամքն դրդելու կերպն :

— Լսւ ուրեմն, Պ. Լընուառ, քանի որ կը փափաքիք, պիտի չմերժեմ ձեղ տեղակալ ըլլալ, եթէ պաշտօնապէս զիս ընտրեն :

— Կանխառ չնորհակալութիւնս կը յայտնեմ ձեզ,

Մօրիս, և չըլլայ որ մոռնաք թէ ինձ այս մասին
խօսք տուած էք :

— Ա՛հ, հանդիսատ եղիք, Պ. Լընուառ, ըստ
սայլագործն, քանի որ Մօրիս խոստացաւ, ենթադր-
բեցէք թէ նօտարն իսկ ստորագրած է :

Մօրիս Տեղակալ .

«Քիչ ատենէն Մօրիս Ցեղակալ կարգուեցաւ :
Այն միջոցն էր յորում տարեկան տուրքերն կը ժո-
ղուէին : Ուստի նա դնաց գտնել զբաղաքապետն
և ըստ անոր .

«Պարոն, մեր գիւղային ճանապարհներն այն-
պէս գէշ վիճակի մէջ են, որ ալ քիչ ատենէն ըլր-
ջակայններէն մեր գիւղը գան անհնար պիտի ըլլայ,
և գիտէք թէ զանոնք նորոգելու համար բաւական
ատենի կարօտ եմք : Ամեն հարկատուաց հետ տես-
նուեցայ, որք ամենքն ալ ինձ համամիտ գտնուե-
ցան հարկերն բնական բերքերէն տալ փոխանակ
ստակի, զոր երկիրն կանոնաւորելու պիտի յատկա-
ցընեն, ինչպէս որ վարչութեան իրաւունքն է :
Հրամաններն արուելուն պէս աշխատութիւններն
պիտի փութացնեմ. և եթէ դուք ալ հաճիք անոնց
վրայ հսկելու, որքան որ ժամանակնիդ կը ներէ,
կարծեմ թէ օդտակար և ընտիր արդիւնք մը պի-
տի յաջողինք յառաջ բերելու » :

Պ. Լընուառ կամաւ հաւանեցաւ երթալ, ինչպէս
նաեւ Մօրիս՝ հարկերուն հսկելու և աշխատութիւնն
կանոնաւոր վիճակի մէջ բռնելու համար : Նաև
սկսան ամենէն գէշ ճանրաներն շինել . բայց հար-

կերն սպառեցան դեռ գիւղին ներքին ճամբաներուն
ձեռք չզարնուած, որոյ վրայ Մօրիս զպյրացաւ :

Կիրակի օր մը, պատարագէն յետոյ, գիւղին
բնակիչներն Եկեղեցւոյն գաւթին մէջ ժողուած ի-
րենց դործոց վրայ կը խօսէին : Մօրիս անոնց հետ
բաւական ատեն խօսակցելէ յետոյ, յանկարծ զա-
նոնք ընդմիջեց ցուցնելու համար Եկեղեցւոյն հրա-
պարակն խոռոչներով լի, որոց մէջ անձրեւի ջուրն
հաւաքուած էք :

«Ուսի ձեզ բնաւ ամօթ չիբերէր, ըստ անոնց,
ձեր հրապարակին այս վիճակին մէջ տեսնելն :

— Անտարակոյս, ըստ պանդոկապետն, որ
ատենական ժողովին խորհրդական էր, գալ տարի
այդ խոռոչներն լեցնելու է :

— Եւ ինչո՞ւ այս տարի չէ :

— Վասն զի հարկերն արդէն տրուած են :

— Այո՛, տեսչութեան յատկացեալ հարկերն
տրուած են, բայց ո՞վ կ'արդելու մեզ նոյն իսկ
մեր ձեռքօք աշխատիլ այս թերութիւններն լեցնե-
լու համար :

— Հա՞պա մեր գործերն . ո՞վ պիտի ընէ զա-
նոնք, եթէ մեք մեր ժամանակին գիւղին ճամբա-
ներն շնելով անցընենք :

— Զեզ առաջարկածս ընելու միակ միջոց մը
կայ : Ես ձենէ միայն կորուսեալ ժամանակներն կը
պահանջեմ և իւրաքանչիւր ոք գիտէ թէ յաճախ
քանի մը ժամեր, մինչեւ իսկ ամբողջ կէս օր մը
կ'անցնի առանց փոքրիկ աշխատութիւն մ'ընելու,
վասն զի ժամանակն շներէր տնէն հեռանալ : Այս
պարագ ժամերն ինձ տուէք և անոր արդիւնքն
պիտի տեսնէք :

— Կարծեմ թէ օրուան մէկ քառորդ մասին
մէջ մեծ ռործ մը յառաջ չկրնար գալ , ըսին ա-
մենքն մի սրերան խնդարով :

— Զեր ամենուդ կարծիքն այդպէ՞ս է . լաւ ,
սակայն կ'իմացնեմ թէ կը սխալիք , քիչ ատենէն
ապացոյցը պիտի տեսնէք » :

Մօրիս կը բացատրէ թէ ի՞նչպէս կրնան
օգուակար կերպով գործածել
կօրուսեալ վայրկեաններն .

«Լաւ ուշադիր եղիք ձեզ ըսելիքիս , շարունա-
կեց Մօրիս , գիւղին մէջ առ նուազն 80 գործաւոր
և 50 ձի կը գտնուի : Թող իւրաքանչիւրն ամբողջ
ամիս մը իրենց մէկ քառորդ օրն ինձ տան , կը
տեսնէք թէ խնդրածու մեծ բան մը չէ :

— Ո՛չ , պատասխանեցին ամենքն միաբերան :

— Եւ որովհետեւ 80 ի քառորդ մասն 20 է ,
ուրեմն օրը 20 մարդ և 7 ձի աշխատող պիտի ու-
նենամ ամսուան միջոցին , ասով , բարեկամք , կ'ու-
զեմ . մաքուր և կանոնաւոր ճամբաներ շնորհ պար-
ակուի ծառուղիներու պէս : Դուք ալ գոհ պիտի
չըլլա՞ք արդեօք տեսնելով որ ասկից վերջը ձեր
տղայք մինչեւ ծունդերնին ցեխերու մէջ թաթ-
խուած չեն առաջուան պէս :

— Ուրեմն հրամայեցէք , Պ. Մօրիս , և մենք
ձեր ամեն ուզածն պիտի կատարենք :

— Բայց , ըսաւ անդիէն Պէսթրանի անդրա-
նիկ տղան , որ իւր հօր բնութեան շատ կը յար-
մալէք անվայել ընթացքով , գիւղին միայն բնա-

կիշներն այդ ճամբաներէն կ'անցնին , իսկ շընակա-
յից կառքերն պարապ չեն թողուր զանոնք , չեմ
գիտեր թէ ինչու այլոց հանդատութեան համար
մեք չարաչար աշխատինք :

— Ի՞նչ կ'ըսես , Պէսթրան . երբ դու կրասէ յ
կամ վիերզոն երթաս երկաթ գնելու . գոհ չե՞ս
ըլլար լաւ ճամբու և քարայատակեալ փողոցներու
վրայէ քալելուդ և մի եւ նոյն օրն տուն դառնալ
կարենալուդ առանց մեծ նեղութիւն քաշելու դու
ինչպէս նաեւ ձիու : Եթէ մեր փողոցներն այսպէս
գէշ և աւերեալ մնան , յաճախորդներն ալ կը
պակսին : Խորհիչ ուրեմն որ եթէ ամեն մարդ աշ-
խարհիս վրայ քեզ պէս տրամաբանէր և այլոց հա-
մար աշխատիլ չուզեր , հարկ էր որ ամենքս ալ
անտառային դայիկերու նման կեանք մ'ունենայինք:
Զե՞ս գիտեր ուրեմն որ կենաց դիւրութիւնն՝ միայն
իրարու օդնելով կարելի է զգալ , և նոքա որ այ-
լոց օգտին համար չեն ուզեր աշխատիլ , հարկ է
որ նոյնն լնեն բուն իրենց մասնաւոր շահուց հա-
մար . մի՛ մսոնար զայս , Պէսթրան » :

Մօրիս դիւզին մէջ շընագայելով , կը գիտէր
այն գործաւորներն որքո՞ւ և իցէ պատրուակաւ չին
զբաղէր և զանոնք կ'աշխատցնէր : Այս մանր աշ-
խատութիւններէն յառաջ եկած արդեանց առա-
ւելութենէն այնքան յափշտակեալ էին ամենքն ալ
որ ինքնին եկան իրենց ծառայութիւնն նուիրել
Տեղակալին : Տենդերն աւելի հազուագիւտ ըլլաւ
սկսան և տղայք աւելի լաւ վիճակի մէջ էին : Մօ-
րիս այս աշխատութեանց մէջ ինքզինքին ալ չէր
խնայեր : Բաւական տեսնէ ՚ի վեր նոր երկիրներ ,
ձի մը և սայլակ մը գներ էր : Յաճախ իւր եզներն

հասարակաց օգտին կ'աշխատացնէր , ինչպէս նաև իւր սայլերն , թիերն և բրիչներն . Պ. Լընուառ , որ նոյնպէս կ'ընէր , այս յառաջադիմութեան վրայ զմայլած էր :

«Արդէն կանխաւ չգուշակեցի՞ , սիրելիդ իմ Մօրիս , կ'ըսէր երբեմն նա իւր տեղակալն , թէ մեք 'ի միասին աշխատելով սքանչելիքներ պիտի գործենք » :

Մօրիս կը համոզի շինուածոց ժողովն
գիւղին Եկեղեցոյն դասին տատուհանաց
ապակի դնել .

Օր մը , երբ շինուածոց ժողովը հաւաքուած էր և Պ. Պէռթհո , որ գանձապետ էր , տարեկան հաշիւներն կու տար , տեսան որ արկղին մէջ 100 Փրանդ կա :

«Պարոնայք , ըսաւ Մօրիս , շատ վայելուչ և պատշաճ է որ մեք մեր սիրելի և պատկառելի Հովուին յանկարծական զարմանք մը պատճառենք : Երեսուն տարիէն աւելի է որ նա իւր եկեղեցւոյն պատուհանաց ապակի կ'ուզէ , այն ապակիներէն բերել տանք գոնէ միայն եկեղեցւոյն դասին երեք փոքր պատուհանաց համար . որք սեղանին ետեւի կողմն են , ընդ ամենն առ առ աւելն 500 Փրանդի դործ է :

— Շատ մեծ ծախք է , ըսաւ ատենակալներէն մին :

— Այո , այդ մասին ես ալ իրաւունք կու տամ բայց չե՞նք կրնար այս գումարն զոհել , հաճոյք

պատճառելու համար այս արժանաւոր ծերունւոյն որ այնքան երկար ատենէ 'ի վեր զմեզ կը հովուէ : Մեր ամենուս ծնանիլը տեսած է և չկայ մէկը որ նորա բարի խրատներն ընդունած չըլլայ : Զենք կրնար յուսաւ դեռ երկար ատեն զնա պահել , այժմ որ 90 տարեկան է , գոնէ իւր վերջին ուրախութիւնն թող մեզ պարտի » :

Ժողովոյն խորհրդականներն զգացուեցան Մօրիսի խօսքերէն : Որոշուեցաւ որ քանի մը տարիէ 'ի վեր բարի Հովուին աշխատութեանց օգնական դրուած փոխանորդն Օքէրյնի Գէռ-Մօն քաղաքն գրէ ապակիներն բերել տալու համար , վասն զի աղէկ տեսակի գործարաններն այդ քաղաքին մէջ էին :

Այս ամենն այնքան լաւ և գաղտնի կերպով կատարուեցաւ , որ Տեառն Մարմար և Արեան տօնին օրն , Հովիւն և իւր ժողովուրդն կարի զարմացան և շատ ալ գոն եղան , տեսնելով այն ապակիներն որք դասուն պատուհաններն կը զարդարէին :

Բարի ժողովրդապետն որ երկար ատենէ 'ի վեր չէր քարոզեր տկարութեան պատճառաւ , ուշեց բեմն ելլել շնորհակալ ըլլալու համար առ այնոսիկ , որք այն հաճոյակից ուրախութիւնն իրեն պատճառեցին և ապահովուց զանոնք թէ , ալ քանի որ իւր եկեղեցւոյն այսպէս զարդարուած ըլլալը կը տեսնէր , ուրիշ բանի մը չէր փափաքէր . այս աշխարհիս մէջ :

Պատարագէն դարձած ատեննին , սայլագործն ըսաւ Մօրիսի .

«Գիտե՞ս որ Բարիզզի պարոն մը Վէռժէրի կալուածն գներ է :

— Ահա՝ կալուածատէր մ'ալ որ երկրին մէջ սլի-
տի չբնակի, ստուգիւ դժբաղդութիւն մ'է այս :

— Ընդհակառակին, Մօրիս, նօտարն որ հինդ-
շաբթի օրն վաճառանոցին մէջ այս լուրն ինձ տուաւ
վատահացուց թէ այդ կալուածին նոր տէրն, ոչ
միայն պիտի գայ հռն բնակիլ, այլ նոյն իսկ ինքն
պիտի մշակէ զայն :

— Եթէ այդպէս է, ամենուս համար լաւ է
այդ » :

Ժիւիեն—Պլանշառի զալուստը.

Շառլ դարբնոցին մէջ գրազած էր և ֆրան-
սուազ ինչպէս նաեւ իւր հարսն անական գործոց
կ'աշխատէին, երբ տեսան որ գաւթին մէջ զ եղե-
ցիկ կառք մը կը մտնէր, զոր կայտառ ձի մը կը
վարէր : Մարդ մը, որ գրեթէ Մօրիսի տարիքն ու-
նէր, անկից վար իջնելով հարցուց թէ հո՞ն կը
բնակի Մօրիս ֆէռակիւ :

«Այս՝ Պարոն, պատասխանեց Շառլ, և ես
ալ իւր որդիին եմ :

— Ինքն բացակա՞յ է :

— Ոչ, Պարոն, հայրս ից բեթէ բնաւ տնէն
դուրս չելլար, բայց այս ժամուս հասարակութեան
ժողովին գացած է : Կրնա՞նք արդ եօք ձեզ ծառա-
յութիւն մը մատուցանել :

— Ես եկած եմ, եեր հօր վաղեմի բարեկամ
ծիւլիէն—Պլանշառի վրայօք տեղեկութիւններ տալ
իրեն :

— Ահ, Պարոն, դոչեց ֆրանսուազ որ կառ-

քին մօտեցած էր, բարեաւ եկայք : Մտէք ուրեմն
եթէ կը հաճիք զովանալու համար : Շառլ, պարո-
նին ձին կառքէն հանէ և ախոռն տար :

— Ամենայն սիրով կ'ընդունիմ, Տիկին, պա-
տասխանեց օտարականն :

Այս ըսելով կառքին մօտեցաւ և անկից իջե-
ցուց ծերունի տիկին մը, որոյ նկատմամբ մասնա-
ւոր խնամք մ'ունէր :

Երբ Հայր Լըսուի նախկին սենեակն մտան,
որ ընդունելութեան որահն էր, Ոիւզան սպիտակ
ծածկոց մը դրաւ սեղանին վրայ և կաթնեղէն և
քանի մը տեսակ պտուղ բերաւ, մինչդեռ իւր ա-
մուսինն գինի բերել գացած էր և դործաւորնե-
րէն մին ջրհորէն զով ջուր կը քաշէր :

«Պարոն, ըստ ֆրանսուազ, եթէ կը հաճիք՝
մեզ տեղեկութիւն տուէք այն բարեսիրտ Տիկին
Պլանշառի վրայօք, որոյ խօսքն ըրած ատեն Մօրիս
արտասուքներն չկրնար զապել :

— Ուրեմն զայն մոոցած չէ, հարցուց պառաւ
Տիկինն :

— Մոոցած, պատասխանեց Շառլ, որ ներս
կը մտնէր, երբէք օր մը չանցնիր որ հայրս անոր
վրայօք մեզ չխօսի . նա յաճախ կ'ըսէ մեզ որ ե-
թէ Աստուած զինքն զրկած է իւր բուն հարազատ
մայրն ճանչնալու, գոնէ այս թերութիւնը զգալի
չընելու համար փոխարինած է զինքն տալով զկրան
Պիշ իւր մտնկութիւնն խնամելու և զՏիկին Պլան-
շառ իւր երիտասարդութիւնն հովուելու համար .
և թէ փոխանակ մէկ մօր, երկու հատ ունեցած
է » :

Մօրիսի զգացած երջանկութիւնն
՚ի տես իր բարեկամին .

Մօրիս ներս մտաւ , երբ Շառլ իւր խօսքն
կ'աւարտէր , նախ անտարբերութեամբ օտարական-
ներն ողջունեց , բայց յետոյ աւելի մօտէն դիտե-
լով պարոնը , վայրկեան մը վարանեցաւ և անոր
բազկաց մէջ նետուելով գոչեց . « Ժիւլիէն » . իս-
կոյն տան մէջ մեծ յուզում մը պատճառեց այս ա-
նունն . հայր , մայր , տղայք , թոռունք ամենքն
ալ միաբերան կը խօսէին : Ֆրանսուազ զգացեալ
այն բնազդումէն որ երբէք կիներն չիմարեր , պա-
ռաւ կնոջմէ թոյլատուութիւն կը խնդրէր զանի համ-
բուրելու . վասն զի երբ ժիւլիէնի անունն իմացաւ ,
գուշակեց թէ միւսն ալ Տիկին Պլանշառն ըլլալու է ,
Երբ Մօրիսի նախկին յուզումն հանդարտեցաւ՝ միւս
կողմն դարձաւ և տեսնելով Սիւզանն որ պառաւ
կինն կը համբուրէր , այս վերջինն ալ ճանչցաւ ,
դէպ ՚ի անոր վազեց և նորա երկու ձեռքերն բրո-
նելով ուժգին կը սեղմէր առանց բառ մը կարենալ
արտասանելու , վասն զի այս ծայրայել ուրախու-
թիւնն զինքն չնշարգել ըրած էր :

« Լաւ , Մօրիս , զիս ալ չե՞ս համբուրէր , ը-
սաւ անոր տիկինն՝ ժպտելով » :

Մօրիս ողջագուրեց զնա այն գգուանօք , որով
իւր մանկութեան ատեն զկրան Պիշն կը փայփայէր ,
յետոյ գոչեց :

« Ալ գոհ սրտով պիտի մեռնիմ , այժմ որ Եր-
կինք իմ ամենէն սիրելի իղձս կատարեց :

— Մեռնի՛լ , ըսաւ Ժիւլիէն , ես ընդհակառակն

կը յուսամ , սիրելիս , թէ ընդ երկար միատեղ պի-
տի ապրինք գոհ և երջանիկ :

— Բայց ըսէ՛ ինձ , Ժիւլիէն , թէ ի՞նչ առթիւ
դու մեր անձանօթ երկիրն եկար » :

Ժիւլիէն՝ Պիտի զալուն պատճառն կը յայտնէ .

« Ես ձեր երկրին մէջ կալուածատէր եղայ և
ալ այսուհետեւ հոս պիտի բնակիմ :

— Ի՞նչ , միթէ գո՞ւ դնեցիր Վէստէրի կալ-
ուածն :

— Այո՛ , բարեկամ , դարբնոշս թողուցի և
իմ բնակարանս փեսայիս տուի : Ցղաս , որ Կրին-
եօնի երկրագործութեան վարժարանի մէջ ուսումն
առած է , Պօսի վարձակալներէն միոյն աղջկան հետ
ամուսնացաւ , որ լւա օժիտ բերաւ : Վեց տարի
իւր աներոջ քով նստելէ յետոյ , ուզելով ինքնին
երկիր մը մշակել , քանի որ ալ փորձառու եղած
էր , այնպիսի երկիր մը կը փնտուէր , որ հոն հաս-
տատուելով կարենայ լաւ փոփոխութիւններ ընել :

Այն ատեն յիշեցի որ դու յաճախ կ'ըսէիր թէ քու
նահանդիդ մէջ երկրագործութիւնն շատ ետ մնա-
ցած է , վասն զի կարեւորութիւն տուող չկայ :

Հօրս մահէն ՚ի վեր որ Պաթինեօլ քաշուած էր ,
մայրս մեզ հետ բնակիլ եկաւ , ես առաջարկեցի
իրեն ինչպէս նաեւ որդւոյս՝ մեր ստացուածքն միա-
ցընելով այս կողմերն երկիր մը գնել :

— Ուսկի՞ց դիտէիր գոււ որ Վէստէրի կալուածն
պիտի վաճառուէր :

— Պարզապէս իմ նօտարս տեսնել գացի և

ինդրեցի նմա զիս ներկայացնել իւր այն պաշտօնակիցներէն միոյն որք կ'զբաղէին գլխաւորաբար Շէոի նահանգաց մէջ ըլլալիք վաճառմանց : Նա ինձ Պարոն Տիւֆուրն առաջարկեց , առ որ երբ իմ դիտաւորութիւնսյայտնեցի , ըստ ինձ . « Այդ տեսակ կալուած մը կայ ձեր ուզած երկիրներուն մէջ ձեզ յարմար՝ 150000 ֆրանգի և զիւղէն մէկ հազարամէթր հեռի » : Խսկոյն որոշեցի զայն գնել , այնքան ուրախ էի իմ կենացս մնացեալ օրերն ձեր քով անցնելու յօյսն ունենալուս : Չեմ կարծեր որ այդ կալուածն վաճառողն այս յանկարծական խուճապէն վնաս մ' ըրած ըլլայ . Ես միայն սա չափն կրնամ ըսել որ բուն գնով գնեցի զայն » :

Մօրիս իւր ընտանիքն կը ներկայացնէ
Տիկին Պլանշառի .

« Այսուուած իմ , ինչ բերկութիւն , սիրելի Տիկին , ըստ Մօրիս Տիկին Պլանշառի դառնալով , ո՞քան ուրախ եմ զեզ տեսնելուս և մանաւանդ մտածելով որ ալ ասկից վերջը իրարու մօտ պիտի բնակինք : Կը տեսնէ՞ք այս ոսկեայ մատանին զոր դուք ձեր քովէն մեկնած օրս դրիք այս մատիս վրայ և զոր երբէք չեմ հանած , և անոր կը պարտիմ յաճախ բարի գործերս , վասն զի ինձ կը յիշեցնէ անդադար իմ ձենէ ընդունած բարի խրատներն և ընտիր օրինակներն : Ներեցէք ինձ որ ձեր մտերամական բարեկամութիւնն ինդրեմ ընտանեացս համար : Շառլ , գնա կանչէ քոյրդ , ամուսինն և տըզայքն , որպէս զի զանոնք ալ ներկայացնեմ իմ ազնիւ բարեկամացս :

— Հայր իմ , արդէն փոքրիկ Մօրիսն զրկեցին : Յիրաւի քիչ մը ետքը Գլէմանթին եկաւ իւր ամուսնոյն , երկու որդւոց , ծերունի սայլագ ործին և անոր կնոջ հետ :

« Պարոն և Տիկին , ըստ Գոռոտիէ երբ ներկայացումներն կատարուեցան , զուք կրնաք պարծիլ այնպիսի վեհանձն մարդէ մը տարօրինակ սիրուելնուդ : Եւ եթէ մեզ պէս խեղճ անձանց բարեկամութիւնն ձեզ հաճելի կը թուի , պիտի ըսեմ ձեզ թէ մեք արդէն կը սիրեմք զձեզ առանց տեսած ըլլալու , Մօրիսի ձեզ նկատմամբ խօսածներէն յափշտակեալ :

— Շնորհակալ եմ ձեր յօժարամութենէն : Մօրիսի բարեկամներն , մեր բարեկամներն պիտի ըլլան , վստահ եղիք , պատասխանեց Տիկին Պլանշառ , և ձեր Ժողովրդագետն արդեօք դեռ կ'ապրի :

— Այո՛ , Տիկին , բայց շատ ծեր և միանդամայն տկար է , և շենք կրնար յուսալ թէ նա դեռ երկար տարիներ պիտի ապրի զմեզ հոգուելու համար իրը ճշմարիտ հոգուագետ :

— Շատ երջանիկ պիտի ըլլամ եթէ զինքը ճանչնալու և իրեն ներկայացնելու պատիւն ունենամ :

— Մօրիս , ըստ Ժիւլիէն , մեզ հետ ճաշել պիտի գաս այսօր , պէտք է որ իմ ընտանիքս ալ փոխադարձաբար զքեզ ճանչնան . պիտի տեսնես որ եթէ դու անդադար քու վաղեմի բարեկամացդ վրայ խօսած ես ընտանեացդ , մեր ընտանիքն ալ ոչ նուազ կը ճանչնայ և կը սիրէ զքեզ առանց տեսած ըլլալու :

— Շատ լաւ , կ'ընդունիմ ձեր առաջարկն ամենայն սիրով , բայց սա պայմանաւ որ ամեն կի-

ըակի օրերն մեզ հետ պիտի անցընէք: Առաւօտուն
պատարագին ներկայ պիտի դտնուիք և իրիկունն
ալ մեք զձեղ պիտի առաջնորդենք ձեր տունը :

Շառւ ձիերն ԾԵց և Մօրիս ճամբայ ելաւ Տի-
կին Պլանշառի և Ճիւլիէնի հետ :

Մօրիս 'ի Վեռժեր .

— Մօրիս մեծ ընդունելութիւն դտաւ Ճիւլի-
էնի տղաքներէն: Ճաշէն յետոյ պարտէզն և անոր
ետեւի կողմն դտնուած ճագարաց արդելոցն պտը-
տեցան:

«Մօրիս, ըստ Ճիւլիէն, դու մեզ պիտի օգ-
նես այս խառն 'ի խուռն կազմածներն զետեղելու:
Ես թէեւ հին արհեստո չեմ մոռցած, բայց որդիս
մուրճն ամենեւին ձեռք առած չէ:

— Պարոն Բօլ, ըստ Պարբինն իւր բարեկա-
մին որդւոյն, երկրին մեծ բարիք պիտի ընէք հոս
նոր մշակութիւններ և նոր մեթուններ մտցնելով:

— Ի՞նչ կը նշանակէ այդ, Պարոն, միայն կարճ
կերպով՝ կ'ուզես զայն Բօլ անուանել. միթէ՞ նա
ալ քեզ չի՞վերաբերի մասսամբ մը, քանի որ իմ որ-
դիս է:

— Եւ որ երկար ատենէ 'ի վեր զձեղ կը սիրէ»,
յաւելցուց երիտասարդն :

Մօրիս իւր բարեկամին և անոր որդւոյն ձեռքն
բարեկամաբար սեղմեց :

«Ես պատրաստ եմ մեր գնած կալուածն լաւ
մշակելու, ըստ Բօլ, բայց մշակութեան դպրոց-
ներ բանալու դիտաւորութիւն չեմ ունեցած բնաւ.

ասոնք Պօսի երկիրներն չեն: Մեր փոքրիկ հարըս-
տութիւնն իմ ծնողքս մեծ աշխատութեամբ շահած
են, ինչպէս նաև կնոջն հարստութիւնը, ուստի չեմ
ուզեր զայն վասնգի ենթարկել: Զեր փորձառու-
թեան վատահելով այժմ, այս երկրին և մարդոց
գործածութեան մասին բռնելիք ընթացքնոււ զձեզ
առաջնորդ կը խնդրեմք մեզ:

— Բարեկամք, ալէտք է դիտնաք որ յաճախ
մէկ քանի վրիպանաց և նոյն իսկ ձեզ համար աշ-
խատող գործաւորաց կողմէն դիմադրութեանց պի-
տի հանդիսակիք, Բայց որովհետեւ նոքա իրենց սըր-
տին խորը դիտելով, պատուաւոր անձինք են,
ալէտք չէ զայրանաք, այլ ընդհակառակն գթալու
էք անոնց տպիտութեան վրայ: Կրնամ ձեզ ցու-
ցընել իմ մանկութեան բարեկամներուս միոյն եր-
կու որդիքը, որք հաճարեղ են և որոց անդրա-
նիկն ձեր երկրագործական աշխատութեանց հսկող
պիտի ըլլայ՝ միշտ ձեր հրամանաց հնազանդ, միւսն
ալ երկար ատենէ 'ի վեր հովութեան պարապած
ըլլալուն ձեր ոչխարներն լաւ պիտի կառավարէ,
վասն զի մեր գիւղին մէջ այդ գլխաւոր գործ մ'է»:

Մօրիս նոյն շաբթօւն ամեն օրերն Ճիւլիէնի
օգնել գնաց, այնպէս որ մինչեւ հետեւեալ կիւրա-
կէն լաւ մը զետեղուեցան:

Մօրիս, Պ. Լընուառ.ի կը ներկայացնէ երկու
Պլանշառներն .

Այս օրն, պատարագէն յետոյ, Ճիւլիէնի ըն-
տանիքն Մօրիսի տունն եկաւ, ինչպէս որ արդէն

որոշած էին : Երբ նախաձանը ըրին , դարբինն առաջարկեց իւր երկու բարեկամաց՝ դղեակն երթալ զ. Լընուառի այցելութիւն մը տալու համար , որ քաղաքապետ էր : Հոն լաւ ընդունելութիւն գտան և առաջին յարգանքներէն յետոց ժիւլիէն ըստ .

«Պ. Քաղաքապետ , ձեր գիւղին թէ ներքին և թէ արտաքին ճամբաններուն լաւ վիճակն մեծ պատիւ կը բերէ ձեր տեսչութեան :

— Պ. Պլանչառ , ըստ Քաղաքապետն , այդ մասին աւելի չնորհակալ ըլլալու է ձեր բարեկամին քան թէ ինձ . նա գրգ ուեց զիւղին բնակչաց եռանդն և զանոնք համոզեց կարեւոր զոհողութիւններ ընել այս փափաքելի արդեանց հասնելու համար , և այս նկատմամբ , սիրելիդ իմ Մօրիս , քենէ մեծ ծառայութիւն մը պիտի խնդրեմ :

— Շատ երջանիկ պիտի ըլլամ , Պարոն , ո' և իցէ առթի մէջ ձեզ օգտակար ըլլալու :

— Լաւ ուրեմն , պէտք է որ դու իմ տեղու քաղաքապետ ըլլամ :

— Ե՞ս . Պարոն . քաղաքապետութիւնն դուք հաստատ բռնած էք ձեռաց մէջ և հարկ չկայ ուրիշի յանձնելու :

— Բարեկամ , այլ այդ պաշտօնն պիտի չիլլրնամ շարունակել : Տէրութեան կողմանէ ուրիշ նոր պաշտօնի մը կոչուած եմ և հոս ինձ յաջորդելու համար ձենէ աւելի յարմար մէկը չկայ :

— Պարոն , ես երկրորդ կարգէ եմ և անիրաւ պիտի ըլլամ առաջին կարգի բարձրանալով , վասն զի այս մասին գործակալութիւնն լաւ չեմ գիտեր , մանաւանդ որ ծեր ալ եմ և պէտք է որ երիտասարդներն իրենց կարգին այդ պաշտօններն վարեն .

նոքա գործունեայ և առոյդ ըլլալով աւելի լաւ կարգադրութիւններ պիտի ընեն :

— Լաւ , բայց երկրին երիտասարդներէն ո՞րն կրնանք ընտրել այս պաշտօնին համար :

— Քանի որ ինձ կը հարցնէք , կարծեմ թէ շատ լաւ պիտի ըլլայ քաղաքապետութեան պաշտօնին համար ընտրել Բոլ Պլանչառն , որ հոս ներկայէ : Մեր գիւղին երիտասարդներէն աւելի կրթութիւն և ուսումն ունի , վասն զի , երկրագործութեան վարժարանի մը մէջ աշխատած ըլլալուն իւր միտքն անոնցմէ աւելի պարզուած է :

— Բայց Պարոնն մեր երկրին օտար է : Ուստի որպէս զի կարենայ ընել այն ամեն բարիքն , որ իրեն պէս անձէ մը կ'ապասուի , պէտք է ինձ խոստանաս , Մօրիս , երկար ատեն քու տեղակալութեան պաշտօնիդ մէջ պիտի մնաս :

— Կը խոստանամ ձեզ , Պարոն , և վատահ եղիք որ կրցածս պիտի ընեմ , ժողովրդեան և բարեկամիս սրդւոյն օգտակար ըլլալու համար » :

Դղեակն դուրս ելած ատեննին , ժիւլիէն գորովանօք Մօրիսի ձեռքն ոեղմեց ըսելով :

Դու շես զիտեր , սիրելի բարեկամ , թէ ի՞նչ մեծ հաճոյք պատճառեցիր ինձ : Իմ փառաց երազո՞ւ որ մը տղու՞ն հասրակութեան տեսուց ըլլալն տեսնել էր , բայց չէի յուսար որ շուառվ ասի կրնայ ըլլալ . այժմ քու միջոցաւդ այդ երեւակայեալ երազս երեւակայութիւն ստացաւ » :

Վախճան .

Դարբնոյն տունը մտնելով ձիւմիէն դոչեց .

« Բարի մայր , « զջադուրեցէք մեր վեհանձն
Մօրիսն որ իրեն առաջարկուած քաղաքապետու-
թեան պաշտօնն մերժեց , զայն բօլի ընդունել տա-
լու համար : Ահա ուրեմն երկրին մէջ ընդունուե-
ցանք և կը յուսամ թէ զիւղին բնակիչներն այս
ընտրութիւնն մերժելու կամ արհամարհելու պատ-
ճառ մը պիտի չունենան » :

Զուարթութեամբ ճաշեցին , փոխանակի ուրա-
խակից ըլլաւով երկու ընտանեաց մէջ հաստատուած
անկեղծ բարեկամութեան և միաբանութեան հա-
մար :

Եկրունի Ժողովրդ ապետն , որ թէեւ երկար
ատենէ ՚ի վեր դուրս չէր ելլեր , բայց բարեկամաց
այս միութիւնն օրհնելու եկած էր :

Պատուարժան Հովիւն երջանիկ էր իրեն արր-
ուած յարգանաց նշաններէն : Իրիկուան դէմ ,
անհանգստութիւն մը զդաց . ուստի զայն իւր սեն-
եակն տարին , ուր անմիջապէս անկողին մտաւ ա՛լ
զայն շթողլու դիտաւորութեամբ կարծես : Գիշերն
շատ գէշ անցուց և քանի մը օր հետզետէ տկա-
րանալով , առանց վշտի մարեցաւ ճրագի մը տէս
մինչեւ յետին շունչն չնորհակալ ըլլալով Աստուծոյ
որ զինքն իւր քով կը կանչէր :

Բոլոր զիւղին մէջ սուգ պատճառեց բարի Ժո-
ղովրդապետին մահը : Գալով Մօրիսի , այս կորըս-
տեան վրայ բնաւ չմիմիթ արուեցաւ :

Բոլ Պլանշառ , ինչպէս որ խոստացած էր Պ.

Լընուառի , մեծ եռանդեամբ և անձնուրացու-
թեամբ կ'աշխատէր իւր քաղաքապետութեան պաշ-
տօնն կատարելու : Եթէ որ և իցէ բարւոքում մը
ստանալու համար զոհողութիւն ընել հարկ ըլլար ,
ամենայն սիրով յանձն կ'առնուր ինչպէս նաև
Մօրիս , որ ծերութեան առ ինքն մօտենալը տեսաւ
առանց երբէք իւր արժանաւոր երջանկութիւնն
անձնական տկարութենէ մը կամ մեծ ցաւէ մը
խռովուելու :

ՎԵՐՋ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՒՑ

Ուղերձ	5
Նամակ	7
Մօրիսի Հայրն	11
Ճէրօմ՝ Կրան Պիշի կը հանդպի	12
Կրան Պիշն	14
Ճէրօմ կ'առաջարկէ Կրան Պիշի որ իւր տան ինամակալուհի ըլլայ	16
Ճէրօմ կը հանտուցանէ Մանտուօյի պարտքն	17
Ճէրօմ հանդիսատ կը գտնէ	19
Մօրիս վարժարան կ'երթայ	21
Ճէրօմի ազգրն կը խորտակուի	25
Կրան Պիշ իւր ոսկեայ խաչն կը վաճառէ	25
Ճէրօմ կը դժգոհի ՚ի տես թիկնաթոռին	27
Մօրիս իւր ընկերներէն մին կը պաշտպանէ	30
Մօրիս առաջին անդամ դրամ կը շահի	32
Մօրիս յանձն կ'առնու եզներ վարել	34
Մօրիս կ'երթայ ՚ի Վիէրզօն	36
Մօրիս դործ կը խնդրէ զ արբինէն	38
Մօրիս զուսուցիչն տեսնել կ'երթայ	40
Մօրիս վարժապետին աչքը կը մտնէ	45
Եղանց վաճառականն վերստին գիւղէն կ'անցնի	44
Ճէրօմ զգալով թէ իւր կենաց վախճանն մերձ է, կ'ուզէ իւր կտակն ընել	47
Մօրիս ազգու կերպով կը վիրաւորուի իւր հօր մահուան վրայ, և խնամակալն կը ջանայ զանի զուարթացնել	49


Պ. Վուազէն կը բացատրէ Մօրիսի թէ ի՞նչ կերպով ձեռնարկած է իւր ժամացոյցն շնելու	55
Մօրիս կը մեկնի՝ Գաղղիոյ մէջ շրջան մը ընելու	55
Պ. Ռըմի Մօրիսի մեկնելէն առաջ անոր դոր- ծերն կը կարգադրէ	57
Մօրիս կը մեկնի և Պուրժ կ'երթայ	59
Մօրիս Պուրժէն կը մեկնի	62
Մօրիս 'ի Բարիդ	65
Մօրիս կ'երթայ տեսնել զերկաթավաճառն	65
Մօրիս դարբնի մեծ արուեստանոց մը կը մանէ	67
Մօրիս իւր տիրոջ՝ Պլանշառի տունը կը բնակի	70
Մօրիս իւր տիրոջ անհանձար վարմունքը կը դիտէ	72
Պլանշառի բարեկամներն	73
Տիկին Պլանշառի վիշտն	73
Մօրիս և Ժիւլիէն դիշերներն կը հոկեն, զսպա- նակներն դարբնելու համար	77
Զդումն Պլանշառի	79
Պլանշառ զսպանակներն կ'աւարտէ	81
Դարբինն կիւրակէ օրն արուեստանոցն կը գոցէ	83
Մօրիս կը հիւանդ անայ	84
Մօրիս զօրաժողովի կողմանէ իւր գիւղը կը կանչուի	86
Մօրիս իւր գիւղը կը վերադառնայ	88
Մօրիս վիճակահանութեան մէջ գէւ թիւ մը կ'ունենայ	90
Մօրիսի հրաժեշտն	92
Մօրիս բանակէն կ'արձակուի	94
Մօրիս կ'ամուսնանայ	96
Մօրիս իւր բնիկ գիւղին մէջ կը հաստատուի	98
Ֆրանսուազի հայրն զիւր աղջիկն փնտաել կուգայ	99

Մօրիս իւր աներոջ հետ կը հաշտուի	100
Մօրիս կ'ուզէ իւր տունը նորէն գնել	103
Մօրիս տուն մը կը շինէ	105
Ֆրանսուազ տունը լմնալու պէս, կ'ուզէ հոն փոխադրուիլ	106
Պէոթրան դարբինն կը նախանձի Մօրիսի վրայ	108
Պէոթրանի շարութիւններն	110
Մօրիս շինեղէր զանոնք որք իրեն կը պարտին	113
Ֆէլիքս, Մօրիսի առաջին գործաւորն, ձիու ոտքի հարուած մը կ'ընդունի	116
Մօրիս իւր որդւոյն յարատեւութիւն կ'ուսու- ցանէ	118
Մօրիս իւր ծունկին հարուած մը կու տայ	121
Հայր Թուէն	125
Մօրիս կը հաշտուի Պէոթրանի հետ	126
Մօրիս ոտքի ելլել կ'սկսի	130
Հայր Թուէն ժառանգութիւն մը կ'ստանայ	135
Ֆրիզէ կու գայ զՄօրիս տեսնել	135
Մօրիս կը հասկցնէ Ֆրիզէի թէ ուսկից գտած է իւր բարեյաջող բազդն	137
Մօրիս գործ կ'առաջարկէ Ֆրիզէի	140
Ֆրիզէ աշխատութենէ կ'ախործի	142
Մօրիսի տան երեկոյթն	144
Մօրիս Ժան-Բիէռի տունը կ'երթայ	145
Աղքատն	148
Մօրիս իւր աւրուած գինին լաւցնելու փորձ կընէ	150
Սէն-Մաոթէն	155
Մօրիսի և Գուտիէի վէճն	156
Ժողովրդապետն գժտութիւններն կ'արհամարհէ	159
Մօրիս կ'երթայ սայլագործն տեսնելու	161
Ֆրիզէ զՄօրիս ընթրելու կը հրաւիրէ	164

Մօրիս կիրակի օրն կ'աշխատի օտարականի մը	167
ստիլովական պէտքն լեցնելու համար	
Շառլ կու գայ իւր հօր օդնելու	171
Շառլ՝ հոգւոյ վրայ ունեցած զաղարարն կը	
բացատրէ	172
Օտարականն կը յորդորէ զՄօրիս որ իւր որդին	
աւելի յառաջ մղէ	174
Շառլ զինուոր ըլլալ կ'ուզէ	177
Ֆրանսուազ կ'երթայ զժողովրդապետն դըտ-	
նելու	179
Մօրիս խաբէութիւնն կ'արհամարհէ	181
Շառլ սահմանաց վրայ կը հսկէ	184
Շառլ Ալէէրի կ'երթայ	188
Մօրիս կ'այցելէ Միշօ մօրեղբօրորդւոյն	190
Յորդումն ջուրց	192
Միշօ և իւր ընտանիքն վտանդէն կ'աղատին	194
Մօրիս կը քաջալերէ զՄիչօ	196
Ժողովրդապետն կը խրախուսէ զՄիշօ	200
Պ. Պէոթհօ Մօրիսի յաճախորդ կը մնի	205
Պ. Պէոթհօ կը զարմանայ , ծնողաց՝ իւրեանց	
ւակունիքն վարժարան չղիկելուն	205
Ժամանակի յարդն	206
Շառլ Գաղղիս կը մտնէ և Պղանսօն կը դառնայ	209
Շառլ ժամացոյց մը գնել կ'ուզէ	212
Պանդոկապետն կը պատմէ թէ ի՞նչ կերպով	
քաղաքն այսպէս փօխուած է	215
Շառլի նամակն	218
Շառլի վերադարձն	219
Մօրիս մի և նոյն աւուր մէջ կ'ամուսնացնէ իւր	
երկու զաւակունիքն	220
Ժողովրդապետն՝ Շառլի նորաչէն տունն կ'օրհնէ	222

Մօրիս զ զետելն երթալու համար կ'ընկերանայ	
սայլադործին	224
Պ. Լընուառ, Հասարակութեան Քաղաքապետն	
զՄօրիս իրեն Տեղակալ կը խնդրէ	226
Մօրիս Տեղակալ	228
Մօրիս կը բացատրէ թէ ի՞նչպէս կրնան օգտա-	
կար կերպով գործածել կորուսեալ վայր-	
կեաններն	250
Մօրիս կը համոզէ շինուածոց Ճողովն՝ գիւղին	
Եկեղեցոյն դասին պատուհանաց ապա-	
կի գնել	252
Ժիւլիէն Պլանշառի գալուստն	254
Մօրիսի զգացած երջանկութիւնն ՚ի տես իւր	
բարեկամին	256
Ժիւլիէն Պէոթի գալուն պատճառն կը յայտնէ	257
Մօրիս իւր ընտանիքն կը ներկայացնէ Տիկին	
Պլանշառի	258
Մօրիս ՚ի Վէոժէր	240
Մօրիս Պ. Լընուառի կը ներկայացնէ երկու	
Պլանշառներն	241
Վախճան	244





3n

ՀՀ Ազգային գրադարան



NL0585645

